

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՍԿԱՆ»

ՀԱՅԿԵՆ

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ

Գ. Տ Ա Ր Ի 1941

ՀԱՅԿԵՆ

Չօնուած
Հ. ՄԿՐՏԻՉ ՎՐԳ. ՊՈՏՈՒՐԵԱՆ-Ի
40-ամեայ գրական գործունեութեան

ՀԱՅԿԵՆ
59




Պատկեր
Արտիկ Ալպոյանեանի
Գանձեր — Կարգադր

ՀԱՅԿԵՆ
4146

ՊՈՒԹՐԻՇ

1941

Տպ. «Հայ Մամուլ», [Str. Oborut Nou 15



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Քառասուն արիներ անցած են այն օրէն ի վեր երբ Հ. Սկրիչ վրդ. Պոսուրեան սկսեց իր գրական գործունեութիւնը:

Անոր այս քառասուն արիներու գործունեութեանը մօտէն ծանօթ ալով, քանի մը հոգիներով կազմեցինք Յանձնախումբ մը, նպասակ ունենալով «Գաղութահայ Տարեգիրք»ի այս արուան հասորը ձօնել անոր՝ իբր բարոյական պզտիկ վարձատրութիւն մը անխոնջ գրական մշակիմ:

Հ. Մ. Պոսուրեանի բացառիկ կենցաղը պատկերացնող մեկէ աւելի գրութիւններ, զորս ընթերցողը պիտի գտնէ հետագայ եջերուն վրայ, կը թելադրեն մեզի հոս ժուժկալ ըլլալ, նետելով միայն այն պարագան՝ որ ան եղաւ բացառիկ դեմք մը՝ կղերականի զգաս խորհրդապատշաճութիւնը եւ աշխարհականի նկուն պէսալիսութիւնը զուգաւորելու ընդունակութիւնով օժտուած:

Հազիւ ծրագրուած այս հասորին հրատարակութիւնը, դէպքերը պարիսպ հիւսեցին Հ. Մ. Պոսուրեանի եւ մեր միջեւ, սակայն շնորհիւ անոր բազմաթիւ համակիրներուն, այս պարիսպը լուրջ արգելք մը չհանդիսացաւ «Գաղութահայ Տարեգիրք»ին մամլոյ յանձնուելուն:

Սեւ ամպերը որ կուտակուեցան մանաւանդ Եւրոպայի երկիւնքին վրայ եւ ամպրոպը որ ցնցեց Հին Ասիայի իր հիմունքէն, պատճառ դարձան որ Տարեգիրքի աշխատակիցներէն շատերուն գրութիւնները չհասնին ժամանակին Յանձնախումբիս երեսալու համար ներկայ հասորին մէջ:

Յանձնախումբս կը փութայ ներկայացնել իր ջերմ շնորհակալիքը անոնց որ իրենց տրիտուր չլլացան եւ տուին ներկայ հասորին պէսալիսուն եւ շահեկան բովանդակութիւն. նոյնպէս նաեւ անոնց որ հակառակ իրենց եւ մեր կամքին՝ պարագաներու հարկադրանքով չկրցան բերել իրենց աշխատակցութիւնը:

Իսկ անյողողող վարդապետին կը նուիրենք արդար գնահատանքի մեր լիաբուռն երաշխիք:



ՋՕՆ՝ Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆԻ

Ա՛լ այս օրէն. չի՛ք վերադարձ ի վարժարան . . .
Պարտադիր է պաշտամունքը մամոնային,
Զի հաց եւ ջուր ակնկառոյց անոր նային . . .
Մի՛նչ՝ դեռ ոմանք կ'երբան դպրո՛ց, շարա՛ն շարան:

Տո՛ւր, վարդապետ, պրակ մը տուր գրաբաղձին...
Իրիկունը երբ աւարտի գործը մուրեմին,
Եւ պարպրի երբ գաւարը սափուկ սուրեմին,
Տո՛ւր գրածըդ՝ որ չի մընայ նա առանձին:


Գիտե՞ս արդեօք, ի՛նչ մեծ բարիք քիբ անոր...
Յո՛գնած, ֆրսնած՝ աշխատանքէ՛ն չոր ու ցամաք,
Երբ տուն դարձաւ — այսպէս ասած — կորափամակ,
Հասորիդ մեջ իսկո՛յն զքսաւ աշխա՛րհ մը նոր:

Դուն այդ քիբ փռատուն ամ եւ անվարան.
Ապրեցուցիր եւ ապրեցար դուն միասին.՞
Եղար ընկեր՝ բարձր ու նաեւ համես դասին:
Երկար կեա՛նք քեզ... որպէս անե՛զ կըրակարան:

ԵՒԳԻՆԷ՛ ՓԻԼԻԿԵԱՆ

10 Հոկտեմբեր, 1940.

Իսթանպուլ




Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

(1881 - 1957 Նյր. 60 54 Վազգ.)

Հ. Մկրտչի վրդ. Պոսուրեան ծնած է Պարսիզակ 1881-ին: Իր նախաձրբութիւնը ստացած է նախ ծննդավայրին Ներսիսեան Ազգ. վարժարանին մէջ եւ ապա Հայ Կաթողիկէից նորաբաց վարժարանը: 1897-ին կը մեկնի Վեներիկի Ս. Ղազար վանքը Հ. Սեբոբէ Ապստոլյանեանի հետ եւ հոն կ'աւակերտի Հ. Յովհ. Թորոսեան, Հ. Վարդան Հացունի եւ Հ. Արսէն Ղազիկեան վարդապետներուն: Վանքին մէջ 5 տարի ուսանելէ յետոյ 1902ին վարդապետ կը ձեռնադրուի Աբբայ Իգնատիոս Արք. Կիրեղեանէ, պահելով իր մկրտութեան անուներ:

Հազիւ վարդապետ ձեռնադրուած, Հ. Մ. վրդ. մատենադարանա-



պետի օգնական կը կարգուի եւ տարի մը յետոյ, 1903ին կ'անցնի Վեներիկի Մուրաս-Ռափայելեան վարժարանը՝ հսկիչ ուսուցիչի պատշտումով: 1908ին կը մեկնի իր ծննդավայրը, ուր կը մնայ տարի մը՝ հոն ուրեւրեղով երիտասարդութիւնը:

1909 Օգոստոսին Ս. Ղազար վերադառնալով կը ստանձնէ «Բազմավեպ»-ի խմբագրութիւնը եւ վանքին մատենադարանապետութիւնը:

1911 Մայիսին կը դրկուի Թրանսիլվանիոյ Եղիսաբեթուպոլիս Ելիզապէթավարոս=Տումարավեցի) քաղաքը իբր տեսուչ տեղւոյն Միսիսարեան կալուածին: Հոն կ'աւելասի ազգային գագաւումը հրահրել Հունարահայերուն մէջ, կը սարքէ հայկական երեկոյք մը՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով: Այս հանդէսը բարոյապետ եւ նիւթապետ շատ յառող անցնելով Հ.Մ.վրդ. Պոսուրեան խրախուսուած հոն կը հրաւիրէ հայ երիտասարդներ: Այս միջոցին տեղի կ'ունենար Պալեանեան պատերազմը եւ

բրհապատակ հայ երիտասարդներ զինուորագրութենէ ազատելու համար կը հետաճային Թուրքիայէն, Վարդապէտ'ն կոչը այս երիտասարդներէն 100ի չափ կը համախմբէ իրեն շուրջ, որոնք սակայն կը յուսահատեցընեն զինքը եւ 1912 Օգոստոսին Ս. Ղազար վերադառնալով կը ստանանք վանքին մասակարարի պատճօնը:

1913ին կրկին զինքը եղիսաբեքուպոլիս կը գտնենք իբր օգնական ժողովրդապետ, ուր կը մնայ մինչեւ համաշխարհային պատերազմի վախճանը:

Զինադադարէն յետոյ երբ Պուրէթի մէջ կը կազմուի Ռումանահայ Միութիւնը, Հ. Մ. վրդ. կը մասնակցի անոր ժողովներուն իբր Թրանսիլվանիոյ Հայոց ներկայացուցիչ, իսկ 1920ին վերջնականապէս կը հաստատուի Պուրէթ եւ կը նախաձեռնէ Ազգ. վարժարանի վերաբացումին, ուր կը պատճենավարէ իբր ուսուցիչ, միանգամայն հայերէն դասեր տալով Նոքրը Տամ սը Սիոնի հայ աւակերտիներուն:

1928ի աշնան Թրանսիլվանիոյ Ֆրումոսա (Սեբվիդ) գիւղախաղաքին հայոց ժողովրդապետ կ'ընտրուի եւ 1929ի գարնան հոն հաստատուելով կը ձեռնարկէ իր պատճօնին: Իրեն կը յանձնուի նաեւ շրջանի կարողիկէ հայոց հովուութիւնը: Հ. Մ. վրդ. Պոսուրեան կը շրջի այս շրջանները եւ Հայերու մէջ կապ կը հաստատէ, շատ վայրեր օտար եկեղեցիներու մէջ կը հաւաքէ հայերը եւ հայկական ձեռով պատարագ կը մատուցանէ՝ անոնց մէջ անջինջ պահելով կամ արժարձելով հայ ազգութեան կրակը: Իր այս պատճենավարութեան ընթացքին է որ իր ներկայութենէն եւ ծանօթ բարեացակամութենէն թելադրուած հայ արուեստագէտներ կ'այցելեն Ֆրումոսա եւ կու տան համերգներ: Ամառները անոր շնորհիւ է որ կարգ մը հայեր օդափոխութեան վայր ընտրած են Ֆրումոսան: Դարձեալ անոր օժանդակութեան վստահելով է որ Ռ. Հ. Գրութեան Խաչի վարչութիւնը 2 տարի չփառ-սկարակազմ աւակերտներու օդակայան ընտրեց այս գիւղախաղաքը, ուրկէ տղաք վերադարձան լաւագոյն կերպով կազդուուած:

Հ. Մկրտիչ վրդ. Պոսուրեանի ջանքերուն շնորհիւ եւ առաւելապէս որ Թրանսիլվանիոյ Հայերը գրկաբաց ընդունեցին Հայ Կարողիկէից առաջնորդ Հայր Սահակ վրդ. Կոզեանը եւ 4 եկեղեցիները ենթարկուեցան անոր:

Հ. Մ. վրդ. Պոսուրեան գլխանս ժողովրդապետ ընտրուած է Ֆրումոսայի եւ մինչեւ այսօր կը վարէ այդ պատճօնը արժանաւորապէս:

Ծանօթ.— Հ. Մ. վրդ. Պոսուրեանի «Գրական Վաստակ»ը տեսնել գրքին վերջին էջերուն վրայ:

ՀԱՅ ԳԻՐԸ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Ե Ի

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Նախ անցողակի յիշենք, որ նախքան ընդհ. պաաերազմը Ռուս-մանիոյ մէջ տպագրուած են հայերէն գրքեր ու թերթեր: Անուրանելի է հանդուցեալ Ղեկնղ քհ. Փափաղեանի կատարած գործը՝ հայ գիրը Ռուսմանիոյ մէջ արածելու մասին. ան է որ առաջին անգամ, անշուշտ մեծ զոհողութիւններով և անշահանխնդրօրէն հայերէն տառեր բերած է այս երկիրը և տպագրած օրացոյցներ և գրքեր: Այնուհետեւ պ. Լեոն Շահաղիղեանի ջանքերով Պոլիսէն բերուած են հայերէն տառեր և կրկին լոյս տեսած հայերէն տպագրուած թերթ կամ գիրք:

Սակայն Ռուսմանիոյ մէջ հայ տպագրութեան ընդհանրացումը և տեւականացումը կը պարտինք Հ. Մ. Պոտուրեանի:

Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, կ'ուզեմ պատկերացնել այն մեծ գործը, որ երևան եկած է շնորհիւ Հ. Մ. Պոտուրեանի անվնաս, տքնաջան և զոհաբերութիւններով լի աշխատանքին:

Նիւթէս գուրս է Պարտիզակցի Վարդապետին մինչև 1920 թուականը ունեցած գրական գործունէութիւնը Վենետիկ և այլուր:

Հ. Մ. Պոտուրեան Պուքրէշ հաստատուելուն պէս հետամուտ կ'ըլլայ հայերէն տպագրութեան: Ան 1920ին լոյս աշխարհ կը բերէ պ. Լեոն Շահաղիղեանի նախքան ընդհ. պաաերազմը Պոլսէն բերել տուած և Գարթէա Ռոմընէասքայի տպարանին նկուղներուն մէջ կողմ մը նետուած հայերէն գիրքեր և կը սկսի հրատարակել «Մասիս» շաբաթաթերթը՝ վստահելով միմիայն իր աննկուն կամքին ու ճիգերուն: Հերոսական ճիգերով կը յաջողի բաժանորդներ գտնել նա ի գին մեծ զրկանքներու շարունակել թերթը մինչև 1922 տարւոյ գարնանամուտը:

Վարդապետին խմբագրատունը կ'ըլլայ հոն՝ ուր ինքը կը գտնուի և արխիւը՝ իր պայուսակը: Թերթը կը խմբագրէ ուր որ ազատ ժամանակ մը կը գտնէ ու սեղանի նման բան մը, իսկ կը տպագրէ Գարթէա Ռոմընէասքայի տպարանը:

Այս միջոցին հայերէն տառեր ալ ձեռք ձգած է և ընկերովի գնելով դրած Ազգ. վարժարանի ձեղնայարկը:

Գրաշար չկայ, գրաշար կը հասցնէ, ի հարկին ինքն ալ

կը շարէ: Թերթին ամենայն ինչը ինք է և պարտադրուած բոլոր աշխատանքներուն հասնելու համար դուր զադար չունի: Այս միջոցին փողոցը Վարդապետին քալելը կարելի չէր տեսնել, ան վազելով կ'երթար:

1922ի սկիզբը, երբ Պաւլընչ հասայ, ներկայացուցին զիս Վարդապետին: Շատ ուրախացաւ որ տպագրական գործէ կը հասկնամ, անմիջապէս առաջարկեց ընկերովի հայերէն տպարան բանալ եւ թերթը միասին հանել: Սակայն հարցը ուրիշ կերպարանք առաւ: Հանգուցեալ Պարոյր Լեոնեանի հետ ընկերովի բացի հայ տպարան և համաձայնեցանք Հ. Մ. Պոտուրեանի հետ որ ինքը դպրոցեցնէ «Մասիս»-ի հրատարակութիւնը և աշխատակցի մեր նոր հանելիք թերթին՝ «Նոր Արշալոյս»-ի՝ ամսական որոշ վճարումի մը փոխարէն:

1922 Ապրիլին սկսանք հրատարակել «Նոր Արշալոյս»ը՝ իբր տեսակ մը շարունակութիւնը «Մասիս»-ի: Մեծ նեղութիւն չքաշեցինք ընթերցող գտնելու համար, որովհետեւ Հ. Մ. Պոտուրեան այդ աշխատանքը ինքը արդէն կանխաւ կատարեր էր: Փաստացիօրէն տեսայ որ ան մտեր էր ամէն ծակ ու ծուկ՝ հայ գիրը տարածելու համար Հայերուն մէջ, ըլլայ մայրաքաղաքը, ըլլայ գաւառը:

Բայց միթէ Հ. Մ. Պոտուրեան կրնա՞ր մնալ առանց հայերէն թերթ կամ գիրք հրատարակելու: 1922ին իսկ նախ «Նոր Արշալոյս»-ի մէջ յօդուածաշարքով մը և ապա առանձին հատորով լոյս ընծայեց «Մխիթար և Մխիթարեանք» գործը:

1922—1923 դպրոցական տարեշրջանին ուսուցչութեան կոչուելով բաժնսուեցայ Պ. Լեոնեանէն: Վարդապետը եռեւէս ինկաւ որ միասին հրատարակչական մը կազմենք ու հայերէն գործեր հրատարակենք: Միւս կողմէ ինքը քինակը 1923ին լոյս ընծայեց «Մասիս» տարեցոյցը, «Դիցաւան» տարեգիրքը և «Արմենակին յոյսերը» նորավէպը:

Սակայն Հ. Մ. Պոտուրեան ինքզինքը բաւարարուած չէր զգար միմիայն գիրքեր հրատարակելով, կ'ողզէր թերթ ալ հրատարակել: Իտնիցս ինծի առաջարկեց, աշխատեցայ զինքը տարհամողել, բայց չյաջողեցայ: Ու ան սկսաւ հրատարակել «Գաղութի Զայն» շաբաթաթերթը 1923ին, «Փարոս» շաբաթաթերթը 1924ին և «Դիցաւան» գրական ամսագիրը նմանապէս 1924ին: Այս երեք թերթերն ալ լոյս տեսան 4—6 թիւ և զանազան պատճառներով չշարունակուեցան: 1924ին մասամբ տպագրեց նաև իր «Մարտիրոս Դրիմեցի և իր քերթուածները» աշխատատիրութիւնը, որ ամբողջացաւ 1932ին Ֆրուստասայի մէջ:

Վարդապետը, ես և Յ. Ճ. Սիրունի կազմեցինք հրատարակչական ընկերութիւն մը հրատարակելու համար «Նաւասարդ» գրական ամսաթերթը և զանազան գրքեր և հիմը դրինք «Նաւասարդ»-ին, հրա-

տարակերպ միանգամայն Ե. Օսեանի «Փանջունիչները, Երգարան մը, «Արչին Մալ Ալան», Յ. Բաջաղունների «Ռուսիա՞ թէ թուրքիա» աշխատասիրութիւնը, պ. Յ. Ճ. Սիրունիի խնդրանքով «Նաւասարդ»-ի հրատարակութիւնը 4րդ թիւէն սկսած թողինք իրեն և լուծուեցաւ հրատարակչականը:

Այս անգամ Վարդապետին հետ հրատարակեցինք, միշտ իր աւաջարկով, «Գաղութահայ Տարեգիրք» և «Ուղեցոյ Ռում. լեզուի»: Նոյն տտեն Վարդապետը զիս համոզեց որ մանկական ամսաթերթ մը հրատարակեմ, ու սկսայ «Գարուն»ի հրատարակութեան: Եւ սակայն Վարդապետը անհանգիստ էր. թերթ կ'ուզէր հրատարակել, ու վերջապէս 1925ին սկսաւ «Երկիր»ի հրատարակութեան, որ երբեմն մինակ և երբեմն ընկերովի, յաճախ ինծի հետ, շարունակեց մինչև իր Ֆրումոսսա ժողովրդապետութեան կոչուելը 1929ին:

Այս ժամանակամիջոցին ան լոյս ընծայեց նաև «Կարմիր Լուսին» զրուադներ ազգ. կեանքէ իր հեղինակութիւնը և «Ոճիրին Պանդոկը» (2 հատոր) «Սրտերու Կոիւր» (7 հատոր) և «Գահ և Սէր» (4 հատոր) վէպերու հայերէն թարգմանութիւնները: Իր ջանքերով լոյս տեսան նաև Վ. Գէորգեանի «Թիապարած» թատերգութիւնը, Հօրիօնի «Օր. Սաթինիկ» վէպը, Ա. Վտարանդիի «Բառեակներ»ը, Ժամկոչեանի «Ալպոմ»ը եւ այլն:

Այս միջոցին Հ. Մ. Պոտուրեան տունէ ասուն, խանութէ խանութ և քաղաքէ քաղաք կը պատէր տարածելու համար հայ գիրքն ու հայ թերթը, այսպէսով հայերէն կարդալու սերը տարածելով դաղութիւ մէջ: Անոր անխոնջ աշխատանքին շնորհիւ է առաւելապէս որ հայերէն կարդացողներու բաւական թիւ մը ունինք այսօր:



Կը կարծուէր որ ժողովրդապետութեան կոչուելով այլևս Հ. Մ. Պոտուրեան պիտի թողուր հրատարակչական գործը, բայց այս այս կարծիքը սխալ եղաւ: Ժողովրդապետ եղած ատեն մայրաքաղաքիս մէջ փոքրիկ ռումաներէն տպարան մը հաստատած էի. համոզեց զիս որ Ֆրումոսսա իր մօտ փոխադրուիմ ու ընկեր ըլլանք. երբ տպարանս հոն փոխադրեցի, համոզեց որ հայերէն գիրք ալ գնենք. ու ահա կրկին հրատարակութիւն: Հոն տպուեցաւ նախ «Գահ և Սէր» վէպին մնացած մասը, ապա «Մարտիրոս Դրիմեցի»-ն ամբողջացուեցաւ, յետոյ կրկին տպագրուեցաւ «Կարմիր Լուսին»ը, «Գարուն» մանկական մատենաշարի վրայ աւելցուեցան 10 գրքոյկներ ևս: Ասոնք սակայն չբաւարարեցին Վարդապետը և սկսանք հրատարակել «Գիտութիւն և Գիտելիք» գիտական ամսագիրը, որուն 4 օրինակները լոյս տեսնելէ յետոյ տպագրական մեքենայի խանգարման հե-

աւելանքով ստիպուեցանք առժամապէս դադրեցնել և հրատարակել անոր իբր յալելուած «Պաղատու ծառեր» և «Պառուաստ և յօտուժ պողատու ծառերու» գրքորդները: Նոյն ատեն լոյս ընծայեց «Կարմիր Լուսին»ին հուշգարերէն թարգմանութիւնը:

Վարդապետին կրկնակի թելադրանքներուն վրայ է որ Ֆրուժոսասայի մէջ սկսայ հրատարակել «Կոկոն» մանկական պատանեկական ամսագիրը, որուն 6 համարները լոյս տեսնելէ յետոյ փոխադրուեցայ Պուքրէշ՝ 30 հայ ընթանիք միայն ունեցող Ֆրուժոսաս գիւղաքաղաքին անունը կապելով հայ տպագրութեան պատմութեան:

Միթէ կարելի է որ Հ. Մ. Պոտուրեան մնայ առանց հայերէն գիրք կամ թերթ տպագրելու: Ամէն փորձ զինքը ետ կեցնելու համար հայերէն թերթ հրատարակելու բուն փափաքէն ապարդիւն անցան և սկսաւ Պուքրէշէն լոյս ընծայել «Հայ Մամուլ»ը:

Գրաքննչութեան արտօնութիւն էր խնդրած «Հայ Մամուլ»ին համար: Բննիչ պաշտօնեայ մը եկած էր իմ մօտ նախ քան արտօնութիւնը հարկ եղած տեղեկութիւնները ստանալու համար և ի շարս ուրիշ հարցումներու՝ հարցուցած էր նաև թէ ինչո՞ւ համար կ'ուղէ այս թերթը հրատարակել, շահո՞ւ համար: Ի՞նչ կրնայի պատասխանել, յայտնի էր որ շահ չէր ակնկալեր, ընդհակառակը իր աշխատանքին հետ նիւթական զոհողութեան ալ պատրաստ էր: Պաշտօնեան իր ձեռք ունէր այդ վայրկեանին սիկարէթ մը ու կը ծխէր. ես ալ անոր հարցուցի թէ ինչո՞ւ համար կը ծխէ ու աւելցուցի. ինչպէս որ դուք առանց ծխելու չէք կրնար կենալ որովհետև վարժուած էք, այնպէս ալ Հ. Մ. Պոտուրեան առանց թերթ հանելու չի կրնար մնալ, որովհետև ան ալ թերթ կամ գիրք հրատարակելու մոլին եղած է: Պաշտօնեան զոհացուցիչ գտաւ պատասխանս ու յաջորդ օրը ստացայ արդէն արտօնագիրը: Կը կարծեմ որ այս պատասխանս բուն ճշմարտութեան համապատասխան էր, միայն որպէսզի ամբողջ ըլլայ՝ պէտք է ըսել. «Հայերէն թերթ կամ գիրք հրատարակելու մոլին եղած է»:

Երկու տարի շարունակեց «Հայ Մամուլ»ը և որպէսզի իր ձեռնարկած հսկայ գործը, «Հանրագիտակ»ը կարենայ ի զուրիս հանել, թերթը թողուց ինձի Սակայն միայն «Հայ Հանրագիտակ»ով ալ չկրցաւ գոհանալ և տարուէ տարի Տարեգիրք մըն ալ կը հրատարակէ, որուն երրորդ հատորը անպ կը ձօնուել իր գրական գործունէութեան 40 ամեակին:

Շատ մօտէն ծանօթ Հ. Մ. Պոտուրեանի տարած գրական աշխատանքին և հայ գիրք տարածելու համար անոր ըրած նիւթական և բարոյական անշահախնդիր զոհողութեան, կը մաղթեմ որ իր աշխատանքի թաղը անայլայլ մնայ, որպէսզի ո՛չ միայն «Հայ Հանրագիտակ»ը իր լիւրժին հասցնէ հայ մատենագրութիւնը օժտելով աննախընթաց գործով մը այլ նաև լոյս ընծայէ ուրիշ հեղինակութիւններ ալ յօգուտ հայ գիրք տարածման: Թ. Գ. ԱԹԱՆԱՍՍԱՆ

ՄԱԽԱՂԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՒԸ

(Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ
40-ԱՄԵԱՅ ՅՈՒՅԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ)

1922ի աշնան, երբ Ստամպուլէն՝ իրեւ տատամտտ և անսասոյգ ուղեւոր, առաջին անգամ Գոնսթանցայի քարափը ոտքս դրի, ուղղուեցայ բարեմիտ ծերուկ Ոսկիին սրճարանը որ, Օլիտիոյ հրապարակին վրայ, հայ գաղթականներու իրեւ տեսակ մը համեստ, բայց մի քիչ սփոփարար հայ Ակումբ կը ներկայանար այն առեւն: Հոն կը կարդայի օրուան թերթերը՝ թէյին անուշահոտ գոլորչիներուն մէջէն: Սրճարարանապետ Ոսկի զուրգուբալիւր մարդ մըն էր, լաւառես, ղիւրահաւան, պարզահոգի, ծեր գաւառացիի մաքրամաքուր ժուժկայ տիպար մը որ քիչ մը շատ կը խանդավառուէր այն ատենուան Հոլանի ժողովէն՝ հայկական խնդրոյն մասին շօշափելիք կէտերէն և ի տես այդ միամիտ խանդավառութեան կը բացագանչէի յաճախ.

«Ոսկի՛, ոսկի՛.

Մի՛ հաւատար ամեն խօսքի.

Եթէ հաւատաս,

Կրակը ետեւեդ կը սողոսկի...»

Դառնացած ուղեւորի իմ այս ինքնաբուխ բացագանչութիւնս զոր Գոնսթանցայի մէջ շատ հայեր պիտի կրկնէին յետոյ, կարծես մարգարէութիւն մըն էր ի մասին այն դժբախտ իրողութեան որով Սէվրի դաշնագիրը՝ Լողանի չարաշուք խորհրդաժողովին շնորհիւ՝ հրաչէկ պողպատի սիվրի (սրածայր) դաշնագիր մը կ'ըլլար, երկար տարիներ գամուած պահելու համար իր վրայ հայ մարդու ճակատագիրը: Մարդը իր անուշին պէս իրաւամբ ոսկի սիրտ մը ունէր եւ դարձեալ կը ժպտէր ինծի իր տժգոյն բարեմիտ ժպիտովը: Իրիկուն մը երբ դարձեալ կը խօսէինք իրարու հետ հայ ճակատագրի մասին, Ոսկի իր ջղուտ թաւ ձեռքովը ինծի ցոյց տուաւ սրճարանին մեծ պատուհանին թակ տատամտտ կեցած միջահասակ գերուկ մարդ մը ճօրուսաւոր, ձեռքը անագին պայուսակ մը բռնած՝ զոր ուժգին սեղմած էր անութիւն թակ չարչիկելով արդէն իսկ գունատած վերաբերութիւն երկու կողմերը: Զիս կը կանչէր: Առաջին ակնարկով. «՛ն աշխարհական կ'երեւար ո՛չ կղերական կամ երկուքը միասին... Բնաւ չէի տեսած զինքը առաջուց: Իրեն մօտեցայ: Տարօրինակ բան, ինքը լաւ գիտէր իմ անունս: Պարտիզակցի շայր Մկրտիչ Պառուրեանն էր: Ծատ մտերմիկ թօնով մը խօսեցաւ հետս, որպէս թէ տարիներէ ի վեր կը ճանչնար զիս, և խնդրեց ինձմէ յօգուած մը իր յառաջիկայ Մա-

սիս Տարեգրքին համար: Իր խնդրանքը կառարկեցի «Մայրական Աւեր»
և «Օրրերգ» բանաստեղծութիւններով: Անկէ վերջ, շատ անգամ կը
տեսնէի զինքը իմ պղնիւ հայրենակից Սկիււարցի վառվռուն՝ վեհանձն
և գործունեայ երիտասարդ Սամփսոն Սրժբունիին ընկերացած յա-
ճախ սրճարանի մը անկիւնը, նաւահանգիստին քարափին վրայ կամ
հայ խանութպանի մը կրպակին առջև: Մէյ մ'ալ յանկարծ կ'իմա-
նանք թէ մեկներ է Պուքրէշ, յետոյ Կալաց, Բիշնեւ, Սիլիստրէ, Պա-
ղարճք յետոյ Թրանսիլվանիա ուր երկար բնակեր է ատեն մը: Ինն
ամիս Գոնսթանցա մնալէ յետոյ, երբ մնայուն կերպով Պուքրէշ հաս-
տատուեցայ, դարձեալ վարդապետը Պուքրէշ գտայ՝ իրրև թէ հոն
հաստատուած, շատ անգամ փոխելով բնակարանը, և նորէն շատ
անգամ ալ ճամբորդութեան մէջ, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ,
տունէ տուն, անյողդղղ անութիւն տակ սեղմած պահելով միշտ իր
անբաժան պայուսակը, կափարիչը ճաթեցնելու չափ ուռեցողորուած,
իրրև իր զանգուածեղ մարմինին կարեոր մէկ մասը որ կ'սպառնար
ծուկ տալու իր քամակը, լայնարաց քայլերը աւելի զգոյ: Ընելու
և ակնարկը ուղղելու միշտ յառաջ:

«Արդեօք ի՞նչ կայ այդ պայուսակին մէջ», հարցուցի օր մը Եր-
ուանդ Օտեանին որուն հետ քանի մը շաբաթ մէկ յարկի տակ բնա-
կակից եղայ Պուքրէշի Տէսսթ վտտա փողոցին մէջ:— «Պայուսակ բառը
չեմ ընդունիր. պատասխանեց Օտեան, իր խորհրդաւոր մպխտովը, ա-
տոր մախաղ ըսէ՛, տեսակ մը զինուորական պարկ ուր զետեղուած են
իր հոգեկան և մարմնական սնունդները. նախ իր հրատարակած և
չը ծախուած գրական պրակները, գիրքերը, հանդէսները, շաբաթա-
թերթերը. զորս կը տարածէ իր ճամբուն վրայ հոս հոն իր ճամբուն
վրայ, երկրորդ իր հրատարակելի յօդուածները, ուրիշ աշխատակիցներէ
ընդունած ձեռագիրները, իր զանազան թղթակցութիւնները ու նա-
մակները զորս պիտի զրկէ երբ... փոսթաղորդմի դրամ ունենայ, և
երրորդ... երրորդ... գիտե՞ս ի՞նչ, քանի մը փոքրիկ տուփեր... Բա-
նաքով լեցուն զորս ինք անձամբ կը պատրաստէ իրրև քաջ շաքա-
րագործ՝ իր բաղին դառնութիւնները անուշցնելու համար...» Օտեան
չէ՛ր ստեր, վարդապետը Բանաք ա՛լ կը պատրաստէր ինչպէս զրաշա-
րութիւն կ'ընէր՝ իր յօդուածները շարելով: Այս թափառական՝ ան-
հանդարտ խոնարհութեան, այս յարաշարժ՝ գերագոյն ձկունութեան
ու այս գօտեպինդ ստոյիկեան խառնուածքին առջև ինքզինքս նուազ-
տաքած կ'ըզայի: Անոր հրայրքոտ դատորոշուած՝ անխորտակելի
ստուերը զաշտերու մացառներուն, սալայատակներու փոշեթա-
թաւ խորտուորներուն մէջէն խաչաձև կը կանգնէր և սեղմ անու-
թին տակ լիալիբ պալարուած պայուսակը կամ մախաղը գերագոյն
իմաստ մը կ'առնէր, իր ծանրածանր ու բազմատանջ ձևին մէջ,—
հայ՛ գիրը և հայ՛ ոգին ամենուրեք տարածելու իմաստը, օթար ան-

կարեկիր հորիզոններու տակ, անհատնում ճամբաներու երկայնքը, խորունկ՝ քարացած անուահետի մը եղերքը փթթող անուշաբոյր ծոթրինի մը պէս, անշիջելի հաւատքը Մեսրոպեան մշտաներկայ տառին որ Վարդապետին թեկն թռիչքովը կ'երթար թափանցել ահա՛ բոլոր մուծ սեմերէն ներս, հոգ չէր թէ շատ անգամ այդ յամառ եւ անսխալ թափանցումին իրրեւ վարձք իրեն մնար միայն չորաբեկ հացի պատառիկ մը զոր իր զրկումներու և հայրենաբաղձութեանց իրիկուան ոտկի վերջալոյսին մէջ պիտի թաթխէր, զո՛նութեամբ ճաշակելու համար՝ իրրեւ ծիրանի՛ զովարար քաղցրաւենիի մէջ... Վարդապետին՝ ժողովրդականութեան գլխաւոր աղբիւրը այդ պայուսակն էր, այդ պայուսակը լեցուած էր ժողովուրդին հետ ապրած ըլլալու հաճոյքներով: Ինչ աքսորի սրտա- ունչ և հաղուազիւտ զրուագի մը պատմութիւնը, հոն խոնարհ ան- կիւններու մէջ ծուարած խոստմնալից հայ մատաղաշ տաղանդներու սիւսիարար յայտնութիւնը՝ իր պրպտողի սեփական անսպառ ջանքե- րով, իր անեսական ուշադրութեան և գեղեցկին ծարաւի ազգային մտամփոփման պահերուն մէջ ուր զրած էր, օրինակի համար, պատ- մուածքներու հաւաքածոյ իր «Կարմիր Լուսին»ը: Այդ մախաղը հայ- րենիքին ախը կը պարունակէր... :

... Հիմա այլևս Վարդապետը թօթափուած է ծանր բեռէն: Յրումոսասայի հովիւի իր մնայուն պաշտօնը վերջ զրաւ իր հեւիհեւ կենցաղին, բայց միւս կողմէ իր պայուսակէն կամ մախաղէն անհամեմատ աւելի ծանր բեռ մը զրաւ իր ուսերուն վրայ, — «Հայ Հանրագիտակ»ի ծանրագոյն բայց սիրելագոյն բեռը զոր երեք տարիէ ի վեր կը տանի մէն-մինակ, և պիտի տանի երկու վառօղի և երկու սուրի միջև, մինչև որ աւարտէ, իր լեռնագիծ անսայթաք կամքովը զոր չկրցաւ ունենալ Բնախարհիկ Բառարանի հեղինակ աշխարհա- կանացած ուրիշ վարդապետ մը:

Սոյն Գաղութահայ Տարեգիրքին մէջ որ դարձեալ իր գործն է, զետեղելով սա քանի մը արագ գրուած տողերը իր ժողովրդական անունին շուրջ, ես ալ իրրեւ իր էանկեղծ բարեկամը՝ կու գամ շնորհաւորել իր բազմավաստակ գրական գործունէութեան 40ամեայ յորելեանը և սրտովին կը մաղթեմ իր օքնաջան աշխատութեանց արժանի վարձքը ինչպէս նաև ընդհուպ աւարտումը և յաջող պսա- կումը իր հաղուազիւտ Հանրագիտակին:

ԵԳ. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Ս Ր Տ Ի Խ Օ Ս Ք Ե Ր

Ա Ռ

Հ. ՄԿՐՏԻՉ ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Գրագէտ, հայագէտ, հնախոյզ, մատենագիր, ուսուցիչ, հրատարակիչ, խմբագիր, մատենադարանապետ և հոգեւոր հովիւ Հ. Մկրտիչ վրդ. Պոտուրեանի քառասնամեայ գործունէութեան ի պատիւ, անոր ձօնուած ներկայ ասրեզրքին առիթով շահեկան նկատեցի մօտենալ աշխատանքի ու ճիգի այս մարդուն, որովհետեւ իր մշակուած միտք և ղգայուն հոգի՝ անոր կեանքին ամենահետաքրքրական կողմը թուած է ինձի՝ իր աշխատանքի անօրինակ ձեւն ու անոր վերաբերումը իր գործին և իր անձին հանդէպ:

Հայր Պոտուրեան մեր վաստակաւոր մտաւորականներուն մէջ բացառիկ և ինքնայատուկ տեղ մը ունի, և քառասուն տարիներու իր քրտնաթոր աշխատանքով՝ մեր ականաւոր անձերու փաղանդին մաս կը կադմէ:

Անոր կեանքը. օրինակելի համբերատարութեամբ և աննկուն ճիգով բեռնաւորուած, կեանքը եղած է հայ գրագէտին որ քալած է իրեն սահմանուած գողգոթային ճամբաներէն՝ զրկանքի ու տառապանքի խաչը իր յաղթ ուսին, նպատակին սեւեռուած ու անկէ կատարուած փառքի հանդրուան մը հասնելու տենչանքով:

Զարմանալի տենչանքներ ու ցանկութիւններ կան շատ անգամ մարդուն մէջ, որ ենթական կը գինովցնեն՝ անոր պատճառելով առինքնող հրաշալի երազի մը ապրումը, ուրկէ հրապուրուած՝ ան կը խելախէ դէպի նպատակ՝ անտեսելով ու նոյնիսկ քամահրելով բոլոր խռթերն ու արգելքները, ցանկութիւններ՝ որոնք լուրջ վայրկեաններու դատումով ցնորք ու աղայական կը թուին, բայց մարդիկ չեն գաղբիր փորձուելէ՝ կրկնելով ու վերագտնելով զանոնք, որոնք չի գիտցուիր ուրկէ՝ կը սնանին և մեր հոգիներու ո՛ր ծալքերէն կը քաշուին:

Բազում վերլուծումներէ ու խորհրդածութիւններէ ետք, մասնաւորելով մեր խօսքը հայ գրչի մարդուն, — որովհետեւ միայն մեր մէջ է որ այդպէս է — պիտի ըսենք թէ անոր հետ կը ծնին այս ցանկութիւնները, որ նուիրումէ աւելի կոչում մըն են՝ անոնցմէ չի կրնար բաժնուիլ ենթական, և հայ գրագէտը կը քաշուի դէպի ասպարէշ՝ անմեկնելի այդ ներքին մղումէն խթանուած, ուր սակայն

չատ քիչ անգամ կը պառասնի զինքը հասկցողներու և գնահատողներու, ընդհանրապէս, չհասկցուելով ու չգնահատուելով, ինչ որ զինքը կը պահէ գալարուն սպառումի մը տակ:

Կուրծք տալ զըզկանքին, դիմագրաւել սրբազան լուսթեամբ մը ամէն կողմէ տեղացող խժժանքներուն աղաղակող պնտարբերութեան, իր մէջ գոյութիւն ունեցող սէրն ու նուիրումը անեղծ պահելով անվհատ ու կորովի շարունակել՝ գործը՝ երեւոյթը կը սասնայ հերոսական բնոյթ՝ երբ իրողութիւն է որ անիրաւունոյն ու չարչարուողը՝ հասարակ միտք ու հոգի մը չէ, որովհետեւ ան ալ ունի սիրտ մը որ զգայուն է իր առած խնամոտ դաստիարակութեան ազդեցութեամբ և իր ստացած բազմակողմանի ուսմանց օժուովը գեղեցկացած: Մարդ մը վերջապէս՝ որ մարդերէն շատ վեր դասել հարկ է՝ երբ զուգակշիռ զրուին ուղեղները, սիրտերն ու հոգիները:

Ը. Մ. Վրդ. Պոտուրեան տիպարն է այդ նուիրուածներուն. ան ազլեցնող դիմացկունութեամբ մը փարած իր մէջ կոչում մը եղող այդ նպատակներուն, որ հայ գրիչը, զիրքն ու միտքն է, որոնց ծառայելու իր նուիրումը և անոր ձեռ մեզ իրաւունք կու տայ զինքը «հալ գրչի առաքեալը» կոչելու, որ իր վարդապետական քողին տակ, լոյսին իրարանցումովը գեղեցկացած՝ անոր ցոլքերը ցանեց ու կը ցանէ 40 տարիներէ ի վեր ցեղին մէջ՝ քայլ առ քայլ հեռեւելով անոր: Անբաժան տարաբախտ կարաւաններէ, ո՛ւր որ գնաց և ո՛ւր որ նետեց զինքը դժխեմ ճակատագիրը — Վննետիկ, Պարտիզակ, Պոլիս և Ռուսմանիս — իր բեղուն գործունէութեան մարդերն եղան, և ամէն տեղ արտադրեց ու ցրուեց առանց վհատութեան, առանց ազդուելու իր գտած բացասական ընդունելութիւններէն՝ որոնց արժանի չէր և որոնց տեղ պիտք էր որ գտնէր տաքուկ ու տաքցնող ընդունելութիւն մը՝ զերծ մնալու գոնէ նիւթական ծանր հոգերէ:

Ի՞նչ եղած է նպատակը Վարդապետին երբ ինքն ալ իր դասակիցներուն պէս կարծես ստիպուած՝ քէն ըրած աշխարհի բոլոր պերճանքներուն՝ համեօտ, նոյնիսկ չքաւոր ապրելակերպի մը մէջ գոհ ու երջանիկ զգաց ինքզինքը և սոսկ իր ծառայութիւններով զբաւուած. անտեսելով ու քամահրելով բոլոր շիւ ակնարկներն ու նախանձի նետերը, քայլեց դէպի ժողովուրդը, անոր ժանելով հայ գիրը՝ զայն լուսաւորելու. զայն բարձրացնելու համար, որպէսզի Յեղը բարձրանայ, որպէսզի ան՝ ժողովուրդներու ընթանիքին մէջ ունենայ պատուոյ տեղը, փառքի բարձունքներէ նայելու համար խաւարին ու մռթիւն՝ ուր անարժէքներն ու անարժանները կը մնան:

Ահա՛ նպատակը հայ գրագէտին՝ որուն արժանաւոր անդամն է Հայր Պոտուրեան, որ 40 տարիէ ի վեր ջերմեռանդ սիրով ու հաւատքով հայ գիրը կը ցանէ հայ ժողովուրդին մէջ, որպէսզի ան զին-

ուրի ուժացումի վտանգներուն առջև, պահէ իր փառապանծ լեզուն
և հայ մնայ:

Մտքի ոգորումն է անոնցինը՝ որ վար չի մնար ուղմաղաշաբրու
կռիւններէն, որ նոյնքան վսեմ նպատակի կը ձգտի: Եւ երբ աչքի
առջև կ'ունենանք հայապահպանման մեր ճիգերու ուղմաղաշա-
բրու անաւորութիւնը՝ այն առեւն է որ Հայր Պատուրեանի և բոլոր
գրչի ու խօսքի մարդոց դերը կը շեշտուի, արժէքը կը բարձրանայ և
գործը կը խորանայ:

Ինչ կու տանք մեր այս անձնաղոհներուն, հայ գրագէտին ու
մտաւորականին... Բաշութիւնը կը պակսի ինձ մօտենալու այդ
հարցին... Բայց հայ գրագէտին ու մտքի մշակներուն վիճակն ու
կեանքը այնքան խօսուեն է բաց գրքի մը պէս, որուն կրնայ մօտենալ
փափաքողը՝ առանց խոչորացոյցի:

Բայց այն առիթը որ կու տայ Հայր Պատուրեանի ընծայուած
այս պատիւը՝ կը թելադրէ ինձի կոչումը ընելու հայ ընթերցողին, որ-
պէսզի անդրադարձում մը ունենայ ան իր վերաբերումին վրայ հան-
դէպ հայ գրչի ու մտքի մարդուն, գոնէ մասնակցելով բոլոր այն
չարժումներուն՝ որոնց նպատակն է պեղանի դնել հայ գրագէտին ու
մտաւորականին ներսը կրծող վէրքերուն վրայ, բարձր բռնելով անոր
արժանապատուութիւնը, ինչ որ կը թելադրէ գիտակից մարդու եւ
ժողովուրդի յղմաւորութիւնն ու նախանձախնդրութիւնը:

Ա.Ռ. ՔԷՉԵԱՆ

52 1/2
4/4/6

Պ. Յ. ԽՆԴԻՐԵԱՆԻ

ՈՒՇԱԳՐԱԻ ԴԵՄՔԵՐՈՒ ՅՈՒՅԱՋԱՆԴԵՍԷՆ

Ե Ի

ՀԱՅՐ ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆԻ ԴԱՐԱՍՏԱՆԷՆ

Սա կենսագրական մը չ'է: Հայր Մկրտիչ Պոտուրեանի կենսագրականը գրելու համար դեռ չա՛տ ատեն կայ: Երբ 25-30 տարի յետոյ ան արձակուրդ չնորհէ գրելու և աղօթելու գործին, նաև իր... հոչակաւոր պայուսակին, այն ատեն է որ քրոնիկազիրը պլպի ընէ «բազմաչարչար» կրօնաւորին կենսագրականը:

Առ այժմ իմ գործս պիտի ըլլայ յօրինել «գունազեղ» շարժանկար մը զոյգ տեսարաններով:

Տեսարան Ա.— Վարդապետին դէմ բողոք կը բառնան Ռուսմանիոյ տառանին մայթերը:

Տեսարան Բ.— Մայթերը կը դադրին բողոքելէ՝ վերազամած ըլլալով իրենց անդորրութիւնը:

Առաջին շրջանը ունի իբրև տիտղոս՝ «պսսմական», իսկ երկրորդը՝ «պսսուական»:


Պատմական հերթին՝ Հայր Պոտուրեանի դէմքը ծածկուած էր բոլորչի մորուքով և ըմբոսաացող պեխերով: Մարմինը՝ որուն այն ատեն կը պակսէր պայմանադրական փորիկ,գէշ աղէկ պարտկուած էր ծալքերուն մէջ քահանայատիպ շրջադեպտի մը՝ որուն տարիքը միշտ ալ հեռունները մնաց որ և է ճշտորոշումէ:

Վարդապետին քայուածքը բանի մը նմանցնելու համար, պէտք պիտի ըլլայ երևակայել մէկը՝ որ իր հաստաբետ ոտնամաններուն մէջը սինալո մօթօր զետեղած է: Այդ վազքին դէմ, չի կար մարդ որ ակնածանքով մէկ կողմ չի քաշուէր, բոպէ մը կանգ չ'առնէր, զիտելու համար մարդեղացեալ այդ քամին՝ որ կը սուբար քղանցքը ետին ձգած: Անոր ճեպլընթաց վազքը դիտողը, գիշերը անկողնին մէջ ալ, կը մնար այն տպաւորութեան տակ թէ՛ նորին արժանապատուութիւնը տակաւին և տակաւին կը վազէ... կոր:

Հայր Պոտուրեան կտոքը կամ հանրակառքը կը դատեր որպէս ժամանակի կորուստ պատճառող չարագործներ:

Այս դարմանալի կրօնաւորը՝ որուն խոյանքը օթօներուն ալ նախանձը կը շարժէր, թեկին տակ կը պատցնէր ուռած ակոսած պայուսակ մը:

Շնորհիւ այս պայուսակին, Վաղդապետը եղած էր, Պուքրէշի



կէս միլիոնէ աւելի բնակչութեան համար, մշտնջենական այժմէ ու-
թիւն մը:

Ի՛նչ էր, ի՛նչ կը պարունակէր և ի՛նչ էր պաշտօնը պայուսակին:

— Պայուսակը տեսակ մը խանձարուր էր՝ որուն մէջ նորածինը
կը զետեղեն: Պարունակութիւնը՝ այսօր «Մասիս», վաղը «Երկիր»,
յաւէտ նորածին Պաշտօնը՝ նորածինը յանձնել թղթատարին, յետոյ
հասցնել շարք մը մարդոց՝ որոնք թէև չեն բաղձար հոգեղաւակ ըն-
դունիլ իրենց տանը մէջ, սակայն և այնպէս...

Բայց կը պատահէր, յաճախ կը պատահէր՝ որ Երկիրը դառնայ
Վարդապետին շուրջը և Վարդապետը վերադառնայ իր տունը, պատ-
կառելի պայուսակին հետ՝ որ չ'էր պարպուած, որովհետև զրոյժա-
թուղթ և մամոնայ այս անգամ ալ չ'էին ողջունած մէկզմէկ:

Այսուհանդերձ, «Երկիր» տէր տնօրէն և խմբագրապետ անար-
ծաթ Վարդապետը տակաւին կը հաւատար թէ՛ Յոյսը փոխառուրիւն
մըն է Երջանկութեան հիմնադրամէն:

Եւ թերթին ուղեւորութիւնը կը կապուէր... զալիք օրերուն:

Պատմական այդ աղետարչ շրջանին, տոկուն Վարդապետը կը
տոկար չքաւորութեան և կը հրատարակէր «Երկիր»ը ա՛յն հաւատա-
քով որ, օր մը չէ օր մը, կամուրջ մը պիտի ձգուի Երկիրէն
կրնք, նիւթէն ղէպի Աննիւթականը:

*
*
*

Գրելը մարդկային է. իսկ լրագրելը համաշխարհային մօլութիւն
է... կ'ըսեն:

Հայր Պատուրեանի պէս մէկը՝ որ ո՛չ միայն Պարտիզակցի էր,
այլ նաև Մխիթարեան վարդապետ, վանքէն բուսած և հոն ուսած,
բնականաբար բացառութեան կարգը անցնելու հակամէջ չ'էր: Հե-
տեւապէս կռնակը տուաւ լրագրին, որպէսզի Չարին ղէմ կոռւի Բարին:

Նախ քան «Երկիր», արեւելքէն ճամբայ ելած «Նոր Արշալոյս» մը
տնկուած էր «Մասիս»ի գազաթը: Այն ատեն է որ Հայր Պատուրեան,
պայուսակը թեւին տակ, նորէն կ'օտարուէր վազել ի խոյզ և ի խնդիր
նորանոր լոյսերու և ուրիշ յոյսերու:

Անվճատ գրապաշտը, լրագրութեան ջերմեռանդ կոսպաշտը
սկսաւ դարձեալ գրել: Պրակներու շարքեր և կարկանդակ խճողեցին
մառանները. խճողեցին ձեղնայարկերը, իրը և զբացիներունը, և այս
տողերը գրողին բնակարանին սարդազարդ խորշերը՝ ուր այսօր ալ կը
մրափէ Վարդապետին գործերէն պատկառելի գանգուած մը:

Պատուրեան վարդապետը, իր ծննդավայրը Պարտիզակէն, արդէն
նշմարտած էր թէ՛ կարդալու մարմաջը տեղ տեղ կը բռնկի: — Ինչ
բան որ կը բռնկի՝ շուտով կը վերածուի մոխրի կամ կազի, Պար-
տիզակցին ա՛յս է որ չ'էր զխոցած: Եւ ահա քիչ անցաւ թէ շատ,

Յոռսահաժողովիւնը իր անաւոր բոյնը զրաւ արտասուակաթ կաղա-
մախիին վրայ և Վարդապետին պատմական Երջանը կնքեց մահկա-
նացուն . . . հիւժախտէ:

*
*
*

Բայց օր մը, Հայր Պոտուրեան յիշեց թէ՛ տարիներ առաջ հով-
ուական ցուպը, վարը, նկուղին մէջ անկիւն մը նետած էր: Այս ե-
րանեալ վերջիչուճէն ծնաւ երկրորդ շրջանը զոր քիչ առաջ անուա-
նած էր «Շրջան պատուական»:

Վարդապետը — իբրև վարդապետ — քանի մը անգամ քրթմըն-
ջեց «Հրաժարիմ ի սասանայե», կուրծքը խաչակնքեց և սահեցաւ ի
նկուղ: Այնտեղ, թէև մատ առ մատ պրպտեց, հովուական խորհրդ-
դաւոր այդ ցուպը յամառեցաւ մնայանդրդուելի ճգնութեան մէջ:

Ահա այն ատեն ծնունդ առաւ հանճարեղ գաղափարը:

— Վարդապետը, ինքի իր ձեռքով, մորուքը և պիւսերը ածիլեց:
«Եւ ետեա զի բարի է», իշաւ վերստին նկուղը՝ ուր այս անգամ ոտ-
քին զպաւ բան մը՝ զոր վերցուց, համբուրեց և զրկեց:

Այդ բանը . . . հովուական ցուպն էր:

Այս հրաշափառ գիւտը առաջնորդեց սքեմաւորը՝ նիւթեճ զէպի
աննիւթական . . . զէպի Առաջնորդարան . . . ցուպ ի ձեռին:

*
*
*

Բաղդին անխմանալի մէկ քմահաճոյքովը, դեռ կար հովիտ մը՝
ուր ոչխարները կը թափառէին փուշերու մէջ, քառասկներու
պլլուած: Հայր Մկրտիչ Պոտուրեան ուղղեց իր քայլերը — միշտ վա-
ղելով — զէպի իր երամակը որ կը մայէր: Անտէրուենջ մաքիները կը
քառապէին: Ձի կար հովիւ որ անոնց մաքրածին ծծակներէն թորէր
կենսատու կաթը սպիտակաթոյր: Հայր Պոտուրեան թեւերը սոթթեց
և սկսաւ կթել:

Այս ամուքիչ գործողութեան առ ի վարձաթուրութիւն, Ոչխար-
ները իրենց բուրդը տրամադրեցին և Վարդապետին սքեմը եղաւ
մեծարելի բան մը զոր պատմական Երջանին մէջ ոչ ոք համարձակած
էր գուշակել:

Պատուական-Երջանը հիմա Աղաւնիի պէս կը թռչտէր ի սփիւռս
վարդապետական ոլորտին . . .

Եւ սակայն, չքնադադեղ մոլութիւնը զոր վերը յիշեցի, մեկէն ի
մէկ նորէն զրաւ իր հուժկու թաթը Հայր Պոտուրեանի վրայ: Զեռ-
նարկեց «Հայ Մամուլ» թիտղոսով թերթ մը հրատարակելու: Ու նորէն
բռնուելով լրագրելու և անարձաթ ապրելու մարմաջէն, հովուական
եկամուտը զոհեց թերթին սպասարկութեանը:

Իսկ միւս մարմաջը՝ . . . կարդալու մարմաջը՝ . . .

— Սիրելի՛ վարդապետ,

Նկուղի մէջ հովուական ցուպ գտնելը աւելի հեշտ է և . . . զմայելիլ, քան թէ կարդացող մա՛րդ գտնելը մեր բազմածա՛լ մոլորակին մէջ:

Եւ Հայր Պատուրեան 1941ի «Գաղութահայ Տարեգիրք»-ովը սպառազինուած, հեռաւոր մոլորակէ մը կը պոռայ բարկաճայթ:

— Լռէ՛, դա՛ւաճան, պիտի չ՛ուշանայ հերքումը:

ՅՐՈՒՄՕՍՍՍ-Ի ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՉԱՐՄԱՆԱՀՐԱՇ Հ Ի Ի Ր Ա Ս Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Պիտի չի հաւատա՛ս — ես այդ քա՛ջ գիտեմ — պիտի չի հաւաւատաս որ Հայր Պատուրեան ոչ միայն գրասէր է, հապա նաև հիւրասէր. բայց մարդիկ այսպէս են . . . այսպէս էր նաև Թովմաս Առաքեալը. . . Տո՛ւր մատդ, դնեմ սպիացած վէրքին վրայ, որպէսզի հաւատքի գաս . . . Ես, իբրև փաստ՝ կ'ապաւինիմ. դէպքի մը անմխտելի վկայութեանը: Ահաւասիկ. —

Յրուժօսսա՛ որ ըստ բառգիրքի կը նշանակէ «Գեղանի», վարդապետին՝ հովուական իրաւասութեան խսրխիւն է: Այնտեղ է իր եկեղեցին և հոն՝ հաւատացեալներուն ստուար մեծամասնութիւնը. — 30 տուն: Այնտեղ է և իր բնակարանը՝ զոր նկարագրելու յանդուգն փորձը պիտի ընեմ տողերու շարքին, յագուրդ տալու համար ընթերցողին լարուած ուշադրութեան:

Մինչ այդ, կ'ուզեմ որ ամէն մարդ իմանայ թէ՛ միայն կէ՛ս ամսակ վճարելու առանձնաշնորհէն ոգեւորուած, վարդապետը Պուքրէշ կը յաճախէ և, գալուն պէս, չի մոռնար զիս հրաւիրել Յրուժօսսա՛ ուր կարելի է երբեմն ողջամբ հասնիլ 8 ժամ երկաթուղիի վրայ ճամբորդելէ վերջ:

— Պ. Խնդիրեան, օ՛դ կ'առնես, կը կ'աղղորուիս. հրաշագործ պա՛ղջը որ ունինք. կը խմես՝ կը զովանաս: Յրուժօսսայի հաւերը պարարտ են. կ'ուտես՝ իւր կը կապես. երեսդ զոյն կու գայ: Շուքին վրայ կ'երկննաս, կը պառկիս կը քնանաս. . . dolce far'niente! (քաղցր է ծուլութիւնը):

վարդապետին ուրուագծած նախշուն-նայխուն պատկերին չի հաւատալու պատճառ չ'ունէի, թէ և սկզբունքով սակաւահաւատ եմ:

— Կու գա՞ս . . .

— Կու գամ, վարդապետ, կու գամ. . . պայմանաւ որ ուտեմ, խմեմ, պառկիմ եւ. . . հանգիստ ընեմ. dolce far'niente!

— Հանգիստ՝ ո՛րչափ որ կ'ուզես, եղաւ Հ. Մ. Պոտուրեանի պատասխանը:

Ո՛րչափ որ կ'ուզեմ . . . Չ'ե՞ս հրապուրուիր, չ'ե՞ս չինքն իսկոյն ուղեւորի կապողդ: Եւ կա՞յ մարդ՝ որ գիտնայ թէ՛ վաղը գրելուս ի՛նչ փորձանք կրնայ գալ . . .

— Վարդապետ, դնա սենեակս պատրաստել տուր, իւզոտ հաւ մը խաշել տուր, ջուրո՞յն ալ տա՛ք տաք ապուր մը, ծառերուդ՝ ինձի համար չո՛ւք ապսպրէ... Վաղը կէսօրին կը զարնեմ դուռդ, Յրում-մօսասա... Եղա՞ւ: Եւ հիմա քեզի բարի ճանապարհ եւ վարդապետական «Տէր քնդ քեզ» մը:

Հայր Պոտուրեանի դէմքին վրայ կը նշմարեմ ժպիտի երթեւեկ, ինձ հաճելի կ'ըլլայ ենթադրելը թէ ան՝ աւելի ուրախ պիտի չ'ըլլար թէ որ «Համրագիսակ»ին համար 10 նոր բաժանորդներ գտած ըլլայի: Այս իմ երախտայական խորհրդածութիւնս տակաւին ի զօրու էր՝ երբ Վարդապետը, պայուսակը սեղմելով լնդ անութ, կը բռնէր կայարանին ճամբան . . . քառասմբակ:

Երբ առանձին մնացի, չ'եմ գիտեր ինչո՛ւ, զղջացի: Կարծես տեսակ մը նախասոցաշարում, տեսակ մը նախազգացում կը դրդէր, կը համոզէր զիս՝ որ Յրումօսաս չ'երթամ... երթամ ո՛ւր որ ալ ըլլայ, միայն թէ՛ Յրումօսասայի վարդապետին չ'երթամ... . . .

— Անչուշտ, սա մէկ նո՛ր և անպարագելի շահաժակութիւնն է «Նախագրացում» կոչուած ձիւնաղին, մտածեցի: Բայց, գիտնալով հանդերձ որ խոստումը չի յարգելը քաղքենիի վերապահուած հոյակապ իրաւունք է, արհամարհելով ամեն սեռի և ամեն տեսակի հաւանական վտանգ ու փորձանք, խոստումս յարգելու ունայնամտութիւնը սեղմելով կուրծքիս վրայ, հետեւեալ օրը ճամբայ ելայ:

*
*
*

Պուրքէջն դէպի Յրումօսաս, սկսելով Փրահովայի ձորէն ու ծործորէն, կը պարզուի ընութեան մէկ հրաշակերտը եղող հովասուն հովիտը, գեղածիծաղ բուսականութեամբ ընդելուզուած լեռներով պատնէչուած. լեռներ՝ որոնց բարձրամուր լանջացը վրայ կը հանգչին կամ կը թափառին՝ արեւէն զունագեղուած եթերայած լիճեր ու լճակներ, ու նաև կը պարզուի, միահաղոյն, համանուն գետին երբեմն ամենի վաղքը անհղամուռնչ, երբեմն հոսանուած հեղասահ և կարկաչուն ջմայլելի և առինքնող տեսարան՝ ուր դայլայլիկ մեղեդիներու նուագածութիւնը մէկ կողմը, և սպառնալից աստուածայնութեան պատկերացումը մի՛ւս կողմը: Այս ամէնը թողլով Հօրիօն բարեկամիս ձիրանազարդ փետուրին, կը փութամ ուսկիօրէն ծանուցանել թէ՛ անա հիմա Յրումօսաս եմ, և Հայր Պոտուրեանին, հիւր պիտի ըլլամ:

*
*
*

Կանգ կ'առնեմ ու կը համբմմ պատուհանները. — 1, 2, 3, 4... Եօթը հատ քովէ քով շարուած, կը նային փողոցին: Նայելով անոնց՝ յիշողութիւնս կ'առնուանգէ զիս ու կը տանի Պուքրէշի այն միւս բնակարանը — Ֆլուլէր (ուլուլ) փողոցին խորը պահուած բնակարանը — ուրաքեղ ցերեկը արեւէ, զիշերը լուսինէ զուրկ ձեղնայարկի մը խաւարամած խցիկին մէջ, թշուառական լամբարի մը միացող պատրոյկին հոգեվարքովը, վաղուան «Նրկիբ»ի ձեռագիրը կը սեպուէր... .

Ու, կամաց կամաց, կ'ընեմ անցեալի և ներկայի բաղդատականը և կը խորհիմ. — Կարելի՞ բան է որ Ֆլուլէր-ուլուլ փողոցի քահանայ խմբագրին բնակարանը հիմա ա՛յս եղած ըլլայ... Կարելի՞ բան է . . . կը խորհիմ զարմացումի և թարակուսանքի մէջ թաղուած և, եօթը բաց պատուհաններուն ներսը յաջորդարար լրտեսելու մեղաւոր նպատակով մէյ կը վեր, մէյ մը վար, թաղաւարին քղանցքը չափելէ և չափչփելէ յետոյ, վերջապէս կողքի դռնէն, չէնքը եկեղեցիէն անջատող նրբանցքը կը մտնեմ ակնածանքով: Հաստաբուն թթենիի մը ստուերին վրայէն քալելով քալելով, անկիւնը ուրբելէ յետոյ, վերջի վերջոյ կը գտնեմ միշարկանի այդ ընդարձակ տաղաւարին կեղրոնական դուռը զոր Հայր Պոտուրեան ինքը իր ձեռքովը կը բանայ:

— Վա՛րդապետ, սպասուհի չ'ունի՞ս կը հարցնեմ, կասկածոտ նայուածքս աջ ու ձախ յածելով:

Վարդապետը կը ժպտի և ես կը ջանամ անոր ժպտը վերագրել «բարի եկար»ի մը խորհրդաւոր նորաձեւութեան:

* * *

Ի՞նչէն, անխտոր մտած եմ սենեակ մը Մահճակալի վրայ մաքրակրօն եկեղեցականի վայել անկողին մը՝ որ — կ'ենթադրեմ — զիշերը տառապած ըլլալու է . . . (Վարդապետը առանձինն 90—100 քաչէ պակաս չի կշռեր): Սեղան մը՝ որ ծածկուած է ի մէջ այլոց գրեկու գործիքներով: Հոն է նաև Հայր Կոզեան, հակելու սահմանուած սուրբի մը պէս պատէն կախուած:

— Սա, թեոսածէս դատելով, աշխատանոցի և ննջասենեակի ըլլալու է:

Նորէն կը ժպտի: Հայր Պոտուրեան ժպտը միշտ գործածած է որպէս երկսայրի պատասխան. — Թէ՛ այո, թէ՛ ո՛չ:

Մուտքի վերոյիշեալ գլխաւոր դուռին հանդիպակաց դուռ մը ևս կը բանայ հիւրամեծար Վենեալիկեանը. — Ա՛յս է ընդունելութեան մեծ սրահը, կը մըմնջէ պարծանքի հպարտ շեշտով մը՝ որուն արդարացի ըլլալը անմիջապէս կը վկայեմ շնորհալի խոնարհութիւնով մը:

Սրահը ողողուած է յեա-միջօրէի ձրիատուր լոյսովը: Տարաչ-

խորհիկ ընտանի և կենդանի պէս պէս բոյսերու և ծաղիկներու թա-
ղարներ սրահը կը պճնեն: Խուռնի հոտ կը փնտռեմ... Երբեակ բաց
պատուհաններէն դուրս սպրդած ըլլալու է, կը խորհիմ: Այսպէս կը
խորհիմ, որովհետեւ Հայր Պատուրեանի հանդէպ ես միշտ բարեացա-
կամ եղած եմ:

Սրահին աջ որմին վրայ դուռ մը, և ասոր հանդիպակաց՝ ու-
րի՛շ դուռ մը: Աջակողմեան դուռը կը մշտեմ և հրաւերի առանց
սպասելու ներս կը մտնեմ: Ներս կը մտնեմ ըսելը՝ ըսելու ձեւ մըն
է: Տեղ կը փնտռեմ գոնէ միայն մէկ ոռջս տեղաւորելու համար, և
հազիւ կը գտնեմ... կամ չեմ գտներ, ու կոխելով գիրքերու, զրուած
թուղթերու, նօթագրուած խաւաքարածրու վրայ, պուտիկ մը կ'եր-
թամ առաջ:

— Ի՞նչ են ասոնք, Վարդապետ...

— Ասոնք... «Հանրագիտակ»իս աղբիւրներն են... Ու կը ժպտի
կ'ուզէ բացատրել թէ՛ աղբիւրներ օգտագործելէ յետոյ...

— Հասկցայ Վարդապետ, հասկցայ:

Ինչէ՛ մը՝ որ հանրագիտակեան աղբիւրներու դամբարանին մէկ
ուրիշ ելքն ու մուտքն է, կը հրաւիրուիմ մտնել չորրորդ սենեակ
մը: Այստեղ, տպածուներ— գիրքեր, պրակներ, թուղթիկներ, լրա-
գիրներու շեղակոյտեր զիջուած են զիրկ գիրկի, երջանիկ... ատար-
կարծութեամբ: Սակայն կայ նաև որ՝ յանցաւորի պէս, անկիւնները
քաշուած կը տքան: Ուրիշներ՝ իրենց խրս իճան՝ չը հպարտէն ցու-
ցադրելով կը սոնքան: Կայ նաև որ՝ պատառուկ բոյսերու նման,
դարակէ դարակ մազիցելով, կարծես թէ ուղած են բարձրանալ ու
բարձրանալ, նման այն գորտերուն որ՝ ծառերուն զազաթը կլան,
սոխակի պէս զեղգեղել կարենալու համար:

— Սա ալ մտաւնն է, ցոյց կու տայ Վարդապետը և, — Չէ՛...
կը յարէ. մի՛ մտնեմ... մի՛ մտնեմ, ուտելիք բան չի կայ...

— Թէ՛ որ ուտելիք բան չի կայ, զիս ինչո՞ւ հրաւերեցիր, ա՛՛ ե-
րանելի Բանանայ...

— Վարդապետը դարձեալ կը ժպտի, իսկ ես կը մնամ ա՛յն տպա-
ւորութեան օակ թէ՛ հոն անտարակոյտ բան մը ըլլալու է:

Իրոց-Բրոց մթերանոցին վրայ հուսկ ակնարկ մը ցանելէ յետոյ,
դուրս կ'ելլենք միւս դռնէն և, կայարանի փետրին նմանող խճուղ-
եայ ժապաւէնին վրայէն քայելով, կը հասնինք ուրիշ դուռի մը որ
բաց է: Սաամոքսային բարեգուշակ խլրտումով կը զիտեմ խոհա-
նոցը, կենսառու խոնարհ այդ անկիւնը անայնոց, և յարակից փոք-
րիկ սենեակը՝ բաշխիչ բարեաց:

Կը մնար այցելել ութերորդ և վերջին սենեակը:

Ուղեւորութեան յոգնանքը և Հայր Պատուրեանի իրարու վրայ

չապլած ոլորապտոյա բացատրութիւնները ըմբռնելու չարչաբանքը զիս ուժաթափ ըրած էին:

— Բա՛ւ է Վա՛րդապետ. մնացածը... արեւը մայրը մանելէն յետոյ:

— Թէ որ կ'ուզես, անկողնիս վրայ երկնցիւր, քիչ մը հանդիստ ըրէ. եղաւ նախախնամական պատասխանը Հայր Մկրտիչին:

Փռութացի հնազանդիլ, առանց այլեւայլի: Գալով Վարդապետին, կարծեմ քուսնս տանելու վրայ էր՝ երբ նշմարեցի որ ան ալ եկաւ ու տեղաւորուեցաւ գրասեղանին առջև: Գլուխս պառին դարձուցի և... մրափեք եմ: Քուսնս ո՛րչափ է տեւեր՝ չ'եմ կարող հաշուել. ընդոստ արթնցայ Վարդապետին պոռթկուն ձայնէն. . .

— Պ. Խնդիրեա՛ն... պ. Խնդիրեա՛ն...

— Ի՞նչ կայ . . .

— Չղջիկը Չ-ո՛վ կը գրեն թէ Զ-ով . . .

Չ'ե՞ս հայհոյեք... ըսէ՛. չ'ե՞ս հայհոյեք...

— Վա՛րդապետ, պոռացի, զիս Պուքրէչէն Ֆրուժոսաս բերիր որ հանդի՞ստ ընեմ... թէ ո՞չ՝

— Մի՛ ջղայնանար... Զ-ով կը գրեն, չէ՞... Զ ո՛վ թէ Զ-ով...

Անկողնէն վար սահեցայ, անիծելով... չղջիկը և անոր անցեալ, ներկայ և ապագայ պարագաները հեռաւոր և մօտաւոր: Այսօրուան պէս կը յիշեմ Վարդապետին արձակած կոկորդալիբ անփո՛յթ քրքիլը... Սա կայ որ՝ երեսը նայիս՝ զինաթափ կ'ըլլաս: Ու ես ալ սկսայ խնդալ ու խնդար: Պատէն կախուած Հայր Կոզեանի պառկելին անգամ կարծես կը խնդար... թէ՛ կը խնդայի և թէ՛ միտքէս, հաճգիս բառին գիրերը կը համբէի և կ'աշխատէի ծայրը ծայրին բերելով համբանքը գտնել՝ երբ Հայր Պոտուրեան ատենը գտաւ հարցափորձելու... փորձելու.

— Անդ հովանեաւ սաղարթախիւ ծառերուս, պիտի հա՛րկաւ առակներդ վերաքննեա... . . .

— Չէ՛... հեռս թուղթի կտոր մը չը բերի:

— Աղէ՛կ ես ըրեր. ըսաւ հիւրասեւ Վարդապետը և հրճուեցաւ անխառն հրճուանքով: Իսկ ես... զմայլեցայ անոր անշահախնդիլ մարդասիրութեանը վրայ:

*
*
*

Անցեալ դարու զէպի մէջտեղուանքը աշխարհ եկած ջատուկ մը—Վարդապետին խոհարարուհին, լուացարարուհին, սպասուհին, հոգատարուհին և tutti quanti — աւելի ցատկելով քան թէ քայելով, սեղանին կ'սպասարկէ: Ախորժակիս մէկ կարեւոր մնացորդը կորուստէ փրկելու համար, որոշեցի այլևս վհուկին երեսը չի նայիլ:

— Հուճարացի է, հայերէն չը գիտեր... . . .

Անտափ և անտեղի այս զեկուցումը պատճառ եղաւ որ վհուկին

երեսը մէյ մ'ալ նայիմ և խորոված համեղ միտի պատառը կոկորդա մնայ:

— Մեքիեք օգանօր քեսիքեքի:

— Ի՞նչ ըսիր, Վարդապետ...

— Ըսի որ երթայ անկողինդ պատրաստէ:

— Իցի՛ւ թէ չ'ըսէիր... հիմա քունս ալ պիտի փախի:

Արքայական ընթրիքին վերջաւորութիւնը խաչակնքելէ յետոյ, Վարդապետը առաջնորդեց զիս Տրորդ սենեակը՝ որ հանդերձեալ էր ննջասենեակս ըլլալ:

— Գիշեր բարի. Հա՛յր Պոտուրեան . . .

Գուռին կղզանքը (վհուկին համար) երկու անգամ դարձնելէ, անկողինն վրայ տարածուելէ, մէյ մը աջին, մէյ մը ձախին գլորելէ, ցամաք նետուած ձուկի պէս տապալակելէ, ջստուկին անդրաշխարհեան դէմքը յիշողութիւնէս վտարելու ի զո՛ւր աշխատելէ յետոյ, ոտքի ելայ, լուսինին զրկած մտերմիկ և խորհրդապահ լոյսովը հագուեցայ, և անցնելով նախ Մահեկ, ապա Հանրազիսակի ակուցեց, յետոյ Գրոց Բրոց մքերանցեց, բացի բակը տանող դուռը և իջայ պարտէզ: Այնտեղ, լայնքովը և երկայնքովը անշափելի շո՛ւնչ մը քաշեցի:

Շագակրատ ճպուռներուն անհամ համերգը կը խանգարէր խորհրդաւոր լռութիւնը, որուն կը նախագահէր եթերաց լուկաց հարսնուկը, ծառերուն զմբուխտէ տերեւներովը յօրինուած իր քելովը քելիկեղովը: Վերէն թափուող գիշերային զովքը պուտիկ պուտիկ կը վանէր երաշուտիւնը: Մօտեցայ և ականջ դրի մուտքի գըլխաւոր դուռին՝ որ էր միանգամայն Վարդապետին զրասենեակին և ննջասենեակին դուռը: Որոշապէս լսեցի անոր խորհրդը... Արդարներու վիճակուած խո՛ր և անվրդով Բուներ կը կատարէր իր պաշտօնը...

Անըմբռնելի հակոտնեայ թեյազրանքով — ո՛վ գիտէ ուրկէ — յանկարծ յիշողութիւնս համակրանքով պարուբեց Վարդապետին . . . խոճարարուհին: Անոր պառաւաղարդ դէմքին վրայ գեղեցկութիւն անգամ սկսայ երեւեկայել: Անո՛ր կը պարտիմ այս գիւթական տեսիլքը՝ ուր գոգցես աներեւոյթ զուարթուններ կը խաղան իրենց անըրջային փախուրտուքը մետաքսեայ սօսափիւնով:

Բանի մը քայլ անդին, աքլոր մը կը ճաթեցնէ անդրբը: Հաւանաբար, անո՛ր ա՛ ջուներ փախած ըլլալու է . . .

Պարտէզը՝ ընդարձակ, մէկ մասը յատկացուած է բանջարեղէնի մշակութեան: Ասդին բուրու մնաւէտ ծաղիկներ՝ սիրատուր յաւերժահարսերու նման կը Ժպտին կամարի ասաղերուն:

Բարեբախտաբար ժամացոյցս սենեակն է մնացեր. . . Ո՞ր ժամուն վերադարձայ անկողին՝ դեռ այսօր ալ չ'եմ գիտեր: Ձի հաւնած վհուկս

անկողին մը պաթարասանք է որ... ձիւնի պէս ծուփ ծուփ սպիտակաթոր: Թաղուէ՛ մէջը, քո՛ւն քաշէ:

*
*
*

— Բարի լոյս, Հայր Պատուրեան

Գրասեղանին առջևն է: Մահճակալին սաւանը անհետացեր է նամակներու, գիրքերու, հանդէսներու, օրաթերթերու բաղմուտներու թակ: Գրասեղանին վրայ ալ առեղ ձգելու թեղ չի կայ: Վարդապետը փնտռուքի մէջ է:

— Աղէ՛կ որ եկար... Բալիֆորնիայէն նամակ մը ստացայ . . . մարդը լուսանկարն ալ դրկեր է . . . արչալոյսէն ի վեր կը փնտռեմ չեմ գտներ . . . Ի՞նչ մըն ալ դո՛ւն փնտռէ... անկողինին վրայի նամակներուն մէջը չ'ըլլայ . . .

— Նախաճաշ պիտի չընե՞նք . . .

— Հիմա նախաճաշի աթե՞ն է . . . կը տեսնես կոր . . .

Կը պապանձիմ և կը քրքրեմ նամակներու պատկառելի տրցակը:

— Ա՛ռ, առ ըլլալու է...

— Ա՛ղ է . . . վայ շունչանորդի . . .

— Նախաճաշ պիտի ընե՞նք . . .

— Ի՛նչ անհամբեր մարդ ես պէ՛... պիտի ընենք ըսի... լմնցնեմ, յետոյ կը նայինք:

Վարդապետին ճակատը քրտինքով ողողուած է:

— Մէյ մը սա մարդիկը այրուբենի կարգով չարէ՛. կը հրամայէ Հայր Պատուրեան, նամակներու ուրիշ տրցակ մը նետելով առջևս:

Հիւր եմ, պէտք է հնազանդիւր կը կծկուիմ աթոռի մը վրայ եւ կ'սկսիմ աշխատիլ... Չէ՞ մի որ հանգիստ ընելու եկած եմ Թրումոսաս

Սիբիլի և հազուադիւր ընթերցող, ես որ առ առաւելն 8 օրուան համար եկած էի այստեղ, Վարդապետը 15 օր զիս բռնեց և 15 օր չարաչար աշխատեցուց . . . որպէսզի հանգիստ ընեմ և... իւր կապեմ:

Պուքրէշ վերադարձիս, իսկոյն կշռուեցայ: Միայն 5 քիւօ կորսընցուցեր եմ:

Չեմ զղջար: Եւ դեռ այսօր ալ, երբ կրնամ որեւէ կերպով օգտակար ըլլալ Վարդապետին անդադրուած աշխատանքին (վկայ է ներկայ ողբսականը), կ'զգամ տեսակ մը հպարտութիւն՝ որուն ազդիւրն է հայ ժողովն որոշ չափով ծառայած ըլլալու պատիւը:

Յ. ԽՆԴԻՐԵԱՆ

Պուֆրեօ, 12 Օգոստոս, 1940

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ Յ Ի Հ Ա Յ Ր Մ Կ Ր Տ Ի Զ Ը

Օտարութեան սահարային մէջ իսկական ուխտիս մ'է վեներտիկի
Ս. Ղազարու կղզեակը:

Հայրենիքի և հայրենակիցներու կարօտը քայտող հայը՝ հոգեկան
իր ծարաւին յագուրդը կը գտնէ այնտեղ:

Ս. Ղազար է՝ նաև անառիկ բերդ՝ անըտղձալիներու դէմ:

Հոռով մէջ, 1911ին, Սարգիս Խաչատուրեանի հետ, այժմ
յայտնի նկարիչ, որոշեցինք արձակուրդի ամիսները վեներտիկ անցը-
նել, որպէսզի օղափոխութեան հետ օգտուինք, որպէս գեղարուեստի
ուսանողներ, դիցանուէր քաղաքին զիւթեղ թեսարաններէն և հրա-
շակերտ չէնքերէն. ու նաև մօտէն ճանչնանք Հայկազն հանճարի
ուսաններէն մին եղող Ս. Ղազարու վանքը և անոր վանականները
գիտնական և ժրջան:

Վանքին սովորութեանց գիտակ՝ հաւաքեցինք յանձնարարա-
կաններ՝ որոնց շնորհիւ հնար պիտի ըլլար անցնիլը վանքին ցանկա-
պառէն ներս:

Մեծ պատմարան պատկառելի Հայր Մինաս Նուրիլեան մեզ ըն-
դունեց համակրանքով: Յայտնի ճարտարապետ փրոֆ. Լեոն Կիրեղ-
եան՝ որուն երեք տարիէ ի վեր անդնահատելի աջակցութիւնը կը
վայելէինք դպրոցէն ներս և դպրոցէն դուրս, մեզ յանձնարարած էր
իր հօրեղբոր՝ վանահայր Կիրեղեան գերապայծառին, Հ. Սիմոն Երեմ-
եանի և Հայր Ղազիկեանի:

Կը մնար ճամբայ ելլել դէպի Տոմերու ուսանը:

Ս. Ղազարու կղզին տանող Վաբորէթթօն մօտեցած է նաւա-
մատոյցին: Կը մտնենք և կէս ժամ հաճելի ուղիւորութենէ մը յետոյ,
կը հասնինք Ս. Ղազարու կղզեակը: Անուանիս կը յայտնենք, կը
ճանչնան և սիրով կ'ընդունին:

Հարցումներու և պատասխաններու տարափէն հտք, կ'առաջ-
նորդուինք պարտէզ՝ ուր կը ծանօթանանք կղզիբնակ միւս հայրերուն:

Կը տեղեկացնեն մեզ թէ՛ վանքին թանգարանը, մատենադա-
րանը և Մուրատ Ռաֆայէլեան վարժարանը բաց է մեզ համար և
կրնանք լիուրի օգտուիլ անոնցմէ:

Երիտասարդ վարդապետներու շարքին՝ կը ծանօթանանք նաև
Պարտիզակցի Հայր Մկրտիչին, ինչպէս սովոր էին անուանել զայն
վանքին մէջ:

Հայր Մկրտիչ հետաքրքրութեամբ կը հետեւէր մեր պրպտում-

ներուն, այնպէս որ՝ յարարերութիւնները շուտով մտերմական եղան: Կը տեսնէինք՝ ի՛նչպէս ան կ'ուղէր օգտակար ըլլալ մեզ: Յաճախ, տրամադրելի իր ժամերը հաճոյքով մեզ կը յատկացնէր:

Սարգիս Սաչառուրեան թաղուած էր «Այվազովսքի» մը ընդօրինակելու քրտնեցուցիչ աշխատանքին մէջ: Իսկ ես տարուած էի Բանովլախ, Մէքի Անճելօի, Բատրէ Բոցցիի գործերուն ուսումնասիրութեամբը:

Կայ նաև Կէօղիւպէօյի քեան Չարեհը, ան ալ պիտի հետեի արձանագործութեան. (եղաւ յետոյ նշանաւոր արձանագործ):

Չարեհը առաջին անգամ ըլլալով կը տեսնենք վանքին պարտէզը, յուսահատ վիճակի մէջ. լալը միայն կը պակսէր: Այս 14 տարեկան պատանին իզմիրէն վեհնետիկ զրկուեր է Գուրեան Նղիշէ արքեպիսկոպոսի կողմէ, որպէսզի սան արձանագործի Մուրաթ-Ռափայէլեանի և, զուգահեռաբար, շարունակէ ուսանիլ արձանագործութիւնը՝ որուն համար, մանուկ հասակէն ցոյց տուած էր հակում:

Միաբանութիւնը մերժած էր բացառիկ ընթացք տալ եպիսկոպոսական խնդրանքին և համաձայն կանոնագրի, պատրաստուեր է եղեր—Միաբանութիւնը— զայն իզմիր վերադալ ձեռի՝ Ուտիկանու թեան ձեռամբ:

Մեր սովորական աշխատանքին համար երբ վանք կը ժամանենք, նաւամատոյցին վրայ կը տեսնենք Չարեհը, պատրաստ՝ չոզենաւ մտնելու և մեկնելու: Կը հարցափորձենք և վերահասու կ'ըլլանք կացութեան: Տղան, բաղդը անիծելով, կու լայ և կու լայ:

Յետ խորհրդակցութեան, կը միանանք հայր Մկրտիչի՝ ը Բոստանալու համար տաղանդաւոր պատանիի մը հանդէպ միաբանութեան կողմէ որոշուած անորակելի վերաբերումին դէմ: Հայր Մկրտիչ, Սարգիս Սաչառուրեան և ստորագրեալս, զիմումներով խընդրանքով ու պաղատանքով, կը յաջողինք պատանին փրկել ուտիկանական հետապնդումէ և ան կը մնայ մեր մօտը:

*
*
*

— Տղա՛ք, կ'ըսէ օր մը Հայր Մկրտիչ, ժամը 5ն է, անօթի չէ՞ք: Մինչև գիշերուան ճաշը դեռ չառ ատեն կայ: Հայտնի՛, մառանը իջնենք: Մառանապետը ես եմ:

Վարդապետը բանալիները կը չկշկէ և մենք կը հետեւինք իրեն ու բանալիներուն աղմուկին: Երկիւղած քայլերով կը համրենք սանդուխին մասները և կ'ողջունենք ստորերկրեայ բարի կամարը . . .

Վարդապետը կ'սկսի գործի.— կը բանայ պահարանները, զգոցները և մեղուաջան փութկոտութիւնով հետզհետէ սեղանին վրայ կը սփռէ վանքին պարտէզներուն մէջ արգասաւորուած տեսակ տեսակ պտուղներ. . . յետոյ, գինի և ոգեղէն, կարկանդակ՝ շոքոլայով հա-

մեմուած. ապա նաև համեղ կաթ՝ ընթիր քաքառոյով բարեշնորհուած...
խնջոյք անակնկալ: Ու կ'ուտենք և կը խմենք.. կը լափենք պա-
տանեկան այն ախորժակով՝ որուն ա՛խը կը քաշեն՝ ասրեց մարդիկ:
Գո՛հ էր, Հայր Մկրտիչ երջանիկ էր որ կուշտ ու կուռ կերակրեց մեզ:
Մեր այդ օրուան այցը բարեխնամ մատանին՝ էր առաջինը,
բայց չեղաւ վերջինը: Այնուհետեւ մենք ալ ունէինք բաժինը մեր՝
վանական կերուխուամէն. իսկ Հայր Մկրտիչի հրճուանքը կը ցոլանար
իր երեսաստորդ և կլորիկ դէմքին վրայ . . .

— Կերէ՛ք տղաք, կերէ՛ք:

1916ին, խեղճ Զարեհը, իրաքի ճակատին վրայ՝ ուր զրկուած էր
իրբև սպայ թուրք բանակին մէջ, համաճարակի մը (թիֆուս) զոհը
եղաւ: Կալով Սարգիս Խաչատուրեանի, չ'եմ գիտեր թէ կը յիշէ այս
անմեղուկ զրուագը: Ան ինձի համար միշտ թարմ է, և ա՛լ աւելի կը
թարմանայ՝ երբ 29 տարիներ յետոյ կը հանդիպիմ Պուքրէչի պողո-
տաներուն վրայ Հայր Մկրտիչ Պոտուրեանի՝ որմէ իրաւունք ու-
նիմ ապաստու խնջոյք մը ևս, իբրև փոխարինու թիւն համառօտ այս
ներբողականին:

Օ. ԲՈՒԱՏԵԱՆ
Ճարտարապետ

Պուրեհե, Սեպտ. 1940



ՄԵՌԵԱՆԼ Է ՆԷ. — MORTUA EST

Գրեց՝ Mihail Eminescu

Թարգ. Յ. ԽՆԴԻՐԵԱՆ

Լապտեր վերակացու՝
 օրմերու վրայ սամուկ !
Մրբալոյս ժամերուն՝
 զանգակի ֆաղցր աղմուկ !
Երազ մը՝ որ թեւն իր
 կը բռջէ ի լեղի...
Այսպէ՛ս է որ անցար
 սահմանէն այսեղի:
Երկինքն՝ անապական
 դաճս մ'էր երբ դուն անցար.—
Կարթի վրսակներով,
 ծաղիկօ՛ք յուսապայծառ,
Երբ սեւ ամպերն էին
 զոգ պալաճ մրնամած՝
Թագունի Լուսինէն
 մէկ մէկիկ այցելւած:
Արծաթեայ շուրի՛ մ պէս
 քեզ 'կ սեսնեմ յուսաւոր,
Վերամբարձ թեւերով
 դէպ յերկինս ուղեւոր.
Մագլելով, զունաս հոգեա՛կ,
 սանդուխտն ամպերուն,
Ճանանչաց ընդմէջէն
 եւ ընդ ձիւնսջասդերուն:
Լոյս 'մ կ'ամբառնայ 'զ քեզ,
 երգ'մ զքեզ կը սանի
Թեւերովդ սպիտակ՝
 Կուրծքի վրայ խաչանի...
Ոլորն երբ կ'իմացի
 կախարդանքին ռոքի,
Արծաթ է ի ջուրքս
 եւ ընդ այեր՝ ոսկի՛:
Տեսայ ամբիժ ոգւոյդ
 անցնիլըն ընդ ոլորս.
Կը նայիմ ներմա՛կ եւ պա՛ղ
 կաւիճ մրնացորդ՝
Շրջագգեսովն երկայն,
 դազաղին մեջ պառկած.
Կը նայիմ ժրպիտիդ
 դէռ առո՛յգ մրնացած:

Ու կը հարցնեմ ես իմ
կասկածաբեկ հոգւոյս.—
Ինչո՞ւ մեռար, ինչո՞ւ .
դալկադե՞մ հրեօտակի կոյս .
Միթէ չ'եի՞ր դեռ աշի .
միթէ չ'եի՞ր գեղեցիկ !
Գուն գացիր որ մարես
ա՞սդ մը հանանչածիգ :
Հոն, գուցէ դղեակներ
ըլլան հաւել տարած .
Ոսկեայ կամարները
ասդերով պահիւսւած .
Հրեղեկն ուղիներով
եւ արծաթ կամուրջով .
Ծաղիկներն իր երգող՝
կնդրուկի ափունքով . . .
Սո՛ւրբ դէխո՛յ . 'նոնց մեջէ՞ն
անցնիլ դուն ուզեցիր
Լոյս աչկունքն՝ փառսո՞վ,
հանանչ վարսո՞վ
երկայն ու ցիր . . .
Ոսկի ցանւած կապուսագեղ
հանդերձանքն՝ . . .
Գունաս նակսիդ՝ դափնիներէ
հիւսւած պսակն՝ . . .
Օ՛, մահը քան մ'է,
ձով մ'է նա ասդերու,
Մինչ կեանքն է նահին մը
ըմբոս երազներու.—
Օ՛, մահը դար մըն է
դաշտնիքով ծաղկագեղ,
Մինչ կեանքն առասպել մ'է՝
խո՛-խոպան եւ սրգեղ :
Բայց գուցէ . . . Օ՛, քափո՛ւր գլուխ իմ,
ամպրոպով լի
Մըսածմունքս իմ յօռի՝
խեղդեն գայլս գովելի . . .
Լոյսերն երբ կը մարին,
եւ երբ ասեղփ կ'իյնան,
Ինձ այնպէ՛ս բրբի բէ՝
ամեն ինչ է ունայն . . .
Վերելի կամար
հրեար է որ կօտի,
Զիքն իր լայնէի ցայգով
իյնայ վրայ երգի,
Տեսնեմ սեւ երկինք՝
որ կը սրգէ զիր աշխարհ,
Յաւերժական մահու
գերբ վաղանցուկ աւար :

Թե որ այսպէս ըլլայ . . .
 ուրեմն ալ չը պիտի
 Կենդանանայ շունչ քո
 սախտիկ յաւերժասի . . .
 Ուեմն անուշ քո ձայն
 մունջ է յար յաւիտեան . . .
 Ուրեմբն, հրեօսակն այս չ'եր ինչ'
 այլ կա'ւ միայն:
 Եւ սակայն, կաւակոյ՛ս
 գեղեցիկ եւ մեռեալ,
 Կը յենում դազադիդ
 սաւղսվս խորակեալ.
 Եւ չ'եմ ողբար մահրդ,
 այլ սա'մ իսկ երանի'
 Փախչող նառագայրիկն'
 քառսէն մեր հունի:
 Եւ յետոյ, ո'վ գիտէ.
 ո'րն է լաւը միքէ . . .
 Լիներ'լ քէ չը լինել . . .
 բայց ամեն մարդ գիտէ'
 Թէ ի'նչ որ անգոյ է,
 չ'զգար ցաւ ու սանջանք—
 Եւ շա՛ս են վիշտերը,
 սակաւ են խորախնանք,
 Լիներ'լ . . . Յիմարուրիւն'
 քէ' դառն, քէ' սին, բաբէ' . . .
Ունկդ քեզ կը սքսէ,
 'ւ աչքդ քեզ կը խաբէ.
 Դար մ'ինչ որ մեզ կ'սքսէ,
 մեկայնոնք կը ժխտեն—
 Երազի 'մ տեղ անհամ,
 լա'ւ է ոչինչն անդէն:
 Երազներ յեսս անըջոց,
 գունդագունդ շար կապած,
 Կը վազեն որ իյնան
 ժիրմի մեջ մտաբաց:
 Ու չը գիտեմ ինչո'վ
 մարեմ մըսածմունք իմ—
 Յիմարի պէս խնդա'մ,
 գայնս անիծե'մ, փղձկի'մ . . .
 Առ ի'նչ . . . Չէ՞ — ամենքն ալ—
 միքէ անմըսուրիւն . . .
 Ինչո'ւ մանրդ, հրեօսակ,
 եղաւ եղելուրիւն . . .
 Կա'յ միտք յայսմ աշխարհի . . .
 Դո'ւ, կերպարա՛նք ժպտուն,
 Դիտմամբ կեանքն ապրեցար
 որ այսպէ՛ս մեռնիս դուն . . .

Ս Է Ր

Գրեց՝ ՀՕՐԻՕՆ

Ա.

Դաշնակի փոթորիկին կը յաջորդէ. այլապէս երաժշտական, հըն-
չական ճռուողիւնը երիտասարդ զոյգերու, որոնք կը պատրաստուին
մեկնիլ պարասրահէն: Զմայլելի և սովորական վայելուչ իրարանցում
մը: Խուճապը դէտի հանդերձատուն, ուր հապճեպով քսուած բրնձա-
փոշիին պարտաւորիչ արարողութիւնը կատարեալ կ'ընէ բարկեն-
դանային տեսարանը: Պարի սետուցչին ձայնը հազիւ կը ճեղքէ աղ-
մուկին պատը:

— Գալ կիրակի, ժամը հինգին...

Խանդավառ ծափահարութիւն:

Հրանդ լրջութեամբ կ'օգնէ Հայկուհիի, իր պարի ընկերուհին,
որ մարմինին կ'անցնէ հարուստ բաւական սուղ վերնադրեացի մը
հաճելի ծանրութիւնն ու փափկութիւնը: Իրենց կ'ընկերանայ ժպտունի,
Հրանդի ընկերը:

Փողոցին մէջ, լապտերի մը ըրերին ու համակրելի ձիւնի մը
դգուանդին տակ, հրաժեշտի անողոք և խորհրդաւոր պահը: Հրանդի
երկա՛ր ու խոր նայուածքը Հայկուհիի գեղեցկութեան ու պարզու-
թեան:

— Ուրեմն, գալ կիրակի, օրիորդ Հայկուհի, գալ կիրակի: Յտե-
սութիւն . . .

— Է՛, վերջ տուր լուութեանդ. ի՛նչ կը մտածես. տղայ մի՛ ըլ-
լար: Կարծես լրջօրէն սիրահարուած ես... Խմէ՛:

Եւ Հրանդ, շրթներուն տանելէ վերջ զաւաթին զովութիւնը՝
գրեթէ վճռական:

— Այո՛, այո՛, ժպտունի, լրջօրէն սիրահարուած եմ: Երկու կի-
րակի, այսինքն հինգ-վեց ժամ, բայց արդէն կը սիրեմ զայն:

Ու դարձեալ մշուշին անորոշութիւնը:

Գրեջրատան զուարթ և ուստաւուն երաժշտութիւնը չի մտներ
Հրանդի հոգիէն ներս, որ բազմութեան միջադպայի թոնուբոհին մէջ,
այդ պահուն մինակ կը զգայ զինք:

— Եթէ ճշմարիտ է սէրդ՝ լա՛ւ: Յետոյ շնորհալի աղջիկ մը կը թուի Հայկուհի: Թերևս հարուստ ալ է: Բայց այժմ խմէ՛...: Շիտակը ըսելով, ես դեռ չեմ հաւատար ճշմարիտ սիրոյ:

— Անոնք որոնք սէր չեն ունեցած՝ չեն կրնար հաւատար: Եւ դուն որ բանաստեղծ ալ ես...:

— Փիլիսոփայութիւն... Կեցցե՛ս: Ուրեմն սիրդնե՞րը միայն հաւատք ունին: Ա՛ս ըսել կ'ուզես: Կեցցե՛ս. հիանալի է: Պօղոս Առաքեալ...:

Ու հառաչանքին ու երազին խորունկէն՝

— Ժպտունի՛, կը կարծեմ, կը նախդգամ թէ այս հանդիպումը ճակատագրական պիտի ըլլայ ինծի համար:

— Մե՛ծ բառեր...:

— Այո՛, երկու ծայրայեղութիւններ, կամ երջանկութիւնը կը սպասէ ինծի, կամ...:

— Դժբախտութիւնը:

— Կամ մահը:

— Օ՛, դարձեալ: Բայց անշուշտ. շատ պարզ է նորութիւն մը չկայ այս վճիռիդ մէջ: Մարդ կամ երջանիկ պիտի ըլլայ կամ դժբախտ: Կախում ունի մտայնութենէդ: Յետոյ՝ անխուսափելի մահը: Առանց այս հանդիպումին ալ՝ պիտի պատահին այս բաները:

Մինչ Հրանդ՝ թողնած վարդի մը նման՝

— Ո՛հ, չես հասկնար. ուրիշ բան ըսել կ'ուզեմ:

— Ու եթէ այս հանդիպումէն երջանկութիւնդ է որ պիտի ծնի, ուրախ պիտի ըլլամ: Ես եղայ պատճառը՝ քեզ պարասրահ մղելով: Սակայն եթէ... եթէ... կը հասկնա՞ս... — չեմ ուզեր բառը տալ — այդ պարագային... Է՛, խմէ՛, ու այժմէն մի տանջեր խիղճս:

Հրանդի անորոշ նայումովն նաւակը կ'օրօրուի ծուխին ալիքներուն մէջ: Երեւկայութեամբ՝ դեռ կը պարէ Հայկուհիի հետ: Սյս երկրորդ անգամ, ան աւելի քաղցր էր, բարի, ժպտուն և զեղեցիկ: Ու յատկանշական պարագայ, ան երբեք չպարբեց ուրիշին հետ: Միշտ եղաւ իրեն հետ. երբեմն ճակատ ճակօի. յաճախ նայումք նայումքի, միշտ կուրծք կուրծքի: Ո՛հ, ո՛վ էր այս աղջիկը, որուն հասակին ցօղունը յանկարծ կը ցցուէր իր աչքերուն արևին դէմ:

Աւ, ընդոտ՝ ցնցումին և զողին քաղցրութեան մէջէն, աստղերու և յոյսին մանկութեամբ՝

— Ժպտունի՛:

— Հրամէ՛:

— Սիրելիս, չես հասկնար, չես կրնար երեւկայել...:

Երջանիկ հառաչանքի կտոր մը իր ուսերուն վրայ:

— Չես կրնար երեւկայել թէ ինչե՛ր կը զգայի՝ մինչ կը պարէի Հայկուհիի հետ: Երբ մարմինս կը հպէր անոր մարմինին զմայելի համակերպութեան... Երբ ճակտիս ջերմութիւնը քնքոյրէն կը հակէր

անոր ճակատին նկարչային անարատութեան... Ու իր աչքերը մանա-
ւանդ, իր խոշոր, մաքրաբեր, խո՛ր, հպարտօրէն խոնարհ աչքերը,
որոնք, ո՛հ Աստուած իմ, կարծես... կարծես իմ աչքերուս նայուածք
ուսին . . .

— Օ՛, ասիկա կատարեալ բանաստեղծութիւն է:

— Թերեւ՛ս: Սէրը մարդս բանաստեղծ կ'ընէ:

— Հրաշալի: Կը տեսնեմ որ արդէն երջանիկ ես. կամ երջանկօրէն
կը տառապիս: Ուրախ եմ, խմէ՛. կենացդ, Հայկուհիի կենացը:

— Ապրի՛ս: Բայց . . .

— Այ «բայց» չի մնար. խմէ՛, ապագայ է որ կը դարձնուի այս
պահուս: Դուն զայն կը սիրես, շատ հաւանաբար շն ալ քեզ...

— Սակայն խանդավառութիւնս դեռ Քաւարանին մէջ է, սիրելիս:
Անցնող շարժումն ընթացքին շատ հետաքրքրուեցայ, հարցապնդեցի
և բաւական տեղեկութիւններ քաղեցի Հայկուհիի պարագաներուն
մասին: Հայրը հարուստ քաղքենի մը, խիստ, խոժոռ, կուլտ նոյն
իսկ, և իր դիրքը ամէն գնով պահելու գող մէկն է եղեր: Իսկ մայրը՝
տունին նուիրուած բարեպաշտ կին մը՝ որ երկիւղածութեամբ կը
կատարէ իր ամուսինին հրամաններն ու կամքը: Չեմ գիտեր՝ այս
պայմաններուն մէջ ո՛րքան կարելի է խանդավառուիլ:

— Կերջ ի վերջոյ այդ մարդը չի կրնար յաւիտեանական տունը
պահել իր աղջիկը: Ուրիշ զաւակ ունի՞ն:

— Ոչ. Հայկուհի առաջինն է ու վերջինը: Բայց այդպիսի տիպար
մը կրնայ զանազան յաւակնութիւններ ունենալ իր ապագայ փե-
սացուիին նկատմամբ: Անշուշտ ան պիտի ուղէ ունենալ այնպիսի
փեսայ մը որ ըլլայ հարուստ, դիրքի սէր, գործի աշխարհին մէջ ծա-
նօթ և գործունեայ: Մինչ ևս օտար մեծ հաստատութեան մը մէջ՝
պզտիկ պաշտօնեայ մը: Ապագա՞ն. Աստուած գիտէ: Կամ ո՛ւնէ դիրքի
մը կը հասնիմ, կամ կը մնամ նոյն հասարակ պաշտօնեան: Օտար եմ,
վերջապէս: Տիտղոս չուրիմ: Երկրորդական վալժարան մը է՛, կը
կարծե՞ս որ իրերու այս վիճակին մէջ՝ Յակոբոս էֆէնսին իր մէկ
հատիկ աղջիկը յանձնէ ինծի:

— . . .

— Յետոյ, Հայկուհիի ծնողքը պիտի չհետաքրքրուի՞ մեր անց-
եալով, իմ ծնողքով: Հայրս զաւառացի համեստ արհեստաւոր մը,
շատոնց մեռած: Մայրս շատերու ծանօթ նախկին լուսցարարուհին,
որ ինչպէս գիտես, տարիէ մը ի վեր անկողինն է: Խեղճ չուտելով
չիմեկով, ուրիշներու լուացք ընելով, մեծ գրկումներով և զոհողու-
թիւններով, զիս վարժարան զրկեր է: Մասամբ հասեր է իր նպատա-
թիւններով, զիս վարժարան զրկեր է: Մասամբ հասեր է իր մարմինը: Բժիշկները
կին: Բայց անա չի կրնար վայելիլ Ծիւրած է իր մարմինը: Բժիշկները
յոյս չուրին: Անշուշտ տարիքն ալ չի նպաստեր: Է՛, դարձեալ հարց

կու տամ քեզի, Ժպտուենի՛, այս պայմաններուն մէջ ինչպէ՞ս կրնամ
յաւակնիլ . . .

Բառերուն արշաւը կանդ կ'առնէ, աչքերը կը խոնարհին և ինք
ակամայ, կը վերածուի արձանի մը՝ որուն պղինձէն կը ցայտի յու-
սահատութիւն, բողոք և արցունք:

Ժպտուենի, յաւկապէս ուրախ, կը դիտէ ողբերգութիւնը, որուն
առաջին արարուածը տեղի կ'ունենայ իր ընկերոջ երեակայութեան
բեմին վրայ:

Ու չ'աւելբ անոր մտահոգութիւնը. ու չի պղծեր անոր էութեան
օրհնեալ տառապանքը: Ինքն ալ թէպէտ ունի իր ցաւը, նիւթական
ողբալի դրութիւնը, բայց ճիգ կ'ընէ մոռնալ՝ այդ պահուն՝ Հրանդի
ներկայութեան, որուն վիճակը թէև կերպով մը ազահովուած, սակայն
հոգին սկսած է բռնկիլ. և հոգիին կրակը ոչ ոք կ'նայ մտլիլ. Ու, կէս-
լուրջ, կէս-կատակ, գոյց տալով մխիթարութեան և յոյսին փարոսը՝

— Եթէ Հայկուէի քեզի համակրած է ու քեզ կը սիրէ կամ
պիտի սիրէ, ոչ մէկ թումբ, ոչ մէկ պատնէշ կրնայ գոյութիւն ունե-
նալ ձեր վերելքին առջև: Ապագան երիտասարդներունն է, ինչպէս
կ'ըսեն:

Ու Հրանդ՝ մեքենարար, ծանր ու երկար շունչով՝

— Երանի՛ թէ . . .

Փողոցին մէջ, ելեկտրական սիրուն աստղեր, գոյնզգոյն արեւ-
ներ ու երջանիկ լուսիններ: Երկու ընկերներուն լուս զնաւը մայ-
թերուն ինքնամատոյց հեզնանքին ու ազմուկին վրայէն:

— Փող ունի՞ս, Ժպտուենի:

— Սրիկաները, սրիկաները . . .

— Ինչ պատահեցաւ:

— Երկար և գեղեցիկ ոտահաւորիս . . .

— Կարդացի . . .

— Ոչինչ գումարի մը փոխարէն . . .

— Հոգ մի՛ ըներ. այս օրերը կ'անցնին Ա՛ռ, խնդրեմ, սա . . .
հոգ տար մօրդ: Ո՛հ, մայրերը սուրբ են ու շարի, մայրերը երկինքի
ներկայացուցիչներն են մեր երկրին վրայ. մայրերը հերոսուհիներ են,
մարտիրոսուհիներ:

Երգ և դող իր ձայնին մէջ:

— Մայրերը . . . ցտեսութիւն, սիրելիս . . .

* * *

Մասներուն յուզումը փափկօրէն կը հպի զանգակին կոճակին,
Հիւանդապահուհիին քնաս արամազրութիւնը զգուշութեամբ կը
բանայ դուռը, և ցած՝

— կը փնանայ:

Նախասենեակին մէջ, լոյսի մը թախիծին տակ, Հրանդ կը նըշմարէ իր վերնադգեատին ու գլխարկին վրայ՝ ձիւնին ճերմակ ծեփը, որ շուտով բիւրեղի կը վերածուի:

— Բան մը կերա՞ւ, օրիորդ:

— Քիչ մը, պարոն, վառեակի ջուր, շատ թեթեւ: Դժուարաւ կուլ կու տար:

— Դե՞ղ:

— Երբ կը ջանայի դգայը բերանը ասնի, ձեռքով հրեց. թափեցաւ նոյնիսկ, Ալ չուղեցի փորձելու ժամէ մը ի վեր կը քնանայ:

— Խաղա՞ղ թէ . . .

— Ո՛չ, հանդարտ է:

— Խեղճ մայր . . . զիս հարցո՞ւց:

— Ո՛չ, ձեր մեկնելէն վերջ գրեթէ չխօսեցաւ:

— Խեղճ մայր . . . դու ճաշեցի՞ր:

— Այո՛, պարոն, կարծեմ ժամանակը բաւական ուշ է: Յետոյ էի գիտեր որ . . .

— Հոգ չէ, հոգ չէ. լաւ ըրեր ես:

— Պարոնը կ'ուզէ՞ ճաշել:

— Քիչ մը, թէև ուտելու ո՛չ ախորժակ ունիմ, ոչ տրամադրութիւն:

Հիւանդապահուհիին սրածայր և ոսկեղօծ մատները հապճեպով կը պառարաս են սեղանը: Հրանդի բերանը կը շարժի մեքենաբար. կը ծամէ կը ծամծամէ պատառները, բայց չի ճաշակեր անոնց համեղութիւնը: Միտքը ուրիշ տեղ կը թեւածէ, սիրտը ուրիշ տեղ կը արօփէ: Չգացու՞ն ու խորհուրդը՝ այդ պահուն՝ կը խաչաձեւ են ու կը մաքառին իր ներսի անհունին մէջ, ու, բարձրադաղակ, կը պարզեն իրենց սեփական պահանջները: Բայց, ի վերջոյ, համակերպութեան խաւարին սեւը կը ծածկէ անոնց պոռթկումը:

Ձմրան գիշերին երկարութիւնը անտանելի կ'ըլլայ այդ յարկին մէջ: — Հրանդ, հիւանդապահուհի, հիւանդ մայր— Սիրոյ, Հացին ու Լոյսին համար: Տառապանքին ամպերը՝ երեքին ալ երկինքին մոռայլութեան վրայ: Տարբեր ճամբաներով, բայց կ'երթան նոյն կլափին վախճանին:

Հաւատացեալի մը նման որ խաչին կ'երթայ լի սիրով և զոհաբերութեան զեղեցկութեամբ, Հրանդ թեթեւ քայլերով իր ողբերգութիւնը կը ասնի մօրը անկողինին: Աչքերը կ'իյնան անոր գեղին եւ նիհար, մաքուր բայց հետզհետէ հիւժող զէմքի կերտին վրայ: Ու հառաչանքի մը զսպուած լուութիւնը սանձարձակօրէն կ'աղմկէ իր ներսը: Պահ մը ոտքի է ան: Բովանդակ անցեալ մը կայ այդ դիրքին ու այդ րոպէին մէջ: Յետոյ ծունկի կու գայ ու հակի Տառապան:

քին ու Նուիրուժին անասնամանութեան: կաթիլներ՝ աստղերու պէս վճիտ՝ իր նայուածքին ու աղօթքին մէջ:

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Ու միշտ ցած, բայց հաւատքին որոտումով՝

— Ոտքի՛ ելիր, մա՛յր, առողջացիր, ելի՛ր ու վայելէ կեանքն ու զաւակդ...

Սակայն չ'ուղեր մատ դպցնել քուռին անդորրութեան: Թերեւս քուռը...

Քուռին, ինչպէս մահուան մէջ, կը դադի ցաւը:

Դուրսը՝ ձիւնին ու հովին հեկեկանքը, Հրանդ իր սենեակի ցուրտ միայնութեան մէջ: Փոքրիկ սեղանին վրայ՝ սիկար և զիրք: Անկողինին անքնութեան վրայ երկար ատեն կը մտածէ, չի կրնար կարգալ, բայց կը ծխէ ու կ'երազէ: Ու երազին թեերը կը բախին խորշամած ներկային ու անծանօթ ապագային պատուարներուն:

Իր նայուածքի խաչին բեւեռներուն վրայ՝ Տօրը վիշտն ու Հայկուհիի սիրտը...

* * *

Սպասումի և անձկութեան շարաթէ մը վերջ:

Հրանդ իր կէսը տունը թողած, հասած է պարասրահին առջև: Պահ մը կը դեգերի անորուշութեան հետ: Ծրագրուած է որ ժպտունի պիտի չզայ: Պիտի սպասէ ծանօթ դարեջրատունը, ուր Հրանդ պիտի առնի, աւելի ուշ, կա՛մ իր երջանկութիւնը, կամ փչուած յոյսերուն բեկորները: Այո՛րբ, կամ յաջորդ քանի մը ժամերը պիտի վճռեն իր կեանքին զեղածիծաղ արշալոյսը կամ յաւիտենական զիշերը: Նայուածքի, ժպտի, բառի թելէ մը կսխուած է իր սպազան: Սլողօք եկա՞ծ է Հայկուհի: Ինք, թէպէտ, պարկուտ երբե՛ք արամադրութիւն չունի: Անգամ մը պիտի դառնայ, ու յետոյ՝ պիտի առաջարկէ որ...

Քայլերուն երիտասարդութիւնը կը բարձրանայ սանդուխին ծերութեան վրայէն: Բիբերուն կայծակը կ'իյնայ պարող զոյգերուն վրայ: Հայկուհի նստած է անկիւն մը՝ մինակ: Հրանդի սիրտը ասպետական բարախումներով՝ կը յառաջանայ ու կը համբուրէ Հայկուհիի ձրուքին փղոսկրեայ սպիտակութիւնը:

— Բարե՛ւ, Օր. Հայկուհի, ի՛նչ, առանձին, այսպէս՝ սգաւորի պէս: Շատո՞նց:

— Ո՛չ, քիչ աւաջ:

— Բնաւ դեռ չէ՞ք պարած:

— Ո՛չ:

— Թերեւս ինձի կը սպասէիք այո՞:

— . . .

— Ո՛հ, լաւ, լաւ, ուրախ եմ: Այս բանը կը խանդավառէ զիս:

Կը յուսամ թէ լաւ էք և անշուշտ, տրամադիր պարելու: Ուրեմն, չեմ նստիր. ինչդ եմ... Թէպէտ՝ կը խոստովանիմ թէ ես... լոկ պալին համար չէ որ... ինչ որ է, յետոյ կը խօսինք:

Ինչպէս կարապնե՞ր՝ լճակի մը առաւօտեան անդորրու թեան վրայ: Հրանդի և Հայկուհիի լրջութիւնն ու ցնծութիւնը թեթեօրէն կը սահին նուազին համակրելի զեփիւռին տակ: Մերթ ալե՛ձե, մերթ ծաղիկներու խոնարհութեան պէս . . .

Հրանդի կէսը իր մօր անկողինին մօտ . . .

Բայց, նայուածք նայուածքի՝

— Ի՞նչպէս անցուցիք շաբաթը:

— Սովորական, օնական զրազումներով:

— Ինծի համար սովորական շաբաթ մը չէր: Աշխատանքին հետ՝ տատապանք ու երազ . . . : Դուք չե՞րազեցի՞ք, Օր. Հայկուհի:

— . . .

— Այսօր մինչև քանի՞ արտօնուած էք տունէն բացակայելու:

— Ինչպէս ամէն կիրակի:

— Աւելի ո՞չ. չէք կրնար քիչ մը երկարաձգել ձեր բացակայութիւնը, բացառաբար:

— Չեմ գիտեր, չեմ կարծեր:

— Ուրեմն, ուրեմն . . .

Ու ահա «թանկօճն», նազելի և հրայրքոտ: Ու դարձեալ ձախատ ճակտի: Մարմին մարմինի:

— Կը սիրէ՞ք պարը:

— Այո՛, որովհետև ձեզի հետ կը պարեմ: Բայց . . .

Համաչափ ներդաշնակութիւնը իրենց ոտքերու սահանքին եւ միանուազ տրոփիւնը իրենց սրտերու վաղքին:

— Բայց . . . այս բանը պատճառ մը չէ անշուշտ որ մենք . . .

Քիչ մ'աւելի կանուխ չմեկնինք եւ . . . փոքրիկ պտոյտ մը չկառարենք: Հրեշտակներու վարդազոյն արիւնը Հայկուհիի այտերուն անբծութեան վրայ:

— Թերևս չէիք սպասեր այս առաջարկիս: Ներեցէ՛ք:

— . . .

— Ներեցէ՛ք որ ձեր դրութիւնը կը կաշկանդեմ:

Ու Հայկուհի՝ շուշանային ամօթխածութեամբ՝

— Մեզ կրնան տեսնել . . .

— Ա՞յդ հոգ կ'ընէք: Բայց մենք կրնանք նստիլ այնպիսի տեղ մը՝ ուր ոչ մէկ ծանօթի նայուած պիտի չկրնայ թափանցել:

Հրանդ կը զգայ իր ընկերուհիին սրտին նուազը: Կը զիտէ՝ գեղաբիւր շեշտակիութեամբ՝ անոր արտայայտութեան բոլոր վէտովատումները, որոնց հեղութիւնը կը զովագցնէ իր եռանդին համարձատումները, որոնց հեղութիւնը կը զովագցնէ իր շիղերուն ոստումները: Ան չի տեսներ կուրթիւնը և կը քաջալերէ իր շիղերուն ոստումները:

մերժումը ո՛չ մէկ սե, պատուով ո՛չ մէկ ալեակ՝ անոր գիծերուն լճակին վրայ:

Ինքնաշարժին հեասպառ ու նաղելի կատաղութիւնը կը հնազանդի հրամանի մը սաստին, որ յանկարծ կանգ կ'առնէ քաղաքածայրի լայնանիստ շէնքի մը հիւրընկալութեան առջեւ: Մայրամուտի արեւ մը՝ որ լուսինի կը նմանի՝ իր դեղին արցունքները կը թափէ աւազանի մը սառած լքուածութեան վրայ: Ծնշիչ է պողոտային ամայութիւնը ու վարրի բան մը կայ հաստարուն ծառերուն սպասուածին ու խոր լռութեան մէջ:

— Ահա վայր մը ուր ոչ ոք մեզ կրնայ դարանել: Ընտիր միւլ-զիք և պատուական ըմպելի:

Ու ժպտելով.

— Այստեղ, Օր. Հայկունէի, լսած եմ թէ սիրողներու հաւաքս-վայրն է. բոլոր յաճախորդները սիրողներ են: Կարծես թանգէական պառագամ մը կայ գրուած սա զրան վրայ. «մտէք ներս զուք որ կը սիրէք»:

Հայկունէի զուարթ համակերպութեամբ մտիկ կ'ընէ այս բառերը, որոնց իմաստին կ'անդրադառնայ աւելի վերջ:

— Հանրածանօթ է այստեղի դարեջուրը. կը յանձնարարեմ, Օր. Հայկունէի, Բայց նախ խնդրեմ, վերցնենք սա «օրիորդ» և «պարոն» անտանելի ու անպէտ ածականները և խօսինք եղակի: Համաձայն ես, Հայկունէի:

— Այ՛ո:

— Հրաշալի՛ է, ուրախ եմ: Ես քեզ միշտ պիտի կոչեմ Հայկունէի կամ, աւելի մտերմօրէն, Հայկունէիս: Իսկ զուս, ի՛նչպէս պիտի կոչես զիս:

— Հրանդ:

— Հիանալի՛ է, Հայկունէի, պարզ և գեղեցիկ: Ո՛հ, ի՛նչ լաւ է պա՛ճը, ո՛հ, դեռ երկու երկար ժամեր ունինք . . .

Հրանդ և Հայկունէի նոր կ'ապրին նման վայրկեաններ. ատոր համար իսկ անոնց արտայայտութիւնը ինքնարուխ է, խանդավառ և միամտօրէն քաղցր:

— Վերցո՛ւր դաւաթը, Հայկունէի, առաջին դաւաթը ես պիտի խմեմ քու կենացդ, և դո՛ւ . . .

— Քու կենացդ:

— Հոյակապ: Ո՛հ, օրհնեալ ըլլալ Աստուած որ մեզ իրարու . . . կեցի՛ր, Հայկունէի, կեցի՛ր, լաւ է որ խո՛նք մեր ապագային համար: Այ՛ո:

— Համաձայն եմ:

— Ապրի՛ս, Հայկունէիս. կեցցե՛ս. ուրեմն մեր գեղեցիկ ապագային համար:

— Եթէ Աստուած կամենայ . . .

— Այո՛, Աստուած կը կամենայ, Աստուած սիրողներուն հետ է: Ան կը ներէ սիրողներուն բոլոր մեղքերը: Բայց սիրողները արդէն մեղք չունին:

Երկար ու աղնուական գաւաթներուն հնչական քերուբուքը...

— Պատուական զարեջուր, չէ՛: Է՛, հիմակ աւելի յըջօրէն խօսինք, Հայկուհիս:

Փոքրիկ լուսթիւն ու նուագին սիրարոյր աղաչանքը:

Հրանդին կէսը իր մօր անկողինին մօտ: Եւ սակայն՝

— Վստահ եմ թէ մեր հանդիպումը նսիախնամական է: Անձանօթ ուժ մը մեղի թելադրեց: Միթէ մեր ներկայութիւնը այստեղ՝ դեղեցիկ ապացոյց մը չէ՞ որ մենք իրարու նախասահմանուած ենք: Նոյնպէս չե՞ս խորհիր, Հայկուհի:

— Ի՛նչ կրնամ ըսել... Զարմանալի է... Ես ալ չեմ դիտեր թէ ի՛նչ պատահեցաւ ինձի: Դեռ երեք շաբաթ առաջ . . . ոչինչ . . . Բան մը չու . . . Այսօր . . . Է՛, ոչինչ, ի՛նչ կրնամ ըսել:

— Ըսէ՛, Հայկուհի, ըսէ՛, անկեղծօրէն, որովհետեւ նոյն բանը ինձի պատահած է. նոյն բուռն պայքարը իմ ներքոս ալ կայ. նոյն հրդեհին ըսցը ի՛մ ալ սրտիս մէջէն կը բարձրանայ: Ինչո՞ւ, ի՞նչպէս, չեմ գիտեր: Բայց ի դուր է պատճառներու մէջ մտնել: Արդիւնքի եւ ապագայի մասին խօսինք: Ոտէ, Հայկուհիս:

— Ըսի, Հրանդ. մնացածը անբացատրելի է:

Ու Հրանդ երաժշտութեան մեղոյ վանկերուն հետ՝

— Իրաւունք ունիս, սիրելիս, իրաւունք ունիս. մնացածը անբացատրելի է: Անա բառ մը որ ամէն ինչ կը բացատրէ:

— Իսկապէս զարմանալի է, Հրանդ, կ'ապրիմ՝ երբ կը խորհիմ թէ այս պահուս այստեղ եմ, առանձին, քեզի հետ: Աներեակայելի բան մըն էր ասիկա, գիտակցարար թէ անգիտակցարար, արհամարհներ եմ հօրս զարհուրելի խառութիւնը. մէկդի նետեր եմ քսան քարիճերու պարկեշտ աղջիկի հպարտութիւնս, ու նմարի մէջ զրբեր եմ ապագա: Թերիս սխալ կ'ընեմ. բայց չէի կրնար այս սխալը չգործել: Ուժերէս վեր է: Նայուածքիդ, քեզի թերեւ հոգիիդ կը հետեւիմ՝ մագնիսացեալի մը նման: Ո՛հ, ի՛նչ պատահեցաւ ինձի, Աստուածիմ:

Ու երկու երեսները՝ որոնք կ'այլիւն ինքնավստ կրակէ մը՝ երկու ձեռքերուն մէջ, աչքերը մեղմօրէն փակ, Հայկա հի կ'ապաստանի լուսթեան մը սփոփարար զովութեան:

Այդ զիրքին մէջ՝ ալլապէս հմայիչ է ահ: Այ ձանային, անթերի բայց ցանկալի գեղեցկութիւն մը՝ որուն առջև կը հետնուի կը դողայ Հրանդի երիտասարդութիւնը: Ան կը հիանայ ու կը վերանայ անոր Հրանդի երիտասարդութիւնը: Ան կը հիանայ ու կը վերանայ անոր Հրանդի պատկերին առջև. մինչ իր երեակայութիւնը կը պեղէ ապագային այդ պատկերին առջև. մինչ իր երեակայութիւնը կը պեղէ ապագային ու անձանօթին երջանիկ գաղտնիքները: «Միթէ իրաւ ի՞մս է սա գե-

դաշնորհ էակը: Ինձի՛ պիտի պատկանի սա սպիտակ մարմինը: Ե՞ս պիտի շոյեմ, փայփայեմ ու համբուրեմ սա վայթաթոյր այտերը, սա գեղածիծաղ չրթները: Ե՞ս պիտի ըմպեմ հիանալի կուրծքին ոսկի սափորներէն»... Դեռ չապրուած երանութեան մը սարսուռը, այդ պահուն, թիւր աղբիւրներէ կը կաթկթի իր երակներուն մէջ: Ու չի՛ կրնար համբերել, չի՛ կրնար տակալ զգացումներու հեղեղին որ՝ պատրուած ուլկիանի մը նման՝ կը թափի ամենի անդունդի մը մէջ: Ու, իր ձեռքերու հուրին մէջ առած Հայկուհիի փոքրիկ ձեռքերուն թաւիչը, երկար, ցած, ուժգին, ու խորհուրդին ծոցէն արծակուել ձայնով մը՝

— Հայկուհի, Հայկուհի, կը սիրեմ քեզ, կը սիրեմ քեզ . . .

Երկար վայրկեան մը՝ իր անթարթ նայուածքը Հայկուհիի թիւրբերուն մէջ, ու Հայկուհիի անմեղ նայուածքը իր թիրբերուն մէջ: Երկուքին զէմքին վրայ՝ կարմիրին շնորհը, երկուքին ձեռքերուն մէջ՝ դողին պայծառութիւնը: Կը լսուի սրտերու մեղեդին ու, հորիզոնին վրայ, կը տեսնուի յոյսին ու սիրոյ նաւակը:

Ու աղբիւրի մը նման՝

— Եւ դու, Հայկուհի, կը սիրե՞ս զիս:

Երազին ու ժպիտին քնարով՝

— Այո՛ . . .

Խաւարին վախճանը . . .

Հրանդի չրթները Հայկուհիի ձեռքերուն վրայ, երկա՛ր, ջե՛րմ, ի՛ պաշտամունքին երկիւղածութեամբ: Կիրքին մաքրամաքսոր գեղեցկութեամբ . . .

Ժամերը կը թռչին:

Ու, զոյգ սիրողները կ'երազեն, ու զոյգ երագողները կը սիրեն: Հրաշափառ արշալոյսը սիրոյ . . .

Գիշերին ծորակները շատոնց՝ ^{*}բացուած են, ու մութին զժրախտութիւնը շատոնց ողողուած է քաղաքին բարկեղանին վրայ: Լոյսի բազմակտուց հարուածներէն՝ մութն անգամ զժրախտ է քաղաքին մէջ, կը խորհի Ժպտունի: Փողոցը, հաճոյամոյ, ինքնարաւ ու հպարտօրէն ետասէր փողոցն է միայն որ, այդ պահուն, հաճոյք կը գնէ կեղծ դրամներով: Ու բոլորը, ծերէն մինչեւ պատանին, դափնի և վարդ կը նետեն չպարին ու սուտին, ու կը խաբեն ու կը խաբուին, և կը ծախեն և կը ծախուին: Նորագոյն քաղաքակրթութիւնը կը չափուի չրթներու ներկին և արդուկուած տափառին վրայ:

Ժպտունի կեցած է որոշուած դարեջրատայն սուջա: Զանձարացած երբեմն կը ճեմէ ու դառնութեամբ կը դիտէ անցորդներու արդուզարդը, հասափոր անտարբերութիւնը, խրախճանքը: Ինք միայն տրուում է: Իրեն կը թուի թէ անոնք բոլորն ալ երջանիկ են: Նոյնիսկ

սա ուռած այտերով ու օրորուող ստինքներով սպառուհին, որուն գէթ ստամոքսը պարապ չէ: Ճիշտ է. արտաքինէն՝ պիտի դատէ ժպտունի. ինք որ մարդերուն ներսը կը պրպտէ որպէս զորոյ Բայց այդ պահուն՝ ան ի վիճակի չէ պայծառ կերպով դառելու: Իր զբո- պանին յուսախառութիւնն ու ստամոքսին դատարկութիւնը վաթօրէն կը բռնաբարեն իր մտքին պատիւը: Ահա թէ ինչո՞ւ ան չի համար- ձակիր ներս մտնելու և բան մ'ուտելու, սարսափելով այն մտածու- մէն թէ Հրանդ թերևս չի գար...: Ու դարձեալ կը ճեմէ իր դա- նութեան հետ: Ո՛չ, իր կեանքը կեանք չէ. պէտք է բա՛ւմը խորհիլ, ու լրջօրէն: Պէ՛տք է անպայման պաշտօն մը գտնել, որ քանակ համեստ ըլլայ ան: Պէ՛տք է համակերպիլ, ծոխի, երկրպագել, մինչև որ, է... Ոտանաւոր գրելով ինք գերեզման պիտի երթայ. վստահ է ատոր: Ու ժպտունի մեռնիլ չ'ուզեր: Մանաւանդ երիտասարդ մեռնիլ: Ո՛հ, ո՛չ. այդ բանը ո՛չ. բիւր անգամ ո՛չ. Երիտասարդ մեռնիլը ամենամեծ և ամենաստորին ամօթն է: Եթէ կարելի է բնաւ չ'մեռնիլ: Դեռ ի՞նչ տե- սած է իր քսանեկեց տարիներու կեանքին մէջ: Ամօթ մըն ալ պօ: Ու ձեռքերը անդդալաբար, բռունցքի և ռուժրի կը վերածուին: Ի՞նչով վար կը մնայ ինք ուրիշներէն. միթէ շատերէն աւելի բարձր չէ՞ մտածումին խորութեամբ ու զգացումին ադունականութեամբ: Իրաւունք չունի՞ իր տեղն ունենալու արեւին տակ: Ի՞նչ պէտք է ընէ՞ յաջողելու համար կեանքի պայքարին մէջ: Աւազակութիւն, կեղ- ծե՛լ, խաբե՛լ թէ դերի ըլլալ, սողալ, մեղցնել իր ետին առաքինու- թիւնները Բայց միթէ այսպէ՞ս կ'ընեն բոլոր իր շուրջիները: Հա- լանաբար, անչո՞ւշտ «կամ պիտի ըլլաս, կամ պիտի չըլլաս: Ըլլալու համար՝ պէտք է ընել, որպէսզի ապրիս, վայելիս կեանքը իր բովան- դակ շքեղութեանը մէջ: Ապրի՛ր, ապրի՛ր, տիեզերքի սմէնէն գեղեցիկ բանը: Ու ժպտունի կը քրտնի. ան չի կրնար ընել: Ինք այս դարուն մարդը չէ: Կամ կանխած է իր դարը, կամ . . .

Կանգ կ'առնէ, ճիշդ իր դէմ ինքնաշարժ մը, որուն փոքրիկ խու- ցէն դուրս կը նետուի Հրանդի հսկայ խանդավառութիւնը:

— Յաղթանակ, բարեկամս. կառարեալ յաղթանակ . . .

Ժպտունի շուտով կը մտնէ իր մէջ և իսկոյն կը ցնդի իր սև ու ճերմակ մտածումները:

— Բայց ինչո՞ւ այստեղ կը թափառիս: Օ՛հ, ներս երթանք. սքանչելի բաներ ունիմ ըսելիք: Այո՛, յաղթանակ . . .

Երկու ընկերները սեղանի մը շուրջ՝ որ շուտով կը զարդարուի գաւաթներով, պնակներով ու զանազան ուտելիքներով: Ժպտունի փրկուած յուսահատ նոպայէն ու մտած բնականոն վիճակի մէջ:

— Է՛, պատմէ օհաննք, խիտ հետաքրքիր եմ:

— Երբ յաղթանակ կ'ըսեմ, հաւատա՛. առանց չափադանցու-
թեան: Բառերուն սանձը դեռ ձեռքիս մէջ ունիմ:

— Մինչև հիմա միասին էիր Հայկունիի հետ:

— Այո՛. բայց սպասէ և մի՛ ընդմիջեր. որովհետեւ ուրախութե-
նէս կրնամ շուարիլ: Սակայն, նախ սիրելիս, խնդրանք մը— ան-
գութ զաղտնապահութիւն. արգիլելու կամ կանխելու համար վիժու-
մին և յուսախարութիւններու վիշտը:

— Աւելորդ յոգնութիւն. . .

— Վերջ ի վերջոյ, որո՞ւ կրնամ բացուել, եթէ ոչ քեզի: Ուրեմն,
անա թէ ինչպէս տեղի ունեցաւ: Քանի մը անգամ պարելէ վերջ, ա-
ռաջարկեցի պտոյտ մընել: Հայկունի չմերժեց: Ինքնաշարժով՝ դա-
ցինք Հօլիվուտ ճաշարանը: Երկու ժամ հիանալի խօսակցութիւններ
ունեցանք, որոնց առանցքը կը կազմէր բնականաբար, սէրը:

— Բնականաբար, կը ձայնէ ժպտունի, կուլ տալով խոշոր հա-
մեղ պատառ մը:

— Մեր փոխադարձ համակրութիւնը շուտով սիրոյ փոխուեցաւ:
Յաճախ կը համարուէի իր ձեռքերը՝ ըսելով. «Կը սիրեմ, կը սիրեմ
քեզ, Հայկունի»: Ան ևս, վրացած, նոյն քաղցր բառերը կը կրկնէր ինձի:

— Այսպէս շո՛ւտ: Հաւատալս չի գար. . .

— Բառերն ու դէպքերը կը յաջորդէին կայծակներու պէս: Ես
ինքս կը դարձանամ քաջութեանս վրայ: Բայց աւելի կարեւորը կայ:
Քիչ առաջ ինքնաշարժով դայն առաջնորդեցի մինչև իրենց սուրճին
մօտերը: Ծամբան, մեր շրթները իրար փակած էին: Ո՛հ, ապրեւայ
այնպիսի հրաշալի պահեր, աստուածային վայրկեաններ որոնք՝ ցարգ
անծանօթ էին ինձի:

Իսկական յաղթանակ, կը բացազանչէ ժպտունի, շրթներուն
տանելով գաւաթին լեցունութիւնը:

— Խմէ՛ դուն, ինձի մի նայիր: Արդէն ես գինով եմ մայմնով
ու հոգիով:

— Հասկնալի է. է՞, վե՞րջը:

— Դեռ ինչ կը սպասես առաջին տեսութենէն: Մինչև այստեղ
լաւ: Նոյնիսկ հոյակապ: Հայկունի համաձայն է րոյր տեսակէտնե-
րուս, ու վստահ եմ իր սիրոյ անկեղծութեան վրայ: Կը մնայ իր ծնող-
քին չիրքին հարցը:

— Օ՛, այդ երկրորդական է:

— Մի՛ ըսեր, լրջօրէն նկատի առնուելիք կէտ է:

Ստուերի փոքրիկ շերտ մը՝ Հրանդի ճակատին վրայ: Պահ մը՝
նայուածքը կը պաղի ու մտածումը թել թել կը կախուի զսնադան
անորոշ կէտերէ: Բայց ձիգ կ'ընէ. յաղթանակը որ ամէնէն շքեղ բանն
է աշխարհի վրայ, կը զօրացնէ իր ջիղերն ու կամքը: Գիտէ որ՝ պար-
տութիւնը աղէտ մը միայն կը բերէ, ու յաղթանակը՝ փառք. . .

— Յետոյ, չմոռնամ, ժամադրաւայր որոշեցինք: Շարաթը քանի մ'անգամ պիտի հանդիպինք իրարու: Կիրակիին պիտի չսպասենք:

— Այդ ալ լաւ նշան է:

— Յարդ՝ բոլոր նշանները լաւ են, սիրելիս:

Սակայն Հրանդի աչքերը դարձեալ հեռուն կը նային, ու ակնբերել է իր նայուածքին մօտահոգութիւնը: Իր երկնքի կապոյտին վրայ՝ խոշոր ամպեր կը նկատէ Հայկունհի հայրն ու իր հիւանդ մայրը: Առաջինը խոտոտութեամբ, երկրորդը իր դալուկ խարխուլութեամբ: Նախազգացում՝ որ կը տաղէ իր ներսը: Կապարի կոյտ մը՝ իր սրտին վրայ, որ կը խանդարէ անոր բնականոն բարախուսները: Բայց, երկտասարդութեան մշտանորոգ աւելը որ կը յորդի իր երակներուն մէջ, խիզախութեան կը մղէ զինք ու կը հրկիզէ վտանգին ղէզն ու պալարին մանրէները:

— Կացութիւնը առ այժմ այս է: Դատելով իր ներկայ վիճակէն, քու կարծիքով ի՞նչ ուղղութիւն պէտք է ընդգրկել՝ հասնելու համար վախճանին գեղեցիկութեան:

— Իմ համեստ կարծիքով, որովհետեւ ես ինքս դեռ անփորձ եմ այս կալուածին մէջ, աճապարելու, ղէպքերը զահավովելու պէտք չկայ: Կը խորհիմ սակայն թէ՛ եթէ վերջնականապէս տիրանաս աղջկան սրտին ու դայն քեզի կապես անքակտելի կապերով, միացած զիւրին է:

— Ինձի ալ այդպէս կը թուի, սիրելի ժպտունի, ինձի ալ այդպէս կը թուի:

— Անկէ վերջ կրնաս՝ ճակատաբաց՝ պաշտօնապէս խնդրել աղջկան ձեռքը: Ու վա՛յ այն ծնողքին որ կը մերժէ: Հայկունհի, վերջ ի վերջոյ քեզի պիտի գայ: Որովհետեւ, ան ա՛լ չի՛ պառկանիք իր ծնողքին, այլ քեզի:

— Ես ալ այդպէս կը խորհիմ:

— Նման պարագաներ շատ պատահած են. և ծնողները ի վերջոյ տեղի տուած են:

— Ես ալ այդպէս կը մտածեմ:

— Օ՛հ մի յուսահատիր: Երիտասարդ ես և համակրելի — խոշոր գրամաղուխ: Աղէկ գէշ գործ մ'ալ ունիս: Մէկ բան նկատի ունեցիր ու հեռապնդէ. աղջկան սիրտը: Առանց անոր սիրտն՝ քայլ մը չես կրնար առնել:

— Այդպէս է, սիրելիս, այդպէս է:

Գիշերը գննիթին կը մօտենայ:

Հրանդի խանդավառութիւնը մերթ կը բռնկի, մերթ կը սառի: Մերթ ապագային մէջ կ'ապրի. իւր երազները ոսկի լճերու եզերքը. վայրկեան մը վերջ՝ մօխիբի վրայ:

Դանդաղօրէն ղէպի տուն կը քալէ: Երեքշաբթի երեկոյ ժամադրութիւն կայ: Ի՛նչպէս պիտի անցնին սա երկու օրերը: Հրանդ անհունօրէն պիտի սիրէ Հայկունհին, իր Հայկունհին, պիտի համբուրէ, պիտի պաշտէ զայն: Մնացածը՝ Աստուծոյ պիտի յանձնէ:

Դուրսը՝ Յուլիսին հրաշափառութիւնը: Արեւին թագաւորութիւնը, հզօր ու տեւական: Միջոցը լի է կեանքով: Երկրէն կը բարձրանայ յոյս և մխիթարութիւն: Բաղաքին համայնապատկերը հպարտութիւն կը ներշնչէ, մինչ էակները պայքարին կը նեղուին. յաւտեանական պայքարին՝ որուն անտիպ օրէնքները կը տիրապետեն զանգուածին ու հիւլէին վրայ: Ու անմատչելի խաղաղութիւն մը՝ զէնիթէն մինչև անդունդ: Ու բիւրաւոր հսկաներու խելացնոր ու անտեսանելի վազքը՝ լոռութեան մը մէջ՝ որ անւահման է և ճշմարտօրէն անմահ: Աստուածայինը՝ լոռութեան մէջ, մարդկայինը՝ աղմուկին...

Ներսը՝ սարսուռ ու սև, տառապանք ու եղբրական սպառում: Երէկ երեկոյ քահանայ մը վերջին օծումը կատարած է Հրանդի մօր հիւժած մարմինին, հիւժած՝ բառին գերեզմանային իմաստով: Ալ ցաւ չունի. չի զգար. գրեթէ բոլոր անդամները սառած են: Միայն կուրծքին ու գանկին մէջ զեռ կը պլպլայ կեանքի բիծ մը: Ժամէ ժամ, վայրկեանէ վայրկեան, կը սպասուի վախճանին որբերգութեան:

Անքուն գիշերէ մը վերջ, Հրանդ շառունց օտքի է. կը հսկէ մօր վերջին վայրկեանները: Երկու օրէ ի վեր չ'երթար պաշտօնատեղի: Զսպանակուած ու ջղաձիգ տխրութիւն մը իր էութեան, իր բոլոր շարժումներուն մէջ: Կոպերը ծանր են, ու բիրբրուն չուրջ՝ կարմիրին լիճը: Բայց խռովքին որոտումները չեն լսուիր իր ներսէն: Լանդարտ է իր խիղճին փարածութիւնը. ըրած է կարելին որդիական պարտականութեան:

Ու ահա մայրը՝ գլուխը շարժելու ճիգեր կ'ընէ: Անդունդուած աչքերը ծանրօրէն կը բացուին: Կը նայի շուրջը: Իր անճառազայթ նայուածքը՝ որուն մէջ մայրութիւնը միայն կենդանի է: Խարխուրէն կ'իյնայ իր դաւկին վրայ: Ու նիհար և փշրուած հառաչանքով բաներ մը կը մրմնջէ: Մինչ Հրանդ՝ փութալով աւելի մօտ՝

— Ի՞նչ կը փափաքես, մայր:

Ան դարձեալ կը նայի շուրջը: Պզտիկ թրեքը որոնումի, խուզարկումի մէջ են: Յամառ ու դերազոյն ճիգ, թերևս վերջինը: Ու կարծես ապահով՝ թէ ուրիշ մէկը չկայ սենեակին մէջ, նշան կ'ընէ իր դաւկին նստելու իր մօտ, ու, խեղդուկ ու մահարոյր ձայնով մը և յօշոտուած ու թլփատուած վանկերով՝

— Զաւ...ակս...

— Մայր...

— Զաւակս...

Ողբ և սարսուռ իր ձայնին մէջ: Կու լայ առանց արցունքի: Զորքած են արցունքին ակերը: Ու ասիկա՝ լալու ամէնէն եղբրական վիճակը:

— Ահա . . . կը . . . մեռնիմ . . . զաւակս . . . , կը բաժնուիմ . . . քեզմէ . . .

Զայնը կը խեղդուի, կը նուազի. կարծես զելեզմանէն կու գայ ու կը կորսուի նոճիններու խաւարին մէջ:

Կ'օրհնեմ . . . քեզ . . . զաւակս . . . , Աստուած . . . քեզ . . . պահէ . . . պահպանէ . . .

Հրանդ ծուռնի է մահճակալին առջև: Երկիւղածօրէն մտկկ'ընէ մօր վերջին բառերը: Կաթիլներ՝ թարթիչներուն վրայ և սուգ՝ սրբատին մէջ:

— Քեզ . . . մինակ . . . չեմ . . . ձգեր . . . որդի՛ . . . , դու . . . քոյր մը . . . ունիս . . . , քոյր մը . . . , հայրիկէդ . . . , ու . . . , մայրիկէդ . . . , հարազատ . . .

Հրանդի աչքերուն ահաւոր մեծութիւնը . . .

— Հայրդ . . . մեռաւ . . . ու . . . , ան . . . , աշխարհ եկաւ . . . Քեզ . . . ապրեցնելու . . . համար . . . հրաժարեցայ . . . անկէ . . . Դող և մահ խեղդուող վանկերուն մէջ:

— Գիշեր մը . . . զայն զրի . . . հարուստ . . . Յակորոս . . . էֆէնտի . . . Կարմիրեանի . . . զրան . . . առջև . . . թուղթիմը . . . վրայ . . . գրած . . . էի . . . որ . . . անունը . . . Հայկունի . . . դնեն . . . մեծ մօրդ . . . անունը . . . լուացքնին . . . ես . . . կ'ընէի . . . , միշտ . . . կը տեսնէի . . . զաւակս . . . քոյրդ . . . մարդ . . . չի գիտեր . . .

Ու շրթները կը խաւարին ու կը փակուին յաւիտենական քունին մէջ: Իրերը հետզհետէ կը թաղուին կոպերուն տակ, ինչպէս ասաղեր՝ ամպին տակ: Ու ալ չի թարթեր. ու թերես ալ չի շնչեր: Մահուան խաղաղութիւնը՝ հրեշտակային կերպարանքով՝ կը տեղաուորուի անոր դէմքին անշարժութեան վրայ, որ, աակաւ կը պայծառանայ ու, ցաւէն մաքրուած, կ'արծես կ'ապրի նոր կեանքի մը երանութիւնը:

Հրանդ գետին ինկած է. ու տեղեակ չէ վախճանին իրականութենէն, ի՛նք ևս վախճանին եզրն է: Խելակորոյս, իր աչքերը կը խարխափին մութին անդենին մէջ: Փոթորի՞կ կը քանդէ իր գանկը թէ սիրտը կանգ առած է: Անանուն, անօրինակ բան մը, լեղիի կոյտ մը կը զալարուի իր ներսը — երակներուն, ջլղերուն, ոսկորներուն մէջ: Եւ չի՛ կրնար մտածել, չի՛ կրնար անդրադառնալ հարուածին ու հետեանքներուն օտարափելիութեան: Աչքերը կիսաբաց, բայց չեն կրնար շօշափել լոյսին որմերը: Զգացումի աշխարհէն բաժնուած է իր մարմինը, որ չի՛ գգար, չի՛ շարժիր. որ փուռած է գետինը՝ առեանգուած ու լիկուած աղջիկի մը նման: Երեսկայութեան ծիլ մը միայն կը մնայ կայծակնահար ծառին վրայ, որ աակաւ կ'երերայ, ու կարծես կը բանայ հոգիին աչքերը, որոնք աղօտ ու ասրտամ նշոյի

մը տակ՝ կը նշմարեն իր ներսին աւերակը, պարապը, վիհը: Ու տակաւ, իր գրտակցութեան եթերին մէջ, կը զգայ թէ իր սիրածը ալ չի բարախեր. այո՛, կը լսէ ձայն մը, որ սրտինը չէ, այլ քանդումին որոտումը: Արեւնը ալ չի՝ թափիր, չի հոսիր, կամ կը հոսի ու կը թափի իր մարմինէն դուրս: Ու տակաւ, իրեն այնպէս կը թուի թէ՛ ինք իր մարմինին մէջ չէ, փոխադրուած է ուրիշ տեղ, ուրիշ վայր մը, ուր փլուզումին կը յաջորդեն ուրիշ փլուզումներ: Ու ասկաւ կ'անդադարանայ թէ կամքը, վիշտը, սուգը, բոլորը հեռացած են իրմէ, լքած են զինք: Ու ինքն է որ կը հափնի, կը սպառի, կը մեռնի: Ու զինքն է որ կը դնեն դագաղի մը սեւին, փոսի մը գիշերին մէջ, ու կը թաղեն հողին ծանրութեան ու անդթութեան տակ:

Հիւանդապահուէիին երկայն ու բարակ հասակը ներս կը մտնէ ու սարսափի ճիչ մը կ'արձակէ ի տես այս տեսարանին: Ոտքերը կը գամուին ու լեզուն կը պապանձի: Պարոնը անձնասպան: Բայց գետինը արեւնի շիթ մը չկայ: Արդեօք իր անողութիւնը խանգարուած է: Ո՛չ, չի կրնար չհաւատալ իր աչքերուն, որոնք քառասուն տարի է ի վեր հաւատարիմ են իրեն: Սակայն ինչ կը նշանակէ այս երեւոյթը: Մօր մահուան վիշտէն թերեւս յանկարծամահ եղած է: Այո՛, ուրիշ բան չի կրնար ըլլալ: Կա՛մ անձնասպանութիւն, կա՛մ յանկարծամահ: Ո՛հ, Աստուած իմ, ինչ պէտք է ընել:

Շլմորած ան կը մտանայ, վաանգին գացող քայլերով, պարոնին դիակին: Ու հիմա, զարմանքին ճիչը իր կոկորդին մէջ, ի լուր պարոնին խանգարուած շնչառութեան: Մեռած չէ՛: Աչքերը արցունքիւ աւարեւնի ծովի մը մէջ: Ուրեմն... մարած է . . .

— Պարոն, պարոն . . .

Դիակնային անշարժութիւնը մտահոգութիւն կը պատճառէ իր փորձառութեան: Շտապով, կտրուած լեմոնի մը թթու զովութիւնը կը պտտցնէ Հրանդի շրթներուն ու ճակտին ջերմութեան վրայ, և զօրոնիայի ջուր կը սրսկէ մագերու խուրձին մէջ:

— Պարոն, պարոն . . .

Հրանդի աչքերը կամաց կամաց կը բացուին. կը շարժին ձեռքերն ու ոտքերը, ու, հիւանդապահուէիին օգնութեամբ, անդամալոյծի մը նման՝ դուռարաւ կը կանգնի: Իր կարմիր ու խոզված աչքերը կը հանդիպին մօր մահուան, որուն կը նայի պահ մը՝ լուռ, գութին ու տառապանքին նայուածքով: Ու, յեցած հիւանդապահուէիին, կը քաշուի իր սենեակը, ու կը փի, հրդեհող ասնիքի մը նման, անկողնին գերեզմանին վրայ:

Տխրաբոյր պարապութիւն մը, անձաւային խաղաղութիւն մը՝ Հրանդի յարկարամնին մէջ:

Իբ արձակուրդը երկու շաբաթի վերածուած է: Կոտրած ակարու-
թիւն մը՝ անընդունակ ըրած է զինք աշխատելու: Տասն օրէ ի վեր
փակուած է իր ճգնարանի դժոխքին մէջ, ուր մերթ կ'այրի, մերթ
կ'անհրեւութանայ սուգի անեղբ ծովի մը յատակը, կամ կը գահաՎիժի
չարչարանքի մը անվախճանութեան մէջ:

Կքած է բրզած՝ հարուածին աններող ահաւորութեան տակ:
Աչքերը գոց են, ու չեն տեսներ սուգին սեւը, այլ կը սեւտին ուրիշ
սեւի մը, մեղքի մը վրայ, որ կը պատնէշուի ու կը տնկուի իր դէմ:
Այո՛, մեղաւոր է ինք ևս, դէպքերուն, իրերուն ճակատագրին չափ:

Հինգ ամսուան իր սիրոյ պաշտամունքը՝ եթէ կատարուէր լոկ ե-
րազին ու հոգիին խորանին վրայ, զղջումին պոռթկումը երբեք այս-
քան աղիտալի պիտի չըլլար: Բայց իր մարմինը՝ երկատարողօրէն, նախ
անգիտակցաբար, ապա վեհօրէն, բղքտած ու աղտոտած էր սիրոյ ա-
նարատութիւնը: Իր հոգիին հետ, ի վերջոյ, մարմինը ևս խառնուած
էր Հայկուհիին հոգիին ու մարմինին:

Այս կերող, հպացնող մտածումը, ամէն վայրկեան իր էութեան
մէջ է. կը վառէ իր սիրան ու գանկը, կամ կը քայէ իր հետ, կամ
իր ետեւն, ստուերի մը, ուրուականի մը նման: Ոչ միայն ընդ միշտ
խորտակուած է իր բուռն, ջերմ ու վեհափառ սէրը, այլ թերևս իր
կեանքն իսկ կը շարժի իր բոլոր հիմբէն:

Երկու օր առաջ, երբ Հայկուհի իրեն այցելեց, համբ փնայց,
լեզուն ջարդուեցաւ ու չկարողացաւ յայանել անոր գեղեցիկ ու մի-
եւէոյն առեն զարնուրելի իրականութիւնը: Ինչպէս կրնար ըսել,
ինչպէս կրնար հաղորդել մօր վերջին յայանութիւնները՝ թէ ինք իր
քոյրն էր, և ոչ թէ իր սիրուհին, երբ արդէն իրմէ մաս մը կայ Հայ-
կուհիի միտին մէջ: Ու խեղճ աղջիկը բաժնեկով անհուն ցաւը իր սի-
րականին, սուգին խորութեան վերագրած էր անոր վերապահու-
թիւնն ու լուռութիւնը: Ու զայն մխիթարած էր բարեպաշտ բառերով
մոռնալով իր իսկ հսկայ վիշաքը:

Այս պահուս, ինչպէս երէկ, ինչպէս անցնող տասն օրերու ըն-
թացքին, Հրանդի մարմինը դարձեալ անկողինին զամբրուն վրայ,
ուր նորէն կը գալարուի, կը սողոսկի գանկը պայթած և ուղեղը թա-
փած կենդանիի նման՝ շակտին հնոցը մարելու յոյս չկայ: Նոպաները
կրարու կը յաջորդեն: Մրիկէն վերջ, տեղատարափ ու չանթ, որոնք
կ'աւերին ու կը խոշափանին իր երկատարողութիւնն ու զայն կը
նետան մթաստուեր փիերը կործանումին ու քայքայումին,

Ու յանկարծ ընդոտա՝ բայց հիւանդաղջին միամտութեամբ:

— Ինչ ընեմ, ո՞հ Աստուած իմ. ցոյց տուր ինձի էլքը այս ա-
նկին: Բաւական սեպէ զոհարերութիւնը, ու կամեցիր որ զէթ սա
անմեղ էակը չվորի խաւարին ու սարսափին ճիրաններուն մէջ:

Ու մտիկ կ'ընէ, դժբախտ ու ալեկոծ պաղարիւնութեամբ, բոլոր
ձայները որոնք կը տողանցեն իր ներսի ջախջախուած մայթերուն
վրայէն:

«Այսօր դարձեալ պիտի գայ Հայկուհի: Ճշմարտութիւնը որքան
ալ թուենաւոր ըլլայ, պիտի պարպես անոր երակներուն մէջ: Առաջին
առթիւ, ան թէև պիտի կատարի թոյնէն, բայց հետզհետէ պիտի հան-
դարտի: Պիտի ջանաս շուտով դուռն քեզ նետել անոր որովայնէն: Ոչ
ոք պիտի կասկածի, ոչ ոք պիտի իմանայ: Աշխարհ գայն միշտ պիտի
նկատէ որպէս պարկեշտ աղջիկ մը: Ու խաչ քաշելով, չիրմաքար մը
դնելով պնցեալին վրայ, դուք պիտի սկսիք նոր կեանք մը — եղբայր
ու քոր»:

Կամ՝

«Պիտի խեղդես քու մէջդ ամէն ազնիւ զգացում ու արեան ձայնը,
ու պիտի շարունակես սիրահարի կեանքդ, կնու թեան առնելով դայն
ու ոչինչ զգացնելով անոր»:

Եւ կամ՝

«Որովհետև ի՛նչ որ ալ ընես, աստապանքը յաւիտեան քեզ պի-
տի հետապնդէ, պէտք է վերջ տաս, օր առաջ, այս եղերական կեան-
քիդ, Հայկուհի անշուշտ պիտի լայ, բայց ի վերջոյ պիտի փաթթուի
նոր յոյսի մը ու պիտի փրկուել»:

Մտիկ կ'ընէ այս խորհուրդները, որոնք կ'իյնան մահուան քայ-
լերդի մը անձրեկին պէս՝ իր հոգիին վրայ և կը լսկեն գայն: Կը
խորհի երկար ու չի կրնար հակել վճիռի մը ովաստիին: Առաջին ձայնը
ամէնէն աւելի կ'աղղէ իր վրայ: Այո՛, ի լուր ճշմարտութեան, Հայ-
կուհի պիտի ընդվզի, պիտի խենթենայ, պիտի փախչի իրմէ ու ինք-
նիրմէ, չուզելով մարտել այս յառկապէս հնարուած արտաոց սուտը՝
զոր ան պիտի նկատէ իրրև պատրուակ իրմէ բամուռելու: Բայց երբ
իր շօքմէն, ի՛նքն ալ ստուգէ եղելութիւնը, պիտի համակերպի ճա-
կատարի պատգամին:

Երկրորդ խորհուրդը բոլորովին հրէշային կը դանէ Հրանդ Ո՛չ.
իր խիղճը երբե՛ք պիտի չհանդուրժէ ասոր: Ասկէ վերջ, ան ոչ միայն
չի կրնար պատկիլ Հայկուհիի հետ, այլ չի կրնար անոր շրթներն խկ
համբուրել: Ամէն գիշեր, իր ականջներն ու սիրտը պիտի ոմբակոծ-
ուին սա պայթուցիկ բառերով. «անխիղճ, սրկա՛յ, ոճրագո՛րծ, քրո՛ջ
հեռ, չե՛ս ամչնար, ամօ՛թ»: Ո՛չ, բացարձակապէս ոչ: Այդ գիրքը
փակուած է ընդ միշտ:

Երրորդ ձայնին ևս կը համակրի Հրանդ, բայց կը խորհի թէ՛ իր
անձին կորուստով՝ Հայկուհի բան մը պիտի չչահի: Մինչ առաջին
լուծումով, ան պիտի չահի եղբայր մը որ, ինչ որ ալ ըլլայ իրենց ա-
պագայ յարաբերութեանց բնոյթը, հետուէն կամ մօտէն պիտի հե-
տաքրքրուի իր քրոջմով:

Այս ձայներուն թափօրը, սակայն, կ'անցնի եղկելի գնացքով
մը ու կ'անհետի պարապին մէջ: Ու ինք կը մնայ դարձեալ առանձին,
դէմ դիմաց՝ տառապանքին կ'մտնելին հետ:

Ո՛հ, ինչո՞ւ իր մայրը՝ վերջին պահուն՝ երևան հանած էր գաղտնիք մը՝ որ կրնար յաւէ՛տ ծածկուելի գերեզմանի քարերուն տակ, թոյլ շալով որ քարկոծուի ապրողներու անդիտակից երջանկու-թիւնը: Բայց ի՛նչպէս պիտի գիտնար խեղճ կինը թէ իր մէկ զաւակը կը սիրէ իր միւս զաւակը:

Ո՛հ...

Կը խորհի գէթ խորհրդակցիլ ժպտունիի հետ. հաղորդել անոր թէ Հայկուհի իր հարազատ քոյրն է. ապահովցնելով զայն, բնակա-նաբար, թէ իրենց սէրը չէ անցած համբոյրին ցանկապատէն: Իր բարեկամը թերևս օգտակար թելադրութիւններ ընէ իրեն:

«Օ՛ն, քաջ եղի՛ր, ելի՛ր, գործէ՛, չես կրնար այսպէս անշարժ մնալ: Սրբէ քրտինքդ ու արիւնդ, ու լծակը դիր կամքիդ վրայ: Ան-հատնեռուն, ինչպէս ազգերու կեանքն ու պատմութիւնը, հերոսա-կան մաքառումներով կը դարբնուին:

«Յի՛ր, գործո՛վ պիտի վերաշինես քանդուածը, գործելով պիտի սրբագրես ճակատագրին սխալը»:

* * *

— Դու հիւանդ ես, Հրանդ, սա տժգո՛ն դէմքդ սաստիկ մտահո-գութիւն կը պառճառէ ինձի:

— Ո՛հ, մարմնական ցաւ չեմ զգար, մի մտահոգուիր, Հայկուհի:

— Եւ սակայն տասն օրուան մէջ խիստ փոխուած ես, զգալիօրէն նիհարցած: Տես, աչքերուդ եղերքն իսկ . . . Բան մը կերա՞ծ ես այսօր:

— Ո՛չ:

— Երէ՞կ:

— Չեմ յիշեր:

— Բայց, սիրելիս, կարելի չէ այսպէս շարունակելու Հասկնալի վշտիդ մեծութիւնը, բայց անըմբռնելի է այս ընթացքդ: Ամէն ոք իր մեռելները, իր ցաւը կ'ուսենայ. սակայն ոչ ոք այս ասարօրինակ զրկումին, այս անօգուտ ապաշխարանքին կ'ենթարկէ իր մարմինը: Չուտելով չէ որ կը յարգեն մեռելային յիշատակը:

— Իրաւունք ունիս, Հայկուհի, իրաւունք ունիս:

— Դժբախտութիւնը հո՛ն է որ ես դեռ զրկուած եմ քեզ խնա-մելու պարտականութենէն, իրաւունքէն, հաճոյքէն: Հազիւ ժամ մը միջոց ունիմ: Մայրս սկսած է կասկածիլ իմ յոճախակի բացակայու-թիւններէս: Հայրս, բարբախտաբար, դեռ բանէ մը տեղեակ չէ: Երանի՛-թիւններէս: Հայրս, բարբախտաբար, դեռ բանէ մը տեղեակ չէ: օգտակար թէ ճամբու դրած չըլլայիր հիւանդապահուհին. աղէկ-զէ՛ն օգտակար կ'ըլլար քեզի: Քիչ մը վերջ, ինձի հետ դուրս պիտի ելլես ու ճաշա-րան պիտի երթաս: Այո՞:

— Անօթութիւն չեմ զգար:

— Ո՛չ, պիտի ուտես. ինձի՛ համար. ինձի հանդէպ ունեցած սիրոյդ համար: Խօսք առւր: Կը խոստանա՞ս, Հրանդ:

— Չեմ գիտեր. նայի՛նք:

— Խօսք առւր, կ'աղաչեմ:

— Քեզ չեմ կրնար խաբել:

Ու յանկարծ,

— Հայկուհի, ինձի նայէ, աչքերուս նայէ. ուղի՛ղ, երկար . . .

Ու Հրանդ, իր բիբերուն եզրայրու թիւնը անզամ մը ես կը տեսնէ Հայկուհիի բիբերուն մէջ: Նայուածքի նոյն ճառագայթը. Ու ահա, անոր ճակտին անկէճճու կամա՛լն ալ կը նմանի իրենին. . . Ու ահա, քթին համաչափ ողորկու թիւնը ես. . . Ու ահա ծնօտին անկիւնաւոր ցցուածքն ալ. . . Ո՛հ, Աստուած իմ, իր քոյրը, իր հալաղատ քոյրը. . . Ո՛հ. Աստուած իմ . . . Եւ յուղումէն խելացնոր պոռթկումով, Հայկուհիի վիղն աւած իր ձեռքերու շղթային մէջ, և շրթները ճակտին՝

— Հայկուհի . . .

Բայց շուտով կը քակուի ձեռքերուն օղակը, ու ինք կ'իյնայ գետին ուժածաթափ, փլած, դանդաղ, ջուրին յատակը դացող մարմինի մը պէս:

Հայկուհիի դժբախտ զարմանքը կը հակի իր սիրականին: Կը շուարի. չի կրնար ըմբռնել կացութիւնը՝ որ իրմէ կը խուսափի. չի կրնար բան մը ընել. բայց կարծես առունը կը չարժի, կը դառնայ իր շուրջը ու ինք հաղիւ կրնայ ձայնել.

— Հրա՛նդ, Հրա՛նդ. . .

— . . .

— Հրա՛նդ, Հրա՛նդ . . .

Ու արցունքի խոչոր կաթիլներ՝ իր աչքերէն կ'իյնան Հրանդի երեսներուն վրայ, որոնց թրթռացող ազերսը կը ցնցէ և ոտքի կը հանէ իր սիրականին մարմինը: Ու՛ դպրոցականի մը պէս՝

— Ներէ. Հայկուհի:

— Ի՛նչ ունիս, սիրելիս, ի՛նչ ունիս, ըսէ՛: Թերես ուրիշ բան մ'ունիս դու որ կը տանջէ քեզ և դոր կը պահես ինձմէ: Այո՛, ուրիշ բան մը, թերես աւելի մեծ քան սուզը:

— . . .

— Ի՛նչ գիտնամ. Աստուած իմ: Ի՛նչ, կը դողա՞ս: Դու ջերմ ալ ունիս, Հրա՛նդ:

— Ո՛չ . . .

— Դու հիւանդ ես, սիրելիս, երթամ բժիշկ մը բերեմ, ահա ճակատդ կրակներու մէջ . . .

Ու Հրանդ աւելի բարի՛

— Ո՛չ, հանդարտէ Հայկուհի, հիւանդ չեմ:

Ու խոշոր, երկար հառաչանքէ մը վերջ՝ և կարծես հանդիսա-
ւոր՝ պատարադէոր քահանայի մը նման՝

— Հայկուհի՛, Հայկուհի՛, կը սիրեմ, կը սիրեմ քեզ բոլորովին
նոր և մաքուր սիրով մը:

— Վստահ եմ, սիրելիս, վստահ եմ . . .

— Հայկուհի՛, դու իմ . . .

Ու դարձեալ կը ջարդուի լեզուն ու կտոր կտոր կ'ըլլայ բերնին
մէջ:

Նոյն պահուն, Հայկուհի ևս տագնապի մը սարսուռը կը զգայ:
Սիրաք կը խառնուի ու կարծես ներսէն բաներ մը կը փրթին: Մութի
պատ մը կը վարագուրէ ու կ'ասղնտէ իր աչքերը. պաղ քրտինքի
սղոց մը՝ իր դալկահար դէմքին, կուրծքին ու կռնակին վրայ: Յու-
զումին աւերը . . . : Կը տարածուի Հրանդի մահճակալին վրայ, ու
պահ մը կը մնայ այդպէս:

Հրանդ, ի տես Հայկուհիի այդ վիճակին, մէկդի նետելով իր
խռովքը ու զինուած նոր կորովի մը վահանով, և գուրգուրանքով
մը ուր կը դողայ սիրողի ու եղբոր շնչա՛ր՝

— Ի՛նչ եղար, Հայկուհի:

Մինչ Հայկուհի մեղմօրէն շփելով իր պորտին շուրջ՝

— Սիրաս կը խառնուի . . .

— Բան մը կ'ուզե՞ս, ինչ կը փափաքես:

— Ոչ ի՛նչ, սպասէ քիչ մը . . . տեսնենք . . . : Աստուած տայ
որ դէ՛շ հետեւանքներ . . . ո՛հ, մանաւանդ այսօր: Պէտք է շուտով
տուն ըլլամ . . .

Ու մինչ Հրանդ կը սրբէ Հայկուհիի քրտինքը, այս վերջինը՝
լրջօրէն՝

— Սիրելիս, ալ կարելի չէ յետաձգել: Ահա երկու ամիսները
անցան ու երբորդին մէջ ենք . . . ըսած եմ մօրս թէ գիւղի ընկե-
րուհիս կը հրաւիրէ զիս, և թէ զալ շարթու պիտի մեկնիմ երկու կամ
երեք օրուան համար՝ եթէ ինք համաձայն ըլլայ և հայրս արտօնէ:

— Լաւ խորհրդ ես, Հայկուհի. շատ լաւ խորհրդ ես, կը հիանամ
նստրախուսութեանդ վրայ: Կը յուսա՞ս որ հայրդ արտօնէ:

— Անձնապէս կատարած խնդրանքներուս միշտ գոհացում
տուած է հայրս:

— Լաւ:

— Այո՛, սիրելիս, ալ պէտք չէ ձգձգել: Այլապէս շատ գէշ օրեր
կը սպասեն ինձի . . . ո՛հ, այս ինչ փորձանք էր . . . ո՛հ, Աստուած
իմ, ի՛նչ պատահեցաւ ինձի . . .

— Լաւ, Հայկուհի, լաւ: Իմ կողմէ ոչ մէկ արգելք: Ընդհա-
կառակը: Վա՛ղն իսկ՝ եթէ կրնաս: Այս յարկարամինը արամադրու-
թեանդ տակ է: Ոչ ոք կրնայ քեզ խանգարել, ոչ ոք կրնայ քեզ տեսնել:

— Ո՛հ, վաղը անկարելի է. թերևս միևս օր: Ո՛հ, Աստուած իմ,
չիմանայ հայրս, զիս խաչը կը հանէ . . .

— Ու ես վաղը բժիշկի մը կ'երթամ . . .

— Ու մեր սիրոյն անդրանկի պատուը . . . ո՛հ, աւա՛ղ . . .

Ու արտասուքի գետը՝ Հայկունիի դէմքին վրայ:

— Մե՛ղք . . . մե՛ղք . . . ափսո՛ս . . . վա՛յ, վա՛յ ինձ . . .

— Բաւական է, Հայկունի, բաւական է. ի զուր տեղը կ'ար-
տասուես . . .

— Ո՛հ, դուն ո՛րքան բռուն էիր, եւ ես ո՛րքան միամիտ ու
անփորձ:

— Ոչ քեզ մեղադրէ, ոչ ալ զիս:

— Աստուած պատժեց զիս:

— Ան մեղի նոր ճամբայ մը ցոյց պիտի տայ, ու մենք նոր
կեանք պիտի սկսինք . . .

* * *

Շարաթ մը վերջ, Հրանդ կը զրէ հետեւեալ նամակը.

«Սիրելի Հայկունի,

«Մի զարմանա՛ր որ առաջին անգամ ըլլալով նամակ կը ստանա
ինձմէ: Չափազանց կը խնդրեմ, մի՛ կորսնցնէր պաղարիւնութիւնդ ու
համբերութեամբ կարդա՛ր զայն: Սփայուած եմ գրուօր հաղորդելի քեզի
այն ինչ որ չկրցայ, չհամարձակեցայ ընել կենդանի բառերով: Որովհետեւ
այլեւս կարելի չէ լուռ մնալ, ու պէտք է որ դու ալ, ինձի չափ, տեղ-
եակ ըլլաս խուր բայց միեւնոյն ասեմ գեղեցիկ նամարտութեան մը:

«Վերջեւս, յանախ կը կրկնէի քե՛նուր կեանք մը. որովհետեւ, սիրելի Հայկունի, դու իմ
էոյրս ես, հարագաս էոյրս, ու ես՝ քու հարագաս եղբայրդ: (Մի կորսնցնէր
պաղարիւնութիւնդ եւ կարդա համբերութեամբ):

«Ձեր տունի նախկին լուսարարուհին, Տիկին Տիրուհի, որ իմ մայրս
էր, քու մայրդ ալ է: Անոր հասուկոսոր վերջին խօսքերը, որ հիմնովին
պիտի փոխեն մեր յարաբերութիւններն ու մեր նակաստգիրը, իրենց
պարզութեան մէջ անհերքելի են: Անուուս պիտի ուզես դուն եւս սու-
գել եղելութիւնը, ու, յարմար առիթի մը, խօսեցնել պիտի տայ «մայրդ»
այս խնդրոյն շուրջ: Ու եթէ մեր մօր խօսքերը գառանցանքի արդիւնք
եղած ըլլան, ինչ որ երբեք չեմ կասկածիր, մեք պիտի վերստինք մեր
նախկին սերն ու կեանքը, աւելի գեղեցիկ եւ աւելի բուռն, ի լուր եւ
ի տես աշխարհի, Մինչ այդ, մեր երկուքին լաւութեան համար ես ար-
տասանման կը մեկնիմ:

«Օ՛ն, քաջպիտիւնքի՛ն, սիրելի էոյր, մանաւանդ որ հիմակ մաքուր
հոգիով ու մարմնով: Ես քաջ ստուայեցայ, դու մի՛ տառայիր: Մի

կորսնցներ յոյսդ հեռապատկերէն նոր եւ գեղեցիկ կեանքի մը՝ որուն իսկապէս ու յիովին արժանի էս, եւ գոր կը մաղթեմ ի արեւ: Շարունակե՛ք բու անվերապան սերդ ու յարգանդդ հանդէպ քեզ որդեգրող ծնողքին:

«Առ այժմ քեզի պիտի քրթակցիմ մեր բարեկամ Ժպտունիի միջոցով: Յաճախ այցելէ անոնց, ու տեղեակ պահէ զիս բու կեանքէդ, մինչեւ որ, տեսնենք քե ի՛նչ կը կարգադրենք, կամ ի՛նչպէս կը դասաւորուին դէպքերն ու ի՛րերը:

«Ձերմագին ու արագին բարեւներով՝ քոյդ:

ՀՐԱՆՈՒ

Լըջօրէն անգամ մը եւս կարդալէ վերջ, դարձեալ կ'ընկղմի մտածումներու լարիւրերնդ սին մէջ: Անհրաժե՛շտ է այս նամակը՝ Հրանդ կրնա՞յ խորաչափեյ անսահման վիշաք զոր ան պիտի պատճառէ Հայկունհիւ թերեւ, յանկարծական տագնապի մը բռունցքին տակ, խեղճ աղջիկը առնէ այնպիսի քայլեր, գործէ այնպիսի խենդութիւններ, որոնց հետեանքին պատասխանատուութիւնը ամբողջովին պիտի ծանրանայ իր, Հրանդի վրայ: Ան որ հազիւ երկու օրէ ի վեր ազատած է իր ներսի ցաւերէն, կրնայ չտոկալ այս նոր ու անսպասելի վիշտին, ու կրնայ նոյնիսկ վերջ տալ իր օրերուն: Ո՛չ, Հրանդ բացարձակապէս չի փափաքիր որ չարը մտենայ Հայկունհիւ: Ընդհացարձակապէս չի փափաքիր որ չարը մտենայ Հայկունհիւ: Ընդհացարձակապէս չի փափաքիր որ սիրուհին, ու պիտի սիրէ կռակը: Չայն կը սիրէր նրէկ՝ իբրև իր սիրուհին, ու պիտի սիրէ վաղը, մի՛շտ, իբրև իր քոյրը: Իր սիրոյ գոյնը, ճառագայթը միայն պիտի փոխուի: Ուրիմն, ուրիմն, ի՞նչ ընելի Մեկնիլ՝ առանց բառ մ'ըսելու, առանց հրաժեշտի: Կորսուիլ իր անհետացումը պիտի մնայ գաղտնի ու խորհրդաւոր: Հայկունհի անշուշտ պիտի տառապի ներքնովին, բայց ի վերջոյ, ցաւին մեղմացումով՝ մոռացումի պիտի գայ ու պիտի համակնքուի կեանքի նոր պայմաններուն: Այսպէսով խնայողութեամբ պիտի ըլլան անոր այն հաւանական ցնցումները՝ որոնք կրնան ճակատագրական ըլլալ: Յետոյ իր «ծնողք»ին հանդէպ ունեցած սիրոյն ու յարգանքին վրայ ստուեր կամ փոշի պիտի չնստի, ու կեանքը պիտի շարունակուի այս կամ այն կերպով: Շատ շատ, եթէ Հայկունհի այնքի այն եզրակացութեան թէ՛ Հրանդ յափշտակելէ վերջ իր պատիւը, լղճելէ վերջ իր մարմինը, լքած է զինք ու փախած, այդ պատիւը, շատ շատ, անէճքնիր պիտի տեղայ իր հասցէին, ու, այդ բանը, Ռայց, իրա՞ւ, Հայկունհի պիտի փրկուի՞ այս կերպով: Ի զուրբ քան, Ռայց, իրա՞ւ, Հայկունհի պիտի փրկուի՞ այս կերպով: Ի զուրբ քան, փնտռուողներէ ու ապարդիւն սպասումէն ձանձրացած և յուսահատ, որ մ'ալ պիտի չառնէ՞ այն նոյն քայլը զոր պիտի առնէր իր նամակը կարգալէն վերջ:

Հրանդ խաչ մը կը հանէ, Աստուծոյ և մօր կը նայի, ու նամակը զննելով պահարանին մէջ, կը գոցէ: Եւ շունչը կ'առնէ Ժպտունիին ցտուղը:

- Սիրելիս, կ'աճապարեմ:
- Ի՛նչ կայ, խե՞ր է, Հրանդ:
- Թեքես... մտիկ ըրէ, խնդրեմ: Այս նամակը՝ այսօր, վաղը, միւս օր, ո՛րէէ ձեռով կը հասցնես Հայկունիի ձեռքը: Զսպէ հետաքրքրութիւնդ: Երեկոյին, ժամը իննին պիտի գտնուիմ հիւսիսային կայարանին ճաշարանը: Ի՛եզի կը սպասեմ. անպասճառ գաս:
- Բայց, բան մը չեմ հասկնար, Հրանդ:
- Շա՜տ պարզ է, երեկոյին ամէն բան կը հասկնաս: Յտեսութիւն, բարեկամս, կարեւոր գործեր ունիմ կարգադրելիք:
- Բայց, կեցի՛ր, Հրանդ, կեցի՛ր, գէթ երկու բառով . . . Ի՛նչ պառասնեցաւ:
- Ոչինչ սիրելիս . . . ու շա՜տ բան: Երկրաշարժ . . . այո՛, պարզապէս երկրաշարժ: Ատուծոյ գործերուն խելքս չի հասնիր:
- Հայերէն խօսէ՛, եղբայր...
- Առաջին օրերուն, կը յիշե՞ս, բառ առ բառ քեզի կ'ըսէի «կը նախզգամ թէ մեր այս հանդիպումը ճակատադրական պիտի ըլլայ»: — Կը յիշեմ, ու ես կը խնդայի:
- Այո՛, ու կ'աւելցնէի թէ երկու ծայրայեղութիւններ կը սպասեն ինձի. կամ երջանկութիւնը, կամ . . . : Բայց սիրելիս, ի դո՛ւր ժամանակս կը . . . , ցտեսութիւն . . .

Գ.

Յոկորոս էֆէնաիի պոստամ ու խոժոռ դէմքը կ'ընկերանայ, մինչեւ փողոցին դուռը, բժշկին լաւատեսութեան: Սակայն, վիրաւոր կենդանիի մը նման, ան կը վերսկսի մռնչել իր շունչին մէջէն: Իր կարճրած բարկութիւնը կ'իյնայ մանաւանդ կնոջը անհողութեան վրայ, որ չէ գիտցած, չի գիտեր հսկել իր զաւկին վրայ: Իր կարծիքով աղջիկ մը առնէն պէժք չէ առանձին դուրս ելլէ: Փորձանքը եկայ չ'ըսեր: Մանաւանդ որ, ժամանակէ մը ի վեր, որոշ փոփոխութիւններ նշմարած էր իր աղջկան վրայ: Յայտնօրէն նիհարցած էր ան, ու վարդազոյն երեսները տժգունած: Երեկոները, ճաշի առեմ, Յոկորոս էֆէնաի կը դիտէր որ Հայկունիի գոժուարաւ կ'ուռէ, առանց ախորժակի, ու վերջապէս թխուր հով մը կար անոր դէմքին վրայ: Այո՛, բոլոր ասոնք չէին վրիպած իր սուր նայուածքէն. բայց չտեսելու եկած էր. չէր բացուած, չէր միջամտած, այս երեսայինները վերադրելով իր զաւկին տարիքին: Հիմակ է որ կը չափէ, կը կրէ, իր թոյլ վարմունքին հետեանքները: Ասկէ վերջ սակայն, ան պիտի ըլլայ չափազանց խիստ, պիտի հսկէ շա՜տ մօտէն, ու թոյլ պիտի չտայ որ տերեւ մը շարժի առնին մէջ՝ առանց իր հրամանին:

— Աղջիկը ձեռքէ պիտի հանես, կը զոռայ ան իր կնոջ, ճաշա-
սենեակին մէջ:

— Օ՛, մի չափազանցեր: Բայց ես ինչո՞վ մեղաւոր եմ: Առտուն
բան մը չունէր ան: Երբ դուրս ելաւ, շատ լաւ արամադրութեան
մէջ էր: Երբ թուն եկաւ, դարձեալ բան չունէր: Իր սենեակին մէջ
է որ՝ դգեստները փոխած ժամանակ՝ գետին կ'իջնայ:

— Ասիկա այսօրուան բան չէ: Այո՛, ուրը ա՛յսօր պայթեցաւ.
Բայց ո՞վ գիտէ երբէն ի վեր գոյութիւն ունէր ան: Դեռ յամառէ
պարասրահ զրկել, գիւղերը զրկել, առանձին Գիտե՞թէ ինչեր կրնան
ելլել առոնց տակէն: Հիմակուան դարուն մէջ՝ հրեշտակն պնդամ
կ'աւրուի ու սառանայ կը դառնայ:

— Երկար ատեն բժիշկին հետ ի՛նչ խօսեցաք, ի՛նչ կ'ըսէ:

— Ի՛նչ պիտի ըսէ: Վտանգաւոր չէ եղբր, բայց լուրջ է եղբր:
Ի՞նչ ըսել է ասիկա, դուն կը հասկնաս: Յնցումը զօրաւոր է եղբր ու
ջլալին դրութիւնը սաստիկ խանդարուեր: Հարցուց նաև նշանուած
է, սիրող ունի՞:

Ու Յակոբոս էֆէնտի գլուխը շարժելով, սառած ծիծաղով մը
բայց դառնօրէն՝

— Յակոբոս էֆէնտի՛, դեռ ինչե՛ր պիտի տեսնես, դեռ ինչե՛ր
պիտի իմանաս:

Ու, զսպուած կատաղութեամբ՝

— Ինչո՞ւ ջլալին դրութիւնը պիտի խանգարուի եղբր. ո՞վ ի՛նչ
ըսաւ կամ ո՞վ ի՛նչ ըրաւ Հայկուհիի: Է՛, Յակոբոս, ինչե՛ր կը պա-
տահին քթիդ տակ և դուն բանէ մը լուր չունիս:

— Է՛, շատ հեռուները կ'երթաս: Այդ կասկածներդ Հայկուհիի պա-
տիւնն արատ միայն կը բերեն — կը համարձակի տիկ. կարմիրեան:
Այդ տարիքին մէջ, ամէն աղջիկի ալ կը պատահի նուազում, սրտի
խառնը: ք, մարելիք, եւայլ՛:

— Դու խելքդ չի հասնիր Գնա՛, դնա ու դեղերուն ճարը տեսիր:
Տիկ. կարմիրեան Հայկուհիի սենեակը կ'ուզողուի Ան չի բաժնեք
իր ամուսինին ծածկուած յոռետեսութիւնը: Իր վստահութիւնը աչ-
խախտ է իր զաւկին անմեղութեան ու պարկեշտութեան վրայ, ու
իր մտքին քովէն իսկ չ'անցնիր թէ ան ընդունակ ըլլայ՝ արդիւնած
կամ յոռի յարաբերութիւններ մշակելու դուրսը:

Հայկուհի, աչքերը դեռ գոց, երկար ատենէ ի վեր՝ անկողնին
անզգայութեան վրայ, Գունատ՝ աւերակներու վրայ ձաթոց լուսինի
մը նման, անշարժ՝ յաւիտենականութեան պէս կարծես թեւատ հրեշ-
տակ մը՝ որ կը ներձէ անկումէն վերջ, Բայց Հայկուհի չի ներհեր իր
կողպերուն տակ՝ քունը չէ որ թառած է, այլ ծռելի ամպի կամ մի-
գամածային դանդուած մը՝ որ կը ասարձուի իր ուզեղին մինչեւ
հեռաւոր անկիւնները, մինչեւ ջիւղերուն ցանցերը: Իր գիտակցու-

թիւնը կոկորդէն խեղդուած՝ դիտսպաստ դետին ինկած է: Ուրիշ բան չուէի Սիրտը՝ գրեթէ ընականոն՝ կը լցնուի ու կը պարպուի: Ու թռչունի մը նման՝ կը շնչէ թեթեւ ու արագ:

Տիկ. կարմիրեան ձեռքը մեղմօրէն կը ղնէ Հայկուհիի էակաւն վրայ, որուն տակ՝ դեռ մոծիւներ կը մրափեն տաք մոխրի մը ամպերուն մէջ...:

* * *

Հինգերորդ օրը զգալի փոփոխութիւն:

Հայկուհի կրնայ նստիլ անկողնին մէջ ու կաթ և ապուր խմել: Բժիշկը արտօնած է նաև վառեակի միս ու կարդ մը եփուած պտուղներ: Այժմ, համակրելի դալկութիւն մը իր երեսներուն վրայ, տեղ տեղ կոկոնի երանգներով: Աչքերուն արտայայտութիւնը աւելի պայծառ է ու մարմինը հետզհետէ կը ղիմէ նախկին ներդաշնակութեան: Բայց, մաշոգութիւն պատճառող շատ կարեւոր կէտ մը կայ՝ զի Հայկուհի, անտեղիօրէն յանկարծ կը ծիծաղի, երբևէ կու լայ, կամ կ'արտաբերէ բառեր, որոնց կը հանդիպես ազօթագրքի մը էջերուն մէջ: Այս երեոյթները սաստիկ վիշտ կը պատճառեն Հայկուհիի մօր, որ, իր աղջկան այդ անբնական պահերուն՝ կը շուարի, մխիթարական բառ մ'անգամ չի կրնար գտնել, ու զուրս ելլելով՝ ինքն ալ կ'արտասուէ: Ո՛հ, եթէ իր աղջկը այդպէս մնայ...:

Տասներորդ օրը, գեղածիծաղ առաւօտի մը օրհնութեան տակ, Հայկուհի՝ իրենց պարտէզին մէջ, երկայն ամօռի մը անտարբերութեան վրայ: Բարակ ու սիրուն շալ մը կը ծածկէ իր ուսերուն և կուրծքին ծիւրած գեղեցկութիւնը: Շուրջի կեանքը, սրելին հուրն ու երջանկութիւնը չեն աղդեր իր վրայ: Միայն կը շնչէ հանգաբա, երկար ու խոր, կարծես երբեք չէ շնչած ու պէտքը կը զգայ օդին շփարար աւիշին Մերթ՝ իր նայուածքը, որ կը խորանայ անծանօթ և անճանաչելի գոհունակութիւն մը, կը պտտցնէ հետուն, վերը կապոյտին անորոշութեան վրայ: Անկէ ևս ալ բան մը չի ծորի իր գուռին մէջ: Թռչուններուն, այդ անմեղ էակներուն երզը՝ ալ չի հոսի իրեն: Սա ծաղիկները, որոնց հասակը ջուրով կ'օժէր ամէն երեկոյ ու կը շոյժր անոնց բաժակն ու գեղարոյր մտերմութիւնը, սա ծառերը՝ որոնց հետ միասին մեծցած, իր զասընկերներն ու խաղընկերներն ելած էին, ու սա աւաղանը՝ որ յաճախ զովութիւն ու համարոյր տուած էր իր մերկութեան — կարծես օտար կը թուին իրեն: Այժմ, մեծ անջըրպետ մը կայ անոնց և իր միջև — անոնք անմեղ են ու ապրիլ կ'ուզեն...:

Ու կը նայի՝ առանց դիտելու, ու կը խորհի՝ առանց մտածելու:

Իր գիտակցութիւնը, երեակայութիւնը թէպէտ բազմած են իրենց նախկին գահոյքին վրայ, բայց չեն կրնար հրամայել, չեն կրնար իշխել. զուրկ են կեանքին ու կամքին ոյժէն: Կարծես գերիինման, անոնք կը հպատակին պարտադրուած օրէնքներու:

Իր մտածումը հազիւ կը պլպլայ վերջին հինգ վեց ամիսներու փլատակներուն վրայ՝ պարասրահի ամօթիւած անմեղութենէն մինչև Հօլիվուտ ճաշարանի անկողինները. գեղեցիկ համբոյրներէն՝ մինչև իր ներսի քանդումները՝ Հրանդի սենեակին մէջ. ու վերջապէս նամակը, Հրանդի մեկնումը, իր եղբայրը, մայրը — իր կործանումը...

Բայց զՂՆԸ մի ոչ մէկ վանկ իր չրթներուն վրայ:

Հրանդ իր դէմն է, անորոշ պատուանդանի մը վրայ. կամ աւելի ճիշդ, ան իր մէջն է դեռ: Իրրե սիրո՞ղ, իրրե եղբայր. ո՛չ, չի գիտեր: Թերեւս երկուքն ալ. ո՛հ, ոչ. ո՛չ մէկը, ո՛չ միւսը: Այո՛, բան մը. հսկայ բան մը մնացած է անկէ իր մէջ. որ սակայն ալ չի՞ գործեր, չի՞ մղեր, որ թերեւս ալ չ'ապրիր: Անգոյն ու անկենդան զանգուած մը: Բայց, ատելութեան ոչ մէկ բիծ, ու ոչ մէկ բիծ — ենչանքի... Ան ալ չի՞ կրնար սիրել զայն՝ որպէս իր սիրականը, ու չի՞ կրնար փնտռել զայն՝ իրրե իր եղբայրը: Զլացումի ախարհը վերի վայր չընուած է իր տիեզերքին մէջ: Բայց Հայկուհի ցաւ չի դատար. ոչ մէկին հանդէպ մեղադրանք չունի. ո՛չ ճակատագրին, ո՛չ ալ իրեն հանդէպ . . .

Ու կը մտաբերէ նաև, զուժին ամենամաքուր բիւրեղով, լուացարարուհի իր մօր պառկերը, խոնարհ և առաքլնի: Անոր ձեռքերը եփոց ջուրին մէջ, անոր քրթինքները՝ աշտին առջեւ, իր Հրանդին համար: Ու անոր յատկանշական, երկար, մայրակա՛ն նայուածքները՝ ուղղուած իրեն, ի՛ր աղջկան: Ու անոր երկնային համբերութիւնը, փափկանկատ լուսթիւնը՝ իր աղջկան հանգստութեան համար: Ո՛հ, մայրակա՛ն զոհարբութիւն, հրաշալի ու անսաման...

Բայց, արգունքի ոչ մէկ կաթիլ իր աչքերուն մէջ:

Ու դարձեալ կը շնչէ հանդարտ երկար ու խոր կարծես օդ միայն կ'ուզէ. կամ լոյս, լոյս միայն կ'ուզէ, ոչ թէ կեանք. ու յաւառան մնալ լոյսին մէջ, առանց ցանկութեան, առանց կեանքի . . .

Այդ պահուն, պարտէզ կը մտնէ իր մայրը, նախաճաշի սպասներով, զոր կը դնէ Հայկուհիի առջև, քարէ փոքրիկ սեղանի մը վրայ: Մինչև այդ օր, ան չէ ըրած ոեւէ ակնարկութիւն, չէ ուղղած ո՛նէ հարցում իր աղջկան՝ տասն օր առաջ պատահած դժբախտութեան մասին: Միշտ խուսափած, զզուշացած է, նոյն իսկ չէ համարձակած — չըլլայ որ Հայկուհի նոր ցնցումներու ենթարկուի:

— Խմէ՛ կաթը, աղջիկս: Ասկէ վերջ միշտ այստեղ պիտի առնենք մեր նախաճաշը:

— Շատ շնորհակալ եմ, մա՛յր, շատ շնորհակալ եմ: Բայց ինչո՞ւ դու կը յոգնիս, սպասուէին տո՞ւնը չէ:

— Հոգ չէ, գաւակաւ Խմէ՛. կարագէն առ կե՛ր, որպէսդի, հիմակ որ ալ բոյորովին աղէկ ես, քիչ մը զլրնաս. շատ նիհարցար:

— Շնորհակալ եմ, մայր, ազնիւ ուշադրութեանդ համար: Պիտի ջանամ արժանի ըլլալ քեզի:

Ու, նախաճաշէն վերջ, Հայկուհի, սրտառուչ պարզութեամբ և և որդիական համարձակութեամբ մը՝

— Մա՛յր . . .

— Ըսէ՛, գաւակաւ:

— Մա՛յր, հարցում մը պիտի ընեմ քեզի:

— Ըրէ՛, գաւակաւ:

— Մի դարմանար հարցումիս միամտութեան վրայ: Այս պահուս, միտքիս մէջ խնդ հետաքրքրութիւն մը արթնցաւ, ու կը փափաքիմ որ զոհացում զտնէ ան, եթէ կարելի է: Մա՛յր, ինչո՞ւ ես Հայկուհի կը կոչուիմ. ո՞վ դրեր է ինծի այս աղուոր անունը. ի՞նչ բանէ թելադրուած:

Այս անոպասելի հարցումէն՝ տարօրինակ շփոթութիւն մը կ'ուրուագծուի Տիկին Կարմիրեանի գէմքին վրայ: Այդ բարի կնկան միտքը չարչարանքի մը կը մատնուի յանկարծ: Ի՛նչ հարցում էր այս. ի՛նչ նպատակով: Ու չի կրնար պատասխանել, պատասխանը հետու կը փախչի իրմէ. թէպէտ ինք կը կարծէ թէ իր լիզուին տակ է: Ի՛նչ պատահեցաւ, արդեօք . . . թէ Հայկուհիի խելքը դարձեալ . . . Արդեօք անոր հիւանդութիւնը կա՞պ ունի այս . . . Ո՛հ, Աստուած իմ . . .

— Բայց, բայց . . . կնքանայրդ, աղջիկս . . . այո՛, կնքանայրդ, կարծեմ դրաւ անունդ: Չեմ գիտեր, լաւ չեմ յիշեր թէ իր մօր անունն է թէ. . . է՛, լաւ չեմ յիշեր. քսան տարի է . . . հիմայ կարծեմ Ամերիկա է ան . . .

Կրնայ ըլլալ ու կրնայ չըլլալ. և կրնայ ըլլալ որ այդպէս եղած ըլլայ — կը խորհի Հայկուհի, որ նշմալած է իր մօր շփոթութիւնն ու պատասխանելու ձեւին խարխուլութիւնը: Բայց, իր այս առաջին յանդէսութիւնը զինք չմօտեցուց իր հետապնդած նպատակին, որ չի բղխիր ետստիրական ակերէ: Կը փափաքի պարզապէս, որ պատուի խորհրդաւոր քօլը, վերնա՛յ մշուշը՝ որ կը ծածկէ իր ծննդեան մատուրը: Իր ապուսպանքն ու կործանումը իրաւունք ունին ճշմարտութիւն աղերսելու: Ու, դարձեալ, որդիական մտերմութեամբ մը՝

— Մա՛յր,

— Խօսէ՛, գաւակաւ:

— Մա՛յր երազ մը տեսայ որ:

— Խեր ըլլայ, աղջիկս:

— Չափազանց աղղից վրաս, ու դեռ այդ աղղիցութեան տակ եմ: Երազներուն, ինչպէս զիտես, ես շատ կարեորութիւն չեմ տար: Բայց այս երազը անհաւատալիօրէն տարօրինակ էր: Իրակաւնութիւնը՝ ես ինքս կը տեսնէի՝ երազիս մէջ . . .

— Մեզայ, պատմէ տեսնեմ, զաւակս — կը դողան Տիկին կարմիրեանի շրթները:

— Կ'աղաչեմ, մա՛յր, մա՛իկ ըրէ, և դու՝ քու փորձառութեամբդ մեկնութիւն մը տուր անոր: «Ասկէ շատ առաջ — չեմ գիտեր երբ — աղքատ մայր մը զաւակ մը կը ծնի: Խորհելով որ պիտի չկրնայ զայն պէտք եղած կերպով խնամել, կ'որոշէ հարուստ ընտանիքի մը յանձնել զայն՝ որ զաւակ չունի: Ու ծնելէն քիչ վերջ՝ կը գործադէտ իր մտածումը: Մինչև այստեղ տարօրինակ բան մը չկայ անշուշտ: Տարօրինակն ու զարմանալին հոն է որ՝ երազիս մէջ՝ ինծի այնպէս կը թուէր թէ՛ ե՛ս էի այն նորածինը՝ որ զիշեր մը՝ ծրարի մը մէջ փաթթուած՝ կը զրուէր հարուստին զրան առջև:

Այս միջոցին, Հայկուհի կը դիտէ իր մօր ձեռքերուն դողը, դէմքին յարափոփոխ վիճակը, ու աչքերուն խաւարումը: Զայն փրկելու համար այս ցաւալի կացութեանէն՝

— Մա՛յր, ինչ որ ալ ըլլայ այս երազին մեկնութիւնը, կ'երդնում Աստուծոյ առջև ու կը վստահեցնեմ քեզ, կը վստահեցնեմ հայրս, որ իմ սէրս, իմ որդիական սէրս անխախտ պիտի մնայ յաւիտեան՝ հանիմ զէզ ձեզի: Ոչ մէկ բան կրնայ խլել այդ սէրն իմ սրտէս: Դու կը դէպ ձեզի: Ոչ մէկ բան կրնայ խլել այդ սէրն իմ սրտէս: Դու կը ճանչնա՞ս զիս Միայն կը խնդրեմ, մա՛յր, քաջ եղի՛ր՝ ճշմարիտ մեկնութիւնն յայտնելու ինծի, յանուն այն խնամքին, այն գուրգուրանքին ու այն սիրոյն՝ զոր ունեցեր ես և ունիս ինծի հանդէպ՝ քանայ տրիներէ ի վեր:

Հայկուհի կը լռէ ու կը սպասէ մօր պատասխանին: Տիկին կարմիրեան դեռ չէ գտած իր կորսուած զրութեան լրջութիւնը: Արեւուն լոյսը կը մթազնի իր աչքերուն մէջ: Ու կը զգայ թէ չի՛ կրնար երկար առեն լուռ մնալ կամ պէտք է ըսէ ճշմարտութիւնը, կամ պէտք է արմատախիլ ընէ երազին հէքեաթը: Բարեպաշտ կիներ սաւակայն, աստուածային ձեռք մը կը տեսնէ այս երազին մէջ, այո՛, երկկայնի նշան մը՝ որ կրնայ փորձանք բերել ինքի . . . Ու կամաց՝ սուրճի գաւաթ կարգացող կիներու պէս՝

— Զաւակս, զաւակս . . .

— Մտիկ կ'ընեմ, մա՛յր:

— Զաւակս, հարը պէտք չէ իմանայ որ . . .

— Վստահ եղի՛ր, մա՛յր. վստահութիւն ունեցիր խօսքիս վրայ,

ինչպէս ունիս իմ սիրոյս վրայ:

Ու խարխափող կոյրի մը նման՝

— Այո՛, աղջիկս. . . ես չեմ. . . ծնած քեզ . . . Սակայն մօր մը չափ, մօրմէ մ'աւելի սիրեցի ու կը սիրեմ քեզ:

— Գիտեմ, մայր, հարկ չկայ ըսելու. շարունակէ:

— Ինչպէս դուն ըսիր, գիշեր մը մեր դուռին զանգակը զարնուեցաւ: Այն ատեն ուրիշ թաղ կը նստէինք: Երբ մեր նախկին սպասուհին դուռը կը բանայ, ծրար մը կը տեսնէ՝ գետինը տեղաւորուած: Ներս կը բերէ, զայն կը բանանք և ինչ տեսնենք. անուշիկ մանկիկ մը: Թուղթի կտորի մը վրայ գրուած էր. «Անունը Հայկունի դրէք, կ'աղաչեմ»: Աստուած զրկեց, ըսինք, Յակոբոս է- ֆէնթին և ես, և պահեցինք զայն: Այդ տունէն շուտով փոխադրուեցանք, որպէսզի գաղտնիքը մէկը չիմանար. որովհետեւ բոլոր դրացիները գիտէին թէ ես զաւակ չունէի: Ու եկանք այստունը զոր հայրդ գնեց աւելի վերջը: Այդ նորածինը, աղջիկս, դո՛ւն էիր: Հպարտութեամբ կ'ըսեմ թէ քեզ խնամեցի, մեծցուցի, սիրեցի՝ լրբե հալաղաւս: Պարագին ծառերն ու ծաղիկները, եղբայրներն ու քոյրերը Հայկունիի, խոր ուշադրութեամբ մտիկ ըրին այս պատմութիւնը, ու արտասուեցին. . . :

Դ.

Իրիկուն մը, մինչ Հրանդ կը ճաչէ պանդոկի մը ծովեղերեայ ճաշարանին մէջ, իրեն կը հրամցուի հետեւեալ նամակը.

«Սիրելի բարեկամս Հրանդ,

«Առաջին նամակդ պառասխանեցի քարթով մը: Այստեղ անգամ մը ես կը կրկնեմ անոր պարունակութիւնը, խորհելով որ ան կրնայ ձեռքդ հասած չըլլալ:

«Մեկնումիդ երկրորդ օրը, Հայկունի ձեզի կ'երթայ: Երբ դրան վրայ կը կարդայ, «Վատունիենց եկուր, հո՛ն եմ», անմիջապէս մեղի կու գայ: Կը յայտնեմ իրեն թէ Հրանդ կարևոր և ստիպողական գործով դուրս ելած է և թէ նամակ մ'ունի իրմէ: Այս լսելով, Հայկունի կաս-կարմիր եղաւ: Նկատելով որ կրնայ նամակը ճամբան կարդալ ու դժբախտութիւն մը պատահիլ, իրեն ընկերացայ՝ ինքնաշարժով՝ մինչև իրենց տունին մօտերը: Նամակը իրեն յանձնեցի այն ատեն՝ երբ վստահ էի թէ՛ այլևս զայն չէր կրնար կարդալ՝ եթէ ոչ իր սենեակին մէջ: Անկէ ի վեր ոչ մէկ տեղեկութիւն չունէի իր մասին:

«Այսօր, այսինքն տասնեվեց օր վերջ, Հայկունի մեղի եկաւ,

ձեռքը թարմ ծաղիկներու փունջով մը Առաջին առթիւ՝ զայն չճանչցայ. փոփոխութիւնը այնքան զարհուրելի էր, Բուրբովին նիւսրցած, երկա՛ր, առեն անկողինի ծառայող հիւանդի մը ապաւորութիւնը թողուց վրաս: Շատ գէշ եղայ, ու մեծ ճիգերով իշխեցի վրաս, որպէսզի ան չկարենայ կարգալ զարմանքիս ընդվզուելու Այս՝ սիրելի շրանդ, քոյրդ անճանաչելիօրէն փոխուած է ու նիւսրցած: Բնականաբար փափկանկատութիւնը թոյլ չէր տար հարցումներ ուղղելու իր այս վիճակի մասին: Ու ապշեցայ, մանաւանդ, անոր համար որ՝ ան երբե՛ք ախուր չէր: Ուրա՛խ, նոյնպէս ոչ, Իր ղէմքին վրայ կարելի չէր նշմարել ո՛չ ժպիտ, ո՛չ վիշտ, այլ պարզուկ, միամիտ և, կրնամ լսել, կը ծնական գոհունակութիւն մը: Կարծես բան մը պատահած չըլլար, կամ շատ բաներ պատահած ըլլային, զորս ապրած էր քրիստոնէի մը վայել համակերպութեամբ ու համբերութեամբ:

«Ինձի առաջարկեց իրեն ընկել անալ մինչև գելեղման առուն ցոյց աւրու համար մօրդ շիրիմը: Փութիւլ ընդառաջ զացի իր այս փափաքին: Փունջը դեռեղեց այն հողին վրայ՝ որուն աակ կը ննջէ իր հարադատ մայրը: Չլացաւ. արցունք չտեսայ, բայց երկար առեն ծնրադրած՝ աղօթեց: Վերադարձին, սա բառերով բաժնուեցաւ ինձմէ. «չատ չնորհակալ եմ. մնաք բարով: Գրեցէք շրանդին թէ կը հրաժարիմ աշխարհէն»: Չկրցայ զսպել զիս և զոչեցի. «ինչպէս»: Ան շարունակեց. «կարգադրուած է, այսօր իսկ կաթոլիկ քոյրերու մայրապետանոցը կը մտնեմ»: Ու բաժնուեցաւ:

«Ոչինչ չկրցայ ընել. լեզուս քար կարեցաւ, ու չհամարձակեցայ բառ մ'ըսել՝ զինք կեցնելու և իր խիստ որոշումէն զարձնելու:

«Ահա, սիրելի շրանդ, կացութիւնը: Քեզի կը թողում գնահատելու կը խորհիմ թէ՛ օտար երկինքներու աակ՝ այլ աւելորդ տեղը թափառելու պատճառ չունիս: Շուտով վերադարձիր. թերևս զուրմիտայն կարող ես Հայկունին աշխարհին ու կեանքին բերելու, քանի որոյդ՝

ԺՊՏԱԻՆԻ

Թուղթը ձեռքէն կ'իյնայ, ու ինք կ'արձանանայ լուսինէն սառած արցունքներուն տակ: Արցունք՝ իր աչքերուն մէջ ևս:

Իր նայուածքը, հառաչներն ու մտածումները կը խառնուին իր առջև մրմնչող բիւրաւոր ալիքներուն, ու կը փչրուին անոնց հետ:

Անձանօթին կափարիչը բացուած է իր առջև, բայց շրանդ չի համարձակիր մօտենալ անոր դադանիքներու խորհուրդին: Անսրբագրելի են ճակատագրին օրէնքները, իրենց դաժանութեամբ ու գեղեցկութեամբ:

Ու երկար ատեն, լռութեան մը անաւորութիւնը կը տիրէ իր
դանկին ու սրտին փլատակներուն վրայ . . .

*
*
*

Նոյն սահուն երեկոյեան աղօթք՝ մայրապետանոցի մատուռին
մէջ: Սեւր Էազած, ծնրաղիր, վարդարանի մը մխիթարութիւնը ձեռ-
քերուն մէջ, քոյր Հոբիսիմէ (Հայկուհի), ջերմեռանդ ու վերացած,
աղերսն ուղղած Մարիամ մօր զթութեան, իր նորընծայ ընկերուհի-
ներուն հետ կը կրկնէ.

«Մայր անարատ — աղաչեա՛ վասն մեր,

«Մայր անբիծ — աղաչեա՛ վասն մեր,

ու յետոյ՝

«Ողջոյն քեզ Մարիամ, լի չնորհօք . . .

«Բարեխօսեա վասն մեր մեղաւորացս, այժմ և ի յամու մահ-
ուան մերոյ. ամէն»:

Ու ան լոյսին մէջ է, առանց ցանկութեան, առանց կեանքի . . . :



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

0

Երբ ամբողջ աշխարհ կը խօսի ռազմական ճակատներէ, ամրացած գօտիներէ, թնդանօթէ, հրասայլէ, ու ամրութիւններէ, երբ ամէն թերթ և հանդէս զանազան նկարներով կ'աշխատին իրենց ընթերցողներուն գաղափար մը տալ նորագոյն ռազմական շինութիւններու մասին՝ Հայկական ճարտարապետութեամբ զբաղողին համար անակ մը պարտականութիւն կ'ըլլայ ներկայացնել հայ ռազմաճարտարապետութիւնը անցեալին մէջ:

Մեր մէջ ճարտարապետութեամբ զբաղողները քիչ մը անտեսած են մեր ռազմական շինութիւնները և շառ չեն զբաղած անոնցմով, հակառակ որ ան՝ մեր մէջ եղած ըլլայ շատ զարգացած:

Շինութեան արուեստին մէջ շատ կարեւոր տեղ մը կը զբաւէ ռազմական ճարտարապետութիւնը, որ նոյնքան հին է՝ որքան մարդուն և առաջին շինուածքը, որովհետեւ պատերազմը մարդկութեան մէջ գոյութիւն ունեցաւ նախ քան բնակարանը: Այնպէս որ առաջին մարդը երբ կը փորձէր իրեն բնակարան մը շինել, աչքի առաջ ունեցաւ թշնամիին յարձակումներէ պաշտպանուելու հոգն ա՛յ ու ջանաց ըստ այնմ ձեւաւորել իր շինութիւնը:

Դարերու հորովումին մէջ այդ շինուածքը փոխեց իր կերպարանքը և քիւնքիւր: Մարդկութեան կառարած յառաջդիմութեանց հետ միատեղ փոխուեցան կռուելու և իրար ոչնչացնելու միջոցները, որը բնական կերպով փոփոխութեան ենթարկեց պաշտպանողական շինութիւններն ա՛յ:

Ո՛րքան առեն որ կռիւը կ'ըլլար նետով ու նիզակով, գոյութիւն ունեցան հսկայ պարիւպներ, անմերձանալի զրկակներ և անբռնարարելի աշտարակներ:

Չեմ գիտեր, ո՛ր խելացին մէջտեղ զրաւ վառօդ մը, ուրիշ մը շինեց թնդանօթները և անա ամէն ինչ սկսաւ թաղուիլ: Պարիսպաւորածութեան հողաթումբերու, աշտարակները գեանափոր ապաստարաններու: Եւ ատկից ի վեր, ռազմական ճարտարապետութիւնը չհամարձակեցաւ դուրսը բարձրացնել, ընդհակառակը ան՝ խլուրդի նման՝ սկսաւ հողը փորել, տմրակուռ փապուղիներ և գետնափոր արաններ շինել:

Պատմութեան մէջ, առաջին շինուածքը, զուտ ռազմական

նկատուժով, եղաւ «պատեհեալ» շինուած հողէ, քարէ և կամ նոյն իսկ փայտէ, ինչպէս կ'ընէին օրինակ Հելլէնները և Հոռոմայեցիք: Ասոր նպատակը թշնամիին յարձակումին սաստկութեան թափը կոտորել, անոր ճակտին միութիւնը խանդարելով՝ զայն հարուածելու կարելութիւն ունենալն էր: Պատնէչը վերջնական բուն ամբողջը չէր, այլ անոր մէկ նախադաս մասը: Բուն ուղղական շինութիւնները «պարիսպներն» էին: Ասոնց սարքուածքը անանկ պէտք էր ըլլար որ, թշնամին այլևս անկից աւելի անդին չկարենար յտոաջանալ: Ուրեմն ասոնց դերը մնայուն ըլլալուն՝ անոնց շինութիւնը ճարտարապետական կատարեալ արուեստ մը կազմեց:

Հսկայ քաղաքներ, իրենց ամբողջ հարստութիւններովը կ'ապաստանէին պարիսպներու ընձեռած ապահովութեանը: Եւ որպէսզի այս ապահովութիւնը աւելի կատարեալ ըլլայ, կը կառուցանէին քանի մը շարք պարիսպներ, որոնք մէջ ընդ մէջ աւելի դժուարեւած էին աշտարակներով, բուրգերով և խրամներով:

Պատմութեան մէջ կը տեսնենք, նոյնիսկ կայսրութիւն մը, որ ապրեցաւ ժարիներ, միմիայն իր մայրաքաղաքին մէջ պարփակուած և անոր քանի մը շարք պարիսպներուն ապաւինած: Սա Բիւզանդական կայսրութիւնն էր:

Սակայն ո՛չ միայն քաղաքներ, իրենց պաշտպանութեանը համար կը շինէին պարիսպներ, այլ եւ ամբողջ երկիրներ՝ իրենց սահմանադրութիւն երկայնքին կը կառուցանէին հսկայ պատեր, երկիրը թշնամի խուժումէն դերձ պահելու համար: Այս կարգէն նշանաւոր են Չինաստանի հիւսիսային սահմանի հռչակաւոր պարիսպները հարաւոր մղոննոց:

Երբ շինուածք մը կը հասնի հսկայական նման կառուցուածքի մը, այլևս ան բոլորովին կ'իյնայ ճարտարապետութեան մէջ:

Հայ ուղղաճարտարապետութիւնը բաղդը չունեցաւ ճանչնալու հրանօթը և հեռեկելու անոր պատրաստած նոր շինուածաձևերուն: Երբ այս նոր զէնքը մէջեկող եկաւ, արդէն Հայոցմէ վերցուած էր պաշտպանուելու իրաւունքը, պետութիւնը ջնջուած էր Հայաստանէն: Անանկ որ, հայկական ուղղաճարտարապետութիւնը մեզ կը ներկայանայ հնադարեան շինուածաձևովը: Սակայն այս արդէն բաւական պիտի ըլլայ ցոյց տալու մեզ՝ հայ շինողին ճարտարութիւնը այս ճիւղին մէջ ալ, ինչպէս ցոյց է տուած կրօնական և աշխարհական խաղաղ կառուցուածքներու մէջ:

Մեզի համար, որ կ'ապրինք մեքենական անակնկալ և անչափելի զարգացումի դարուն մէջ, թերեւ զժուար ըլլայ երեակայելայն կռուի զէնքերը ու միջոցները զորս մեր նախնիք կը զործածէին: Եւ

նոյն իսկ թերեւ անոնք երեւին տղայակա՛ն ալ: Սակայն այսուհան-
գերձ, նախկին ճակատամարտները նուազ արիւնշալի չէին: Օրինակ
Տղմուտի ափին, Աւարայրի դաշտին մէջ ճակատող 60000նոց հայ-
կական բանակը կու տար աւելի քան հազար մեռեալ, հապա վիրա-
ւորնե՛րը, որոնք պէտք էին ըլլալ առնուազն կրկինը վերի թիւին: Սա
ցոյց կու տայ արդէն թէ նախկին ճակատամարտները ոչինչով
միայն ետ կը մնային այսօրուան արիւնշալի կոիւններէն: Եթէ զէնքերը
նախնական էին, նուազ կատաղի չէր պայքարը, ուր կոռուողին Ֆի-
զիքական ոյժը մեծ դեր կը խաղար:

Գործածուած զէնքերու տեսակներէն, նախնեաց մէջ կը գտնենք
այսօրուան զէնքերուն գաղափարները: Այսօրուան հրացանաձիգնե-
րուն փոխարէն այն աստին կային նեաաձիգները, թնդանօթի գա-
ղափարը՝ սաղմային վիճակի մէջ կը գտնենք բարանի (catapulte)
գործածութեան մէջ, որուն միջոցաւ թշնամին կը ձեռք բերդին
պարիսպները, քարի մեծ կտորներ նետելով անոր վրայ: Կ'ըսեն թէ
այս գործիքով Արտաւան յաջողած է Անիի արաաքին պարիսպներուն
մեծ միտս հասցնել ու ճեղք մը բնաւար Հրասայի գաղափարն ալ
նախնիք ունեցած են, երբ անոնք կը գործածէին հսկայ փիղեր եւ
արագավազ ուղղակիաաքեր, ուր կեցած ուղղակի արագօրէն կը նե-
տահարէր թշնամի շարքերը, հոն իրարանցում յառաջ բերելով: Հին
Հելլէնները ծծումբ կը գործածէին թշնամին հեղձամահ ընելու եւ
անոր շարքերը կաղմայուծելու համար, իսկ Անիի րով՝ Հոռովմէական
բանակատեղին կը նետէր թունաւոր օձերով լեցուն զամբիւղներ: Այս
ալ տեսակ մը քիմիական պատերազմ չէ: Օղային յարձակումի գա-
ղափարը, արդէն ծնած էր միջին դարուն, երբ թուրքիներու մի-
ջոցաւ հրավառ նիւթեր կը նետէին պաշարուած քաղաքներու վրայ,
հրդեհ յառաջ բերելու համար հոն: Բիւզանդացիք արդէն ունէին
հրավառ նիւթ մը՝ զոր կը նետէին թշնամի նաւերու եւ կամ պաշա-
րողներու փայտաչէն շինութիւններու վրայ, զանոնք այրելու համար:

Բերդերու վրայ յարձակող թշնամին ընդհանրապէս կը ջանար
պարիսպներուն վրայ գտնուող բերդապահները վանել այն տեղէն
խիտ նեաաձիգութեամբ մը եւ կամ ուղղակի մագլցելով պարիսպնե-
րէն վեր, բաղմաթիւ սանդուխներով ամէն կողմէ: Կը կառուցանէին
նաե հսկայ փայտաչէն շարժուն աշտարակներ՝ որոնք, զինուորներով
նաե հսկայ փայտաչէն շարժուն աշտարակներէն եւ սան-
լեցուն, կը մօտեցնէին պարիսպներուն, այդ աշտարակներէն եւ սան-
լուխներէն կը ջանային խուժել բերդէն ներս: Մինչ փայտէ աշտա-
րակին վերի յարկէն կը կռուէին՝ ստորին յարկերէն կը ջանային քան-
դել պարիսպի որմը եւ բանալ ճեղք մը: Աւելի ճարտարները կը ջա-
նային ստորերկրեայ փայտաղիով մը քանդել պարիսպին հիմերն իսկ:
Այն պարաղային երբ դժուար էր ուղղակի պարիսպին մօտենալ, հեռ-
ուէն կը քարկոծէին զայն բարաններու միջոցաւ: Բերդապահներնայ

կը ջանային թշնամին նետահար ընել, կարելի եղածին չափ հեռու պահելու համար Պարիսպին կրթնած սանդուխները կը քանդէին, փայտէ շարժուն աշտարակները կը հրկիզէին: Բերդին ոտքը զսնուողներուն վրայ քար և եռացած իւղ ու ջուր կը թափէին: Երբեմն ալ յանկարծակի դուրս խուժելով, կը ջարդէին պաշարող բանակը:

Երկուստեք, այս պայքարին մէջ, ան՝ որ ցոյց կու տար ոյժ և ճարտարամտութիւն, կը յաջողէր յաղթել միւսին: Բերդաքաղաքները գրաւելուն մէջ մեծ դեր կը խաղային նաև սովը և համաճարակները:

Սակայն շատ քիչ անգամ է որ կը տեսնենք պարիսպները քանդելով ներխուժումի օրինակները: Յարձակող ամէն բանակի տրուած չէր Երիքովի շեփորները ունենալ: Բացի Ալրասայանի վերը յիշուած գործողութենէն արտաքին պարիսպներուն դէմ, Անին քանի մը անգամ տէր փոխեց երբ ղեռ պարիսպները կանգուն էին. ներքին դաւաճանութեամբ էր որ ան պարտուեցաւ: Թուրքերն ալ յաջողեցան Բիւզանդիոնի պարիսպներէն ներս խուժել, շնորհիւ անոր որ՝ գործածելով առաջին թնդանօթը, յաջողած էին պարիսպին մէջ ճեղք մը բանալ:

Առ հասարակ պարիսպները եւ բերդերը կը շինուէին բաւական հաստատուն. դիմագրաւելու համար թշնամին քանդումի փորձերուն:

Պատմութեան մէջ կը հանդիպինք զանազան շինուածքով պարիսպներու, իւրաքանչիւր երկրի ունեցած նիւթերուն համեմատ:

Եգիպտական պարիսպները, որոնց հեռքերուն ղեռ կը հանդիպինք «Սէմնէն»ի, «Ապիթոս»ի և «Մէտինէթ Ապոն»ի մէջ, կը շինուէին ընդհանրապէս կաւէ: Այս պարիսպներու կաւէ զանգուածին մէջ կը զետեղէին փայտէ խոշոր դերաններ, զանգուածին մէջ կապակցութիւն զոյացնելու համար: Այս դերանները, պարիսպին տրուած հարուածէն յառաջ եկած ցնցումները կանոնաւոր կելլով կը բաշխէին զանգուածին մէջ, ինչ որ արգելք կ'ըլլար անոր քայքայումին: Այս պարիսպները կ'ամրացուէին քառակուսի հսկայ աշտարակներով, բոլորն ալ շինուած զանգուածային*:

Իսպանացիք և Ասորեստանցիք, Միջագետքի մէջ, վարպետ էին դարձած բերդեր և պարիսպներ շինելու արուեստին մէջ: Բաբելոնը՝ իրական պարսպափակ նահանգ մըն էր դարձած, պարիսպներէն ներս իր մշակուած դաշտերովը, որոնք պաշարումի ատեն կու տային քաղաքին սնունդը:

Միջագետքի մէջ, քարը առատ չէ, ուստի՝ անոր գործածութիւնը

*) Օկիւր Ծուպի. «Աստուրիւն ձարսարապիստիսան» Հասոբ Ա. էջ 19:

կը վերապահէին պարիսպներու խարխուհները (soubassement) շինելու միայն. իսկ մնացած մասը, հողէ չեփած աղիւսներով կը կառուցուէին: Այս պարիսպները, որոնք կ'ամրացուէին աշտարակներով՝ մօտաւորապէս քսան մեղրի թանձրութիւն կը ներկայացնէին, Լ'նդհանրապէս կարևոր բերդերը կ'ունենային շարք շարք պարիսպներ: Բաբելոնի պարիսպները հրեք շարք էին Եւ որովհետեւ այս պարիսպները հողաչէն էին, անոնց զանգուածին մէջ կը զետեղէին կտոր կտոր ջուր ծծող նիւթեր (drain):

Հողէ այս թումբերը, թշնամին կրնար քանդել զեանափոր անցքեր փորելով. ասոր դարման ամենիւ համար, Ասորեստանցիք կը շինէին իրենց բերդերուն օակ յատուկ նկուղներ, ուրկէ պահակներ մտիկ կ'ընէին թշնամիին աշխատութիւնները և շարժումները:

Պարսկական բերդաշինութիւնը չի տարբերիր Ասորա-Վաղղէական ռազմաշինութիւններէն: Պարսիկներն ալ կը գործածէին չեփած կաւէ աղիւսներ: Այս ամրութիւններուն ոյժը կը կայանար աւելի շինուածքին զանգուածին և յարդարումի ձեւին մէջ, քան թէ շինուածանիւթին տոկունութեանը մէջ*:

Հելլենական ռազմաշինութիւնը կը ներկայանայ զանազան ձևերու տակ, նայած՝ դարաշրջանին: Հոմերոսի նկարագած բերդերը կազմուած էին զանգուածային խոշոր քարերու շարուածքով մը: Այս պարիսպներու արտաքին կողմը զրուած էր փայտաչէն նախապատէշ մը:

Սոչոր քարերու շարուածքով կազմուած այս պարիսպները, ներքնապէս կ'ամրացուէին ուղղահայեաց ուրիշ պատերով. ինչպէս ցոյց կու տան Տրովադայի և Թիրինթի աւերակները:

Միսենական այս պարիսպներէն վերջ կը գտնենք, Լիտվական շրջանի շինութիւնները, որոնք շատ չեն տարբերիր նախորդներէն: Այս շրջանի պարիսպները առ հասարակ կը կոչեն կլկրպեան և կամ Բէլասկեան:

Բուն Հելլենական պարիսպը, շինուած ըստ Փիլոն Բիւզանդացիի կանոններուն, կազմուած էր քարաչէն հսկայ պատէ մը, սմրացուած որմաչէն նեցուկներով (contrefort) ներքին կողմէն, և հողէ թումբով մը: Այս հողաթումբը պարիսպին զազաթէն կ'իջնար աստիճանարար մինչև խարխուր և կը կազմէր եռանկիւնաձև հողակոյտ մը:

Բայց Աթէնքի պարիսպներուն շինուածքը աւելի համեմատ էր: Անոնք կազմուած էին քարէ խարխուրի մը վրայ կառուցուած՝ 11 ոտք հաստութեամբ աղիւսաչէն պատէ մը: Այս պատին զազաթը կը

*) Dieulafoy

գտնուէր — ինչպէս եզրկատական, Ասորական և Պարսկական պարիսպ-ներուն վրայ— անցք մը, ուրկէ զինուորները աստիճանաբար բաց-ուածքներու ետև պահուըտած՝ կը հարուածէին թշնամին նետերով և քարով: Հելլէնական պարիսպին՝ հողէ թուփրին աստիճանաւոր կա-ռուցուածքը ցոյց կու տայ այն հողը որ ունեցած են՝ պարիսպին ո՛րեւէ մէկ կէտին զիւրաւ հասնելու և ռազմանիւթ օտարու:

Հռովմէական ռազմաճարտարագիտութիւնը կը հետեւի Հելլէնա-կանին: Հոս ալ Փիլոնի կանոններն են որ կը ծառայեն որպէս հիմ-նական օրէնք ռազմաշինուածքներու: Հռովմայեցիք շինեցին ամրութիւններ և բերդեր կայսրութեան սահմաններուն վրայ, Հռենոսէն մինչև Դանուբ, Սկովաիոյ սահմաններուն վրայ, Փոքր Ասիոյ և Ափրիկեան իրենց սաացուածքներու սահմաններուն վրայ: Այս սահմանային ամրութիւնները պարիսպներու շարքեր էին, և կամ փոքր պահականոցներ՝ ինչպէս Սուբիոյ և Ափրիկէի մէջ անապատին եզերքին շարուած: Ասոնք ընդհանրապէս հապճեպով շինուած, որոշ ծրագրի մը համաձայն չեն եղած: Եւ ժամանակի ընթացքին ներկա-յացած պահանջներու համեմատ դանազան կերպ զարգանալով և ընդարձակուելով վերածուեր են իրական ամրոցներու:

Բիւզանդացիք, որոնք Հռովմի ուղղակի ժառանգորդներն եղան, արտակարգ նորութիւն մը չբերին զինուորական շինութեանց մէջ: Բիւզանդական պարիսպները, զորս կը տեսնենք Կ. Պոլսոյ շուրջ, կու տան լաւագոյն օրինակը այդ շրջանի կատարելագոյն շինութեանց:

Բիւզանդացուց պաշտպանութեան գլխը կազմուած էր լայն ջրափոսէ մը և աշտարակներով զօրացած պարիսպներու երրեակ շարքէ մը: Պարիսպներու կարեւորութիւնը կ'աւելնար զէպի ներքին շար-քերը: Բիւզանդացիք գործածեցին թէ՛ ջրառակուսի և թէ՛ կյոբ աշ-տարակներ, որոնք այնպէ՛ս մը կը շարուէին որ մէկը միւսին ար-գելք և խափանարար չըլլայ:

Պարիսպի թանձրութեան և ամրութեան տեսակէտով, բլալան-դական շինութիւնները գերիվեր էին ցարդ մեր յիշած դանազան ազ-գաց շինութիւններէն: Արդարև թէ և Ասորական պարիսպներու հաս-տութիւնը չունէին, սակայն ամբողջապէս շագախուած քարէ շինուած ըլլալով, անոնցմէ շատ աւելի ամուր էին: Նոյնիսկ Հռովմէական շինուածքներէ՛ն ալ գերազանց էին:

Այսպիսի պարիսպներ քանդելու համար, հարկ եղաւ որ երևան գայ — մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով — նոր գործիք մը, նոր գէնք մը, — թնդանօթը:

Իսլամական ռազմաշինութիւնը նոր տուեալներ չէ բերած: Ան աւելի ներշնչուեր է Բիւզանդական և Պարսկական շինուածքներէն, վայրին և շինուածանիւթին կարելիութեանց համաձայն:

* * *

նոյն իսկ ասանկ շինուած պարիսպն ալ, աւելի պատի մը կը նմանէր, —որը քաղաքը կը սահմանափակէր— քան թէ ռազմական յարդարումով շինուածքի մը:

Այդ շրջանին՝ Թագաւորներու և կամ աւելի ճիշտ ցեղապետներու յառուկ ամրոցները կը շինուէին բլուրի մը վրայ, որը կը շրջապատէին՝ խարխուէն դէպի գազաթը՝ շար ի շար պարիսպներով: Իսկ գազաթին վրայ կը դնէին իշխանական քառանկունի բնակարանը:

Այս պարիսպները 2:50—5 մեղրի հաստութիւն մը ունէին և կազմուած էին 4—5 քարի՝ քով քովի՝ դրուած շարքերէ: Բնական է այս շինուածքները չէին կրնար շատ բարձր ըլլալ՝ կառուցումի դժուարութեան պատճառաւ, ըստ Թորամանեանի ենթադրութեան անոնք 4—5 մեղրէ աւելի բարձր պիտի չըլլային:

Այս ձևի շինութեան հետքեր կը գտնենք «Հաճի Խալիօի, «Հորում»ի, «Ատը Կաման»ի, «Ղըրխ Տէկիրմէն»ի աւերակներուն մէջ¹⁾:

Երկաթի դարաշրջանի ռազմական շինութիւնները աւելի վարպետ շինուածք մը կը ներկայացնեն, զիծերը աւելի ճկուն են: Ասիկա յառաջ կու գայ այն բանէն որ՝ շնորհիւ երկաթէ կարծր գործիքներու, կարելի կ'ըլլար քարերը կոտրել և ստանալ աւելի փոքր ծաւալով նմոյշներ: Այս տեսակի օրինակ մը ունինք «Ղըրխ Տէկիրմէն»ի ամրոցին մէջ, որուն բնորոշ շինուածքը կը կազմեն՝ պարիսպներու վրայ աւելցուած քառակուսի աշտարակները: Սա արդէն ցոյց կու տայ ռազմական արուեստին յառաջդիմութիւնը: Այս շինուածքին քարերն ալ, արդէն, փոքր են և բացայայտ կ'երեւի ճիզ մը՝ զանոնք ձեւաւորելու, կոփելու ու կոկելու:

Երբ խօսքը կ'ընենք երկաթի դարաշրջանին, արդէն կը գտնուինք Ուրարտական Հայաստանի մէջ: Ուրարտացիք շինարուեստը ա'յնքան առաջ էին տարած որ, ամէն քաղաքակիրթ ժողովուրդէ առաջ, անոնք կը գործածէին արդէն կրաշաղախը, Վանի իրենց ամրոցներու շինութեանը մէջ²⁾:

Երբ կարելի է ձեռք բերել փոքր ծաւալով քարեր և կրաշաղախ, արդէն շինուածաձևը և շինութեան արուեստը կը սկսին հիմնովին յեղաշրջուիլ: Երնանիւթը դառնալով՝ աւելի ճկուն, շինուածքն ալ կ'ըլլայ աւելի նուրբ և վարպետ: Այս բանէն մեծապէս օգտուեցաւ հայկական ռազմարուեստը:

Թէև շատ դարեր տակաւին շարունակուեցան առանց չազախի

1) Թ. Թորամանեան՝ «Հայոց նախաքրիստոնէական նախարապետութիւնը» «Զուարթնոց» ամսաթերթ 1934 թարիզ:

2) Անդ: «Շինուածանիւթը հայ նախարապետութեան մէջ», Երևան:

չինուլթիւնները, սակայն հայկական ամրոցներու և բերդերու պարիսպներու քարերը իրարու կը զօղուէին երկաթէ կապերով:

Ինչ որ նկատելի է հայ ռազմաճարտարապետութեան մէջ հակառակ քարի գործածութեան ներկայացուցած բազմաթիւ դժուարութեանցը, հակառակ հարաւի Ատորեստանցոց տուած աղիւսի օրինակին և կամ հողէ թուփրուէն, հայ շինողը նախընտրած է քարէ շինուլթիւնները, զգալով անոր բոլոր առաւելութիւնները:

Իրիստոնէութեան երեւումին հետ կը դուզադիպի, կրաշաղախի գործածութեան ընդհանրացումը Հայաստանի մէջ: Որուն պատրաստութիւնը արդէն շատ հինէն ծանօթ էր մեր մէջ:

Այս նոր շինանիւթը մեծ զարկ տուաւ Հայաստանի մէջ շինութեանց զարգացումին, որմէ ետ չմնաց նաև ռազմաշինութիւնը: Կարծէք այլևս ազատ ասպարէզ կը տրուէր հայ յղացող միւռքին, շինութեանց մարդին մէջ:

Եւ այսօրուան շինարուեստին վրայ տասնըհինգ դարերու կանխակալութեամբ, Հայերը կը հնարէին պէրոնը, այն՝ ինչ որ շինութեանց պարծանքը կը կազմէ նոր քաղաքակիրթ ազգերու մօտ:

Մեր նախնիք պէրոնը կը պատրաստէին կրաշաղախէն, անոր մէջ խառնելով բացի աւաղէն, խիճերու քարերու կտորուանքներ: Այս կերպ պատրաստուած պէթոնը, անոնք կը լեցնէին երկու կարգ չարուած կոփածոյ՝ սրբատաշ քարերու միջև: Այս քարերուն ներքին երեսները պահելով ընականէն իրենց անտաշ խորտուրորդութիւնը, պէթոնին հետ դիւրաւ կը մածուցուէին ու պէթոնին կարծրանալովը անոր հետ կը կազմէին միակտուր զանգուածով որմ մը: Այսպէս կը շինէին առհասարակ մեր բոլոր յիշատակարանները, ապուլթեան մատնելով հասարակ դիտողը ի տես այս սրբատաշ քարերով ծածկուած պատերուն: Իրականին մէջ այս քարերը կը կազմէին տեսակ մը կաղապար (coffrage) շինուածքին, ինչպէս այժմ, շատ աճապարող քաղաքակրթութիւնը կը գործածէ փայտէ կաղապարներ՝ իր պէթոնէ շինութեանցը համար:

Անուղակի ըսեմ թէ, այս սրբատաշ քարերու գործածութիւնը որմերուն ներսի և դուրսի երեսները ծածկելու համար, պատճառ եղաւ որ ձեփի գործածութիւնը շատ չընդհանրանայ մեր ճարտարապետութեան մէջ և, ապա, ուրիշն, քանդակագործութիւնը աւելի տեղ բռնէ քան խճանկարչութիւնը (mosaïque):

Այս կերպ պէթոնով է որ շինուեցան հայկական պարիսպները, որոնց արտաքին և թէ ներքին երեսները ծածկող սրբատաշ քարերը արդէն ինքնին կու տային խոշոր հաստութիւն մը: Եւ որովհետեւ այս պարիսպներու հաստութիւնը մեծ էր — 1.50—3.00 մետր — միջուկը կազմող կրապեթոնին մէջ, հայ վարպետը կը մխէր նաև մեծ ջուկը կազմող կրապեթոնին մէջ, հայ վարպետը կը մխէր նաև մեծ քարերու անտաշ կտորներ, կազմելով տեսակ մը որմ՝ որը այս-

օրուան գիտութիւնը, նոր բան մը գտածի պէս, կ'անուանակոչէ «Կիկլոպեան որմ» (maçonnerie cyclopéenne):

Այսպէս շինուած պարիսպ մը կու տար միակտուր զանգուած մը, որ թշնամիին հարուածներուն տակ չէր կրնար քայքայուիլ:

Շինուածքը այնքան միակտոր կ'ըլլար, որ ամբողջ աշտարակ մը Անիի մէջ վար է գլորուեր առանց որ ան քայքայուի, այլ պարզապէս քովեւ պահուի է ան՝ իր ամբողջ երկարութեանը վրայ: Անա օրինակ մը հայ շինուածքին տեսակին լաւութեանը:

Այս տեսակ որմնադրութեամբ էր որ հայ ռազմաշինութիւնը հրապարակ կ'իջնէր:

Ընդհանրապէս հայկական ռազմավարութիւնը կը փնտռէր անառիկ վայրեր, ամրոցներու և բերդերու կառուցման համար: Բան մը որ Հայաստանի մէջ չէր պակսէր: Այսպիսի վայրերու մէջ ան կը դռհանար, առ հասարակ, մէկ շարք պարիսպով մը, որուն քարաշէն, պեթոնուած, հաստատուն շինուածքը՝ միացած վայրին անառիկ շրջին և շինուածքին ճարտար յարդարումին, կը դարձնէր բերդը հզօր և անպարտելի:

Երբ սակայն պէտքը կը տեսնուէր, Հայ ռազմավարը՝ չէր քաշուէր նոյնիսկ երկու շարք պարիսպներ շինելու, իրչպէս որ կը տեսնենք Անիի պարիսպներու մէկ մասին վրայ: Այս նախազուլութիւնները կ'ըլլային հոն՝ ուր բնութիւնը չէր գար իր անզայգրական յարուժովը օգնել զաշտպանութեան զիծին:

Կրնանք ըսել թէ, հայկական բերդաշինութիւնը կը բաղկանար նախ՝ յառաջացեալ խրամատէ մը, ուր կարելի կ'ըլլար, ի հարկին ջուր լեցնելով արգելք մը յօրինել:


Այս խրամատէն բաւական հեռու — որպէսզի խրամին ջուրերը սուզուելով բերդին հիմերը չքայքայեն — կը կառուցուէին առաջին գիծի պարիսպները, զօրացուած կլոր և կամ քառակուսի աշտարակներով (պակետ 1): Ընդհանրապէս այս առաջին գիծի շինութիւնները աւելի թեթեւ էին և չունէին երկրորդ կարգի պարիսպներուն հաստութիւնը և թանձրութիւնը: Առաջին շարքի այս պարիսպները — տրուած ըլլալով յարձակող բանակին, առ հաւարակ զօրծածած, մագլցումի շարժուն սանդուխներու բարձրութիւնը — չէին անցներ 8—10 մետր բարձրութիւն մը, մինչդեռ աշտարակները կ'ըլլային մօտաւորապէս 10—11 մետր բարձրութեամբ մը: Այս կերպով աշտարակներէն կարելի կ'ըլլար իշխել առաջին շարքի պարիսպին վրայ ու ջուրսը:

Այս առաջին գիծէն ներս, մօտաւորապէս 15—20 մետր հեռու, կը կառուցուէին երկրորդ գիծի պարիսպները, աւելի ուժեղ և աւելի բարձր: Երկրորդ գիծին յարդարումը անանկ էր որ կարելի կ'ըլլար այս պարիսպներէն ալ հարուածել թշնամին, որ կը գտնուէր խրամին ե-

գերքը Հայկական նեոածիզները զիւրաւ կը հարուածէին, իրենց նեոտերով 60—80 մեղր հեռաւորութեան մը վրայ:

Պարիսպներու այս շարուածքովը թշնամին կը գտնուէր երկու կարգ կռուողներու առջեւ, որուն միայն առաջին գիծին կրնար լիքը յարձակիլ, մինչդեռ երկրորդ գիծը անխափան զինքը կը հարուածէր:

Երկրորդ գիծի պարիսպին աշտարակներուն շարուածքն այս նանկ մըն էր որ մէկ գիծին աշտարակները կրնային հարուածել միւս գիծի աշտարակներէն մնացած Անտեսանելի անկիւնները (angles morts):



Պատ. 1. — ՈՒՐՈՒԱԿԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՍՊԱՇԻՆՈՒԹԵԱՆ

Սոյն ուրուագիծը կը ներկայացնէ Անիի հայկական լաւագոյն բերդին՝ արեւելեան պարիսպներու երկու շարք շարուածքը:

Երկրորդ շարքի պարիսպները աւելի ուժեղ եւ բարձր՝ կրնային առաջին շարքի վրայէն հարուածել բեկամին՝ ջրափոսին եզերէն:

Այժմ՝ ջրափոսը անկանոն կերպով կործանած՝ կը հասնի մինչեւ առաջին շարքի պարիսպին ոտքը:

Երկրորդ գիծի այս պարիսպները կը կազմէին պաշտպանողական բուն գիծը ու իրենց կառուցումը աւելի զօրաւոր էր: Պարիսպի հաստութիւնը զիւրաւ կը հասնէր 2.50—3 մեղրի, բարձրութիւնը 12—14 մեղր, քանի որ պարտ էին թշնամին հարուածել խրամին եղերքին, իսկ աշտարակները 15—17 մեղր կ'ըլլային:

Այսպիսի պարիսպներէ վեր պարզ սանդուխներով մագլցելը անկարելի էր:

Կառուցման տեսակէտով, նախ կը շինէին պարիսպի պատը որը

ամէն բանէ առտջ կը սահմանափակէր քաղաքը և կու տար որոշ պաշտպանութիւն մը, սպասելով որ աշտարակներ զան ամբողջացընեն շինուածքը: Այս հաստ ու ծանր պատերը անգամ մը որ ունեցած էին որոշ կքում մը և իրենց հիմերը վերջնականապէս նստած գետնի վրայ, կը սկսէին շինել աշտարակները: Ասիկա կ'ըլլար ներկայացուած պահանջքին եւ նիւթական տրամադրելի միջոցներուն համեմատ, անոնց շինութիւնները չըջաններու բտմնելով: Աւոր համար է որ կը տեսնուին աշտարակներ՝ որոնց վրայի արձանագրութիւնները սարբեր թուականներ կու տան:

Պարիսպներու և աշտարակներու միատեղ շինուելուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ այն է թէ այս աշտարակները շատ աւելի ծանր շինուածքներ ըլլալով, քան պարիսպները, իրենց կքումն ալ հիմերու գետնին վրայ կ'ըլլար աւելի մեծ: Եթէ պարիսպ և աշտարակ միատեղ շինուած ըլլային, կքումներուն տարբերութեան պատճառաւ պարիսպին վրայ փնտսակար ճեղքեր պիտի գոյանային, ինչ որ կարելի կ'ըլլար առաջքը առնել անոնց զատ կառուցումովը, և ոչ մէկ ճեղք ու տկարութիւն յառաջ կու գար շինուածքին ամբողջութեանը մէջ:

Պարիսպները վերջաւորուած էին ատամնաւոր պատնէշով մը (parapet crénelé), որուն ետեւ պահուած պատերազմիկը նետահար կ'ընէր թշնամին առանց անկէ տեսնուելու (պլա. 2):

Հայոց մէջ ընդհանրապէս չէ գործածուած Mâchicoulisի դրութիւնը որը կը կայանայ ատամնաւոր պատնէշը, պարիսպի պատէն դուրս, յառաջ կարկառ դիրքի մը մէջ շինելու: Այս կերպ շինուածքով կարելի կ'ըլլար մասնաւոր բացուածքներէ քարեթ վար գլորել, այս քարերը զարնուելով պարիսպի ոտքերուն՝ կը մայթքէին թշնամիին վրայ:

Այս ձև կատուցումներ շատ առաջ Եգիպտացիք փորձեցին շինել: Սակայն հայ ռազմավարութեան հաճելի չէր թուեր, որովհետեւ վերէն նետուած այս քարի խոշոր կտորները, վերջ ի վերջոյ կը խանգարէին ու կը փնտսէին պարիսպի ոտքի քարերուն:

Բիւզանդական ռազմաշինութիւնն ալ այս ձև շինութիւններ շատ չէ սիրած, մինչդեռ Միջինադարեան ամբողջները և զղեակները լիցուն են նման շինութիւններով:


Իրաւ է թէ, բացի ռազմական արժէքէն, այս «մաշիքու լիաները կու տային նաև տեսակ մը զարդարանք շինուածքին գլխուն:

Բնական է «մաշիքու լի» չգոյութեամբ, բերդապահները չէին կրնար ուղղակի հարուածել թշնամին, եթէ ան հասած էր պարիսպին ոտքը: Այս անպատեհութեան առաջքը առնելու համար, մեր նախնիք կը շինէին՝ պարիսպի միագաղաղ զիծէն դուրս ձգուած՝ աշտա-

րակներ, որոնք կրնային կողմնակի հարուածել թշնամին, պարիսպի ուղիքին իսկ:

Այս պարագան է որ հայ ռազմաշինութեան մէջ ասուած տուած աշտարակներու թիւին, շարուածքին և իրարմէ հեռաւորութեան ճշդումին:

Այսպէս ճարտար շարուածքով մը, հայ պատերազմիկը, աշտարակներէն նեառած, խաչաձեւուած նեաահարութեամբ մը կը յաջողէր հարուածել թշնամին ճիշդ այն կողմէն՝ ուրկէ անոր վահանը և կամ զրահը չէր կրնար զինքը պաշտպանել:



Պատ. 2.— Պարիսպները պսակուած էին ասամնաւոր պասնեհետով ուրկէ պատերազմիկները նետերով կը հարուածէին բեցամին

Հայկական նախարապետութեան մէջ այս ասամնաւոր պասնեհետեր ուղղակի կը բարձրանային պարիսպին վրայ (Ա): Մաշիֆուիները (Բ) չեն գործածուած մեր ռազմական շինութեանց մէջ:

Նետերու ուղղութիւնը կը ցուցնեն բեցամին հարուածելու ուղղութիւնները

Հակառակ որ Ասորական, Պարսկական և Նոյնիսկ Բիւզանդական շինութիւնները կը գործածէին — առատ կերպով — քառակուսի աշտարակներ, Հայերը կը նախընտրէին կլոր շինուածքները: Թէև այս վերջիններու շինութիւնը աւելի սուղի գար, սակայն անոնց ռազմական առաւելութիւնները զերկվեր էին քառակուսի աշտարակներէն:

Արդարև՝ կլոր աշտարակները «անտեսանելի անկիւններու» (angle mort) անպատեհութիւնը իր նուազագոյն վիճակին կը վերածեն, մինչդեռ քառակուսի աշտարակները, իրենց անկիւնաւոր ըլլա-

յուն երեսէն, աւելի մեծ միջոց մը կը ծածկեն բերդապահներու տե-
տողութիւնէն: Այս նկատումէն ղատ, կլոր աշտարակները, շինուածքի
տեսակէտէն՝ կը ներկայացնէին աւելի տոկունութիւն մը հարուած-
ներու դէմ: Այս կլոր աշտարակներու քարերը եւ որմը (maçonnerie),
հարուածներու տակ փոխանակ քայքայուելու, կամարի դեր կը խա-
ղային և անոր նման ճնշուելով կը տանէին հարուածին ուժը:

Բոլոր այս նկատումներով էր որ հայ ճարտարագետը և ուղ-
մալարը շինեցին աւելի կլոր աշտարակներ քան կառուկուսի: Անցո-
ղակի ըսեմ թէ այս պարագան մեծ պատիւ մը կը բերէ մեր նախնեաց
գիտութեան և ուշիմութեանը:

Տրուած ըլլալով նետաձգութեան հեռաւորութիւնը, այս աշ-
տարակները կը շարուէին առհասարակ առառաւելն 40—50 մեղր
իրարմէ հեռու, որպէսզի կարելի ըլլար մէկ աշտարակէն միւսը նե-
տաձգութիւնը խաչաձեւեր Անիի մէջ, այս հեռաւորութիւնը զիրքին
համաձայն կը փոխուի, հիւսիս-արեւելեան կրկնակի պարեպներուն
համար այս հեռաւորութիւնը հազիւ 15—20 մեղր է, մինչդեռ արև-
մըջեան կողմի, Ծաղկաձորի պարիսպներուն համար այդ հեռաւորու-
թիւնը կ'ըլլայ 40—50 մեղր:

Այս աշտարակները, որոնք ռազմական յարգարումին զխա-
ւոր մասը կը կազմէին, ոչ միայն կազմական կերպով պարիսպէն ան-
կախ կը շինուէին, այլև ռազմական յարգարումի տեսակէտէն ալ
անկախ էին: Անանկ որ եթէ նոյնիսկ թշնամին յաջողէր առաջին
չարքի պարիսպները մազլցելով անցնել, նորէն՝ երկրորդ չարքին դէմ
չէր կրնար յաջող յարձակում տանիլ, քանի որ չէր կրցած մի առ մի
գրաւել զօրեղ աշտարակները, որոնք իրենք իրենց մէջ մէկ միջնա-
բերդ դարձած՝ կը զմազդէին և թըշնամին թիկունքէն կը հար-
ուածէին:

Այս աշտարակները ծածկուած չէին: Աշտարակները ծածկելու
դրութիւնը աւելի միջինդարեան սովորութիւն մըն է: Ծածկոյթին
նպատակն էր, բաբաններու նետած և ուղղաձիգ ինոող քարերու
հարուածներէն պաշտպանել բերդապահները: Սակայն հայկական շըր-
ջանին՝ քարաձգութիւնը տակաւին այնքան թերի էր, որ բերդա-
պահները իրական ոչ մէկ վտանգի կ'ենթարկուէին այս կողմէն եւ
այսպէս ուրեմն՝ հայկական աշտարակներու վրայ անպէտ կը դառնար:


Պէտք չէ մոռնալ թէ, ինչպէս այսօր, այն ամեններն ալ շինու-
թեանց անտեսական մասը կարևոր դեր մը կը խաղար և կարելի խնա-
յողութիւնները սփալուած էին ընել, ջնջելով բոլոր աւելորդ շինու-
թիւնները:

Աշտարակին հիմը միակառուր կրապեթոն էր, ամբողջ հաս-
տուութեանը վրայ, այնպէս որ թշնամին՝ ընդերկրեայ անցքեր պեղե-

լով չէր կրնար մնասել շինուածքին հիմին: Իսկ աշտարակին զանա-
զան յարկերը որոնք կը բարձրանային 12—18 մեղրի վրայ, ծածկուած
էին քարաշէն, կամ արակապ ձեղուններով:

Ընդհանրապէս՝ այս յարկերը տանող սանդուղը կը շինէին որ-
մին հաստութեանը մէջ իսկ, պարիսպին ներքին կողմին վրայ, հոն՝
ուրկէ յարձակումի նուազագոյն կարելիութիւն կար:

Այս աշտարակներն էին, որ միջին դարուն կրելով զանազան
յաւելումներ ու ընդարձակումներ՝ վերածուեցան սկզբնական զոհա-
կին: Ուրկէ ծնունդ առաւ բուն զոհակը:



Պատ. 3. — Ա.Ն.Ի. Բ.ՐԵՒԼԵԱՆ ԿԻԿՆԱՊԱՐԻՍՊՆԵՐՈՒՆ
ՄԵԿ ՀԱՏՈՒՄԻՆ ՅԱՏԱԿԱԳԻՐԸ

Այս յասակագիծին վրայ որոշապէս կ'երեւին ա) արտաքին
խրամը՝ որը ասեցի ընթացքին խաբարուելով եկեր հասեր է
մինչև առաջին շարքի պարիսպներու ոտք:

- բ) Արտաքին պարիսպը, զօրացած կլոր աւսարակներով,
- գ) Ներքին եւ կամ երկրորդ շարքի պարիսպը իր բերդադուռ-
ներովն ու աւսարակներովը.

Այս երկու պարիսպները իրար կը միանան դեպի հարաւ.
արեւելք. իրարու միացուած փափուկ կէտը պատկանում է,
աւելի հարաւ շինուած հսկայ աւսարակով մը

Հայկական ազգամայնութիւնը մեծ կարեւորութիւն կու տար
նաեւ պարիսպի դուռներու կառուցումին: Արդարեւ՝ ամբողջապէս տկար
կէտը կը կազմէր բերդին դուռը, ուրկէ էր որ թշնամին կ'աշխատէր
ընդհանրապէս, ներս խուժել:

Բերդին դուռը կը պաշտպանէին աշտարակներով: Եւ միշտ զայն կը զեփեղէին երկու աշտարակներու միջև, որոնց խաչածեւուած հարուածները կը ստիպէին թշնամիին հետո՛ւ կենալ դուռնէն: Մասնաւորաբար կարեորութիւն կը տրուէր աջ աշտարակին, որովհետեւ այդ կողմի բերդապահները զիւրաւ կրնային հարուածել թըշնամին, որուն վահանը ձախ թեկին վրայ բաց կը ձգէր աջ կողմը: Այս ձե շինուածքի գեղեցիկ օրինակ մը կու տայ Անիի «Երեւանայ» դրան աջակողմեան յառաջ երկարած աշտարակը (պատ. 3) մինչդեռ ձախակողմէն գոհացած են պարզ պարիսպով մը և աւելի անդին ալ քառակուսի բուրգով մը:

Պարիսպներէն ներս, կը ջանային ոլորապառոյտ շինութիւններով աւելցնել խոչնդոտները: Ընդհանրապէս պարսպադռոններուն առաջ պիտի դառնանք երկու կամ երեք շարք պարիսպներ: Իւրաքանչիւրը տարբեր հրամանատարներու յանձնուած: Այսպէսով կը կանխուէր, հաւանական դաւաճանական ձեռնարկները, թշնամիին առջեւ բանալու բերդին զանազան դուռները:

Յաճախ՝ այս դռներուն պաշտպանութիւնը կ'աւելցնէին, մասնաւոր պահակասարհներ շինելով, ուրկէ պէտք էին անցնիլ, ամէն ներս մտնող: Անանկ որ անկարելի կ'ըլլար լրփաններու աննշմար ներս սպրդիլը:

Անիի մէջ՝ կը գտնենք օրինակ՝ Երեւանայ դրան համապատասխանող արտաքին դուռը, որուն պաշտպանութիւնը իրապէս ռազմական կանոններուն համեմատ է (պատ. 3), ոչ միայն հոս գոհացեր են երկու զօրաւոր աշտարակներ շինելով դրան երկու կողմերը, այլև ճիշտ ներսը, երկրորդ պարիսպին վրայ և դէմ յանդիման դրան, զետեղեր են քառակուսի բուրգ մը, որը ուղղակի կը հարուածէ դրան միջոցը: Այնպէս որ դրան աշտարակները, քառակուսի բուրգը և ասոր աջին ու ձախին զրուած երկու կլոր աշտարակները՝ քիչ մը աւելի անդին՝ կրնան կեդրոնացնել իրենց նեփերու տարափը մուտքի դրան վրայ, անանցանելի դարձնելով այդ միջոցը:


Բացի հորիզոնական բացուածքով երկաթապատ դուռներէ, կը շինէին նաեւ, ուղղաձիգ՝ վանդակապատ շինութիւններ, որոնք կ'իջեցուէին զրան ետեւ, ներս խուժումի ճամբան փակելով:

Պարիսպին ջրափոսին վրայ կը դետեղէն փայտաչէն շարժուն կամրջակ մը, որը կը վերցնէին թշնամիին մօտեցած պահուն և կամ գիշերները:

Հայկական ռազմաշինութիւնը չմնաց միայն պարիսպներ եւ աշտարակներ շինելու և յարդարելու մէջ: Ասոնց քովն ի վեր հայ ռազմաչէնը կը կառուցանէր զօրանոցներ, կամուրջներ և ճանապարհներ, որոնց գեղեցիկ շինուածքներու օրինակներ կը գտնանք տակաւին

Հայաստանի մէջ¹։ Հ. Ալիշան կը յիշատակէ² նման պահականոց մը, սիւնաւոր շինուած, մեր Վաղարշ Թագաւորին հովուակամուրջին մօտ, Վաղարշպահանի մօտ (Ալաշկերտ)։

Այլ չեմ ծանրանար, բերդերու, ամրոցներու մէջ շինուած գանաղան երկրորդական շինութեանց վրայ, գաղանի դուռներ, սանդուխներու վրայ և դուռներու առջև հաստատուած որոգայթներ եւայլն, որոնց մէկ նկարագրութիւնը կու տայ մեր պատմահայր



Պատ. 4. — ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ

Այս պարիսպներ շինուած Մեծն Տիգրանէ նախ քան Քրիստոս, ցոյց կու տան իրենց կլու առսարակներովը, զինուորական արուեստի խոր գիտութիւն մը

Խորենացին, Երուանդ Բ. Արշակունիի Երուանդակերթի միջնաբերդին նկարագրութեանը մէջ։

«Չմիջնաբերդն ամրացուցանելը բարձր պարսպօք, և զրուսն պղինձեա կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթս ի ներքուստ ի վեր մինչև զդուռն, և նմա որոգայթս իմն ծաներքուստ ի վեր մինչև զդուռն, որպէսզի ըմբռնեսցի թէ ոք գաղտ ծուկս ընդ մէջ աստիճանացն, որպէսզի ըմբռնեսցի թէ ոք գաղտ ելանելով զաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեմտից ճանաչի միւսն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեմտից ճանաչի պարճ տուրնջնային, իսկ միւսն զիշերային և մարդաղաւաց»։

Այս շինուածքները կ'իշխան աւելի հնարամտութեան սահմանին քան ուղիմովարական ճարտարապետութեան մէջ։

1) Հ. Գ. Նահապետեան կը յիշէ նաեւ պահականոցի մը գոյութիւնը իր «Քրիստոնեական հարսարապետութիւն» գործին մէջ։

2) Հ. Ալիշան՝ «Այրարատ» էջ 25։

Նման հնարքներ՝ Բիւզանդացիք ալ ունէին, մեքենագիտական նախնական փորձեր: Այսպէս էր որ, օրինակ, կայսրը իր գահովը օղին մէջ կը բարձրանար, բարբարոսայցեյուններու առաջ, երկու արուեստական առիւծներու մօնջումներուն մէջ և կամ կայսերական պալատին արուեստական թռչուններու դայլայլիկները եւ այլն: Այս տեսակ տղայական խաղալիքներու համար միաք էին մաշեցուցած Յովհաննէս քերականագէտը, Միքայէլ Սիսիփիթը եւ ուրիշներ:

Հայ ճարտարագետը, որ շինեց հայկական բերդն ու պարիսպները, ի նկատի ունենալով հանդերձ անոնց ուղմակսն արժէքները եւ դերը՝ չմոռցաւ նաև իր ինքնածին գեղեցկասիրտ թիւնը և առանց որ այդ շինուածքներու դիմադրական ուժը պակսի, զարդարեց այդ բերդերը գունաւոր քարերով, սև և վարդագոյն: Այս քարերը ընդունակ լով՝ պարիսպին միւս քարերուն հետ՝ կրպղէթոնին մէջ:

Այս տեսակ զարդարանքի օրինակներ կը տեսնանք Անիի մէջ, Երևանի դուռը կոչուած մուտք դրան վրայ, սև և ճերմակ քարերու սիրուն շարուածքը և առիւծի մը քանդակը և կամ ինչ ինչ աշտարակներու վրայ ձևաւորուած խաչի և այլ զարդերու ներկայութիւնը:

Հայ վարպետը այս կերպով՝ կու տար շինուածքին սաղմական արժէքէն դուրս գեղարուեստական հրապոյր մը ևս:

*
*
*

Տեսնալէ վերջ հայկական սաղմաշինութեան ճարտարագետական արուեստը, կը կարծեմ թէ աւելորդ չ'ըլլար, քանի մը սողով ներկայացնել անոր զլուխ գործոց կառուցուածքներէն մին, Անի բերդաքաղաքին ամրութիւնները:

Անիի աշխարհագրական դիրքը կը ներկայանայ սարաւանդակի մը ձևով, որ կը յառաջանայ, հրուանդանի մը նման ղէպի երկու գետերու միացման կէտը, հիւսիսէն հարաւ: Այսպէսով ան կը գրաւէ եռանկիւնի դիրք մը, որուն երկու կողմերը կը կազմեն երկու գետերու խոր ձորերը իսկ երրորդ կողմը կը գծուի զաշտագետնին վրայ:

Այս գետերէն առաջինը Ախուրեանն է (Սրբայ Չայ) որ անդընդախոր պատուած մը կը գոյացնէ իր ձորովը հարաւ-արեւելքէն, երկրորդը՝ Ծաղկաձորի գետակն է (Ալաճա Չայ) որը հիւսիսէն հարաւ իջնելով կը թափի Ախուրեանի մէջ: Ծաղկաձորը նուազ խորունկ է, համեմատաբար Ախուրեանի: Հիւսիս արեւելեան կողմէն կ'երկարի զաշտագետնը, որուն յառաջացեալ մէկ հրուանդանն է Անիի հողամասը:

Այս եռանկեան գագաթը, որ կ'ուղղուի ղէպի հարաւ, ղէպի երկու գետերու միացման վայրը, կը բարձրանայ յամրաբար զաշտագետնի մակերեսէն վեր և կը կազմէ բլուր մը որ իր դիրքովը կ'իշխէ թէ՛ քաղաքին և թէ՛ յարակից երկու ձորերուն:

Այսպիսի վայր մը ամրացնելու համար, անպատճառ մեծ սաղ-

մովար մը ըլլալու պէտք չկայ: Վայրին աշխարհագրական դիրքը, ինքնին տուն կու տայ, ամբողջեանց դասաւորման և յարդարումին ընդհանուր գիծերը: Սակայն՝ եթէ մեծ ռազմավար մը ըլլալու հարկ չկայ, ի փոխարէն մեծ կառուցանող մը պէտք է եղած ըլլայ, այդ բերդերը անառիկ դարձնելու համար:

Ախուրեհանի ձորը իր անմատչելի փոսովը, Ծաղկաձորի կտրուածքը, հոն վազող ջուրերու գոյութիւնը, բնական կերպով կը պարտադրեն թշնամին, որը պիտի ուզէ Անին զրաւելլ իր ճիգը և ճնշումը փոխադրել աւելի դէրին վայրի մը վրայ: Այս վայրը կը կազմէ եռանկեան հիւսիս արեւելեան կողմը, որը՝ տափարակ գաշտագեաթինն է: Հոս է քաղաքին բնական պաշտպանութեանց ակար և խոցելի կէտը:

Հայ ռազմագէտը և ճարտարադէտը. այս տուեալները նկատի առնելով շինած են քաղաքին պարիսպները:

Քաղաքը շրջապատուած է իր երեք կողմերուն վրայ ալ արտաքին պարիսպներու մէկ շարքովը, որը կը կազմէ ամբողջեանց դրութեան խարխուր և կատարելապէս կը պարփակէ ամբողջ քաղաքը:

Եւ որովհետեւ յարձակումի մը պահուն հիւսիս-արեւելեան կողմն է որ ամէնէն շատ կրնայ վտանգուելի. հոն կառուցուած են երկրորդ շարքի ներքին պարիսպներ (պատ. 3 և 4) իսկ արտաքին պարիսպներէն դուրս ալ՝ փորած են հսկայ խրամատ մը, որը Գայլիձորի գագաթէն կ'երթայ մինչև իգաձորը և կը կազմէ արուեստական փոս մը, նման Ախուրեհանի և կամ Ծաղկաձորի կաղմած բնական փոսերուն: Այս արուեստական փոսին երկայնքը մօտաւորապէս 600 մետր է:

Նեոքին երկրորդ շարքի այս պարիսպներուն շինութիւնը կը վերագրուի Սմբատ Բ. Բագրատունի թագաւորին, որը ուզեց իր մայրաքաղաքին տալ անառիկ դիրք մը: Այս պարիսպաշարքին շինութիւնը տևեց ութը տարի:

Հետաքրքրական է նկատել թէ միևնոյն օրերներուն Անի՞ էր և հոն կ'աշխատէ՞ր մեր հռչակաւոր Տրդատ ճարտարագետը, որը Բիւզանդիոնէն վերադարձած կը շինէ, Ս. Աստուածածին կաթողիկէն: Անկարելի բան մը չէ ենթադրել թէ պարիսպներուն շինութեան մէջ ինքն ալ մաս ունեցած ըլլայ: Նա մանաւանդ որ Տրդատ իր ճամբորդութեանը ընթացքին ի Բիւզանդիոն, տեսած ու նկատած էր նաև Բիւզանդացւոց ռազմական շինութեանց եղանակը ու թեխնիքը: Որը պէտք է ըսել՝ չէր հաւասարել հայկական թեխնիքին:

Սակայն, Անիի մէջ, միայն հիւսիս արեւելեան պարիսպները չեն որ ամրացուած են երկշարք շինուածքով մը, բերդերուն ընդհանուր գիծին վրայ, բոլոր այն վայրերը, որոնք կրնան որևէ տեղեկագրական դիրքի բերմամբ՝ ակարութիւն մը ներկայացնել, թշնամւոյն կան դիրքի բերմամբ՝ ակարութիւն մը, ամրացուած են մասնաւոր տալով յարձակումի մը դիւրութիւն մը, ամրացուած են մասնաւոր շինուածքներով: Այս շինուածքները պարիսպներու ընդհանուր գիծէն

ներս կամ դուրս տեղաւորուած, կը կազմեն մէյմէկ անառիկ ամ-
րոցներ: Այսպէս է, Գալիլէոսի հարաւի բլրակին շուրջի բերդերու
մնացորդներու ամբողջութիւնը, որը՝ պարիսպներու ընդհանուր զիծէն
ներս կը կազմէ անկախ ամրոց մը որ կ'իշխէ բերդաքաղաքի եռան-
կիւնին, հոն ուր Ախուրեանը կը սկսի եզերել քաղաքը:

Այս կողմը, աւերակ մնացորդներու համեմատ, անպայման
գտնուած պէտք է ըլլայ ներքին պարիսպներու երկրորդ շարք մը եւ,
որը կ'եզերէր Ս. Աստուածածնի կաթողիկէէն դէպի արեւելք, Ախուր-
եանի ձորը: Իսկ առաջին շարքի պարիսպները կը գտնուին ձորին
մէջ, աւերակ կամրջազուխէն աւելի դէպի վեր: Հոս արտաքին խրա-
մափի դերը կը կատարէ Ախուրեանը:

Արեւելեան այս առաջին շարքի պարիսպները, ըսենք Ախուրեանի
պարիսպները մէկ կողմէն կ'երկարին մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի
վանքը (Բեխենց վանք) և միւս կողմէն մինչեւ Միջնաբերդի ստո-
րոտը, որն է հարաւային անկիւնը: Հոս այս պարսպաշարքը կը միա-
նայ Ծաղկաձորի պարիսպներուն: Այս ճակաւ երկրորդ շարքի պար-
իսպներն ալ մէկ կողմէ կ'երկարին մինչև հիւսիս արեւելեան ամ-
րոցը, իսկ միւս կողմէ մինչև միջնաբերդին ստորոտը: Պէտք է ըսել
թէ այս պարիսպներէն շատ քիչ բան է մնացած: Ախուրեանի ձորի
եզերքի հողային փլուզումները, մթնոլորտական անբարեխառնութեանց
երեսէն, քայքայած է այս պարիսպներու հիմքը դարերու ըն-
թացքին և կործանած զանոնք: Մինչդեռ հիւսիս-արեւելեան զաշա-
յին պարիսպները աւելի լաւ պահուած են:


Եռանկիւնի բերդաքաղաքին, հարաւային անկիւնին բլուրին
վրայ հաստատուած է Միջնաբերդը, որը պարիսպներու շարքէն ան-
կախ կը կազմէ երկրորդ ամրոց մը, որը շինուած է Աշոտ Գ. Ողոր-
մածի (952—977) կողմէ: Իր զիրքովը ան կ'իշխէ բոլոր քաղաքին:

Արեւելքէն, հարաւէն և արեմուտքէն, Ախուրեանի և Ծաղկա-
ձորի փոսերովը շրջապատուած և զանազան շարք պարիսպներով ամ-
րացած Միջնաբերդը՝ անառիկ ամրոց մը կը կազմէ, ուր Աշոտ Գ.
կը խորհէր փոխադրել օրհասական պայքարը ներխուժող թշնամիին
հետ: Պատմութիւնը կը ցուցնէ թէ ռարեպաշա թագաւորը սխալած
էր իր հաշիւներուն մէջ և նկատի չէր առած իր հեռաւոր յաջորդնե-
րուն կորովի տկարութիւնը, քաղաքը առանց կռիւի յանձնելու աս-
տիճան:

Ծաղկաձորի երկայնքին կը գտնուի քաղաքին երրորդ կողմի
պարսպաշարքը, որը կ'երկարի հարաւէն հիւսիս և կը միանայ հիւ-
սիսային պարիսպներուն, Իգաձորի եզերքին:

Հոս կը կազմուի եռանկեան երրորդ զագաթը, ուր եւ հաստա-
ուած էր Արքունի բնակութեան զգեակը իր յարակից բերդերով եւ
պարիսպներով:

Թագաւորական զղեակին այս կէտին վրայ կառուցուիլը նշան է թէ, Բագրատունիք կը նկատէին այս կէտը՝ բերդաքաղաքին է՛ն վաանգուած վայրը, ուր իրենց ներկայութիւնը միշտ անհրաժեշտ էր: Միեւնոյն տեսարանին ներկայ կ'ըլլանք նաև Բիւզանդիոնի մէջ: Այն օրէն ի վեր որ Բիւզանդիոնի թշնամիները յաջողեցան, մերթ ընդ մերթ հասնիլ մինչև կայսերական քաղաքին բերդերուն տակ, այդ թուականէն ստղին: Բիւզանդական կայսրերը փոխադրեցին ի-



Պատ. 5.— ԱՆԻԻ ՊԱՐԻՍՊՆԵՐՈՒ ԳԼԵԱԿՈՐ ԳՈՒՆ ՏԵՍՔԸ

Նկատել հսկայ աւսարակները՝ որոնցմէ մին կործանած՝ որոնք դրուած են մուսքր պատկանելու համար

րենց բնակութիւնը զէպի ցամաքային պարիսպները և հաստատեցին իրենց զղեակը այդ պարիսպներուն մէջ իսկ Այժմու էյուպի դիմաց, «Պլաշէրնէի զղեակին մէջ: Սա ա՛յ Անիի օրինակին պէս կը զրաւէր Բիւզանդական եռանկիւնին մէկ զազաթը, Ոսկեղջուրի և ցամաքային պարիսպներու միացման վայրին մօտ*):

Այն դարերուն, զէռ թագաւոր և կամ կայսր, անձնապէս կը վարէին պատերազմները, միշտ զտնուծելով ճակատին էն վտանգուած վայրին վրայ:

*) Այս՝ Պլաշէրնի զղեակն էր որ, հայ ազգի Մամիկոնեան թեոսորա կայսրունից, որ խնամակալն էր իր կայսր որդւոյն, յաջողեցաւ հրաւժի նման ետ մղել պուլկարական բանակը, որ հասած էր մինչեւ ֆաղափն դռները:

Անիի մէջ, նախապէս բացատրածիս նման, պարիսպները ամբարացուած եւ պաշտպանուած են բազմաթիւ կլոր աշտարակներով: Կրնանք ըսել թէ քառակուսի աշտարակներ զրեթէ հաղուագիւած են հոն: Աւելի քան հարիւրհազ մը աշտարակներու վրայ, հազիւ երկվեցնակ մը քառակուսի բուրգերու կը հանդիպինք: Ինչ որ ցոյց կուտայ թէ այդ բերդերը շինող ճարտարագետը լաւ էր ըմբռնած զարուն ռազմական կարելիութիւնները եւ ջանացած էր լր շինութիւնը պաշտահեցնել նոյն այդ կարելիութեանց եւ պահանջներուն:

Մասնաւորաբար աչքառու է բերդերու յարգաւորումի ձևը, անոնց դիրքը եւ մասնաւոր չիւսիս արեւելեան կրկնակ պարիսպներու մէջ եւ միջնաբերդին առջև շինուած միջանկեալ պարիսպները: Որոնցմէ շարք մը կ'իջնայ, ուղղահայեաց, միւսն Մաղկոցածրի գետակը, կաղմելով տեսակ մը յառաջացեալ ամբարտակ, թշնամիին շարժումները խանգարող:

Նշանակելի է նաև, եռանկիւն բերդաքաղաքին, երեք անկիւններու մասնաւոր ամրոցներով սպառազինութիւնը: Սյս ամբրեջէերը իրենց մէջ կրնային պահել բազմաթիւ զինուորական ուժեր, որոնք ուղղուած վայրը կը նետէին, թշնամիին կողին մէջ յարձակելով:

Քաղաքէն դէպի հարաւ, անջառ շինուած Ս. Գրիգոր (Գրչ քիլիսէ) բլուրին ամրոցը, կը կաղմէ հիանալի յառաջապահ դիրք մը որ կը նայի քաղաքը շրջապատող երկու ձորերն ի վեր:

Անիի աւերակներու ներկայացուցած տեսքէն կարելի չէ ճշգրիտ ըսել թէ, անոր պարիսպները ինչ բարձրութիւն ունէին: Սակայն դատելով կիսակործան այս բերդերուն ներկայացուցած տեսքէն, որ այս վիճակնուն մէջ դեռ կը պահեն 5—6 մեղր բարձրութիւն մը՝ կարելի է եղբակացնել թէ անոնք 8—10 մեղրէն պակաս չէին եւ աշտարակներու բարձրութիւնն ալ ոչ նուազ էր 12 մեղրը: Իսկ որմերու հաստութիւնը 2.50—3.00 մեղր է: Այս որմերը շինուած են հայկական շինուածածակի եղանակով, կրապէթոնով եւ երկու երեսներուն վրայ սրբաթաշ քարերով, շինուածածակ մը՝ որ նոյն իսկ Բիւզանդական լաւագոյն պարիսպներու վրայ իսկ չենք տեսներ: Անիի աշտարակները ներքնապէս կամարածածկ են եւ որմերը հաստատուած են կամարներով:

Հայ ռազմաշինութեան ի պատիւ պէտք է ըսել թէ, Անի բերդաքաղաքը, հակառակ իր վրայ կատարուած զանազան գրոհներու, Բիւզանդացոց, Արաբներու եւ Սելճուք Թաթարներու, քնացած է միշտ անպարտելի: Ոչ մէկ թշնամի հոն կրցաւ մտնել անոր պարիսպները քանդելով եւ կամ բռնի զօրութեամբ: Նոյն իսկ Ալբաւանի իր նշանաւոր բարաններով, հազիւ կրցաւ արսաքին պարիսպին վրայ

Իգաձորի կողմէն ճեղք մը բանայ, բայց ներքին պարխսպներուն առջեւ պարտուած՝ քաղաքին գրաւումը ձգելով մեկնեցաւ:

Անին եթէ ինկաւ Թշնամիին ձեռքը, պատճառը պէտք է փնտել զայն պաշտպանողներուն մօտ: Անոր զրաւումը միշտ եղաւ ներքին Թշնամիներու միջոցաւ:

*
* *
*

Հայկական ռազմական շինութիւններու նկարագրութիւններէն առանձնաբէ անոնք ոչինչով ետ կը մնային միւս պատերազմիկ ժողովուրդներու և քաղաքակրթութեամբ կայսրութիւններու շինութիւններէն:

Հայ ռազմաշինութիւններու հաստատուն և անառիկ կերտուածքը զրաւական մը պէտք էր ըլլար մեր անկախութեանը պահպանման համար:

Բայց՝ կռուին մէջ, միայն պարխսպներ և բերդերը չեն որ կը կառարեն գլխաւոր դերը: Հայ ճարտարապետը առաւ իր հանճարին բոլոր հնարքները, շինելու համար պաշտպանողական կառարեալընք մը: Բայց որպէսզի անոր իմաստուն շինուածքը իր պտուղները տար՝ հարկ էր զայն արժեցնող ձեռքեր, մկաններ և կամք ու կորով:

Որքան ատեն որ այդ մկանները և կամքը գոյութիւն ունեցան մեր մէջ, մեր անկախութիւնը ապրեցաւ, հայ վարպետին կերտած պարխսպներու շուքին տակ: Բայց եկաւ ատեն մը որ այդ մկանները թուլացան, յոգնեցան, կամքը քայքայուեցաւ և սղգային սրբութիւնները վաճառքի նիւթ եղան: Սլ չմնացին մեր անառիկ ամրոցները արժեցնող ձեռքեր: Եւ անոնք ինկան մի առ մի արշաւող բարձրաստի հորդաններու ալիքին տակ, իրենց հետ ընդ քարշ ածելով մեր անկախութիւնն ալ:

Միթէ այսպէս չէ՞ր որ Թշնամիին գրաւեց Անիի նման անդուգական կերպով ամրացած քաղաք մը:

Սա հպարտ Բիւզանդիոնն ալ միթէ նման պատճառով չէ՞ր որ ինկաւ: Մօտ դար մը վերջ մեր վերջին Թաղաւորէն, Լեոն Ե. Լուսինեպնէ: Բիւզանդիոն չէր գոնար այլևս այլ երկաթէ մկանները որոնք պէտք էին իր պարխսպները և աշտարակները պաշտպանելու: 1453ին այդ տխուր առաւօտուն երբ հարիւրհազարնոց թրքական բանակը կը խոյանար Բիւզանդիոնի պարխսպներուն վրան, Բիւզանդացիք հազիւ 7000 հոգի ունէին պարխսպները պաշտպանող, որոնց կէսը օտարներ էին:

Բերդ մը, պարխսպ մը, ամրոց մը կ'ունենայ այնքան ատեն ռազմական արժէք, որքան ատեն որ հոն բնակող բանակը ունի մկաններ և բարոյական ուժ:

Ս. ՃԷՎԱՆԻՐՃԵԱՆ
ՃԱՐՏԱՐԱԿԵՏ

Լոզան, 19 Մարտ 1940

Գ Ի Շ Ե Ր

Եկո՛ւր, ո՛վ գիշեր, եկո՛ւր մըքսաբայլ,
Գըմբէքիդ բոլոր շահերը վառած,
Եկո՛ւր ու գրգուե՛ գիս գիրկըդ առած,
Քե՛զ կը սպասեմ ես՝ լուռ հոգերգմայլ:

Եկո՛ւր դուն գիշեր՝ յուշիկ, անմոլոր,
Նրբբին մասնեռով նրա՛զ տուր ծառին,
Ջուրերուն մէջ ջինջ բող լոյսեր վառին,
Եկո՛ւր իմ միսքի՛ գիշեր՝ աստղածոր:

Լոյսի՛ն մէջ հոգիս դարձաւ վիրաւոր,
Լո՛յսը յոգնեցուց գիս այսպէս անոյժ,
Լո՛յսն առաւ ինձմէ ժրպիսքս անոյշ,
Քո ծոցիդ մէջ ես պի՛ս՝ գրտնեմ անդորր:

Գո՛ւն ինձի կու սաս երագներ դիւրիշ:
Բաղձանքներ կախարդ՝ որ հոգիս բովեն,
Իղձերով սիրով անա՛, գիճո՛վ եմ,
Սրտսիս մէջ կ՛երգե՛մ՝ մուգած ամեն ինչ,

Մրտսիս մէջ աղո՛ւր կոյսեր կը պարեն,
Կը պարեն ժրպտուն, հապուկ հոլանի,
Ես անոնց իշխան, անոնց հովանի,
Տո՛ն կայ, խըրախնա՛նք՝ հոգւոյս մէջ նորեն:

Գիշեր, դո՛ւն կու սաս պաներ վայելի,
Մուրթիդ մէջ կեանք կայ, լոյս կայ, յիշատակ,
— Մուրթիդ մէջ դա՛ւ կայ, մե՛ղք կայ անյատակ —
Քու մուրթեդ դարձեալ արեւ պի՛ս՝ ծագի:

Ափիդ մէջ խունկով կու գաս դուն ինձի.
Սեւ աչներուդ մէջ սե՛ր մ՛ունիս աղուր,
Հոգւոյդ մէջ աղօթք, ձայնիդ մէջ օրօր,
Կու գաս պատրանքի՛ բողով մը ոսկի:

Եկո՛ւր, ո՛վ գիշեր, եկո՛ւր մըքսաբայլ,
Գըմբէքիդ բոլոր շահերը վառած,
Եկո՛ւր ու գրգուե՛ գիս գիրկըդ առած,
Քե՛զ կը սպասեմ ես՝ լուռ, հոգերգմայլ:

Յ Ի Ս Ո Ի Ս Ի Ն Պ Է Ս

Յիսուսին պէս ես չունիմ անբըննին միտ մ'անասման,
Չունիմ անոր սիրսն այ՛ ե՛լ հայրական, ե՛լ վրէժս,
Ե՛լ բընութիւնն անման, խոնարհ այնքան, մեծ որքան,
Գունա՛րն իր բարութեանց՝ որոնք բաշխեց շիր առ շիր:

Բայց Յիսուսին պէս զիս այ կը հալածեն մարդիկ չար,
Կը հալածեն ամեն տեղ, չունիմ հանգիստ եւ անդորր.
Գըլխուս համար բազմասանջ, իբրեւ բարձրոյ քար մ'ըլլար,
Ռուսն վրայ նընջէի, կ'ազդուուէի մինչեւ որ:

Յիսուսին պէս նաեւ զիս կը զըրպարեն անխընայ,
Մերք տունէ տուն շըջելով, մերք անկիւն մը փողոցի.
Կը հանդիպիմ այ՛բերու որոնց մէջ մաղձ ու քոյն կայ,
Ու սիրքս իմ դառնացած, կը կըսկըծայ, կը կոծի:

Յիսուսին պէս նաեւ զիս կը քարկոծեն մոլեգիւն.
Կարծես ըլլար հիմաւուրց նոյն ամբոխը խելագար,
Հոգիս պիտի անսրտունջ ներէ՛ր անոնց ժրպսագին,
Յքէ, ո՛վ Տէր, անոնց մէջ գոնէ անմեղ անձ մ'ըլլար:

Յիսուսին պէս, ծանր ու մեծ խաչը ուսիս կը քայնմ,
Իմ գողգոթաս անելի բարձր, փրճոս է կարծես,
Չարչարանով ամեն օր կը խաչեն զիս.— հրպա՛րս եմ—
Կը խաչեն զիս, զերդ Յիսուս, որ Յարութիւն առնեմ ես:

Վ Ի Շ Տ Ճ Ա Ն Ա Չ Ո Ի Թ Ե Ա Ն

Կեանքի ալեկոծ ծովն ինչո՞ւ բերաւ
Մանուկն այն սիրուն ինծի դըրացի,
Մանուկն այն խանդոտ ու սրտագրաւ,
Ինչո՞ւ նանչցայ ես ու զայն սիրեցի:

Շեկ էր եւ ուշիմ, հազիւ տասնամեայ,
Նըգով ու խաղով կը մեծնար անհոգ,
Ժըպիտն էր իր տան, եւ յոյսը ոսկեայ,
Պիտ' լուսնար ինչպէս գիշեր մ'աստղագոգ:

Աչքերուն մէջ խաժ՝ ցոլք կար արեւէն,
Միտքը վաղանաս, վառ կայծեր ունէր,
Պիտի ան ըլլար նեցուկ, ապաւեն,
Ծընողիին համար տանն իր կիսաւեր:

Բայց, արիստ՝ս, մեռաւ ուղեղասպէն,
Լրուեց կարկաչուն, վրնիս ձայնըն իր,
Ծաղիկ քափեցին ծանօթներն ամեն
Ծաղիկին վրայ կոյս եւ անբասիր:

Երնէ՛կ քե՛ ինձի անձանօք մընար,
Ու չնանչնայի՛ անոյժ սրղան այդ,
Անգէս իմ հոգիս, ի՞նչ պիտի ըզգար,
Երբ մեռներ ինձմէ հեռու եւ անյայտ:



Միքէ ամեն օր աշխարհի մեջ լայն,
Տրդաք չե՛ն մեռնիր հեզ ու քաղցրաբար,
Եւ որոնց համար մենք երբե՛ք, սակայն,
Յաւ մը չենք ըզգար, չենք սիրիր ու լար:

Կը տեսնեմ մայրը՝ սրխուր գրլիսիկոր,
Հագուեսք գաւկ՛ն ծունկներուն վրայ,
Խաղալիկներք քովն առած բոլոր,
Կը տոյ՛ գանձեմ, կը խօսի, կու լայ:

Կեանքի արեկո՛ծ ծովն ինչո՛ւ բերաւ
Մանուկն այն սիրուն ինձի դրացի,
Մանուկն այն խանդոտ ու սրբագրբաւ,
Ինչո՛ւ նանչցայ ես ու գայն սիրեցի:

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ 17-ՐԴ ԴԱՐԻ ՈՐՄԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՉԱՆԸ

0

Նոր Զուգայ Դա Սպահանի հայաբնակ արևարձանն է, որ հարուստ է ոչ միայն 17-րդ դարի մշակութային կեանքով, այլև որմնանկարչական արևեստի թանկագին մնացորդներով, որոնք այսօր իշխում են պատմական եկեղեցիներում և խօջայական հին ապարանքներում: Այդ նկարներից շատերը զբաղում են իւրաքանչիւր գեղարուեստասէրի ուշադրութիւնը ո՛չ միայն իրենց ինքնուրոյն հարադաս ոճով, իրենց նրբութեամբ ու խորութեամբ, այլև բաղմաղան հմայիչ գոյների սքանչելի ներդաշնակութեամբ, երանգներ, որոնք խօսում են ամէն մէկ տուրիստի սրտի, հոգու, զգացումների հետ և միաժամանակ պատմում հնագոյն նկարիչների ստեղծագործական խոշոր ձիրքերու մասին*:

Նկարչական այդ յիշատակարաններից առանձին ուսումնասիրութեան արժանի է Նոր Զուգայի մէյդան թաղում կանգնած բարձրակառոյց եկեղեցին, որ իր ճարտարապետական պարզութեամբ ու անպաճոյճ վեհութեամբ, իր բարձրաչէն ու հոյակապ զմբէթով և մանաւանդ իր որմանկարներով գեղարուեստական մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում և առանձնաթաղով տեղ զբաղում արուարձանի տաճաներից նկարազարդ եկեղեցիների մէջ: Դա Բեթղեհէմ եկեղեցին է, որը հիմնւել է 17րդ դարում, Շահ-Աբբաս Բ. ի պատճառը ջանում: Դժւար է առանց յուզմունքի նայիլ այդ հին, պառկառելի կոթողին, որ լայն կռքով խիղախօրէն բաց է արել ժամանակի առաջ և վիթխարի հսկայի պէս գլուխը բարձր պահած՝ խորասուզել է խոր մտքերի մէջ:

* * *

Պատմական եկեղեցու փառքն ու հմայքը կաղմում են 17րդ դարում վրձինւած որմնանկարները, որոնք մի վեհութիւն ունեն իրենց մէջ՝ խորհրդաւոր ու գեղեցիկ: Այնտեղ դէմքերը կենդան

*) Սոյն յօդուածը հանուած մըն է բանասեր-գեղարուեստագէտ Արամ Երեմեանի «Նոր-Զուգայի 17րդ դարի մանրանկարչական յուշարձանը» խորագրով օտեմական ուսումնասիրութեան: ԽՄԲ.

նի են, խօսուեն, դժեասները դասական, իսկ բաղմադան հմայիչ երանգների, սառուերների ու գծերի սքանչլի հարմօնյան ու հարազատութիւնն որոշ որմնանկարներում հասել են արեեստի ա՛յնպիսի նրբութեան, որոնց առաջ մարդու լեղուն համբ է կարում և հոգին է միայն զգում, խօսում ու ապրում մի գեղարուեստական վայելք: Ըն իրօք, ո՛ւմ երբեիցէ վիճակել է ժամերով դիտել գոյների այդ զարմանալի խայտարղէտութիւնն ու ներդաշնակութիւնը մանաւանդ իրար ներհակ երանգների նուրբ դասաւորութիւնը, նա միայն կը



«ՄՕՐԷ ԿՈՒՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

(Նոր-Ջուղայի Բեքեհեմ եկեղեցու որմնանկարներից 17-րդ դար)

յգայ նրանց բանաստեղծական հաճոյքը, որ ա՛յնքան խորհրդաւոր է ու զուբեկան:

Որմանկարչական այդ կոթողը սերտ կերպով կապուած է խօջա Պետրոս Վեյիջանեանի անւան հետ: Խիղախ, ժիր և նախաձեռնող Նոր-Ջուղայեցի վաճառականն արհամարհելով աշխարհագրական տարածութիւնները, առեւտրական գործերով անցնում է հեռաւոր րեղիզներ, դէպի արեւմուտք, ուր շփելով քաղաքակրթւած լուսաւոր ժողովուրդների հետ և մանաւանդ Իտալիայում աեսներով նկարադարձած եկեղեցիները, ո՛չ միայն հարստացնում է իր մտաւոր աշխարհը, այլ զարգացնում իր գեղարուեստական ճաշակը: Վելսդաոնսլով Նոր-Ջուղա, Խօջան տուն է բերում մեծ հարստութիւն և հասկացողութիւններ եւրոպական կեանքի, մշակոյթի և արեեստի մասին: Թերես այդ հանգամանքներով էլ պիտի շացաթրել որ նա իր կառուցել աւայժ եկեղեցու պատերը վրձինել է տալիս պատկերներով, զարդանկարներով և ծաղկանկարներով:

Բովանդակութեան տեսակէտից որմնանկարները վերցւած են քրիստոնէական պատմութիւնից և ունին կրօնա-բարոյական բնոյթ։ Աւելին։ Բիրլիական արւեստի մի ընտիր բաց դասադիրք է դա, կրօնական բանաստեղծութեան մի սքանչելի սերիա, որի ամէն մի էջը, ամէն մի նկարը տանում է ձեզ դէպի պատմական անցեալը, դէպի քրիստոնէական յեղափոխութեան դարաշրջանը և մեկնում է ու պարզաբանում Աւետարանի այս կամ այն ուրոյն էջը։ Ամէն անգամ եկեղեցի այցելելիս և պատմական որմնանկարների դասական դէմքերն ու զգեստները դիտելիս ձեզ զգում էք համարեա մի նոր աշխարհում։ Թւում է, թէ ապրում էք երկու ախոյեան կրօնների — քրիստոնէական և հեթանոսական — պայքարի շրջանում։ Եւ յիշուաւ, դա այն խօսուէն յուշարձանն է, որ կանգնել է հպարտ և նոր սերնդին պատմում է, ուսուցանում, թէ ի՛նչպէս քրիստոնեայ ժողովուրդը յանուն իր բարոյական բարձր իղէալի՝ ո՛րքան է տանջել և օրհասական պայքար մղել հեթանոսական աշխարհայեցողութեան ու մտայնութեան դէմ։ Պատմում է նաև մեծ մարդասէրի անհուն, անսահման ասնջանքների, քրիստոնեայ դրօշակիրների անպատում տառապանքների մասին եւ արձանագրում այն մեծ խորհրդի էութիւնը, որ ըմբռնել և ճայնաչել է դարերի խորքից եկած հաւատացեալ ու ջերմեռանդ ժողովուրդը։

Որմնանկարները միաժամանակ պատմում են, թէ ինչպէս այլևս սահման չճանչցող հեթանոսական հալածանքների, բարբարոսութիւնների և բռնութիւնների միջից բարձրանալով քրիստոնէութեան ազնիւ ցասումը, վրդովմունքն ու դայրոյթը՝ ոչ միայն նուաճել են հեթանոսութեան աւանդական սահմանները և իրենց յաղթական ընթացքին մէջ առել հնագոյն սկզբունքները, այլ հնչեցրել են սիրոյ, եղբայրութեան, բարութեան, արդարութեան, բարոյականութեան և վերջապէս մարդասիրութեան վսեմ ու բարձր պատգամները, երեւոյթներ, որոնք արդէն դարձել են իսկական քրիստոնեաների իղէալները։

Ի այց այդ որմանկարները մի ուրիշ մեծ խորհուրդ ունեն, փարատել մտաւոր խաւարը և լուսաւորելով մարդկանց միտքը, հասցնել նրանց բարոյական կատարելութեան որպէսզի նրանք խոր ըմբռնեն և հասկանան իմաստն ու փիլիսոփայութիւնն այն իղէալի, որ զալիս է դարերի խորքից և հիմնւած է սրտի մաքրութեան ու մարդկանց եղբայրութեան վրայ, մի գաղափար, որի հիմնական նպատակն է ո՛չ միայն կազմաւորել մարդկութեան որպէս մի պմբողջական ներդաշնակութիւն, այլ և կանգնեցնել նրան մի վեհ, գեղեցիկ, բարի ու ճշմարիտ ճանապարհի վրայ և այդ ուղիով բոցավառել ողջ աշխարհն Աստուածայնչի վառ ջահով։

Արձանագրենք և այն, որ այդ որմանկարներում քրիստոնէա-

կան զիւցաղներգութիւնը, ինչպէս և հեթանոսական գաղափարախօսութեան հերոսամարտը միահիւսուել են 17րդ դարի նկարչական արւեստի վեհութեան ու հմայիչ երանգների հետ: Աւելորձ այնտեղ կան մի քանի պատկերներ, որոնք իրենց ներութեամբ ո՛չ միայն ներգործում են և աղնւացնում իւրաքանչիւր այցելուի գեղագիտական ճաշակը, այլ և իրենց գեղարուեստականութեամբ գերազանցում նոյնիսկ Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի գեղեցիկ որմանկարներին: Գծենք մի քանի նկարներ ըստ նկարչութիւնը:

*
*
*

Փողովորդատեղի աջ կողմը ուշադրութիւնս գրաւում է մի մեծադիր որմանկար, որի տակ ոսկեզօծտառերով գրւած է. «Աւետիքն Մարիամու»: Դա բարեձեւ, հարուստ կուրծքով հեղութեան տիպար լուսապսակ Մարիամ կոյսն է. որ կիսածնրադիր, մեղմօրէն յենած ըստ իր զարմարի, աղօթագիրքը ձեռին և ձախ ձեռքի երկու մասերով քնքշութեամբ բռնած զգետի վերել մասը, ողջունում է Գարբիէլ Հրեշտակապետին: Երկու սքանչելի և գրաւիչ ղէմքեր են դրանք, երկու տարբեր գեղեցկութիւններ, մէկը միւսից կենդանի, խօսուն եւ բանաստեղծական: Հրեշտակը ձախ ձեռին բռնել է սիրուն շուշան, իսկ աջը քնքշութեամբ բարձրացել է ղէպի վեր և երկու մասերով ցոյց է տալիս աղաւնու երեւոյթով երկնքից իջնող սուրբ հոգին, կարծես նրա շրթերը լուռ արտասանում են «Մարիամ, քո մէջ է Հոգին սուրբը. Դու Հրէաստանի իեթղեհէմ քաղաքում պիտի ծնիս այն որդին, որը պիտի փրկէ փողովորդին իր մեղքերից»: Կոյսի ոտքերի մօտ, գեղարուեստական ոսկեգոյն ծաղկամանում, ժպտում են ծաղիկները:

Որմանկարը յիշեցնում է ինձ Իտալիայի Ջենովա քաղաքի Դիւրացցօ-Պալլավիչինի գեղարուեստական պալատում տեսած վերածնութեան յայտնի նկարիչ՝ Տիցիանի վրձինած «Մարիամ Մագրադեմացին»-ն: Դա նոյնպէս բարեձեւ, հարուստ կուրծքով, չքնաղ, ջերմեռանդ մի մի կոյս է, միայն այն տարբերութեամբ, որ նրա աչքերը կարմրել են լացից և վառ այտերի վրայ իջնում են երկու կաթիլ մարգարտաշար արցունքներ: Այնտեղ ցոլանում է Մարիամ Աստուածածնի տանուն երջանկութիւնը, որ աւետում է սիրուն և բարեղէմ հրեշտանուն երջանկութիւնը, որ աւետում է սիրով կը հիւրընկալէ այս տակը: Նկարչական ամէն մի թանգարան սիրով կը հիւրընկալէ այս նուրբ որմանկարը, որին առանձին փայլ են տալիս կարմիր, կապոյտ, վառ գեղին ու բաց կանաչ երանգները:

Ահա 2 մեղր երկարութիւն և 2 մեղր ու 120 սանդիւմ լայնութիւն ունեցող մի այլ մեծադիր որմանկար: Դա «Ծաղկազարդն» է, նկարչական մի նուրբ արթաղրութիւն ուր իջնում են մէկը միւսից գեղեցիկ ու վառ երանգներ, որոնք չնայած երեք հարիւր տարւայ

անցեալ ունեն, բայց այնքան կենդանի են ու հարազատ, որ ասես նոր են վրձիններ:

Նկարի իդէան հաւատացեալ Գալիլիացիների յաղթական ցոյցն է: Կենդրոնում լուսապսակ Յիսուսն է, որ կարծես նայում է խորերի միջից՝ իր աստուածային բոլոր վեհութեամբ: Հաղել է կապոյտ եւ կարմիր երանգներով մի պարզ հագուստ: Նրա վեհ, գրաւիչ դէմքի վրայ բելիէֆ կերպով պատկերանում է սիրոյ, բարութեան, արդարութեան ու անմեղութեան փիլիսոփայութիւնը: Ամբողջ քրիստոնէութիւնն է նա, աննկուն, անխորտակելի: Նստած իշու վրայ, դնում է Նրուսաղէմ, որ իշխում է որմանկարի աջ կողմը եւ իր լուսութեամբ պատմում անցեալ փառքի մասին: Նրկու առաքեալներ, որոնց արտայայտիչ դէմքերին առանձին գրաւչութիւն են ասլիս կանանչ եւ կարմիր հագուստները, ճանապարհի վրայ, իշու ոտքերի տակ, տարածում են իրենց հանդերձները, իսկ Յիսուսի առջևից ու ետևից դնում են ջերմ հաւատացեալները, որոնք արմատնու կանաչ ճիւղերը ձեռքերին, ասես ուրախ հոգով կանչում են. «Ովսաննա՛յ, օրնեալ է նա, որ դալիս է Տիրոջ անունով»: Յիսուսի մօտից քայլում են երկու փոքրիկներ: 5—6 տարեկան երկու մանկական սիրուն դէմքեր են զրանք, լիքն այտերով, սքանչելի ճակատներով եւ խօսուն ու խելօք աչքերով, այնքան կենդանի են: Նայում են այդ անմեղ հայեացքով գրաւիչ երեխաներին եւ սպասում, որ անա նրանք կը բաժանեն ժողովրդից, ցած կ'իջնեն, կը վազեն մօտս, կը ժպտան, կը խօսին եւ քաղցր կը կարկաչեն՝ անուշ ջրով կենսատու աղբիւրի նման: Մի-մի չքնաղ պատկերներ են զրանք, որոնք յիշեցնում են ինձ վերածնութեան մեծ վարպետ՝ անմահ Բաճայիլի մի որմանկարը, որ գտնւում է Հոմի Սէն-Լուկայի նկարասրահում: Դա նոյնպէս 5—6 տարեկան մի փոքրիկ երնխայ է, մի մանկական սիրուն դէմք, լիքն այտերով եւ խօսուն աչքերով, որի սքանչելի ճակատի վրայ եղբրուած սիրուն խոպոպներն առանձին երանգ են ասլիս նրանուրբ դիմագծին:

Գեղարւեստական հաճոյք պատճառում են ինձ նաև որմանկարի ժողովրդական մի քանի տիպերը, կենդանի, արաւայայտիչ դէմքեր, որոնք նայում են իրենց խօսուն աչքերով. թաւ յօնքերի տակ փայլող այդ աչքերում եւ՛ ժպիտ կայ, եւ՛ խորհրդաւորութիւն, եւ՛ անսահման երջանկութիւն: Նրանք կարծես, ցանկանում են, որ Մեծ Մարդասէրը շուտով հասնի Նրուսաղէմ եւ հնչեցնէ իր աստուածային պատգամները. «Մէկ Աստուած կայ. նա հոգի է, որուն պարբինք երկրպագել հոգով եւ ճշմարտութեամբ»: Սակայն որմանկարում ուշադրութիւնս գրաւում են ո՛չ միայն մէկը միւսից գրաւիչ ու չեղուած դէմքերն ու հմայիչ երանգները, այլև գեղեցիկ պանօրաման եւ դինամիկան: Այդ բոլորի ներդաշնակութիւնն ու կատարելութիւնը բանաստեղծական է, յատկապէս զգայուն, երազող եւ տպաւորւող հոգիները համար:

Նկարչական պօէզիայի զեղեցիկ տպաւորութեան ներքոյ՝ առաջ եմ շարժում և հայեացքս ուղղում «Սեղան վերնասան» մեծադիր որմանկարի վրայ: Դա վերջին հրածեչտի խորհրդաւոր ընթրիքն է, որ դարձաւ քրիստոնէական ջերմեռանդութեան անկիւնաքար: Մի փոքրիկ գառով, հացերով, սիրուն դանակներով զարդարուն սեղանի առջև երկու շարք նստել են տասներկու տաքեալներ: Իրանցից մէկ քանիսն իրենց խօսուն աչքերը սեւեռել են կեդրոնում բազմած Յիսուսին, որ կարծես բանում է իր սրբի վրայ ծանրացող զաղանիքը: «Ճշմարիտ եմ ասում, որ ձեզանից մէկն ինձ պիտի մատնէ, որն ինձ հետ ուտում է»: Այնտեղ է Յովհաննէս առաքեալը, որ զլուխը ջերմ սիրով փարել է Յիսուսի կրծքին և կարծես խնդրում է պարզել: «Տէ՛ր, ո՞վ է»: Այնքան խոհուն է մարդասէրի հեղ ու պայծառ հայեացքը, որ թւում է, թէ ներդամաւթեան անկեղծ զգացումով պատասխանում է: «Յուդա Իսկարիովաբէն»: Առաքելայնէլի զիմազմերի արտայայտիչ ու վսեմ ներդաշնակութիւնն ամբողջ մալմի մասերի համաչափութեան հետ ա՛յնքան հարազատ է որ դարձնում որմանկարը զեղարուեստական բարձր հաճոյքի մի անսպառ աղբիւր: Մէկիկ մէկիկ նայում եմ մէկը միւսից ազդու և խօսուն այդ զէմքերին մի անգամ, նայում եմ դարձեալ և մնում հիացած: Ամէն մի զծագրութիւն նկարչական մի զեղեցիկ ստեղծագործութիւն է եւ վկայում է, որ նկարչներին դերազանցել է իր լաւագոյնը յայտնարներէլ, զեղեցկութիւն է ստեղծել ցոյց առով իր ինքնատկալ վերջինի ոյմն ու հմայքը: Առհասարակ Առաքեալներէլ տարբեր երանգներով գծւած հաղուսանները, խօսուն աչքերն ու տկալիկ դիմազմերն առանձին փայլ են առիս որմանկարին և խոր ապաւորութիւն թողնում զիտողի վրայ: Այդ զէմքերից մի քանիսն ինձ յիշեցնում են Խալիսայի Զենովա քաղաքի «Սպիտակ պալատ» (Balazzo—Fianco) Գեղարուեստական միւզէում տեսած երեք փարբեբէլնէլ զլուխէլը: Դրանք յայտնի նկարիչ՝ Վանդիկի ստեղծագործութիւններն են, որոնք, կարելի է ասել, արեւստի զլուխ գործոցներ են և հիացմունք են շարժում:

Նոյնքան կենդանի զծագրութիւն է Յիսուսը, որ նստել է խորաթափանց հայեացքով և իր աստուածային վեհութեամբ, ասես, աշակերտներին կտակում է իր վերջին պատգամը: «Գնացէ՛ք և ամբողջ բողեցէ՛ք մարդկանց, որ սիրեն Աստուած բոլոր սնձով և ամբողջ հոգով: Գնացէ՛ք, բժշկէ՛ք հիւանդներին և բորոտներին: Մի՛ ստանաք ոսկի, արծաթ և ո՛չ էլ պղինձ»: Կարելի է ասել՝ այս որմանկարը Նոր-Ջուղայի լաւագոյն ստեղծագործութիւններից մէկն է և իր զեղարուեստականութեամբ կարող է նկարչական ամէն մի թանգարանում տեղ գրաւել:

Թէ ի՞նչ պատկեր են ներկայացնում միւս որմանկարները, ե՞րբ է վերջացել Եկեղեցու նկարադարումը, ո՞վքեր են նկարիչները, այդ էական հարցերի լուսարանութեան կ'անդրադառնանք մի այլ ուսումնասիրութեամբ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Նոր-Ջուղա, 8 Փետր. 1940

Նոր Ջուղայի որմանկարչական արուեստի մնացորդները, որոնք այսօր կը գարդարեն արուարձանի հին ապարանքները, պատմական արժեքաւոր յիշատակարաններ են եւ սոսա՛ս նիւր կը պարունակեն հայ եւ Իրանի Սեֆեւեանի գեղարուեստի պատմութեան վերաբերեալ: Այդ հազուագիւտ որմանկարները, որոնք դեռ մեծ մասամբ անձամբ կը մնան, իրենց գեղարուեստականութեամբ կարող են ուրոյն տեղ գրաւել միջագային մանրանկարչական արուեստի պատմութեան մէջ: Այդ մարդի մէջ անա պ. Արամ Երեմեան խո՛ր դեր կը կատարէ: Ան է որ պ. Արեակ Չօպանեան «Անահիտ»ի մէջ բարեխիղճ ուսումնասիրութեամբ մեզ ճանօթացուց շատ քանկագին նիւրեր: Պ. Չօպանեան զննահետիւյ պ. Երեմեանի շահեկան ուսումնասիրութիւնը ընտելոյր թղթի վրայ, գրի վերածեց որմանկարչական այդ յօղումաշարքը:

Երեմեան վերջերս ուսումնասիրե՛ր է նաեւ Նոր Ջուղայի 17-րդ դարու մէջ կառուցուած Բերդեհեմ եկեղեցւոյ որմանկարները, որոնք մեծարժեք արտադրութիւններ են: Ուրախ ենք որ Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գերաւորն Տ. Գարեգին Արեւայ. Յովսէփեանը հեռագրով Նիւ Եօրքէն ուզե՛ր է պ. Երեմեանէն այդ աշխատութիւնը, աւանդին գրով հրատարակելու համար:

Երեմեանի բերած նպաստն այդ որմանկարներու ուսումնասիրութեան տեսակէտէն շատ կարեւոր է, մանաւանդ որ շատ քիչ հմուտ բանասէրներ կան, որ կը զբաղուին այդ դժուարին նիւրով: Երեմեան տարիներէ ի վեր լծուած է այդ աշխատանքին, որու արդիւնքն ան գեղեցիկ կերպով ներկայացուց «Անահիտ»ի մէջ:

«Գաղութահայ Տարեգրքի» մէջ տպուած այս յօղումը Երեմեանի լուրջ ուսումնասիրութեան նմուշ մըն է:

ԽՄԲ.

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐ ՄԸ Ի ՇԽԱՆ ԳՈՒԶՍԻ ՕՐՈՎ

Իշխան Ալեքսանդր Իոն Գուզա՝ Վալահիոյ և Մուլտովայի միացեալ իշխանապետութեանց զահը բարձրացաւ 1859 թուականին: Ուրեմն, փոքր դէպքը զոր պիտի պատմեմ՝ ՏՂ տարուան հնութիւն մը ունի:

Փութամ ըսելու որ դէպքը ինծի պատմողն է հայ ձերունի մը, նեճե կրկորէ կ'ըսէի, նեճե բառը ուսմաներէն լեզուով նշանակելով մեծ եղբայր կամ ասրէց:

Միացեալ իշխանապետութեանց մայրաքաղաքն էր Պուքրէշ, հովիւ Պուքուրին շինած ծառազարդ ու զուարդ քաղաքը՝ որուն մէջ աեղէն կը սահէին Տըմպովիցայի աղմուտ ջուրերը:

Ինչ ահագին ասրբերութիւն այն ատենուան Պուքրէշին եւ Ռումանիոյ արդի հոյակապ մայրաքաղաքին մէջ:

Պուքրէշ տակաւին սալաշատակուած անգամ չէր Միայն Բոտուլ Մոկոշոնէյ, այսինքն այսօրուան Գալէա Վիքթորիան, որուն տուր կառուցուած էր իշխանական պալատը, ծածկուած էր ասիւրական ստիւպերով, ինչ որ մեծ լիւքս կը նշանակէր այն ատենները:

Բնականաբար ելեքաբական լոյս ալ չի կար ե ո՛չ ալ օդային կազ մտցուած էր Պուքրէշ: Փողոցները կը լուսաւորուէին, քիչ թէ շատ, ճարպէ ճրագներով, որոնք քաղաքապետութեան կողմանէ կը շրուէին ձողերու ծայրը սցուած լապտերներու մէջ:

Գիշերուան պահապաններն ալ հիմակուան կազմակերպութիւնը չունէին բնականաբար: Անոնք կը նմանէին ճիշդ Սթամպուլի պեճիներուն և անոնց պէս՝ ձեռքերնին մէջ մէկ հաստ բիր ունէին, որոնցմով ատեն ատեն փողոցներուն ցանցառ քարերուն կը զարորոնցմով ատեն ատեն փողոցները վախցնելու և փախցնելու հանէին և, կարծեցեալ չարագործները վախցնելու կը պոռային:

Մար, իրենց կոկորդին բոլոր ուժովը կը պոռային՝

— Cine acolo? . . . Te văz, te văz. այսինքն՝ ո՞վ կայադատեղ, տեսայ, տեսայ: Արդ՝ Կազանդի զիշեր մը. թուտոր անուշով պահապանը իր սովորական պտոյտը կը կատարէր հայաշատ քովտի փողոցի մը մէջ, Գալէա Մոշիլորի կողմերը որուն այն ատենուան անունն էր Բոտուլ թրկուլույ քը Աֆարը, այսինքն՝ զրտի չուկայի ճամբան:

Թուտոր, կայտառ երկտասարդ, ա՛յ աւելի կը զգար կեանքի

դառնութիւնը այդ կաղանդի գիշերը երբ ամէն մարդ, ուրախ զուարթի,
նոր տարուան կը սպասէր, կոնծելով ու կրգելով ընտանեկան տա-
քուկ մթնոլորտին մէջ:

Ան, սրտին նեղութենէն, ա՛յ աւելի կը դարնէր ձեռքի զաւա-
զանը քարերուն և, գիշերուան լուսթեան մէջ, իր ձայնը կը թնդա-
ցնէր Cine acolo? . . . պոռայով:

Բայց, նոյն կաղանդի գիշերը, կար ուրիշ հոգի մըն ալ որուն
ո՛չ նուազ դառն կ'երևէր կեանքը: Տիկին Քրիստինէն էր, որուն ա-
մուսինը Քիր Կասպար (այն ատենները Domnule ի տեղ յունարէն Քիր
բառը կը գործածուէր) քանի մը օրէ ի վեր մօտակայ քաղաք մը
դացած էր գործի ետեւ և այլևս կենդանութեան ունէ նշան չէր
տուած անոր: Արդեօք ի՞նչ պաշտած էր անոր. հանրակա՞ռք չէր
գտած և կամ արկա՞ծ մը պատահած էր. . .

Եւ հէզ կինը, միամիտակ նստած սենեակին մէջ, զոր մաքրած ու
կիրով ծեփած էր տօներու առթիւ, աչքերը յառած էր ճրագին որ
մեկամաղձօրէն կը սլլար արոյրէ աշտանակին մէջ:

Ատեն ատեն, հեռուէն ձայները կու գային պատանիներու. ո-
րոնք խուճրկեր կազմած՝ երգերով ու խաղաղա՛նի հարուածներով
բարի կաղանդ կը մաղթէին սեղաններու շուրջը բոլորուած ընտա-
նիքներուն, ի փոխարէն ընդունելով սփ մը մրգեղէն ու քանի մը
բոկեղ:

Պատանիներու երգերուն կը խառնուէր գիշերուան պահպանին
զոռ ձայնը՝ որ պահ մը իսկ չէր դադրէր այդ գիշեր:

Մէկէն՝ Cine e acolo? . . . աղաղակը թնդաց տիկին Քրիստինէի
ականջը: Պահպանը տունին առջեւէն կ'անցնէր այդ պահուն:

Կինը, կէս մը վախնալով և կէս մըն ալ ջղայնացած, պա-
տուհանին մօտեցաւ և սպիտակ վարագոյրը մէկ կողմ տանելով,
բացաւ փեղկը և հարցուց պահպանին:

— Ի՞նչ կայ, Թուտոր, ինչո՞ւ այդքան կը պոռաս այս գիշեր,
միթէ՞ր ան մը պատահեցաւ:

— Բան չի կայ, մի վախնար քոքոնա: Քիչ մը տաքնալու հա-
մար կը պոռամ. դուրսը ցո՛ւրա է, ձեր սենեակին չի նմանիր, պա-
տասխանեց պահպանը դառնութեամբ:

Արդարև ամբողջ օրը ձիւն տեղացած էր և քաղաքը ծածկուած
էր սպիտակ սաւանով մը: Փողոցին տնակները կարծես անհետացած
էին ձիւններուն ներքեւ:

Բարի կնոջ սիրտը զթոյ զգացումով մը լեցուեցաւ: Խեղճ աղայ,
ձիւնապառ փողոցներուն մէջ կը թափառէր, միամիտակ, սաստիկ
ցուրտին ենթակայ, հալածելով գողերը և հալածուելով շունելէ՝ ո-
րոնք երեսնիվեր կ'ոռնային գայիբու պէս:

Եւ, հեաղհեաէ խանդաղատելով, բարի կինը կը մտածէր՝ թէ

արդեօք մե՞զք մը գործած պիտի ըլլայ եթէ Աստուծոյ այդ թըշ-
ուառ արարածը պահ մը տաք սենեակը հրաւիրէ ու գաւաթ մըն ալ
զինի հրամցնէ, մեծ մե՞զք մը գործած պիտի ըլլայ: Ի հարկէ, ոչ,
ընդհակառակը, քրիստոնէականի գործ մը կատարած պիտի ըլլայ, նա
մանաւանդ որ պահապանը ամբողջ թաղին մէջ, իրի և շատ պար-
կեշտ մարդ ճանչցուած էր:

Կասպարը անանկ ալ տունը չէր, և, քանի որ մինչև այդ փա-
մուն ասուն չէր գար, ապահովաբար ա՛յ չէր գար, ճամբաները ձիւնէն
ու բուքէն գոցուած ըլլալով:

Ըսել է կարելութիւն ունէր փոքր բարիք մը ընելու պահապա-
նին և ինք ալ քանի մը վայրկեան աղատելու հողիին վրայ ճնշող
մինակութենէն:

— Գիտե՞ս ինչ, Թուտոր եղբայր, ըսաւ, խօսքը պահապանին
ուղղելով. գիտե՞ս ինչ, կամաց մը ներս եկուր, քիչիկ մը տաքնաս
ու գաւաթ մըն ալ զինի խմես:

Այս ըսելով բարեսիրտ կինը դուրս ելաւ, ու ձիւներու մէջէն
քալելով գնաց փողոցին դուռը բացաւ և ներս մտցուց պահապանը:
Թուտոր, այս յանկարծական բախալն չուարած, ներս սողովե-
ցաւ ու արեւները, հագուած և աճազին խոյրը թօթուելէ ետքը,
սենեակէն ներս մտաւ, անկիւն մը դեպեղելով դաւաղանը:

Ապա, Թանտիրուհիին հազար շնորհակալութիւններ յայտնելով,
սեղան նստաւ և աղւոր մը կերաւ ու խմեց:

Բայց ճիշդ այն պահուն երբ երկար ծխափողը մէջքէն հանելով
ձիւնու կը պատրաստուէր, փողոցին դուռը զարնուեցաւ:

— Քրիստինէ, Քրիստինէ, դուռը բաց, կի՛մացուէր Քիր կաս-
պարի ձայնը: Ըսել է մոռուսինը անակնկալ կերպով տուն կը վերա-
դառնար:

Խեղճ կինը գունատեցաւ ու սկսաւ զողալ. Գիտէր թէ իր ա-
մուսինը վերջին ծայր նախանձոտ, այսպիսի կատակներ երբեք չէր
վերցնէր: Եթէ ան ներս մտնելով, երիտաւարդ պահապանը գտնէր
Քրիստինէի գաւաթին առջև, անպատճառ մեծ փորձանք մը կը պատահէր:

— Հիմա ի՞նչ պիտի ընենք, Թուտոր, ըսաւ. էրիկս եթէ քեզի
հոս տեսնայ, երկուքս ալ կը սպաննէ:

Պահապանը, ինքն ալ սահմուկաձ, ոտքի ելաւ շուարած, չգիտ-
նալով ընելիքը ազատելու համար փորձանքէն որ իրենց կը սպառնար:

Բարեբախտաբար, յանդուգն կինը իսկոյն ուշարեւեցաւ ու
վտանգի պահուն կանանց յատուկ պաղարիւնութեամբ, պահապանը
հրեց մեծ պահարանի մը մէջ, գաւաղանն ալ ձեռքը տուաւ ու դուռը
գոցեց վրայէն:

Ապա արագ շարժումներով, ակնթարթի մէջ, Թուտորի խմած
Քրիստին շիշերը վերցուց ու սենեակը հովթփեց:

Ամուսինը ուրախ-զուարդ ներս մտնելով կարօտով համբուրեց կինը, որուն կապոց մը լեցուն ընծաներ բերած էր:

— Դուքը բաւական ցուրտ է, սիրելիս ըսելով կրակարանը փայտով լեցուց:

— Հիմա, յարեց ան, սեղան նստինք:

Հէգ կինը կ'երթար կու գար սենեկին մէջ անձկագին նայուածքներ նետելով դէպի պահարանը որուն մէջ խոթած էր պահապանը:

Եւ սակայն, սեղանը զբարդարեց ջանալով ուրախ երեւալ որպէսզի մը՝ գուցէ ո՛րեւէ կասկածի տեղի տայ: Հաշիւ կ'ընէր որ, սեղանն էտքը, ամուսինը յողնած դաղրած ըլլալով, պառկելու պիտի երթար քովի սենեակը և այն ատեն ինք՝ հարկաւ միջոցը պիտի գտնէր Թուտորը թաքստոցէն հանելու և կամացուկ մը անյայտ ընելու:

Արդարև մեծ ախորժակով լաւ մը ուտելէ ետքը, Քիր Կասպար սկսաւ յօրանջիլ ու կամաց կամաց խօսելէ դադրեցաւ: Աչքերը սկսած էին գոցուիլ յոգնութենէ և զինիչն:

— Ա՛յ պառկինք, ըսաւ, և ճրագը առնելով, ոտքի ելաւ ել թալու դէպի ննջասենեակը:

Տիկին Քրիստինէ ազատ շունչ մը առաւ:

Գալով պահապանին՝ ինք՝ ^{*}ալ ^{*}աակաւ առ ^{*}աակաւ հանդարտեիք էր, հասկցած ըլլալով քոքոնա Քրիստինէին ծրագիրը, որ էր սպահաւարար, ամուսինը պառկելուն պէս, զինքը կամացուկ մը ճամբել:

Պահարանին մէջէն առնալ մը հետեւած էր ամուսին խօսակցութեան բայց, յետոյ, զինիին և տաքութեան ազդեցութեան, տակնիստ էր կամաց կամաց թմրիլ և ի վերջոյ ինկած էր խոր քունի մէջ:

Դժբախտարար, սահելի երազներ եկան քունը խանգարելու իրեն այնպէս կ'երեւէր երազին մէջ թէ խումբ մը չարագործներ, ատրճանակներով ու դաշոյններով զինուած, կ'ուզէին վրան յարձակիլ, մինչ երկրորդ խումբ մը կը պատրաստուէր մօտակայ տուն մը մտնել կո՛ղոպտելու միտքով:

Թուտոր, իբրև քաջ ու խղճամիտ պահապան՝ կռուելու կ'ելլէ գողերուն հետ՝ զանոնք բռնելու և թե թեի կապած յանձնելու համար պահականոց:

Եւ պահարանը կը սկսի երերալ:

Այս ա՛յն վայրկեանն էր երբ պահապանը պաշտօնը կը կիրարկէր աւազակներու ետեւն վազելով:

Քիր Կասպար շուարած մնացած էր ալիկոծեալ պահարանին առջեւ, պահ մը եղածը երկրաշարժ կարծելով, մինչ Թուտոր, որ նեղ խոթած էր գողերը, ահռելիօրէն սկսաւ պոռալ պահարանին մէջէն:

Cine e acolo? . . . Te văz, te văz . . .

Վ. Գ. ՄԷՇՏՈՒՏՃԵԱՆ

Ս Տ Ս Բ Ս Չ Ս Ր

Ա.

Ասաբազա՛ր, ես մեկ գաւակրդ նախկին,
Օր մ'ախորհում գրկեդ կրփիդ սեւ պահուն,
Դուն՝ խա՛ջս, ուսես քեզ նետեր հմ ա՛յ անդին,
Ու փրցուցեր՝ մեջես փրսած վերեդ անհուն:

Գիտեմ, դուն մեզ ուրացած ես, եղած խո՛րք,
Եւ մեզ համար շատնց երկինքդ է փրլած.
Դուն մեզ զարկիր մեր սլացքին մեջ կենսայորդ,
Ու կը ծաղրես այսօր իսկ մեր սուգն ու լաց:

Ասաբազա՛ր, երբեմնի բո՛յն մանկական,
Ու յետոյ փուլ՝ մեր մարմնոյն մեջ խրեցար,
Իմ նախնիքներս, որ ասեցօք մեջդ ինկան,
Այսօր ելած՝ մեզ հովանի են պայծառ:

Ու մեր հոգւոյն մեջ իբր ջահ կը վառին
Բիւր գաւակներդ՝ հափափուած մեծ եղեռնէն՝
Ու իւրն եղան ձորերու մութ կանթեղին
Եւ խունկ՝ նետուած աւազներու մեջ հրեղէն:

Եւ գիտնալով դուն փակեցիր աչք, ականջ.
Եւ մենք մանեակ՝ վիզեդ ինկանք գահավեժ.
Մեզ մահուան հետ կռուիլ սարին լացջ առ լացջ.
Լացին ասղերն, իսկ խնդացիր դուն, հրե՛տ:

Եւ հիմա դուն պարպրած ես մեզմէ ա՛լ,
Ըզմեզ փոռի քրած՝ նետած ծագէ ծագ.
Դուն սրբած ես մեզմէ եղող ամեն փայլ.
Դուն փերած ես, անգո՛ւր, մեր երգը պայծառ:

Շե՞ն ես արդեօք, երբ մենք ծաղիկ՝ ա՛յ չըկանք.
Նքը կ'արսասուէ առանց մեզի Չարհն՝ անգամ,
Սաբարիան², երբ իբրեւ խիղճ անկապանք
Սնեղակոծ կը մրոքնչէ յարածամ:

1) Գեառակ

2) Գեա, որոնք մեր քաղաքէն քիչ մը հեռու,
իրար գրկած՝ կը թափին Սև ձով:

Շէ՞ն, երբ զանգեր երկիմեներդ ա՛լ չեն շոյեր,
երբ մեր սուներն ես կորձաներ, խելագա՛ւր,
երբ կերեր ես մեր մանուկներն ոսկեհեր
Ու ձրգեր ես մեզ, որ սանջուի՞նք չարաչար:

Ո՛չ, ա՛լ չենք գար, քե՛ որ նոյնիսկ հրաւեր չաւ.
Սուր է լեզուիդ ծայրը եւ քո՛յն անարկու...
Մեր Շէնն հիմայ մենք ամփոփուած մաս առ մաս
Մեր սոսի՞ն մեջ՝ կը սանի՞նք նոր աստերու... .

Բ.

Գառնուրեան քոյնն էր փուած իմ հացիս.
Եւ մրբիկ մը գիս առած՝ կը քրեք.
Կը սաներ հողը ներհեւէն բարձիս,
Եւ հոգւոյս վրեւ կախուեր էր գիշեր:

Եւ բառերս արիւն արիւն փոխեցի՛ն,
Եւ հայհոյեց քեզ շքունքս արդար.
Զաւակն իր մօրք, ի՛նչպէս, Ասուա՛ծ իմ.
Անպատիժ կրնայ նետել քուք ու քար:

Քուկրդ չէր յանցանքն՝ երբ իժաճընուեց
Մեր ոսոխն քզմեց քրաւ սարագիր,
Երբ մեր քրոխչկենէն իջեցուց անդունդ,
Երբ քամեց մեր կեանքն ու ցանեց մոխիր:

Ներե՛ կըր օխ ուներ սիրքս քեզի դեմ.
Յաւրս կապեր էր կարօտիս համբան.
Քե՛զ, ծննդավա՛յրս, ես ի՛նչպէս ասեմ,
Ինչպէս ուրանամ իմ անուշ օրրանն:

Երբ քեզ ուղղեցի նզովքի նիզակ.
Ըզգացի խոցուիլս իմ մեջ՝ ուժգնաբար.
Տեսայ մանկուրիւնս որ եկաւ արագ,
Ըսաւ. — հարուածդ ինձ հասաւ, ո՛վ եղբայր:

Հիմայ կը նայիմ քեզի՛ արցունքիս
Խորունկի՞ն մեջէն ու կը տեսնեմ քեզ
Որ արբեցած ես ու ինձ կը ժպտիս
Եւ երկու ափերդ¹ ինձի կ'երկարես:

¹) Ակնարկու թիւն Չարքին ու Սաքարիային

Ափերդ որոնցմէ թել մը երազ՝ մին,
Միւսը խուրձ մ'է կամփի աննահանջ...
Կը տեսնեմ արեւն հրաւաւարմին
Ու կրճիթդ՝ ըզփեզ կը պահէ կանանջ:

Կը գտնեմ մարդիկդ աւելի՛ փարած
Հողին ու շողին: Միեւնոյն քաղաքն,
Ուր՝ ծաղիկներու մէջտեղ բարձր ու ցած՝
Կը պակսի միայն մեր խունկը դալար:

Կը տեսնեմ բակերն, ուրկէ զերդ կը կոց
Անցան մեր օրերն հիւսելով երազ.
Հոն կ'այեկոծի ձայն օտար սրդոց,
Հոն ցամփեր է մեր լեզուն փափկալագ:

Ու կը պոռամ քեզ.—հընար չէ՞ արդեօք
Ու գիրկըդ մեզի դուն դարձեալ բանաս.
Ես քեզ կ'արօցայ: Եւ կու լամ անոք.
Եւ լացքս լացով կը սրբեմ մաս մաս:

Ի Մ Տ Ո Ի Ն Ս

Մանկուրեանս օրրանն յանձնած օտարին,
Նախնեացս ոգիներն ուսերուս վրան՝
Ա՛ն, ես եկեր եմ օտարի քառին,
Օտարի տան մէջ շիներ եմ խորան:

Մբուռ է երեկն ու արիւնքարաւ,
Ու ես չեմ նայիր նամբուս կորսւած.
Հոգիս եփելէն իւր մէջ՝ պնդացաւ,
Ու միտս գուժիս մէջ քարմ է յոյսի հացն:

Ու զոն եմ արդէն: Աւուրք ի՛նչ փոյք
Երբ կը մօտենայ իմ կուրծքիս բերդին,
Երբ դալար է մէջս հաւաքս անկապուտ:

Ու զոն եմ նորէն, ու կ'երգեմ կրկին,
Զի շուրջքս արեւ ու բոյնս է կռկիկ,
Զի միտս կը խնդան պապերու ոգիքն...

Բ Ա Ժ Ա Կ Ն Ե Ր

Բաժակներ պարպեցի ու դեռ չեմ կրճացրե...
Հոգույս մեջ երազի այգիներ փամուռեցան.
Անշոս ինկան խուրձ առ խուրձ ե՛լ սերեր ե՛լ բոցեր.
Բարձրացաւ մերի արեւն արցունքի ծիածան:

Բաժակներ պարպեցի, եւ սրած կրակի՛ն
Յոռեսես ամեն միտք, ամեն ժանգ ու խաւար՝
Սեղմեցի անպարփակ կամփա ափիս մեջ ուժգին
Ու կեանքի՛ն դեմ ելալ հաւաստով մեծավառ:

Եւ ի՛նչ փոյր երբ յանախ շահեցայ ես վերեր.
Մեռայներ եմ անոնք զոր փառնով կը կըրեմ.
Կորովիս բրոնխիտներն երբեք չեն բնկրկեր,
Ու նակասքս՝ վահան՝ կը շողայ մութին դեմ:

Բաժակներ պարպեցի, եւ նամբուս վրայ դեռ
Կ՛երկարին ինձ նորեր յոյսով բարձ ու փրփրուն,
Զոր կ՛առնեմ, ու խեղդած իմ խոնջեմես ու վիշտեր՝
Գրկուած կը զգամ զիս մարդոց հետ, ամենուն:

Չեմ սուկար երբ մահն իսկ կարկառե իր բաժակ՝
Օր մըն ալ իր շուքով ողողած յոյսիս բեմն . . .
Իմ բերնիս կը սանիմ գայն իբրեւ հուսկ նաւակ,
Եւ մարտիչ զորաւոր՝ ֆազուրեամբ գայն կ՛րմայեմ:

Ի Ր Մ Է Հ Ե Ռ Ռ Ի

Իրմե հեռու եւ յաւիտեան
Երբ նամբաս ե այլեւս անդարձ,
Զայն կը կըրեմ իբրեւ մասեան
Ու կը կարդամ աչքերով քայ:

Գիտերներուս փոսին մեջ մար
Երբ կը խրիմ սակաւ սակաւ,
Զիս կը զգուէ գորովագուր
Յիշատակն իր լուսարարաւ:

Շուրջս ամեն ինչ իրմով օժուց՝
Իր անունով կը բրբրայ.
Զայն կը տեսնեմ ծաղիկներուն
Եւ ասդերուն ճակիցն վրայ:

Իր ձայնն ամեն սարրի քելեն
Կախուած նրագ մրն է դիւրող.
Իր ձայնն՝ հոգւոյս մէջ վտեղեն
Այգ մրն է մեծ եւ բիւրատող:

Ան իմ մէջս է իմ հոգւոյս պէս,
Ան մտածմանս ակն է խորունկ.
Իրմէ հեռու՝ երբ կու լամ ես,
Կ'ողողէ զիս մէն մի արցունք:

Իրմէ հեռու՝ իրմով եմ յի.
— Անմաստի յոյսքս է նա—
Օր մրն ալ — ինձ կը բրբի—
Անով պիտի մահս անուեցայ . . . :

ԱՂՕԹԲ ՀԻԻԱՆԴ ԱՂԶԿԱՆ ՄԸ ՀԱՄԱՐ

Իմ աղօթքիս ջերմեանդ
Բուրվառին մէջ, այս պահուս,
Փոքր աղջկան մը հիւանդ
Կը մտայ հոգին փափկահիւս:

Կը խնկարկեմ Քեզ, ո՛վ Տեր,
Քեզ կը զրկեմ ամպ առ ամպ
Այս հիւժեղ շունչն՝ այս ստուե՛րն.
Ընդունէ՛ զայն համուրեամբ:

Կը հարճատի սիրս մը հեք
Իմ բուրվառիս մէջ բուրեան.
Լքուէ՛ այդ նիշը բեկբեկ
Եւ տո՛ւր անոր ցող մ'արեան:

Անոր կողերը՝ քրնար՝
Կը կոսրեկ հազ մը չոր.
Երզն անոր չի դիմանար.
Ա՛ն, երկարե՛ ձեռքդ անոր:

Կը փլին ուսերն անոր բուփ,
Յոյսի վարդերն ալ կ'իյնան.
Ո՛վ Տէր, վերցո՛ւր զայն ընդհուպ.
Ամբասցո՛ւր տունկն այս զարնան:



Ա՛ն, չրեխտե մանն՝ ուսայն
Անոր կեանքի մութ պատին.
Ճառագայթով լեցո՛ւր զայն.
Որ իր ցաւերն անհետին:

Զայն մի՛ կոխեր առարուր,
Ու երբ յոյզ է հասեր,
Ա՛ն իմ արեւս, անոր տո՛ւր,
Որ ապրի խեղճը, ո՛վ Տէր:

ԶԱՐԵՂ ՊԼՊՈՒԼ

Ս. Թովմայի վանքն ըլլալով միանգամայն Գողթն գաւառի եպիսկոպոսանիստը, Գողթնի Հայրապետները եղած են նաև անոր առաջնորդները, որոնք բնական է ուրիշ հարցերով ալ զրաղած ըլլալով իրենց ձեռքին մէջ ունէին միայն վանքին վերին տեսչութիւնը, իսկ ներքին վարչութիւնը յանձնած էին ուրիշի մը: Ուստի Գողթնի առաջնորդները ճշդիւ նկատուած են նաև Ագուլիսի վանքի վանահայրերը, որոնց յաջորդական ցանկը կազմած են Շահխաթունեան (Ստորագրութիւն... Բ. էջ 329) և Ալիշան (Ստական, էջ 312 Յ): Վերջինիս անուանագանկը աւելի խնամքով եղած է:

Ս. Թովմայի պատմութիւնը Ժ. Դարէն վերջ կը պայծառանայ: Վարդան արեղան 1375ին կը գրէ նարեկ մը՝ «Ընդհովանեաւ Ս. Թովմայիս, որ է ի վանսն ի Ագուլիս (Կարիկեան) Յուլ. հայ Ձեռ. էջմ. ր. 1526 Սմբատեան՝ Երեւակ էջ 179): Տէրունական առաջնորդի օրով եռուղեւ գործունէութիւն կայ գրչագրութեան: Տէրունականին կը յաջորդեն Ստեփանոս, Ազարիա, Սիմէոն և ուրիշներ, որոնց օրով ալ ձեռագիրներ կ'արտագրուին: Առաջնորդներու շարքին ամէնէն կարկառուն դէմքն է Սաչատուր վարդապետը, որ 1633ին արդէն վարչութեան ղեկը ձեռքին մէջ առած հոգեւին կը նուիրուի վանքին բարոյական, գիտական և նիւթական վերապարթումին ու վերելքին:

Շարականի մը յիշատակարանին մէջ կը գրուի թէ՛ Սաչատուր վարդապետը 1636ին «չինեաց և նորոգեաց ի հիմանց զսուրբ ուխտս Թովմայի բարձրարեւծ կառարակապ և դմբեթաձև դսուրբ եկեղեցին և բարձր պարսպով և չորեքանկէնի խոցերով և մուղրախերով (տնտեսատուն) զարդարեաց և բազում նեղութեամբ և շարժարանաք շինեաց» (Շահխաթունեան՝ «Ասորագրութիւն», Բ. էջ 326): Զաքարիա վաղարշապատցին կը հաւատտէ թէ «Սաչատուր վերջակեցի... նորոգեաց զաթոռն զայն (Ս. Թովմայի) չքեղապանձ վայելչութեամբ ի հիացումն կարգեալ տեսողաց իրև զղրախա Աստուծոյ զարդարեալ ազդի ազգի ձօնութեամբ հոգեւօրօք և մարմնաւօրօք» (Ալիւան՝ «Սիսական» էջ 327): Այսպիսի գործօն առաջնորդի մը մահը բնական է որ շատ ցաւ պատճառած էր Գողթնցիներուն: Բարեբաւօրէն կ'ուենենայ լաւ յաջորդներ յանձին, Պետրոս, Ոհան և ուրիշ վարդապետներու: Դմբախաբար 1789ին վանքը կը թալանուի և կողպուտի կ'ենթարկուի (Սարգս, 1911, էջ 1006, Ազգ. Հանդ. 1904, Ժ. էջ 167): Բայց ետքէն նորէն կը բարեկարգուի:

Ս. Թովմայի վանքը Գողթնի սիրելի վանքն և ուխտատեղի էր և է: Ունէր շատ շարժուն և անչարժ գոյք ու հող (Նոր Դար, 1891, ր. 179, Ազգ. Հանդ. 1904, էջ 311): Իր այգիներէն մէկուն մէջ կը ցուցուի Փարսաղան Մելիքի գերեզմանը, իսկ իր յարկին տակ ժամանակ մը ապաստանեցաւ անուանի Դաւիթ Բէկ:

2 Հոկտ. 1940. Վիեհնա

Դոկտ. Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵՅՆ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՕԹՆԵԱԿՄ

(ՆՄանութիւն Գողթան Երգոց)

Մրգուզ բանորդն¹
 Ինք Երկոսն
 Դեռ չին փոսին
 Յիսուսին
 (Ուր սրբութեանց
 Մեղաքանց
 Փոխան՝ կըրօնք
 Դըրին սոնք
 Եւ խորամանկ
 Սե սըփանք)
 Փուշ վէրքերէն
 Չորս դիւն՝
 Նա չաղատած
 Էնն Աստուած,
 Գիշերն Ելաւ
 Ըստիպաւ
 Իր ծակէն ժիր
 Քրիստոսիկիր²
 Երգե՛ց, հեւա՛ց
 Ու սըգա՛ց
 Այլոցն՝ Է իր իմն
 Եւ ժիտ գիծ,
 Ինք սուրբ թըմբիր
 Տեսլածիր
 Բանի մը ժամ
 Կողմնագամ
 Արբեալ՝ ողջոյն
 Մ՛ իբր հայ յոյն,
 Ի ազօթք յուշեր
 Անուշեր
 Ուղղեց Երկին
 Արարչին:

Ըզգոյշ տափկ
 Թուշոյիկ՝
 Լոյսով անկէզ
 Ի պարտէզ
 Ոստից ի խո՛հ
 Թո՛հ ու բո՛հ,
 Միաքն ու մէն Բանն
 Ոտք Ելաւ,
 Վե՛ր ցուպն աւուր
 Անէն սուր՝
 Արարչին զահն,
 Հոն անմայ,
 Կէս լոյս կէս ստուեր
 Կը փայլէր,
 Տիեզըր տուն
 Յար անհուն,
 Ուր վըսեմ Հայրն
 Երկնիցն Այր
 Գըլիսին ոսկեակ
 Կըլոր թագ³
 Եւ աղամանդք⁴
 յիրանն անդ՝
 Մայր Երկիրէն
 Ջուր սըրսկին
 Երէկ որպէս
 Հարսն հողէս? (հողգէս)
 Փայփայլով
 Լա՛յն գորով՝
 Այժմիկ առաուան
 Սիւ գ ճու թվան⁵
 Չայն զերդ մաննայ
 Կը տեղայ՝
 Անմահ կաթիլք
 Յամէն ծիւք:

1) Որդն բանական:

2) Երկիր Քրիստեան, Քրիստուպո-
 իւս (Սկիւտար):

3) Ոսկեակ կլոր բագ՝ արեգակն

4) Ասղերբ:

5) Մուրբ վաճոյ:

Հող, ծառ, ծաղիկ,
Միրանիկ.
Տուն և սամալ
Ամէնն ալ
Ի սպիտակ հեղուկ
Թրթըռուկ¹
Այդ բեհեզո՛վ
Սուբբ ու զով
Հազուած սըզուած
Զինչ մանած,
Հայրն² վերէն հուր
Լոյս փրփուր,
Մայրն³ վարէն զով
Տրամ սյծով
—Ամուք կրկին
Անհունին—
Մեծ համայնքին
ձըգաէին

1) Հեղուկ քրքումե ցող:

2) Հայրն՝ Երկինք:

3) Մայրն՝ Երկիր:

Մրգուղ Բանորդն
Ինք երկտան՝
Այդ ձրգտուժէն
Մաքսւ՛ր մէն
Բաժնիկ մ'առաւ
Լուռ հոգեաւ.
Հաղորդ յանհուն
Զօրութիւն...
Պորհո՛ւրդ նորեր
Ի յորդոր.
Եւ փրկութեան
Եօթնեակն այն,
Երգեց բանուղ
Երկնամուղ⁴
Ստեղծո՛ղ բանկառք⁴
Քեզ ժիշտ փառք
27/10 Հոկտ 1909
ԽԱՉՔՆԱՐ

4) Ասեղծող Բանկառք՝ Ո՛վ
արարչագործ կառք բանա-
ւոր:

Թուղքերուս մեջէն զսայ մեր միսքիք գողներէն միոյն ԽԱՉՔՆԱՐ
Յ. Գ. Մըմեանի մեկ գուքիւնր: Կր խորհիմ որ 1909ին դրկած է ինձ
որգեսգի զայն Ասանայի որբերուն նուիրուած «Գեղունի»ին մեջ սպեմ:
Կ'երեւի զայն չեմ հրատարակած: 32 տարի ետք, երբ արդէն հեղինակը
աչեեր բասոնց փակած է այս տարօրինակ զբչին տարօրինակ գրու-
քիւնր կորուսե փրկելու համար յոյս կ'ընծայեմ «Գաղութրահայ Տարե-
գրք»ին մեջ: Գողքան երգե՛րն ալ չէն հսակցուած ու ամէն լքերեցող ի՛ր
ուղածին պէս հասկցած է:

Հ. Մ. Պ.

ՊՈԼՍՈՅ ՀՍ.Յ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Մ Ի Ն Չ Ե Ի 1908)

Շարունակութիւն «Գաղութանայ Տարեգիրքի» Բ. տարիէն

132. Տարօնեան Ընկերութիւն (1873) կազմուած է Սթէնիայի մէջ: Ունէր 250 բաժանորդ, իւրաքանչիւրը 20 փր. վճարումով: Իր նպատակն էր հողալ Սթէնիայի վարժարանին 300 դրչ. ծախքը: Ունէր հինգ հոգիէ բաղկացեալ Գործադիր ժողով մը և վարժարանին անօրէնն էր տեղւոյն քահանան:

Անդրանիկ անօրէն ժողովի անդամներն եղած են. 1. Տ. Արիս-տակէս քհ. 2. Յովհաննէս Բարսեղեան, 3. Սարգիս Օնպաչի Մշեցի, 4. Յարութիւն Օնպաչի Մշեցի, 5. Համբարձում կօշկակար:

Ուսում. Խորհուրդը 1873 Մայիս 9ին ասոնցմէ միայն քահանան յարմար կը սեպէ, անոր ընկեր աալով Յակոբ ձէվահիրճեանը և Ենովք Հիւստավէրտեանը:

133. Տիրգրեանկերտի Հայրեմասէր Ընկերութիւն (1873) Կ. Պոլսոյ մէջ կազմուած Տիրապէքիբի վարժարաններուն օգնելու նպատակով: Հիմնադիրներուն մէջէ Յակոբ պէյ Սանդանեան:

134. Ներսեսեան Ընկերութիւն Խազդիւզի (1873), զպրոցին նպատակու նպատակով կազմուած, որ վերակազմուած է, վասնդի այդ անունով արդէն 1843ին կազմուած ընկերութիւն մը կար, որ 1851ին ալ վերակազմուած էր:

135. Լսարանական Միութիւն (1873—...) կազմուած Օրթագիւզի մէջ, ինչպէս կը տեսնուի իր սնունէն լսարաններ կազմելու համար:

136. Վանայ Հայոց Զորի Դպրոցասիրաց Ընկերութիւնը (1874) Կ. Պոլսոյ մէջ կը հիմնուի տեղւոյն վարժարաններուն նպաստելու նպատակով:

137. Գրատիրական Ընկերութիւն Սալմաթուրուփի (1874—1883...) որ նպատակ ունի տեղական մատենադարան ընթերցարան մը հաստատել և ընթերցասիրութիւն տարածել:

138. Ս. Թադէոսեան Սանուց Ընկերութիւնը (1874) կը կազմեն Րումէլի Հիւարի վարժարանի ուսանողները:

139 Վարազդասեան Ընկերութիւն (. . .) կազմուած է զարկ աալու համար հայ թատրոնին: Ատենապետն էր Մկ. Փորթուզայեան: Թալու համար հայ թատրոնին: Պահճէ Գարու էր, յետոյ Գում-Ընկերութեան կեդրոնը նախապէս Պահճէ Գարու էր, յետոյ Գում-

գարուի զուրսի եկեղեցին կը փոխադրուի 1875ին: Հաւանօրէն 1873—
4ին պէտք է կազմուած ըլլայ: Երկար չէ տեւած:

140. Բնկերութիւն (1874) հիմնեալ նպատակ ու-
նենալով շինարարական ուսման պարագայիս:

141. Արուեստասիրաց Բնկերութիւն (1875—1881) կազմուած
Սամաթիոյ երիտասարդներէն «առ ի քաջալիբ արուեստագիտաց»: Այս անունով ընկերութեան մը աջակցութեամբ Մշոյ Ս. Առաքելոց
վանքին մէջ երկրագործական վարժարան մը կը պահուէր որ 1881-
ին կը փակուի:

142. Արեւելեան Բնկերութիւն (1875 Յուլիս 1...) անուն ըն-
կերութիւն մը կը հիմնեն, 10 տարուան համար, Կարսպետ Փանոս-
եան, Գրիգոր Մէրալինեան, Միհրան Տատուրեան, Գրիգոր Շէօհլաեան,
Մկրտիչ Յովհաննէսեան «Բաղդանուէր Ընկերութեան» հիմնադրները:
Նպատակն էր Բաժանորդաց բախտին և հաշտոյն միմիայն Օսմ. Բու-
մէլիի երկաթուղեաց արժեւորման գնել, ապագային օրինաւոր զբոսա-
գլուխ կազմելու համար:

143. Հայկական Համագրային գործաւորաց բնկերութիւն մը
(1875) կը կազմուէի նախաձեռնութեամբ նշանաւոր արուեստագէտ
Ստեփան Պէղերճեանի:

144. Գրասիրաց Բնկերութիւն (1875) կազմուած է թոփաքարի
վարժարանին օգնելու համար: Ոստիկանութիւնը կ'արդիւնէ:

145. Գալոցասէր Բնկերութիւն Աֆիոն Գարահիսարի (1875),
Կ. Պոլսոյ մէջ կազմուած է Գարահիսարի վարժարանին ի նպաստ:

146. Ալփասսաէր Տիկնացի Բնկերութիւն (1875) կը հաստատուի
նպատակ ունենալով ազգատ հայ տղիկներու դաստիարակութեան
նպատակը:

147. Վասպուրական Բնկերութիւն (1875) Գարակէօմբուլի մէջ
կազմուած է կիրականօրեայ դաստիարակութիւններ ընելու համար ժո-
ղովրդեան: Երկար չէ տեւած:

148. Մամիկոնեան Բնկերութիւն (1876?) կազմուած է Սկիւտարի
Սէլամսըը թաղին մէջ: 1877 Վնար. 4ին Ուսումնական Խորհուրդին
կը դիմէ և Ս. Խաչ վարժարանին կից թատրոնին մէջ առեւտրանու-
թիւն ընելու համար թաղ. Խորհուրդին յարուցած արգելքին համար
կը բողոքէ:

149. Արարտեան Բնկերութիւն (1876 Ապրիլ 15—1880) կը հաս-
տատուի հայարնակ գաւառներու մէջ ուսում տարածելու նպատա-
կով: Վեց երիտասարդներ անոր նախաձեռնարկ կ'ըլլան: Առոնց մէջ
են Մ. Փորթուգալեան (Ատենապետ), Ա. Արփիարեան: Որոշուած նպա-
տակին հասնելու համար նախ և առաջ քանի մը Հայաստանցի Կ.
Պոլսոյ մէջ կրթել յարմար դասուցեցաւ, որպէսզի անոնք յետոյ Հա-

յաստան զրկուէին հիմնուելիք նախակրթարաններու մէջ պաշտօնա-
վարելու համար:

Նախ 10 փարանոց նուիրատուներ հրապարակ հանեց ընկերու-
թիւնը և յատուկ նամակներով Օրթագիւղ ցրուեց: Երկու պատանի
որդեգրուեցան և զրուեցան Ս. Թարգմանչաց վարժարանը:

Սակայն քիչ յետոյ, Յուլիսին նպատակը փոխուեցաւ. և ձեռ-
նարկուեցաւ ժամ առաջ բանալ Վանայ մէջ վարժարան: Մ. Փոր-
թուգալեան յօժարակամ մեկնեցաւ և Մինաս Չերազ անոր յաջոր-
դեց իրր ատենագեան:

Վանայ Ալիւր գիւղի վարժարանը առաջին նախակրթարանը և-
զաւ որ Արարատեանը բացաւ մայրենի հողին վրայ: Անոր յաջորդե-
ցին ուրիշներ արագօրէն:

Փորթուգալեան սոսու թուրք պատերազմի պատճառով կ'անցնի
կովկաս և կը յաջողի Մտակի խմբագիր Գր. Արծրունին շահագրգռել
Արարատեանի գործով, և բանալ տալ Մտակի մէջ հանդանակութիւն
մը որուն արդիւնքը մեծ ոյժ մը եղաւ Արարատեանի համար:

1881 աշնան կը բացուէր Վանայ մէջ վարժագետանոց մը Փոր-
թուգալեանի տեսութեան տակ:

Յովհ. Շահնազար Դպրոցասէր Արեւելեան ընկերութեան պատ-
ուիրակի պաշտօնէն զարձին Գր. Արծրունիի փափաքով միջնորդ կը
հանդիսանայ երեք կարեւոր ընկերութեանց միութեան որ կը կա-
տարուի 1880 Յունիս 1ին:

150. Հայ Գրական Ընկերութիւն (1876 Նոյեմբեր 1—1878) կազ-
մուած Ղալաթիոյ մէջ նպատակ ունենալով շնորհաբեր սոց. գրա-
կանութեան զարգացման և դիտութեանց ծաւալման, զբաղիտաց և
գիտնականաց երկերը տպելով, և զբական, գիտական, պատմական
հանդէս մը հրատարակելով: Քիչ ժամանակ միայն ապրած: 1878ի
վերջերը կը լուծուի:

151. Արեւելեան Ընկերութիւն (1876—1878) զաւանդուեալ մէջ
ուսում օտարածելու համար կազմուած է քանի մը նոր ընթերցա-
ւարտ պատանիներու կողմէ Օրթագիւղի մէջ: 1878ին միացաւ Դպրո-
ցասիրացի հետ և կազմեց Դպրոցասիրաց Արեւելեան ընկերութիւնը
որ 1880ին Արարատեան և Կիլիկիեան ընկերութեանց հետ կազմեց
Միացեալ Ընկերութիւնը:

152. Ասիական Ընկերութիւն (1877 Յունուար 1 — 1899) կազ-
մուած է զաւանդալիւ վարժարաններու դասօգրքեր հայթայթելու
համար: Հիմնադիրք Յակոբ Ալթուն Տիւրքի, Ռ. Յ. Պէրպէրեան, Պ.
Քէրէսթէճեան, Յ. Պարոնեան, Ե. Տէմիրճիպաշեան եւ այլն: Այս ըն-
կերութիւնը հրատարակած է երկրագունդ հանդէսը:

153. Արուեստներ Ընկերութիւն (1877 Մայիս 1 — ...) կը հաս-
տատուի Խապիւղի մէջ, նպատակ ունենալով Հայաստանի մէջ ար-

ուեսածից զարգացման օժանդակելու 1879ին դեռ կը շարունակուէր: 1881ին յիշուած Մշոյ Ս. Առաքելաց վանքին երկրագործական վարժարանը չի գիտցուել թէ ի՞ր ձեռնարկն է թէ Սամաթիոյ համանուն ընկերութեան:

154. Խիզանու Ուսումնասիրաց Ընկերութիւն (1877—1895) որ նպատակ ունէր զաւառներու մէջ վարժարաններ բանալ Խիզանէն սկսելով: Հիմնադիրն է Վահրամ Մարգարեան: Այս ընկերութեան կողմէ կրթական պաշտօնով Հայաստան գացած է Տրապիզոնցի երիտասարդ մը՝ Յակոբ Մեղաւորեան: Հայկական կուսութիւնը սակայն զաղրած է:

155. Ազգային Մատենադարանի ընկերութիւն (1877 Մարտ 9—1881) կազմուած է Ուսումնական Խորհուրդի նախագահութեամբ: Ազգ. Մատենադարանը բացուած էր 1876ին Ղալաթիոյ եկեղեցւոյ շրջափակին մէջ, և անոր հսկողութիւնը յանձնուած էր օժանդակ խորհուրդի մը 1877 Յունուար 16ին, որուն անդամ էին Յակոբ Արշակ, Սրապիոն Թղիան (Ատենապետ), Օզսէն Խոճասարեան Միհրան Մանուկեան, Արզար Պարտիզպանեան (Ատենաղպիր), Ասոմ Տէրոյեանց, Բարթող Բիւրքճիպաշեան:

1877 Մարտ 31ին «Հրաւէր առ բարեսէր ազգային» խորագրով պաշտօնական հրաւէր մը տպած է մատենադարանին համար: Անդրանիկ սատարողը կը հանդիսանայ Այրի տիկին Ռուսինեան որ իր նորոգ հանգուցեայ ամուսինին գիրքերն այս նորահաստ մատենադարանին կը նուիրէ:

1877 Հոկտ.ին Ուսումնական Խորհուրդը կը կազմէ ազգ. մատենադարանի ընկերութիւնը որուն նախագահն էր Խորէն Արքեպ. Նարպէյ, և ամէնէն գործօն դէմքերը Յակոբ Արշակ, Յովհ. Սազըզ, Թովմաս Թէրզեան, Մկրտիչ Աճէմեան: Մատենադարանի վերառեալն էր Հ. Ստեփան Եաղըճեան, Վենեթիկի Մխիթարեանը:

1878 Ապրիլ 28ին Ուսումնական Խորհուրդը այս մատենադարանին միացուց Գում-գարուի թանգարանը:

Երկար գործունէութիւն չէ ունեցած և մատենադարանը ներքին Ուսումնական Խորհուրդին հսկողութեան յանձնուած է:

156. Հայկազեան Կանառ (1877 Օգոստ.—1878) Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանի Ընկերութենէն ծնունդ առած է 1877 Օգոստոսին: Մեծահանդէս բացումը կը կատարուի 1877 Հոկտ. 23ին:

Հայկազեան կաճառին նպատակն էր հեռագոթել, ամենայն ինչ որ հայութեան անցիւրյն և ներկային կը վերաբերի, այսինքն 1. Հայկազեան լեզու, 2. Գաւառական բարբառներ, 3. Բազմաժանան լեզուազգիտութիւն, 4. Մատենագիտական պատմութիւն, 5. Ազգային պատմութիւն, 6. Հնագիտութիւն, 7. Կին և նոր սովորութիւններ:

8. Դրամագլխուժիւն, 9. Դիցարանուժիւն, 10. Աշխարհագրութիւն, 11. Բնական պատմութիւն, 12. Գիւղարուեստներ:

Երազի մը չափ տեւած է, հազիւ տարի մը հակառակ իր անդամներուն մէջ խորէն եպ. Նարպէյի, Հ. Կղեմէս վրդ. Սեպիլեանի, Հ. Մաղաքիա վրդ. Օրմանեանի, Հ. Եղիշէ վրդ Դաֆթանեանի, Յովհ. քհ. Մկրեանի, Յովհ. քհ. Հիւնքէրպէյէնտեանի, Յովհ. Սաղբղի, Յակոբ Արշակի, Բարսեղ Հալաճեանի, Թովմաս Թէրղեանի, Մկրտիչ Աճէմեանի և այլոց պէս նուիրեալներ ունենալուն:

157. Աղբասաց խնամակալութիւն (1877) Խառգիւղի: Յայտնի նպատակով և նախաժող Աղքատահնամի:

158. Կիլիկեան Բնկերութիւն (1878 Փետր. 18—1880) կը հիմնուի Նուպար Շահնազարեանի սաներէն Կիլիկիոյ հայաբնակ քաղաքներու մէջ ուսում տարածելու համար: Հիմնադիրներն են Մինտո Չերաղ, Յովհ. Արշակունի, Յարութիւն Մոսալչեան, Յովհ. Շնորհքեան, Հրանդ Ասատուր եւ այլն: Ներքէս պատր. մեծապէս քաջալերած է: Այս ընկերութիւնը վարդաբնակ Բնկերութեան վերակազմութիւնն էր, անունի փոփոխութեամբ: Իբր կրթական անուշ Կիլիկիա զրկեցին Սանաւիճեան անուն երիտասարդ մը որ շատ օգտակար եղաւ. տակայն շուտով մեռաւ: 1880ին միացաւ նոյնանպատակ ընկերութիւններու հետ և կազմեց Միացեալը:

159. Դպրոցախիւրաց Բնկերութիւն (1878—...) կազմուած Սամաթիոյ մէջ: Անունէն միայն կրնանք մակարեբել նպատակը: Ուրիշ տեղեկութիւններ չունիմ:

160. Դպրաց Միութիւն (1876—...) Սամաթիա կազմուած նպատակը անծանօթ:

161. Ուսումնաստրած Բնկերութիւն (1878—...) Սկիւտաի Սէլամիէի մէջ կազմուած: Անունը նպատակը կը յատկանշէ:

162. Վարժարանական Բնկերութիւն (1878—...) հաստատած է էյ Մէյտանի Աղգ. վարժարանը (1879) որ 1834ին կը խորհուի Թաղ. Խորհուրդի մը իրաւասութեան ենթարկել: Հաւանօրէն ընկերութիւնը լուծուած էր այդ թուականին: 1883ին դեռ կը գործէ:

163. Ուսումնասիրաց Բնկերութիւն (1879—1881) կազմուած է Պոյաճի-գիւղի մէջ: 1880 Օգոստոս 10ին կնքեալ պայմանագրութեամբ մը Պոյաճի-գիւղի Աղգ. վարժարանը այս ընկերութեան կը յանձնուի, սակայն ընկերութիւնը իր յանձնառութիւնը չի կատարեր, որով պայմանագիրը կը ջնջուի (1881):

164. Արուեստսէր Բնկերութիւն (1879 Հոկտ.—...) կը կազմուի Օրթագիւղի մէջ, 1877 Մայիս 1ին Խառգիւղի մէջ կազմուած նոյն անուն ընկերութեան նմոյշին վրայ, և նոյն նպատակով:

165. Լուսաւորչեան Բնկերութիւնը (1879) կը կազմուի Կ. Պոլսոյ մէջ Տիվրիկի Խոնավուլա գիւղի վարժարանին ի նպաստ:

166. Կրթասիրաց Բնկերութիւն Ակիւսարու (1879—1883) որ նպատակ ունէր լսարան և մատենադարան հաստատել Ակիւսարի մէջ: Մատենադարանին բացման առթիւ, «Բնքերցանութեան» վրայ բանաստեղծութիւն մը ըրած է Տօքթ. Վահրամ Թորգոմեան, Հոն խօսած է 1879 Մայիս 26ին Օրմանեան «Հայութեան հոգին» որ ընկերութեան ծախքով առանձին պրակի վերածուած է:

167. Ազգանուէր Հայուհեաց Բնկերութիւն (1879 Ապրիլ—1895) իգական սեռէ անդամներէ բաղկացած: Նպատակ զաւանդներու մէջ հայ իգական սեռի զարգացման նպատակ. հիմնադիր Տիկին Զ. Խանճեան և իր աղջիկը Օր. Զապէլ (յետոյ Տիկ. Զ. Ասատուր) եւ այլն:

1895ին դադրած Համրտեան ութամի խստութեանց հետեանօք:

1908ի Օսմ. Սահմանադրութեան վաղորդայնին վերակազմուած Տիկին Անայիսի, Տիկին Սիպիլի, Տիկին Թէոդիկի, Տիկին Գալէմքեարեանի և այլոց նախաձեռնութեամբ:

1915ին ընդհ. պատերազմին կը դադրի կրկին

168. Գարոցասիրաց Տիկնանց Բնկերութիւն (1879 Մայիս 1—1896) նոյնպէս իգական սեռէ կազմուած, նպատակ՝ վարժուհիներ հասցնել գաւառական վարժարաններու համար:

Հիմնադիրներ Տիկին Սրբուհի Տիւսար, Տիկին Զայեան, Օր. Թ. Պալթաղարեան, Տիկ. Արմաւենի Մինասեան եւ այլն:

1908ին վերակազմուած: Ցարդ կը գործէ: 1923ին իր վարժուհիները Սելանիկ և 1924ին Մարսիլիա փոխադրեց և անկէ Բարկղ ուր է հիմա:

169. Համազասպեան Բնկերութիւն (1879) Գատը գիւղի մէջ կը հիմնուի եւ Ալէքսիասի խանի մէջ կը հաստատէ Լնթերցարան մը և գրատուն մը:

170. Արամեան Գրասիրաց Բնկերութիւն (1879) կազմուած է Գում-գարուի մէջ: Անունը բաւական յատկանշանական է լուսարանելու համար իր նպատակը սակայն գործերը երբեք չեն յիշուած:

171. «Նղբայրասե» Բնկերութիւն կը հաստատուի Բաղէշի Դուլթիկ գիւղի մէջ վարժարան մը հաստատելու համար:

172. Մեարոպեան Բնկերութիւն (1879) Կ. Պոլսոյ մէջ կը կազմուի Զարսանճաքի զպրոցներուն ի նպատակ: Ընկերութեան հիմնադիրներէն մին էր Մելքոն Գիւրճեան որ անոր ընդհ. ժողովին ատենապետը եղած է:

173. Լուսինեան Բնկերութիւն (1879) կազմուած է ի նպատակ հետարիոյ էֆքէրէ վարժարանին:

174. Աղբասախնամ Բնկերութիւն Պալասու (1879) Թաղին աղքատ հիւանդներուն՝ բժիշկ, դեղ, և սնունդ հալթայթիւլու նպատակով: կը շարունակուի դեռ:

175. Միացեալ Բնկերութիւն (1880 Յունիս 1—1896) կազմուած

181. Սամարիոյ պարգասէր Հայունեաց Ընկերութիւն (1880) կազմուած է կանանց մէջ պարզասիրութիւնը զարգացնելու համար:

182. Հայ Կրթական Միութիւն (1880 Յունվ. 1—...) կը կազմուէի Բերա ատենագետութեամբ Խաչիկ Պիւլպիւլեանի: Նպատակ թաղին զպրոցներուն հոգ տանել և անոնց պիւտճէն հաւասարակշռել: Աղքատ ուսանողներու պաշտպանութիւնը ստանձնել: Կիրակնօրեայ և զիշերային դասեր տալ, զբարարան և լսարան հաստատել:

183. Ներսէսեան Ընկերութիւն Սամարիոյ ԵՆԻ Սահալլէի մէջ կազմուած է (1881) տեղւոյն վարժարանին նպաստելու և չքսւոր աշակերտաց օգնելու նպատակով:

184. Նպաստամատոյց Ընկերութիւն Սկիւսարի Նոր քաղի (1881—1883) որ նպատակ ունի տեղական երկսեռ վարժարանին աղքատիկ ուսանողաց ուսումնական պիտոյից օժանդակել: 1883ին դեռ կը գործէ:

185. Թորգոմեան Ընկերութիւն (1881 Յունիս) կը հաստատուի Բերայի մէջ Արուեստատուն մը հաստատելու նպատակով:

186. Գում-Գաբուի Օժանդակ Ընկերութիւն (1881) անյայտ իր կեանքով և գործով, ինչպէս նաև նպատակով:

187. Ընթերցասիրաց Ընկերութիւն Խասգիւլի 1882—1883), աղքատ աղոց բարձրագոյն ուսում տալու հոգը ստանձնելու նպատակով: 1858ին արդէն կար հոն նոյն անունով (տես վերը):

188. Գպրաց դաս Նարլը-Գաբուի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ (1882) որ կը շարունակուէի ցարդ:

189. Մանկասիրական Ընկերութիւն Զմեկաձագի Սիւնայ գիւղի: (...—...) որ նպատակ ունէր յիշեալ գիւղին մէջ երկսեռ վարժարան մը հաստատել: 1883էն առաջ պէտք է հիմնուած ըլլայ, զի նոյն թուականին կը յիշուէ իբր գործի վրայ: Ուրիշ տեղեկութիւն չունինք:

190. Լուսաբեր Ընկերութիւն Սեբասիոյ (...1883—...) որուն նպատակն էր Սեբասիոյ աղքային երկսեռ վարժարաններու մէջ գտնուող ուսանողներու զպրոցական պէտքերն հայթայթել: 1883ին գործունէութեան մէջ է:

191. Մամիկոնեան Ընկերութիւն Սեբասիոյ Բրաբերդ գիւղի (...1883...) յիշեալ գիւղին մէջ կանոնաւոր վարժարան մը հաստատելու նպատակով կազմուած Ուսում, Խորհուրդէն վաւերացեալ ընկերութիւն:

192. Լեւոնեան Ընկերութիւն Սեբասիոյ Ուլազ գիւղի (...1883...) այս գիւղին ազգ. վարժարանը նիւթապէս և բարոյապէս խնամարկելու համար:

193. Վարազայ Սանուց Ընկ. (...1883...) Ակնայ Ապուլիս-Չերազ գիւղի մէջ աղջիկներու վարժարան մը հաստատելու նպատակաւ:

194. Համագրային Հայկազեան Ընկերութիւն Տիգրանակերտի (...)

1883...) որուն նպատակն էր Տիգրանակերտի մէջ հայ վարժարան մը հաստատել:

195. Հայկազեան Ընկերութիւն Զմրեկածագի (...1883...) նոյն քաղաքին մէջ երկրորդական վարժարան մը հաստատելու նպատակով:

196. Դպրոցասէր Ընկերութիւն Էյուպի (...1883...) որ նպատակ ունէր Ս. Աստուածածին Թաղի երկսեռ վարժարաններու կրթութեան հոգ տանել: 1883ին կը շարունակուէր տակաւին:

197. Բարեսիրաց Ընկերութիւն Սայմաքոմուքի (...1883...) որ նպատակ ունէր Գարակէօմբիւքի և Սայմաթոմուքի միացեալ վարժարաններուն կարօտ աղաքները դաստիարակել:

198. Ուսումնասիրաց Ընկերութիւն Կեսարիոյ Թալաս գիւղի (...1883...) որ նպատակ ունէր Թալասի մէջ երկսեռ վարժարան հաստատել:

199. Գրասիրաց Ընկերութիւն Պալասու (1883—...) որուն նպատակն էր՝ ազգ. գրականութեան զարգացման աշխատել:

200. Ռուբինեան Ընկերութիւն (1883) Կեսարիոյ Էվէրէկ գիւղի դպրոցներուն նպատակու համար:

201. «Հիմնադրական Ժողով» Եւզոկիոյ (1883—...) մասնաւոր վարժարան մը բանալու նպատակով:

202. Ուսումնասիրաց Ընկ. (1883—...) կազմուած Ֆէրիզիւղի վարժարանին նպատակու համար:

203. Մեսրոպեան Ընկ. (1883—...) Կեսարիոյ Էֆքէրէ գիւղին մէջ դպրոց մը կը բանայ նոյն տարին:

204. Ներսէս Վարժապետեան Ընկ (1884—1886) մեծանուն պատրիարքին մահէն յետոյ կազմուած անոր յիշատակին բարձրագոյն վարժարան մը հաստատելու համար: Ղալաթիոյ Կեղրոնական վարժարանը այս ընկերութեան նախաձեռնութեան արդիւնքն է:

205. Խնամակալուհեաց Ընկերութիւն Ներսէսեան վարժարանի (1884) Խապիւղի աղքատ աշակերտներու պէտքը հոգալու նպատակով կազմուած:

206. Դպրաց Ընկ. Եեցի Գաբուի (1884) նպատակը որոշ է:

207. Գրասիրաց Ընկ. (1884) կը հիմնուի Պէշիկթաշի մէջ:

207. Տարոնեան Ընկ. (1884—...) Ղալաթիոյ մէջ կազմուած որ միայն 2—3 տարի կեանք ունեցած է:

208. Ս. Սահակեան Ընկերութիւն Սամաթիոյ (...1884—...) որ նպատակ ունէր ժողովրդական թանգարան, լսարան հաստատելու և մասնաւոր հրատարակութիւններ ընելու:

209. Աղասասիրաց Ընկ. (1885—...) Խապիւղի որ յետոյ աղքատախնամի վերածուած է:

210. Մաքրուհեան Ուսումնական Ընկ. Պեթիկրասու, (1886 Յունիս 15—...) նպատակը անյայտ, հաւանօրէն Մաքրուհեան վարժարանի օ-

ժանդակող մարմին մըն է: Հրատարակուած են իր Ա. Բ. Գ. տարե-
չըրջաններու տեղեկագիրները որմէ կը հասկցուի թէ մինչև 1889—
1890 կը շարունակուէր:

211. Աղբաւաստեր Ընկ. Գում-Գաբուի չորից Մլացեալ քաղից
(1886 Մայիս 1—1915): Գում-Գարուի, Կէտիկ փաշայի, Եէնի-Գա-
բուի, Գում-Գարուի դուրսի շրտ թաղերու աղքատ հիւանդներու ձրի
բժիշկ, դեղ և սնունդ տալու նպատակով կազմուած է: 1915ին կազ-
մալուծուած:

212. Արեւելեան Տնեսական Միութիւն (1886 Մարտ 9 — 1890...)
Նախաձեռնութեամբ Յակոբ Արշակի: Նպատակն էր Եէտի-Գում-Գաբուի
դուրս գտնուող Երուսաղէմայական հողին վրայ զիւղ մը շինել,
ամսավճարներով հողին վաճառուածը ապահովելով: Ընկերութիւնը
1886—89 հրատարակած է իբր օրգան Տնեսա անունով հանդէս մը:

213. Բարեգործական Ընկերութիւն (1887—1890) բրուն նպա-
տակն էր ձրիավարժ ուսանողներու գրեհական պիտոյք և հանգիւր-
ձեղէն հայթայթել: 1890ին կը լուծուի:

214 Բարեգործ Տիկնացի Խնամակալութիւն 1887—1891), որ աղ-
քատ աղջիկներու և որբնայրիներու գործ հաթայթելու համար աշ-
խատանոց մը կը հաստատէ Բերա Նարեկեան վարժարանի մէջ: Յետոյ
իրեն կը յանձնուի նաև թաղին աղքատայնամ գործը:

215. Աղբաւաստեր Ընկ. Սամարիոյ երից քաղից (1888 փետ. 1...)
որոշ նպատակով կազմուած՝ նման մարմիններու օրինակով, Սուլու
Մանասթըր, Եէնի մահալէ և Նարլը-դարու երեք թաղերուն համար:

216. Աղբաւաստեր Բերայի (1895 Նոյեմ. 19 — ...) ցարդ կը տնէ:

217. Աղբաւաստեր Ընկ. Գարակեօմբիւկի (1896—1900) որ ձրի
բժիշկ և դեղ կը հայթայթէր աղքատ հիւանդներուն: 1900ին Ա. Յով: Սակեբերան եկեղեցին երրայրեցաւ թաղային կազմակերպութեան ս,
ձիւղն այ դադարեցաւ:

218. Գարաց դաս Մաբրիէոյի Ա. Ասուածաձիկ եկեղեցոյ (1897),
ծանօթ նպատակով:

219. Գարաց դաս Կեսիկ վաւայի Ա. Յովհաննէս եկեղեցոյ
(1898—...), նոյնպէս:

220. Գարաց դաս Գում Գաբուի դուրսի Ա. Յարութիւն եկեղեցոյ
(1902—...) նոյնպէս: Թէև ասկէ առաջ այ (1894) գանուած է նոր ե-
կեղեցոյ մէջ դարաց դաս սակայն առանց կանոնաւոր կազմակեր-
պութեան:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՈՆՑ ՄԻԱՅՆ ԱԼՈՒՆՆԵՐԸ ՅԻՇՈՒՍԾ ԵՆ
Ա Ն Թ Ո Ւ Ա Կ Ա Ն

221. Ընթերցասիրաց Ընկերութիւն Գարակեօմբիւկի, թանգարան
մը հիմնած է:

222. Ընթերցասիրաց Ընկ. Լանկայի, թանգարան մը հիմնած է:
Հաւանօրէն նոյնը թ. 36ի հետ:

223. Ժողովրդասիրաց Ընկ. կազմուած է Խոսովիւղի մէջ, 1870-
ական թուականներուն լարան մը հաստատած է:

224. Տանաբեան Բնկ. կաղմուած է Գում դարուի մէջ, միայն անուանով ծանօթ:

225. Հայկեան Բնկ. զարձեալ Գում Գարուի մէջ: Անծանօթ իր գործով և կեանքով:

226. Երեսնից Բնկերութիւն, Գում-գարուի մէջ կաղմուած, անծանօթ նպատակով և կեանքով:

227. Խնայողական Բնկ. Գում-գարուի, անուանէն միայն գուշակել նպատակը, որուն ինչ միջոցներով հասնիլ ծրագրուած էր չենք գիտեր: 1862ին կը յիշուի այս անուանով ընկերութիւն մը առանց տեղը յիշուելու:

228. Եղբարք Գրավաճառութեան Բնկերութիւնը (թերևս 1870էն առաջ) հիմնուած է զրազճառութիւնը բարձրացնելու նպատակով, նախաձեռնութեամբ Յարութիւն Մարգարեանի († 1878 Մարտ 1):

229. Ուսումնասիրաց Բնկ. Ղալաթիոյ մէջ կաղմուած: Նպատակը և գործունէութեան ժամանակը անծանօթ:

230. Հայկեասիրաց Բնկերութիւն, նոյնպէս Ղալաթիա կաղմուած: Նպատակը և գործունէութեան շրջանը կարելի չեղաւ ճշդել:

231. Եղբայրական Բնկերութիւն, նոյնպէս Ղալաթիա կաղմուած: Իր մասին ուրիշ տեղեկութիւն չունի:

232. Օճանդակ Բնկերութիւն, նոյնպէս Ղալաթիա, հասանօրէն զպրոցին նպատակու համար:

Երեքն ալ Պէյոզլուի մէջ կաղմուած թերևս տեղւոյն զըզրոցին օգնելու նպատակով, և հաւանօրէն 1859ին հոն կաղմուած Բարեսիրականին ձևափոխութիւնները:

- 233. Գպրոցաւեր Բնկ.
- 234. Գպրոցախնամ Բնկ.
- 235. Տիկնաց Խնամակալութիւն

{

Ընկերութիւններ Սկիւտար

Եէնի Մահալէ թաղին մէջ,

առանց ճշդուած ըլլալու իրենց գործունէութեան ժամանակը:

- 336. Գպրոցաւեր
- 237. Աղբասաւեր
- 238. Ուսումնական
- 239. Խնայողական

- 240. Սանուց Բնկերութիւն
- 241. Սանուհեաց »
- 242. Առեւտրական »
- 243. Խնայողական »
- 244. Երաժշտասիրական Բնկ.
- 245. Աղբասախնամ Բնկ. Պէտիկբաշի, կաղմուած թուականը ինծի անծանօթ:

{

Սկիւտար Ս. Խաչ թաղի մէջ

կաղմուած իբր թէ անծանօթ թէ ո՞ր թուին:

246. Աղբասախնամ Բնկերութիւն Գասրգիւղի, նոյնպէս: ԱՐՇԱԿ Ա.ՊՕՅԱՃԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ա Մ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ր Ա Յ

Արհեստ մը որքան ալ դիւրին երեւայ, անկարելի է գործել առանց փորձառութիւն ունենալու:

Վանառականութիւնն ալ արհեստ մըն է: Սակայն ամէն գործ անպատեհառ ծան չ'արտադրեք, երբեմն վնասաբեր ալ կ'ըլլայ: Հետեւաբար գործի ձեռնարկելէ առաջ, պէտք է սորված ըլլալ այդ նիւրից գլխաւոր սկզբունքները:

Մ Ա Ս Ն Ա.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ա Մ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ր Ռ Ի Ե Ս Տ Ը

Լիոնի Առեւտրական Բարձրագոյն վարժարանի բրոֆէսոր և նոյն քաղաքի Առեւտրական դատարանի քննիչ հաշուակալ, Մ. Ժ. Մարչալ, 1900 թուականին կը գրէր հետեւեալը. —

«Վաճառականութիւնը հետզհետէ կը միտի իր սեփական կարեւոր տեղը գրաւել ազգաց մէջ. այսօր ամէն երկրի մէջ բազմաթիւ անձեր վաճառականութեամբ կը պարապին. անոր մատուցած ծառայութիւնը մեծ է և ամէն ոք կ'օգտուի անկից. անիկա ոչ միայն ժողովուրդին այլ նաև նոյն երկրի զարգացման և հարստացման պատճառ կ'ըլլայ: Ազգ մը որքան ուժ սոյն վաճառականութեան՝ նոյնքան հարուստ կ'ըլլայ: Հաղորդակցութեանց միջոցներուն հետզհետէ աւելնալովը, ճարտարարուեստը կը զարգանայ և պատճառ կ'ըլլայ մեծ մրցումի. շահերը հետզհետէ կը սահմանափակուին և կը քիչնան: Այն որ սխալ քայլեր կ'առնէ, ետ կը մնայ:

Այս տնտեսական բուռն պայքարին մէջ պատուաւոր և շահաւոր տեղ մը գրաւելու համար, արուեստին կատարեալ զիտակցութիւնը ունենալու է, որուն համար շատ բաներ անհրաժեշտ են. — Ծանօթութիւն ապր սնքներու մասին, արտադրութեան տեղերուն վրայ, փոխադրութեան, վաճառման եղանակներուն ու զիւրութիւններուն վրայ, գնողներուն տրուելիք պայմանաժամերուն, վարկերո ն, դրամատուներու պայմաններուն և ի մի բան՝ առեւտրական, հաշուակալութեան և թղթակցութեան վրայ: Վաճառական մը անշուշտ շաբան կը սորվի գործնականին մէջ, ինչ որ ժամանակին բաւական կը

համարուէր, բայց հիմա անբաւական է: Կառավարութիւնները լաւ ըմբռնած են այս կէտը. Յրանսա, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Զուիցերիա և Միացեալ Նահանգներն առեւտրական բարձրագոյն վարժարաններ հիմնած են ուրապագայ վաճառականութիւնը տեսականօրէն կ'աւանդուի, ինչ որ յետոյ ուսանողը պիտի կատարելագործէ գործնականին մէջ:

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆ ՈՒ ԴԵՐԸ

Ըստ օրինի վաճառական կը կոչուին անոնք՝ որ կը զբաղին առեւտրորով: Վաճառականութեան նպատակն է, անդրոյն պէտքին համաձայն այլեայլ երկիրներէ ներածել, համախմբել, և պէտք ունեցողներուն բաժնել: Ծարտարարուեստին ու վաճառականութեան անջատումը աշխատութեան բւժանման մէկ հետեանքն է, վաճառականութիւնը զրամագլուխները շրջաբերութեան կը հանէ, իր բերած մեծաքանակ ապրանքները կը ծախէ հրապարակին վրայ մանրաքանակ խանութպաններու, անոնք ալ՝ ուղղակի սպառող ժողովուրդին: Վաճառականութիւնը ունի արտադրողներ և սպառողներ, առաջինները կը պատրաստեն ապրանքները և կը ծախեն վաճառականներուն: Վաճառականութիւնը ժողովուրդները իրարու կը միացնէ. անիկա ազդեթիւն չունի. նոյնիսկ թշնամութեանց վերջ կու տայ և աշխարհի ամէն կողմը համերաշխութիւն կը հաստատէ:

Եթէ վաճառական մը իր հաշիւներուն մէջ սխալի, կոտուած է, իսկ եթէ գիտակցութեամբ և տրամարանօրէն գործէ, կը շահի:

ԳՐԱԳՐԻՆ ՊԱՇՏՕՆԸ ԵՒ ԹՂԹԱԿՅԵՒՈՒ ԱՐՈՒԵՍԱԸ

Լուծվիկ Հուպէրթ, Լայցիկի Առեւտրական Ակադեմիոյ պաշտօնաթերթին մէջ հետեւեալ յոյժ շահեկան տեսութիւնը կ'ընէ առեւտրական թղթակցութեանց մասին.—

«Առեւտրական նամակի մը խմբագրութիւնը բոլորովին տարբեր է: Շատ անգամ փորձած եմ առեւտրական նամակներու պայմանագրական ոճը հաշտեցնել լեզուին ներդաշնակութեան և իրողութիւններու ճշգրտութեան հետ. բայց ջանքերս ապարդիւն քննաքննած են միշտ և պարտաւորուած եմ ուսուցիկ պարբերութիւններով, քաղաքավարական ձեւակերպութիւններով գաղափարս յայտնել սակայն պէտք է գիտնալ թէ պարզ գաղափարներ յայտնելու համար զարգարուն բառերու, ուսուցիկ ասութիւններու պէտք չկայ. ասիկա աններելի իմաստակութիւն մը կ'ըլլայ:

Նամակագրութեան ոճը պարզ ըլլալու է. ի՞նչ յաճախորդին կամ հայթայթիչին զրելու է ա՛յն՝ ինչ որ պէտք է: Անկէ գառ երբեմն կը պատահի որ վաճառականը պէտք կ'ունենայ մենաշնորհի մը, նուա-

զուրդի մը համար թղթակցիլ պաշտօնատուներու հետ և կամ տեղեկազիրներ տալ ելմտական և տնտեսական հարցերու մասին, այս պարագային պէտք է տարբեր ոճ մը գործածել և նոյնիսկ իրաւագէտի մը հետ խորհրդակցիլ»:

* Գրագիր մը երկրին պետական լեզուէն զաւարտաւոր է գիտնալ^{**} և բուսական մի քանի լեզուներ: Զուլցերիոյ մէջ երեք լեզու գիտնալը անհրաժեշտ է այն ամէն երիտասարդներուն համար որոնք կ'ուզեն առևտրական կամ ճարտարարուեստական տան մը և կամ զբամաստան մէջ գրագրի պաշտօն ստանձնել:

Առևտրական տան մը գրագիրն աւելի ղոճաւոր պաշտօն մը կը կատարէ քան հաշուակալը և աւելի փափուկ՝ քան ուղեւոր պաշտօնեան. որովհետեւ անհրաժեշտ է որ ան տեղեակ ըլլայ վաճառատան բոլոր ներքին գործառնութիւններուն, անիկա պայծառ և ճարտուկ միտք մը ունենալու է յաճախորդին բնութեան համեմատ պատշաճ ոճը գործածելու: Ներկայիս, որ մեծ մրցում կայ վաճառակաւութեան մէջ, գրագիր մը պարտաւորուած է թափել իր բոլոր մտաւորական կարողութիւնը, վաճառատան շահերը հաշտեցնելու համար յաջխորդաց պահանջումներուն հետ. գործի նամակները պէտք է գրել ընթեռնելի զիրով. գեղեցիկ զիրը մեծ արտաւորութիւն կը գործէ ընթերցողին վրայ. եթէ նամակ մը հաճելի թուի, նպաստաւոր արդիւնք մը կրնայ տալ զայն զրկող վաճառականին համար:

* Այս առթիւ յիշենք նաև որ գրի մեքենաները մեծ ծառայութիւն կը մատուցանեն իրենց յստակ ու արագ արտագրութեամբ. սակայն ոմանք կը հակառակին այս նորութեան, որուն գործնական օգտակարութիւնը անվիճելի է: Գրագրի մը տեղ կ'ունենանք ճարտար արհեստաւոր մը, հասարակ ընդօրինակիչ մը, հայելի մը՝ որ իրեն ներկայացուած պատկերը կը ցոլացնէ: Մեքենայով գրուած նամակները անանուն նկարագիր մը ունին, ինչ որ համակրութիւն չի ներշնչեր, մինչդեռ ձեռագիր նամակները, զրոյի նախաւորութիւնը, նկարագիրը և ծանօթ զէմքերու յիշատակը կ'արթնցնեն:

* Թղթատարական քարթերու գործածութեան մէջ գրագիրը պարտաւոր է մեծ խոհեմութեամբ շարժիլ և գաղտնապահութեան, պատշաճութեան ու քաղաքավարութեան լկրուէնքները յարգել: Պէտք է նկատել ունենալ թէ ինչ անպատեհութիւններ կրնան ծագիլ, թղթատարական քարթերու անխոհեմ գործածութենէն»:

Նմանապէս երբ անծանօթ մէկուն նամակ գրուի, պէտք է պատասխանին համար զբոյժակը պահարանին մէջ դնել, որովհետեւ զի մայր անձը պարտաւոր չէ անոր նամակին զբամբ վճարելու, եթէ նամակը օտար երկիր մը զրկէ, պէտք է թղթատարական վարչութիւնէն գնել կրնա մը որ բոլոր երկիրներու մէջ կ'անցնի:

Հ Ա Շ Ո Ւ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հաշուակալութիւնը գիտութիւն մըն է: Տոմարակալ մը վաճառատան բոլոր գործառնութիւնները գրի կ'առնէ, կը դաւաւորէ գրութիւնները, կը հակակոչէ անկէ հետեւութիւն մը հանելու համար: Հաշուակալութիւնը հիմնուած է ըս ցորձակ կանոններու և փորձառութիւններու վրայ և ոչ թէ սկզբունքներու. անկէա աշտութիւն չի վերցնէր: Հաշուակալ կամ տոմարակալ չի համարուիր այն պաշտօնեան որ տետրակին մէջ միայն կ'ընդօրինակէ մտից և ելից հաշիւները, օրհաշիւը մայր հաշիւը եւայլն: Տոմարակալը այն է որ կրնայ հաշիւները բռնել իր տեղին համեմատ. կը հակակոչէ, կը դաւաւորէ, հաշուեկշիւը կը պատրաստէ, շահու կամ վնասի աղբիւրը կը հետադօտէ, արդիւնք մը կը հանէ և անոր պատճառները կը ցուցադրէ:

Հաշուակալութիւնը ցոյց կու տայ վաճառատան մը ճշգրիտ կացութիւնը, անոր գոյքն ու պարտքը, շահն ու վնասը. ան պիտի ցոյց տայ թէ ո՞ր բանը լաւ մտածուած է. պիտի մատնանչէ յոռի շահագիտութիւնները, սխալ ուղղութիւնները եւայլն: Հաշուակալը վաճառատան մը առաջնորդը, կողմնացոյցն է: Կան վաճառականներ որոնք տետրակներու կարեւորութիւն չեն ընծայեր, սակայն հիմա պարտաւորիչ է ո՛չ միայն յաջ կառավարութեան այլև իրեն օգտին համար: Բաթրօնի մը համար հաշիւ զիտնալը անհրաժեշտ է, սակայն շատերը չզիտնալուն պէտք է ընտրեն իրենց համար հաւատարիմ հաշուակալ մը՝ որուն վստահուած ըլլայ ամէն ինչ:

Հ Ա Շ Ո Ւ Ա Կ Ա Ն Մ Ե Ք Ե Ն Ա Յ

Բացի գրի մեքենայէն հաշուական մեքենայ ևս հնարուած է, որ անսովոր արագութեամբ և բացարձակ ճշտութեամբ կը կատարէ թուաբանական չորս գործողութիւնները և կը զանէ քառակուսի արմատները: Հոս աւելորդ կը համարենք մեքենային հաշուելու եղանակին մասին մանրամասնութեանց մէջ մտնել: Սիւայն սաչափը ըսենք թէ այս օգտակար մեքենային գործածութեան եզանակը քանի մը վայրկեանի մէջ կարելի է սորվիլ: Մէկ երկու ժամուան վարժութենէն յետոյ մարդ կրնայ այս մեքենայով ամենաճարտար հաշուակալի մը պէս հաշուել առանց յոգնութեան, կը բաւէ որ պարզ թիւ գրել զիտնայ: Բաժանումի գործողութեանց մէջ քանորդն ու մնացորդը ճշտապէս ցոյց կու տայ. այս հաշուական մեքենան կոչուած է մեծ ծառայութիւն մատուցանելու վաճառականներուն և զրամատէրերուն:

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ր Գ

Գործի մը յաջողութիւնը կախում ունի վաճառողէն. ամէն բանէ առաջ պէտք է գիտնալ գործին բնոյթը և ունենալ նախնական

ծանօթութիւններ. միայն ապրանքին գինը գիտնալ բաւական չէ. պէտք է գոհացնել յաջախորդին պահանջքը: Ամէն առաւօտ երբ խանութէն ներս կը մտնէք, պէտք է աչքէ անցնէք բոլոր ապրանքները, շփէք, տեղափոխէք, երբ ապրանք մը երկար ատեն չէ ծախուած ուրիշ տեղ մը փոխադրելու է, փոշիները մաքրելու և լաւ տեղաւորելու է: Յաճախորդը երբ բան մը ուզէ անմիջապէս ցոյց տալ, գիները որոշ գիտնալ և ոչ թէ տետրակը բանալ և ընդերկար փնտռել: Ազատ ձգելու է յաճախորդը որ իր գիացածը խօսի: Եթէ անոր ըսածը ճշմարտութեան հակառակ ալ ըլլայ, այնպէս մը ձեռքուցէք թէ իր ըսածին կը հաւատաք:

Յաճախորդ մը երբ դուռնէն ներս մտնէ անմիջապէս ժպիտով դիմաւորելու է. մարդուն բնութեան համեմատ խօսելու է և ցանալու է հաճոյակատար ըլլալ: Նախ պէտք է հին ապրանքները ծախելու ջանալ և աստիճանաբար նորերը ցոյց տալ, ոչ թէ միայն աման, այլ լաւ ապրանք ծախելով յաճախորդ կարելի է շահիլ. սակարկութենէն աւելի ապրանքին յատկութեան վրայ խօսիլ:

Լաւ վաճառորդ ըլլալու համար լաւ ալ գնորդ ըլլալու է. աման և հաշիւով գնուած ապրանք մը աւելի շատ կը ծախուի: Յիշելու է միշտ թէ այաճախորդ մը պարագայ դուրս հանելը լաւ գաղափար չի տար զործունէութեանդ մասին» կ'ըսէ գերման հեղինակ մը:

Յաճախորդներ կան որոնք շատ խօսելէ չեն ախորժիբ, ոմանք ալ շատախօսութիւնը կը սիրեն. վերջապէս ամէն յաճախորդի բնաւորութիւնը լաւ ուսումնասիրելու է: Եթէ առաջին անգամ գնում մը չըբաւ, նեղանալու չէ, երկրորդ անգամ գալուն կ'ընէ:

Ռէքլամն ալ մեծ աղղեցութիւն կ'ընէ վաճառատան մը առեւտուրին վրայ: Առէ՛ք ամերիկեան թերթերը և հոն պիտի տեսնէք թէ ի՞նչ տեսակ նորահնար ծանուցումներ կ'ընեն և որքան մեծ գումարներ կը ծախսեն ռէքլամի համար, ճշմարիտ է թէ հրապարակումը, ծանուցումը ամէն ձեւերու տակ մեծ դեր կը կատարեն առեւտրական կեանքի մէջ:

Գ Ր Ա Մ Ա Գ Լ Ո Ի Խ

Մարդու մը պէտքերը գոհացնելու համար ստեղծուած ամէն ինչ դրամագլուխ մըն է: Առանց դրամագլուխի ուէ զործ չէ կարելի է ընել:

Դրամագլուխը երկու տեսակ է. հաստատուն և Եարժուց:

Հաստատուն դրամագլուխ է ամէն ինչ որ իր ինքնութիւնը չի կորսնցնել, ինչպէ՛ս՝ հանքերը, հողը, շէնքերը, մեքենաները, գործիքները, նաւերը, շահագործելու ծառայող կենդանիները եւ այլն, իսկ Եարժուց են նախանիւթերը, ապրանքը, դրամը որոնք զործածուելով շահ մը կ'արտադրեն, իսկ եթէ անոնք մնան իրենց նախնական վիճակին մէջ ո՛րէ՛ օգուտ չեն ունենար մարդկութեան:

Հին ատեն գործիք մը շինելու համար, մարդ պէտք ունէր նախական նիւթի մը, որով կը շինէր իրեն համար պէտք եղած գործիքները և կը շահագործէր: Այսօր այդ գործիքները կառարելագործուելով մեծ արդիւնքներ կու տան, այսպէսով կ'աւելցուի հաստատուն դրամաչլուելը և կը նուազի շարժուն դրամաչլուելը: Ամէն զիւտի նպատակն է շարժուն դրամաչլուելներու պատուով նուազեցնել և աւելցնել հաստատուն դրամաչլուելի գումարը: Նախնական նիւթերը կը գործածուէին բան մը արտադրելու և յետոյ դրամի վերածելու համար: Արհեստաւորը այդ դրամով գործիք պիտի գնէ, առարկաներ պիտի շինէ, ծախէ և իրեն համար դրամաչլուել կազմէ:

Մարդն ալ հաստատուն դրամաչլուել մըն է, միայն թէ անոր առաւելութիւնը անոր մէջ կը կայանայ որ ան իր խելով կրնայ ամէն ինչ կառարելագործել և մեծ ծառայութիւն մատուցանել մարդկութեան: Գործիքներու կատարելագործումը հօգ միջոց մըն է մարդուն արժեք բարձրացնելու: Կեանքար դրամաչլուելը չէ միայն որ այդ շահը առաջ կը բերէ, այլ ձեռնարկող մարդն է որ շահ կ'արտադրէ: Գործի մը մէջ դրամաչլուել գնելով անպատճառ շահ առաջ չի գար. գործի մը շահ արտադրելը մարդուն շահագործելու կարողութենէն կ'ախուսմ ունի:

Տնտեսական բացարձակ օրէնքի մը համաձայն պիտի դրամաչլուելները միշտ տեղի կու տան մեծերուն. վաճառականութիւնը ազատ ըլլալով ո՛չ ոք իրաւունք ունի ուրիշի մը ըսել որպէսզի իր գործաւնութիւնները չափաւորէ, փոքրիկ դրամաչլուել ունեցողներուն չվնասելու համար: Օրէնքով ասիկա չ'արգիւտել: Մեծ դրամաչլուել ունեցողը նոյնիսկ ի վնաս իր մրցակցին պակաս գնով կը ծախէ իր ապրանքը, միւսը փճացնելու համար. գուցէ ասիկա զեղծում մըն է. սակայն և ոչ մէկ երկրի օրէնքը կրնայ արգիւել զայն:

Մեծ դրամաչլուել ունեցող վաճառականները իրենց պէտք ունենալիք ապրանքները կը գնեն մեծաքանակ, ուղղակի աղբիւրէն աւելի ատան. սէնթիքանհր կը կաղմեն, ո՛րէ ասպրանք իրենց համար միայն անկաժե կ'ընեն և այսպէսով կը տիրեն հրապարակին. մինչ փոքրաքանակ վաճառական մը այս առաւելութիւնները ունենալու միջոցներէն գուրկ է: Ասոր համար միակ միջոց մը կայ. փոքրաքանակ վաճառականներ պէտք է միանան և կաղմեն զօմանիք և կամ ֆօքթրաքիլ ընկերութիւններ և անանկով զօրացնեն իրենց դրամաչլուելը, մրցելու համար մեծ դրամատէրներու հետ:

Գ Ր Ա Մ Ա Տ Ո Ի Ն

Պանք տը ֆրանսի նախկին դեր-տնօրէն Մ. Կօթիէ Encyclopedie de Droit անուն իր հեղինակութեան մէջ դրամատան մասին կը գրէ. «Պանքա բառը ընդհանուր կերպով կը նշանակէ առեւտուր մը որ կը

կայանայ ուրիշի մը հաշուոյն գանձումներ, վճարումներ, փոխառու-
ութիւն ընելու, փոխանակադիրէլը, ճարտարուեստական ձեռնար-
կութեանց բաժնեթուղթեր գնելու և վաճառելու մէջ: Սակայն և
այնպէս ներկայիս զրամատան մը գործառնութիւնները Մ. Կոթիկի
ցոյց տուած սահմանը կ'անցնին:

Միջին դարու մէջ զրամի փոխանակութիւնը մեծ անդ կը բռնէր.
այն ատեն իսկ զրամատուններու առևտրական գործառնութիւնն էր
չատ ընդարձակ էին. Վենետիկցի վաճառականներ՝ որոնք կառավար-
ութեան փոխառութիւն կ'ընէին, փոխարէն սաացած թուղթեր-
նին պանքայի մը քով ի պահ ձգելով տոկոսը կը զանձէին. այսպէսով
հետզհետէ կազմուեցան ընկերակցութիւններ որոնց այժմ սեփական-
անունը կու տան: Աւելի վերջը 17րդ դարուն սկիզբները, այս նպա-
տակաւ ուրիշ պանքաներ հիմնուեցան Եւրոպայի առևտրական կա-
րեւոր քաղաքներու և մասնաւորապէս Ամսթերտամի և Համպուրկի
մէջ: Այսպէսով ծագում առին աւանդի, փոխանակութեան զրամատուն-
ները, որոնք սեղանաւորական յարաբերութեանց լնդարձակուելուն
պատճառ եղան: Հետեւաբար սեղանաւորը այլևս պարզ արկղակալ մը
կամ տոմարակալ մը չէր, այլ վարկի վաճառական մը՝ որ իրենց
զրամը շահագործելու զոչ առևտրականներուն և գործարանատէրե-
րուն միջև կը հանդիսանար միջնորդ մը: Ասոնց մէջ նշանակելի է
վեդլի գործողութիւնը. բրտոյր զրամատուններուն գործառնութեանց
կարեւոր մէկ մասը կը կազմէ: Սեղանաւորը կը զեղչէ վաճառականի
մը մուրհակը. անիկա լրաւունք ունի, երբ յէտք ունենայ զրամի,
փոխանցելու (ֆիո) ուրիշի մը և այսպէս ձեռքէ ձեռք անցնելով
վերջին անգամ որուն ձեռքը որ գտնուի անիկա է սէրը: Լոնտոնցի
սեղանաւոր մը Մր. Լոյտ Սամուէլ կը հաստատէ թէ 120 ֆիոով
ծածկուած թուղթ մը տեսած է. յաճախ փոխանակութիւններու ետեւը
չատ մը ֆիոներով լցուած ըլլալուն կ'աւելցուի թուղթ մը որուն
եղկայնորդ (allongeur) անունը կու տան: Ասիկէ ծագում առած են
նաև պանֆիոք ըսուած թուղթերը: Սթոքհոլմի պանքան որ 17րդ
դարուն երկրորդ կիսուն հիմնուած է, առաջին անգամ պանքաւմա
հանած է որուն հետեւած են նաև Վենետիկի և Ամսթերտամի պան-
քաները: Ասոնք իբր հնչուն զրամ չըջարեութիւն կ'ունենային Եւ-
րոպայի մէջ. ահա ատեն զանազան պանքաներ իրենց վարկին համե-
մատ չըջարեութեան կը հանէին այս կարգի պանքատոմներ. սակայն
այժմ այս իրաւունքը վերապահուած է միայն պետական պանքանե-
րու:

Կան նաև կալուածական փոխառութիւն ընող պանքաներ ո-
րոնք շէնքերու վրայ զրամ փոխ կու տան. այս հիման վրայ չըջա-
րեութեան հանուած են Եգիպտոսի մէջ Իբլեի մոնսիէի բաժնե-
թուղթերը (1903ին և 1911ին), Պուլկարիոյ մէջ Իբօքէֆարնա պանֆան

որ նախապէս օտար դրամագլխով հաստատութիւն մըն էր և միայն Զուլիցերական ֆրանքի հաշուով փոխատուութիւն կ'ընէր. հիմա այդ դրամատունը եղած է Պրլիարսաւա-իքօքէաւրնա պանֆա:

Կան նաև արժէթուղթերու վրայ գործող պանքաներ՝ որոնք պորսայի մէջ ընդունուած բաժնեթուղթերու (action), պարտաթուղթերու (obligation) վրայ գործառնութիւններ կ'ընեն և անոնց վրայ փոխատուութիւն ալ կ'ընեն. կը գնեն, կը ծախեն օրուան գիներու արժէքին համեմատ մերթ վնասելով և մերթ շահելով:

Առևտրական հրապարակի վրայ գործառնութիւնները ընդհանրապէս ապառիկ կ'ըլլան, մանաւանդ մանիֆաքթուրան. որովհետեւ գնորդը իր գնած ապրանքը անմիջապէս չի կրնար ծախել, այլ անոր փոխարէն կու տայ պայմանաժամով մուրհակներ մինչև երեքէն վեց ամիս վաճառականը երբ դրամի պէտք ունենայ իր պանքային քով կը զեղչէ վճարելով տոկոս, յանձնառոյցէք, նամակի դրամ կ'ւայլն. անիկա ալ իր կարգին երբ պէտք ունենայ ուրիշ դրամաքան մը քով կը զեղչէ (réescompter) և կամ իբր աւանդ (dépot) կը թողու 70—80 ստանալով միայն, avance sur effets: Դրամատունն ալ հետզհետէ գանձելով փոխանակագրին զուտ գումարը, կ'անցնէ վաճառականին պահանջքին, իսկ չվճարուելու պարագային բողոքել կու տայ: Սակայն ոմանք այս միջոցը կը շահագործեն, իրարու վճարելի կարճ կամ երկար պայմանաժամով թուղթեր զեղչելով, որուն փոխարէնը ապրանք չէ առնուած. այս գործողութեան Պուլկարիոյ մէջ եֆօճիֆի-չեֆի անունը կու տան. ասիկա վաճառուոր է վաճառականին համար, որովհետեւ եթէ օրին դրամ ստացողը չկարենայ վճարել, ստորագրողը պիտի վճարէ՝ առանց օգտուած ըլլալու նոյն գումարէն: Այսպիսի դէպքեր շատ պատահած են և պատճառ եղած են ստորագրողին կամ նեռանդին կորստեան:

Անգլիոյ մէջ առևտուրը կանխիկ է, օտար երկիրներու համար վարկ չի բանար, այլ հոն հաստատուող միջնորդին կամ վաճառականին կը ծախեն որ ան ալ իր կարգին կը զրկէ արտասահման, իսկ փոխարէնը կը վճարուի շարաթակայն վճարումներով: Մանչէսթրի մէջ ամէն միջնորդ վաճառական օր մը սրոյած է վճարումի և գրած է գրասենեակին դրան վրայ. երբ պահանջաւորը ներկայանայ պարտատէրը չէք մը կու տայ իր պանքային վրայ գանձելու համար: Պէտք է գիտնալ թէ Անգլիոյ մէջ բոլոր գործերը չէքով կը կառարուին, նոյնիսկ մէկ ոսկիի համար չէք կու տան: Առևտրական գործողութիւնները դիւրացնելու համար գրեթէ բոլոր միջնորդ վաճառականները եռամսեայի դրութեամբ կ'աշխատին:

ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ

Միջին դարուն (518—1300) Բիւզանդական վաճառականութիւնը տեղի կ'ունենար Հռովմի և Ծայր Արեւելքի միջև, Կարմիր և Աե ծովերու միջոցաւ: Կ. Պոլսոյ հիմնարկութենէն յետոյ, անոր աշխարհագրական գերազանց դիրքին պատճառաւ, նոր մայրաքաղաքը Բիւզանդական վաճառականութեան կեդրոն դարձաւ: Չինական շերամը և հնդկական համեմեքներն ու նպարեղէնները թրահովել միջոցաւ կը ղրկէին Մերձաւոր Արեւելք: Յոյները Պարսից հետ Արեւմտեան ապրանքները կը փոխանակէին Արեւելեանին հետ:

Թ. դարուն կէսին մինչև ժԱ. դար, Բիւզանդիոն իր փառքի գագաթնակէտին հասած և Կ. Պոլիս աշխարհի առաջնակարգ առեւտրական քաղաքը հանդիսացած էր: Մինչև ժ. դար Դամասկոս և Զալէպ Ծ. Արեւելքի ապրանքներու մեծ հրապարակները դարձած էին, մանաւանդ Անտիոք՝ ուր Արեւելքի ու Արեւմուտքի ապրանքներու փոխանակութիւնը տեղի կ'ունենար: Ոչ նուազ անուն հանած էր նաև Հայաստանի Արծն քաղաքը, որուն կործանումէն յետոյ (1040) վաճառականք զաղթեցին Թէոդուպոլիս (Կարին): Եգիպտոսի Աղեքսանդրիա նաւահանգիստն ալ նշանաւոր էր. Կ. Պոլսոյ, Սելանիկի, Աթէնքի, Քէփէի ու Կորնթոսի ձեռագործները կը փնտռուէին: Թէփէ և Պէլոպոնէս անուանի էին մանաւանդ մեծաքսագործութեան մէջ:

Սոյն թուականէն յետոյ Բիւզանդական արաքորութիւնները նուազեցան և այս պատճառաւ ալ Բիւզանդական ծովային վաճառականութիւնը ինկաւ և գրեթէ ջնջուեցաւ ժ.Վ. դարու սկիզբը, իրեն յաջորդեցին Վենետիկեան և Ճենովական վաճառականութիւնները:

ՎԵՆԵՏԻԿԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ (Ժ—ԺԵ ԴԱՐ)

Վենետիկ միջին դարուն աննշան քաղաք մըն էր: Բազաքին վարիչը Տօժ կը կոչուէր. անկից յետոյ զօրացաւ և բարգաւաճեցաւ ամէն կերպով: Ժ. դարուն Բիւզանդիոնի հետ դաշինք կնքեց, որ խոստացաւ Վենետիկեան վաճառականութիւնը պաշտպանել ու քաջալերել մեծ քաղաքներու մէջ: Բիւզանդիոնի մէջ շնորհուեցաւ իւրենց (1089) յառուկ թաղ մը որուն Մալաթա քաղաքի անունը և): Վենետիկցիք հիմնեցին հոն եկեղեցի՝ ուր կային շատ մը կղերականներ: Հեռագնատ ուրիշ սֆալաներ ալ ձեռք ձգեցին: Միջերկրական ծովը իր նախկին ոգեւորութիւնը ստացաւ: Վենետիկ, Ճենովա, Պիզա, կը հաղորդակցէին Բիւզանդիոնի, Պաղեստինի հետ և Արեւելքի վաճառքները կը փոխադրէին Բիւզանդիոնի հրապարակը: Վենետիկցիք առեւտուր կ'ը-

նէին նաև Հարաւ. Ռուսաստանի, Կովկասի, Կասպից ծովու բնակիչներուն ինչպէս նաև Հայոց և Պարսից հետ: Վենետիկցիները գերիվաճառութիւն կ'ընէին. Սեւ ծովու ելքերքէն կը զնէին պատանիներ, մանկամարա աղջիկներ ու եգիպտոսի և Իտալիոյ հարուստ դասակարգին կը ծախէին: Քիչ ետքը Վենետիկ ևս կորսնցուց իր նախկին բարգաւաճ վիճակը և ղօրութիւնը և հպատակեցաւ Սպանիոյ Կարոլոս Ե.ին: Կորսնցուց նաև իր գաղութները և առանձնաշնորհումները Բիւզանդիոնի և ուրիշ տեղերու մէջ*:

Սոֆիա

ԵՐ. ՅԱԿՈՅԵԱՆ

•) Շարունակութիւնը հրատարակուած 1938ի «Հայրենի Տարեցոյց»-ին մեջ՝ Բլովսիւ:

Խ Ա Չ Ո Ի Ա Ծ Ե Ր Ա Չ

Ֆախիբի պէս մոռացումի գիցին խմել զո՛ւր կ'ուզեմ
Իստողութիւնս շինած կ'եի՛ն՝ պատրոզ կեանքից սա դժխեմ,
Մինչդեռ աճանց գործ երկնքէն դէպի աշխարհ կ'երկնեայ
Անճարեւներու երգեհոնցին ձայնը տեսնեմ, պա՛ղ ու նա՛յ:

Հոգիիս մէջ կու լայ պատրանքն որքի մը պէս սգահուր
Յոյսի վարդերս կեանք-խորտակէն քանի բոճեմ քափից վար,
Զիրագործուած մինչ իդներուս կարտանը խաչն ուսին
Կ'անցե՛ի շատ պիտէ հաւաստիս քառուղիքն անլուսին:

Միքե կեանքը գերեղման մը չե՞ լուսաւոր ու խաւար
Ուր կը քաղուին բոլոր իդներն առուպային, անհամար.
Անհասն ալ չե՞ մեռելաքայ ոսկեփետուր յոյսերուն
Զերթ եզ կասու որ կը լափե իր իսկ ձագերը սիրուն:

Կասուն ջգնածն իր կը խեղդե նոպայի մը մոլեգին
Եւ մղձաւանջն անոր երբեք չի խռովեր իր հոգին,
Բայց յոյսերը քե՛ս չորման եւ իրարու յաջորդեն,
Փիւնիկի պէս, մինչեւ հողվար քարմ են, բուրեա՛ն ցկարեն:

1911

Վ. ԵՐԵՅԵԱՆ

ԻՐԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ԽԱՐԲԵՐԳԻ ԷՍՅ ԳԻՒՂԵՐԷՆ, ՈՐ ԱՒԱՂ ԱՆ ԶԿԱՆ...)

Գիւղակեզրոնը անկանոն հրապարակ մըն է ուր տասնեակ մը նեղ-կըճուկ փողոցներու ծուռումուռ բերանները և նոյնչափ մըն ալ նահապետական տուններու փայտեայ ճոնչաձայն զոնները կը բացուին: Հոն քարաչէն աղբիւրի զոյգ ծորակներէն ջուրը յորդսոսա կը հոսի միակտուր քարէ գուռին և անկէ ձեր ուռիներով չքաւորուած հողէ աւազանին մէջ: Ծուռիկ առու մը սպիի պէս կ'ալօւէ հրապարակը ուրկէ ջուրին սողքը կը շտապէ պարտէզներուն և շանջարանոցներուն ասնիլ իր մայրական զոնջ փայփայանքը:

Գիւղակեզրոնը շէնին աչքն ու հայելին, գիւղացիներուն, սրճարան ու ակումբն է: Բզզայոյց փեթակն է ուրկէ կեանքը դէպի դաշտերը պարս կու տայ և իրիկունը զոններէն ներս կը սողոսկի: Հոս է որ առաու և իրիկուն նախիրը կը ժողվուի և հոսկէ է որ լուծ ու լծվար դաշտ կը մեկնին. հոս է որ եզները ջրուելէ ետք՝ յարդախառն շողիքը աղամանդ քուղիներու պէս կաթիկթցնելով՝ ճորճորաքայլ կը հեռանան և հոս է նոյնպէս որ կը մուրթուին անծին կովերն և ուժաթափ եզները. հոս է որ գեղջկուհիները կուծն ուսին աղբիւր կու գան և հարսներ քողածածկ՝ ջրոզոզ գուռին մէջ մերկաբուժմբ՝ տնագործ կտաւը տուտրակելով կը թակնեն անպարտասուն մինչև որ դառնայ ձիւնասպիտակ:

Գարունը և այնանավերջին, հրսպարս կը եղիոց պատեղուոր² պատերով աղիւսաչէն տուններուն մըշաղը,³ իսկ ամառը մարդակառատ⁴ ցուրեքներուն կամ ծառերուն շուքը գիւղացոց է'ն սիրական ժամադրաւայրերն են: Կիրակի, ասն կամ անգործ օրեր հոս է որ կը հաւաքուին անոնք ամէն տարիքէ ու հասակէ և պատշաճ խումբերու բամուռած կը կախճեն⁵, կը պատփեն կամ կը վիճին Ամէն ժամուոր եկեղեցիէն դարձին հոս է որ պահ մը կը հանգչի ճաչէն ետք կրկին վերադառնալու խոստումով: Հոս է որ կը սլքաան ընդհանրապէս նշաններ կամ նշանուելիք կտրիճներ երկայն բոժսմը⁶ ճակատնուն թոփած և նայտուն գօտին զպունին⁷ վրայէն պինդ կապած. անոնք մեկուսի կը փոփսան գաղտ հետեկելով առու գաճեմ ջրկիր աղջիկներուն, որ այդ հանդիպումէն ամչցած, կուծն ուսերնուն կ'աճապարեն զլիկոր:

Այսպէս հոս վճմի մը, սագայի⁸ մը, կրճղի մը վրայ նստած կամ պարզապէս գետինը կոկոզ ընելով է որ կը քննուին գիւղին չարն ու բարին և կ'ընտրուին նշանածները:

* *

Բայց գարնանավերջին, ամառը և աշնավերջին երբ զիւղին կեանքը դաշտերուն մէջ է որ կը փրփրի և գեղջուկը զլուխ քերելու իսկ ժամանակ չունի, հրապարակը միայն վաղ արևածագին կ'ոգեւորուի և մինչև իրիկնամուտ կը լուէ:

Սագուններուն վրայ՝ պարապ ու որբ՝ միայն մողէսներ կը տաքնան վախնիվախ, մինչ շաղակրատ ճնճողներն առուին մէջ կը լողնան, ամբողջ գիւղը ամալացած Թուն մըն է կարծես ուր բուռի մը վալոցին տեղ հոսող ջուրին օրհնալից երգը կը լսուի: Բայց այս լուսթեան մէջն իսկ է որ Բանդարա ու ինքնատիպ կեանք մը իր ոստայնը կը հիւսէ:

Մաղաքենց քիչ մը բարձր ու արևադմ պատկալիքը, ուր հողաչէն մեծ սաղու մը և տարիներէ ի վեր անձրևին ու ձիւնին ձգուած հսկայ հեծանք մը կը քնանան, կը լեցուի ապրող մեռելներու հեռաքրքրական ու անաղմուկ խմբակով մը:

Գարու մը կեանքին բարև տուող կթոտ, ժողուտ, տկարաշուր կամ երբեմն դեռ պնդակաղմ ձերուներին կը յամենան այդ լուսթեան մէջ կեանքի մը տրոփը բերել գարնան վաղահաս արևոտ օրերէն՝ երբ թռչիւրին գոլը կը ձգեն, մինչև աշնանավերջ՝ երբ դեռ նոյն իսկ պաղուկ բայց դեղին արևշող մը կը դողալոյս Անցնելու մօտ եղող այդ բարի ձերուներինը առտուան մթնշաղիին արթնցած կը փութան եկեղեցի աղօթք մը չրթերնուն, տորտարով իրենց ոստուտ գպւաղաններուն վրայ և յետոյ սրտազեղ մը ուտելէ վերջ կը շտապեն զիւղակեղոն: Ամէնն ալ մանկութեան ընկերներ են և յաճախակի հաղեր հետունքն իսկ կը մատնեն իրենց ժամանումը, կը հաւաքուին, կը բարեւեն զիրար և շարն ի շար սաղուին կամ հեծանին վրայ պաղած պաղուտն իրենց անդամները կ'երկնցնեն արևու կենսառու համրոյրներուն:

Ամբան չոգ օրերը շուքին և մնացեալները մթնշաղին մէջ երազող այս ձերուները՝ անշունչ քարին ու հողին հետ անքակտելի և զգայուն մտերմութեամբ մը կ'ապուած՝ ներքին կեանք մը ունին: Գիւղակեղոնը իրենց բազինն ըլլար կարծես և իրենք քուրմերը որ գաղանի պաշտամունքով մը համակուած՝ իրենց եսը ամբօրէն կ'ապած, միաշաղուած ըլլալին չըջապատի իրերու հողին որ իրենց պէս յովա առ յովա կը քայքայուի կը ձերանայ:

Դուրսի կեանքին առերևոյթս անհաղորդ այս ձերուները իրենց ներքնաշխարհին մէջ սուղուած շառ անգամ իրարու քով իսկ հողեւին առանձին են և այնքան բարի որ իրենց քով քնացող ծոյչ շունն իսկ չեն վնասեր և աներես հաւերուն կը թողաբարեն մինչև իրենց ոտքերուն քով գալ փշուրներ ժողվելու: Գիւղ մնացած տղեկները՝ թոռ, թոռնորդի կամ թոռան թոռ՝ խելքեկի վէգ կը խաղան կամ հողէ ու ցեխէ տնակներ կը շինեն, և տեսնելու է թէ ինչ աղա-

պատանջով այս անցաւորները այդ եկուորներուն կը նային՝ պատկեր իրենց մանկութեան յաւէա ըղձալի ու նուիրական:

Առտուն և ցերեկուան ճաշէն ետք մէկ առ մէկ կամ երկերկու կը խմբուին հոն, սովորական բարեններն ու խօսքերը կը փոխանակեն և երբ թիւերնին լրացած է և սպասելիք ոչ ոք ունին ասուլիսին թելը քիչ քիչ կը թուլնայ և ամէն ոք մեկուսացած ներաշխարհով ապրողի ասպաւորութիւնը կը թողու: Կան որ աչքերնին գոց, բայց համրիչին հափկները կանոնաւորապէս չխշխկացնելով, կը հակին. կսն որ աչքերնին բաց կ'երազեն և տարածմին նայելով թո՛մած վարդի մը պէս անուշ կը ժպտին. ոմանք պուլակ պուլակ բոշոյ դրած իրենց զօտիին փաթը¹⁰, քարմանը¹¹ ձեռքերնին կը մանեն և զգացումներու հետ համաչափ թափ կու տան իլիկին ուր բուրդին թելը կ'երկննայ ոլորուն:

Երբեմն խօսակցութիւնը ընդհանրական կ'ըլլայ և թեր ու ղէմ կարծիքներ կը յայտնեն հուշձքին, բամպակին ու տարիին մասին և իրենց փորձառատ կեանքին թրծուն դատողութիւնները քիչ անգամ կը շեղին ճշմարտութենէն: Բայց իրենց է՛ն սիրելի ու թանկագին պահն է երբ անձնիւրն իրենցմէկը թերթատ է իր կրանքի գիրքը և կը հասնի բարախուն յիշատակներու և ապրումներու, այն պահն հետաքրքրական է զգալ ձայնը որ կը դառնայ ողբուր ու կենդանի և ունկնդիրներու աչքերը որ վայրկեան մը ասուպներու պէս կը փայլփլին և ճակափ կնճիռները շտկած դարմանահար և ուշադիր կ'ունկնդրեն քիչ յետոյ սասնալու համար իրենց բնականոն արտայայտութիւնը:

Մերթ հաւու¹² քունէ մը արթնցող ծերուկներ անլսելի բաներ մը կը մրթմրթան և խոհուն՝ քիչ մը հողին պննել վերջ՝ կը փակեն աչքերնին:

Իրենց օրական ապրոյթին փոքրիկ վրդովումները կ'ըլլան երբ ձիււոր մը կ'անցնի և շուները կը սկսին հաչել, լաճ մը իշուկի մը կռնակը հեծած կու գայ դաշտուորներուն կիսակուր ասնի, ցորենաբարձ սայլ մը ճռնչաձայն դէպի կալերը կ'ողողուի կամ բարտի մը ծայրը բուն դրած արագիլը՝ մէկ ոտքի վրայ ֆաքիրի մը պէս կեցած՝ կը սկսի կափկափել, այն ատեն քնացողները կ'արթնան և խօսողները պահ մը կը լռեն պղօտ աչքերով հետեւելու համար ղէպքերուն:

Ամէնն ալ իրենց մասնայատուկ տեղերն ունին զոր օրը քանի մը անգամ արևուն կամ շուքին համեմատ կը փոխեն, այդ ափ մը տեղը իրենց համար երկրորդ խրճիթ մըն է պաշտելի ուր կ'անցնեն ծեր օրերու բացողեայ կեանքը բացի ձմեռէն, զիշերներէն և ճաշաժամերէն: Այս մարդու և իրերու վերջալուսային դրացնութիւնը մահը միայն կրնայ խզել և եթէ արև բարի քանի մը օրեր իրենցմէ մին բացակայի, վստահօրէն մեռած է, որովհետեւ հայ զիւղացին յանկարծ ասուպի մը պէս կը մարի առանց երկարատե հիւանդու

Թեան: Պարապ մնացած անցը մեռելի մը աչքին պէս ներկաներուն կը պննան մինչ իրենք լուսահողիին կեանքն ու յուշքերը կը քրքրեն մանրակրկիւ և թէև փռթով կը գոցեն անտէրափ մը միջոցը, բայց, ի զ՛հար, հոգիներուն մէջ կը չռի մահուան բաց աչքը և սրտաթրոփ կը սպասեն կարգին որ իրենցմէ մէկունն է:

* * *

Այնչեր ձերունիներ մի առ մի մահուան աշխարհը կը մտնեն, սերունդներ կու գան ու կ'անցնին, բայց սագուն ու հեծանը, իրեր-յաջորդ ախիքներու պէս դեռ չատ մը սերունդներու ձերութիւնը կը կրեն իրենց վրայ և մեզի պիտի կրնային պատմել զիւզին անցնող պատմութիւնը եթէ իրերու մղկտացող հ. գի'ն լոռ թիւնը լաւագոյնը չըլար...:

1909

Վ. ԵՐԷՅԵԱՆ

- 1 քուզ = բի
- 2 պատեղուոր = ծոցուոր (փոխաբերաբար զոգ տուած պատ)
- 3 մրչաղ = պատերէն ցոլացած արեւոտ տի
- 4 մարտակ = սան փլեւուն տարուած փայտեր
- 5 կայաճեւ = խօսիլ
- 6 բռծամ = այրերու ճակտին ձգուած մագերու խուրձ (փերչեմ)
- 7 զպուն = այրերու միակտուր հագուստ (եքրարի)
- 8 սագուն = պատերու սակ շինուած հողէ նստարան
- 9 հեծան = սան շինութեան գործածուող հաստ եւ երկար գերան
- 10 փաթ = զօտի ծալք
- 11 քարման = իլիկ
- 12 Հաւու քուն = կարճատեւութիւն մտքի

Մ Ա Ր Ա Թ Օ Ն Ի Վ Ա Ջ Ք Ը

I

— Յարգելի տիկիներ և պարոններ ըսաւ Խորէն Մարտիկեան ձեռքի Թեթև հարուած մը տալով առջևը դտնուող սեղանին. եթէ կը հաճիք, դադրեցնենք մասնակի խօսակցութիւնները և սկսինք գործի:

Տանուածէրի այս յայտարարութեան վրայ խոր լուծութիւն մը տիրեց սրահին մէջ:

— Ժողովը բանայէ առաջ, ըսաւ Մարտիկեան, պարտք կը համարեմ շնորհակալութիւններս յայտնել ձեր ամէնուն՝ ձեր ներկայութեամբ համեստ բնակարանս պատուելնուղ համարս Ինչպէս որ ձեզի ուղղուած հրաւիրագրին մէջ համառօտակի բացատրած էի միտքս, սոյն հաւաքոյթին նպատակն է՝ ազգին բոլոր մտաւորական զաւակները — առանց կուսակցական և յորանտանական խտրութեան — մէկ երկրքի ասկ բերել և անոնց հետ ազգային կարեօր հարցերու շուրջ գաղափարի փոխանակութիւններ ունենալ:

«Մեր այբօրուան վիճարանութեան նիւթն է՝ «Արտասահմանի հայութիւնը իր ներկայ գոյավիճակովը կրնա՞յ իր գոյութիւնը պահպանել թէ ոչ»: Ուրեմն ժողովը բացուած կը համարեմ և կը խնդրեմ ձեզմէ որ, թեր ու ղէ՛մ յայտնէք ձեր կարծիքները առանց նիւթէն չեղելու և խնդիրը անձնականութեան սահելու: Խօսքը Հայր Արիստակէս Չարխափանեանին է:

— Հարցը օգտակար է և պետք է լուսարանուի, ըսաւ Ամերիկահայոց կ'ըրովի և բանիբուն եկեղեցականը ընդհանուր ծափահարութեան մէջ ոտքի ելլելով: Ծնորհակալ եմ Տիար Մարտիկեանին այս պատեհութիւնը ընծայած ըլլալուն համար մեզի:

«Հարց զրուած է թէ արտասահմանի հայութիւնը իր ներկայ գոյավիճակովը կրնա՞յ իր գոյութիւնը պահպանել թէ ոչ, Բնական է որ կրնայ: Հայ ազգը երկու հազար տարիէ ի վեր Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ հովանիին տակ շարունակած է իր գոյութիւնը հնազարեան կազմի պէս կուրծք տալով ամէն կարգի փութորիկներու ղէմ:

«Հայ ժողովուրդը այնքան մեծ հաւաք ունի իր եկեղեցիին հանդէպ որ, ո՛ւր որ գացած է և հաստատուած է՝ իր խրճիթին քով անպայման եկեղեցի մըն ալ կառուցած է: Օտար երկիրներու մէջ կառուցուած այդ խեղճուկ մատուռները անշուշտ երկրի մայր եկե-

ղեցիներուն փառաւոր շքեղութիւնն ու ճարտարագետութիւնը չունին, բայց չէնքին արտաքին երեւոյթը չէ որ մեզ կը հետաքրքրէ: Կարեւորը այն է որ, ժողովուրդը կ'երթայ հոն, անոր հնամայ եղած փախթին վրայ ծնրադրելու և ազօթելու համար:

«Ուրեմն քանի՛ անասան է Հայաստանեաց Ս. Եկեղեցին, այնքան անասան է հայ ժողովուրդը ինչպէս անցեալին, նոյնպէս ներկային և ապագային մէջ:

Տէր հայրը երբ աւարտեց խօսքը, առնապետ տիար Մարտիկեան նշմարեց որ Կայծակ Համարձուժեան մատը վերցուցած էր խօսելու արտօնութիւն ստանալու համար:

— Խօսքը ձերն է պ. Կայծակ ըսաւ. Մարտիկեան, յիշեալը բեմ հրաւիրելով:

Արժանագատիւ հայր Չարխափանեան շատ գեղեցկօրէն պաշտպանեց իր դատը, ըսաւ եռանդուն հասարակական գործիչը չորջանակի նայուածք մը պտտցնելով ներկաներուն վրայ: Բայց իմ ըստ լիքներս ըսելէ առաջ կ'ուղիւմ փոքրիկ ճշգրտմ մը չստասել:

«Հայ ժողովուրդը երկու հագսր տարի է ի վեր իր գոյութիւնը պահպանեց ո՛չ թէ Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ հովանիին տակ գտնուելուն՝ այլ տարբեր կրօնք ունեցող երկրի մը մէջ գտնուելուն պատճառաւ: Հայազգը թուրքին, պարսիկին, արաբին հետ չէր կրնար խառնուիլ, որովհետեւ չէր հաւատար անոնց պաշտած մարգարէին: Բայց եթէ թուրքը, պարսիկը, արաբը իրեն պէս քրիստոնեաներ ըլլային, այն ատեն հայը միջցեղային ամուսնութեամբ պիտի լուծուէր անոնց մէջը:

«Այս ըսածիս կարկառուն ապացոյցն է Անիէն գաղթող Հայոց պատմութիւնը: Ի՞նչ եղան հարիւր հազար տարայ պանդուխտ Հայերը Լեհաստանի, Ղազարիոյ և Պեսարապիոյ մէջ: Հայաստանեաց Ս. Առաքելական եկեղեցին ինչո՞ւ չպաշտպանեց զանոնք:

«Ո՛չ, հայր Արիստակէս, Հայաստանեաց Ս. եկեղեցին անգոր է արտասահմանի հայութիւնը ձուլումէ փրկելու: Մենք պիտի չարունակենք մեր գոյութիւնը ո՛չ թէ ամէն քաղաքի մէջ եկեղեցի մը այլ այդ եկեղեցիին կողքը կուսակցական ակումբ մը ունենալուու համար:

«Այդ ակումբը է՝ և պիտի ըլլայ մշտապառ հնոց մը հայ հոգիները դրահելու համար ձուլման և այս սերման ամէն կարգի փորձութեանց դէմ: Քանի՛ վառ պիտի պահենք այդ հնոցը, մենք պատճառ պիտի չունենանք մեր ապագայի մասին մտահոգուելու:

— Ակումբը, կամ աւելի ճիշդ պիտի ըլլայ բոսի ակումբները, որովհետեւ ամէն քաղաքի մէջ անոնցմէ մէկէ աւելի ունինք, ըսաւ Մենծիկ Կորկոտեան՝ Բարեգործականի նուիրեալ առաքեալը, չին կա-

րող ազգիս պահպանման սատարել, քանի որ անոնք մէյ մէկ վառ
օճախներ են երկպառակուութեան, ատելութեան և գժառութեան:

«Կրնա՞ք երեւակայել ընտանեկան յարկ մը, որ բարգաւաճ վի-
ճակ ունենայ, երբ այդ տան հայրը, մայրը, քոյրը, եղբայրը իրարու
դէմ ո՞ն ունին: Կուսակցութիւնները հայ իրականութեան մէջ կը
նմանին նոյն գժառել ընտանիքին հօր, մօր, եղբօր և քրոջ: Մէկին
ըրածը միւսը կ'աւերէ, միւսին ըրածը աւելի միւսը կը խառնչուէ:
Եւ շատ պարզ է որ համերաշխ չեղող ազգ մը չի կրնար հաստատուել
հիմ ունենալ:

«Բարեգործական միութիւնը կը ձգտի այդ համերաշխութեան՝
իրարու շողկապելով ազգին բոլոր անհատները, ըլլան անոնք ուսեալ
թէ անուս, ունեւոր թէ չունեւոր, լուսաւորչական թէ բողոքական:
Որքա՞ն կը յաջողի ան իր նպատակին մէջ, այնքան վստահօրէն կըր-
նանք ըսել թէ արասասհմանի մէջ ապահովուած է հայ ժողովուրդի
գոյութիւնը:

— Բարեգործականին դերը անօթին կերակրել է, ո՛չ աւելի, ո՛չ
պակաս, ըսաւ բաղմանմուտ դաստիարակ Կիրակոս Ֆայախաճեան:
Եւ անօթիին համար ազգութեան գաղափարը այնքա՞ն արժէք ունի
որքան կոյրին լապտերը: Չէ՞ք տեսներ մարդորսները Սուրբոյ մէջ
— և անկէ առաջ Թուրքիոյ մէջ — ինչպէ՞ս կտոր մը հաց տալով
մարդոց ձեռքէն կը խլեն անոնց հաւատքը: Անօթի մարդը քսցած
չան նման կ'երթայ անոր ետեւէն, որ իրեն հաց կու տայ: Կարելորդ
արդիւիւն է որ մարդիկ անօթի ըլլան, և այս կարելի է միայն զբարոցով:

«Գարոցը ո՛չ միայն իր ջամբած գիտութեամբ պատանիին կը
սորվեցնէ ինքնարաւ դառնալու միջոցները, այլև անոր մատղայ սրբ-
աին մէջ կ'արձարծէ հարկնասիրական զգացումներ:

«Ուրեմն քանի ունինք գաղութներու մէջ զպրոցներ — և փառք
աիրոջ անոնցմէ շատ ունինք — պատճառ չունինք վախնալու թէ՛
վտանգուած է մեր գոյութիւնը:

— Եթէ յոյսերնիս դրած ենք արասասհմանի խեղճուկրակ ման-
կապարտէզներուն վրայ, ըսաւ յայտնի հրապարակագիր Գեղամ Տօ-
նապետեան, վա՛յ է եկեր մեր գլխուն: Հալիւր ընտանիքէն սասը
ընտանիք իր գաւակը կը զրկէ հոն: Տղուն սորվածը ճակատոր հայե-
րէն մըն է: Կոր յետոյ կը մոռնայ:

«Բարեբախտաբար սակայն մենք ունինք մամուլը, որ կենդանի
զպրոցն է մեծին և պզտիկին, գործատէրին և գործաւորին: Թերթը
կը մտնէ ընտանեկան ամէն յարկէ ներս և իր հայկական ջերմիկ
շունչովը կը տաքցնէ թմրած ու ուժացած հոգիները: Ուրեմն քանի
կայ հայ մամուլը, հայ ժողովուրդը կրնայ իր յարատեւութիւնը ա-
պահոված նկատել:

Եւ յետոյ խօսեցան Գրասիրաց, Թատերասիրաց, Կապոյտ Խաչի,

Ծերանոցի, Հայրենակցականի և այլ Միութեանց անդամները, իւրաքանչիւրը մերժելով իրենցմէ զուրս եղողներուն անսակեաները, և սակայն անկեղծ հաւատքով մը ընդունելով թէ, քանի՜ իրենց ներկայացուցած կազմակերպութիւնը զոյոթ թիւն ունի, այսօր առաջին հայութիւնը իր ապագայի մասին վախ սնուցանելու պատճառ չունի:

II

— Կը թեսնեմ որ, ըսաւ Խաչիկ Ծերունեան իր վարդին խօսք առնելով, բոլոր ներկաները համամիտ են սկզբունքին շուրջ, այսինքն թէ արտասահմանի հայութիւնը Անիի գաղթականներուն ողբերգական վախճանը պիտի չունենայ քանի՜ որ կան իրենց տեսակէտով եկեղեցին, ակումբը, Բարեգործականը, դպրոցը, մամուլը, երգը կամ թափուրը:

«Կը խորհիք, որ երբ ունինք այսքան կուսակցութիւններ, որոնց ամբողջ անդամները գիտակից հայեր են, երբ ունինք այսքան թերթեր, որոնց ամբողջ ընթերցողները խելացի հայեր են, երբ ունինք այսքան զանազան միութիւններ, որոնց ամբողջ անդամները պզգասէր հայեր են, այսչափ գիտակից, խելացի և ազգասէր անհատներ ունեցող գաղութ մը ինչպէ՞ս կրնայ կորսուիլ:

«Տեսականօրէն ճիշդ կ'երեայ հաշիւը, պայմանաւ որ ներքինիի մտայնութեամբ աչքերնիս գոցենք ապագային վրայ:

«Հայրենակիցնե՛ր, յարեց Խ. Ծերունեան ստիճան մը բարձրացնելով ձայնը որպէսզի ըսելիքները հրաշէկ երկաթի պէս գամուէին կամաւոր խուլերու ականջներուն մէջ, չարաչար կը սխալին ամէն անոնք, որոնք Արմէններու ցեղը կը նմանցնեն կարկաչահոս առուակի մը, որ անյիշատակ ժամանակներ առաջ ժայռի մը լանջէն ծնունդ առած՝ կը շարունակէ հոսիլ դարերու ընդմէջէն և զեռ պիտի շարունակէ հոսիլ առայաւէտ ցկատարածը աշխարհին:

«Հայրենակիցնե՛ր, ցեղերու յաւերժականացումը կարելի է նմանցընել Մարաթոնի վազքին, որ տարբեր հանգրուաններու վրայ կեցած մարզիկներ կը վազեն՝ իրենցմէ առաջ վազող մարզիկներուն դրօշակը փոխանցելով իրենցմէ ետքը վազողներուն:

«Հայկերու, Տիգրաններու, Վարդաններու բարձրացուցած նուիրական դրօշակը սերունդներ ձեռքէ ձեռք տալով հասցուցին մեզի: Մենք այժմ կը կատարենք մեր վազքը. բայց օր մը երբ շնչաւապառ կանգ պիտի առնենք, կը հարցնեմ ձեզի, ո՞վ պիտի առնէ մեր ձեռքէն դրօշակը իր կարգին վազելու և իր յանձնելու յաջորդին համար:

«Հայրենակիցնե՛ր, լաւատես երազներով օրօրուելու սեռը չէ՛: Կը վստահեցնեմ ձեզի, այն օրը մեր ձեռքերը օղին մէջ պիտի մնան:

Անօրինակ իրարանցում մը ծայր տուաւ սրահին մէջ:

Ատենապետ Մարտիկեան զանգակը հնչեցուց և ներկաներէն խնդրեց որ լուռ մնան:

— Այո՛, մեր ձեռքերը օդին մէջ պիտի մնան. ըսաւ Սաչիկ Ծերունեան հեղինակաւոր շէշտով մը շարունակելով իր խօսքը. որովհետեւ մենք չունինք, չենք պատրաստած և ներկայ դրութեամբ չենք կրնար պատրաստել նոր սերունդը, որ խէ՛ մեր նախահայրերուն դրօշակը մեր ձեռքէն:

«Խնդրեմ վայրկեան մը ակնարկ պատրուցէք ձեր բարեկամներուն, աղղականներուն և ծանօթներուն տուններէն ներս և ըսէ՛ք ինձի, հոն կը տեսնէ՞ք ծրող սերունդ մը, որ կոչուած ըլլայ մեր ազգային իռէայնները իրականացնելու:

«Զօպանեանի մը, Սատիսեանի մը, Վրացեանի մը արտաքները — խօսքը անոնց անձին համար չէ. զանոնք իբրև խորհրդանիշ կ'առնեմ — պիտի չըլլան Զօպանեանի մը, Սատիսեանի մը, Վրացեանի մը: Ընդհակառակը անոնք պիտի ծիծաղին ազգասիրութեանը վրայ իրենց հայրերուն, որոնք փոխանակ ոտնաքնդակի հսկայալի մրցում մը զիտելու՝ դեղնած և փոշոտած դիրքերու դէղերուն մէջ իրենց կեանքը կը մաշեցնեն:

«Եւ երբ ալ զի մը առաջնորդները չեն կրնար իրենց զաւակները իրենց գաղափարներովը տողորել, ո՞վ պիտի աղորէ զանոնք. — հասարակ սպիրիտը՝ թէ կօչկակարը: Ո՞վ պիտի ըլլայ ապագայ Զօպանեանը, Սատիսեանը, Վրացեանը: Ուրկէ՞ ծնունդ պիտի առնէ, ուրկէ՞ պիտի ներշնչուի: Այսօր քսան տարիէ ի վեր արտասահմանի մէջ հասակ քայող սերունդ մը ունինք, երա՞ւ անոնց մէջէն մէկը որ արդարացնէ մեր յոյսերը:

«Հայրենակիցներ՛ր, քանի հասնող նոր սերունդը հոգւով, մարմնով չի կապուիր մեզի, քա՛նի ան չի զգաք մեր հոգերն ու ցաւերը, անկարելի է, որ ան շարունակէ մեր գործը. իսկ անկէ ետք եկողը երբե՛ն:

— Ըսել կ'ուզէք թէ, ըսաւ Մարտիկեան, եկեղեցի, դպրոց, կուսակցութիւն, մամուլ, ամէն բան ունինք, բայց ի՛նչ օգուտ, երբ մեծահարուստ ամուլ վաճառականի պէս ժառանգորդ չունինք: Լա՛ւ, ի՛նչ պէտք է ընել այդ ժառանգորդը ունենալու համար:

— Ինչպէս որ տան մէջ յաճախ կուի ընող ծնողքները յարգանքը կը կորսնցնեն փոքրիկներուն, պատասխանեց Սաչիկ Ծերունեան, մենք ալ մեր եղբայրաբանաց կուիներով և վէճերով կորսնցուցած ենք յարգանքը նոր սերունդին: Անոնց քով վերահաստատելու համար մեր պատիւը նախ դադրեցնելու ենք ամէն կարգի վէճերը, յետոյ ձեռք տուած ի մի ձուլելու ենք գոյութիւն ունեցող բոլոր ազգային միութիւնները. կաղմակերպութիւններն ու կուսակցութիւնները:

— Պ. Ծերունեան, գոչեց կայծակ Համբարձումեան որոտալի

մանչիւն մը արձակելով, զուք կ'ուրանա՝ քաղաքային կուսակցութեանց օգուակարու թիւերս:

— Ընդհակառակը, ըսաւ Սաչիկ Ծերոնեան հանդարտ ձայնով մը, ես ձեզմէ աւելի ըլլալով կ'ընդունիմ անոնց օգտակարութիւնը: Կը շեշտեմ այս «ձեզմէ աւելի»-ին վրայ, պ. Կայծակ, որովհետեւ զուք միայն ձեր պատկանած կուսակցութեան օգտակարութիւնը կ'ընդունիք, մինչդեռ ես կ'ընդունիմ ամէնուն օգտակարութիւնը:

«Բայց կէտ մը կայ, զոր պէտք չէ վրիպեցնել մեր ուշադրութեանէն: Հայ ազգը իր ապրած միջավայրին և պայմաններուն բերմամբ կէս դար առաջ ծնունդ տուաւ զանազան ազգ. կուսակցութեանց: Այդ օրուան պահանջը ազատագրութիւնն էր, կուսակցութիւնները լրծուեցան գործի և ազատագրութեան ճամբան բացին:

«Այսօր փոխուած են թէ՛ միջավայրը և թէ՛ պայմանները, հետեւարար անոնց հետ փոխուած է նաև ազգին պահանջը: Մեր այսօրուան պահանջն է՝ ազգապահպանում և անոր դարմանը՝ Միութիւն: Ուրեմն ազգ. կուսակցութիւններ որպէսզի լիուրի կասարեն իրենց դերը, պէ՛տք է ընդառաջ երթան այդ պահանջին, այսինքն ինքզինքնին յարմարցնեն ստեղծուած նոր կացութեան: միանան: Միանա՛ն, որովհետեւ ասկէ յետոյ ըլլալիք գործը մէկ կուսակցութեան, մէկ կազմակերպութեան, մէկ միութեան ընելիք գործը չէ, այլ ամբողջ գաղութանայութեան միասնամուռ ճիգով և մասնակցութեամբ ընելիք գործը:

— Բայց չեմ հասկնար, ըսաւ հայր Արիստակէս, ինչպէ՞ս կարելի է միացնել այսքան այլազան միութիւններ. կազմակերպութիւններ և կուսակցութիւններ որոնց իւրաքանչիւրը տարբեր նպատակ մը կը հետապնդէ:

— Տարբեր՝ ձեռով բայց ոչ խորքով, Տէր հայր, իւրաքանչիւր կազմակերպութեան նպատակը ազգին օգտակար ըլլալ է, և ան դարձեալ պիտի շարունակէ իր օգտաշատ դերը իր ընտրած ստպարէզին մէջ:

«Միտքս աւելի լաւ րացատրելու համար օրինակով մը ըսեմ ձեզիս ենթադրեցէք որ մեծահարուստ հայ մը հայաշատ քաղաքի մը մէջ ընդարձակ շէնք մը նուիրեց ազգին և ըսաւ «Ազգ. բոլոր կազմակերպութիւնները թող առնեն այս շէնքը և հաւասար իրաւունքով գործածեն իրենց պէտքերուն համար»:

«Ի՞նչ պիտի ըլլար հետեւեալքը, Քաղաքին զանազան թաղամասերը գտնուող բոլոր այլազան ակումբները, մասենազարաններն ու սպարանները պիտի փոխադրուէին նորակառոյց շէնքին մէջ:

«Շէնքին Ա. յարկին թիւ մէկ սենեակին մէջ Դաշնակցական շաքայինները պիտի գումարէին իրենց ժողովը, թիւ երկուսի մէջ Ռամբազայինները, թիւ երեքին մէջ Հնչակեանները, Շէնքին Բ. յարկը կազմարները, թիւ երեքին մէջ Հնչակեանները: Շէնքին Բ. յարկը

գարձեալ զառ զատ սենեակներու մէջ պիտի նստէին «Պայքար»եան, «Հայրենիք»եան և «Երիտասարդ Հայաստան»եան, «Լրարեր»եան խմբագիրները: Շէնքին Գ. յարկը՝ Բարեգործականի, Կապոյտ Ուաչի, Աղքատախնամի, Անկեղանոցի խնամակալութեան անդամները: Շէնքին Գ. յարկը՝ Գրասիրացի, Կրթասիրացի, Ուսումնասիրացի և Դըպրոցասիրացի տիկիներն ու օրիորդները: Շէնքին Ե. յարկը՝ Տիվրիկի, Տէրէնտէի, Կիւրիւնի և Արաբկիրի հայրենակցականները: Եւ այսպէս անվերջ:

«Երեակայեցէք որ մողական դաւազանի մը հպումով սենեակները իրարմէ զատող տախտակէ պատերը անհեացան... ազգային միութիւններ և կուսակցութիւններ իրենց ունեցածէն ի՞նչ կը կորսընցնեն:

«Այնպէս ինչպէս երկու թերթեր, երկու դրամառուներ, երկու առևտրական ընկերութիւններ կը միանան՝ անոնք կը միանան իրարու իրենց անդամներով, արխիվներով, հաշիւներով և կը կազմեն մէկ կուսակցութիւն: Հայ Ազգային Կուսակցութիւն:

«Եւ եթէ նոյն բանը պատահի ամէն երկրի, ամէն քաղաքի մէջ, նկատելով որ արաքսահմանի հայութիւնը 35 երկիրներու մէջ ցրուած է և ընդունելով որ իւրաքանչիւր երկրի մէջ միջին հաշուով քսան հայաչափ քաղաքներ կան, այսպէս 700 քաղաքներու մէջ գտնուող 700.000 հայութիւնը մէկ դրօշի ասակ հաւաքուած կ'ըլլայ:

III

— Պ. Ատենապետ՝ խօսելիք ունիմ, գոչեց Կայծակ Համբարձումեան յանկարծ բարկաճայթ տեղէն վեր ցատկելով:

— Կը ցաւիմ պ. Կայծակ, ըսաւ Մարտիկեան ի կարգ հրաւիրելով եռանդուն ատենախօսը: Մինչև որ պ. Մերոնեան չաւարտէ իր խօսքը՝ չէք կրնար խօսիլ բայց եթէ կը փափաքիք հարցում ընել, ադառ էք, կրնաք ընել:

— Պ. Մերոնեանը Ֆիլիպրսքր* կ'ընէ, չի ձգեր որ մենք խօսինք բողոքեց Կայծակ Համբարձումեան ընդհանուր ծիծաղի մէջ իր տեղը նստելով:

*) Ֆիլիպրսթըր բնիլ = Ամերիկեան ծերակոյտին մեջ, մինչև որ ծերակուսական մը խօսքը չաւարտէ ուրիշ մը չի կրնար խօսք առնել: Այս օրէնքին պալաթներով ծերակուսականներ օրերով կը խօսին վերստին ֆուկարիկի չսալու համար օրէնք մը, որուն պայմանաժամը լրացած է: Անցեալ տարի ծերակուսական մը Ֆիլիպրսքր բնիլով մեղացուց նախագահ Ռուզվելթի ոսկիի գինը իջեցնելու իրաւասութիւնը:

— Այս բոլորը լաւ, բայց անոր մէջ նոր սերունդը չեմ տեսներ, ըսաւ Մենծիկ Կորկոտեան երբ սրահը գտաւ իր սովորական խաղաղութիւնը:

— Պիտի դամ հոն, ըսաւ Խաչիկ Ծերոնեան անայլա՛յլ շարունակելով իր խօսքը: Անգամ մը որ քաղաքի մը մէջ կը կաղմուէի հայ ազգ. կուսակցութիւնը, այդ կուսակցութիւնը բնական է կ'ունենայ իր անդամներուն տարողութեան համեմատ սեփական շէնք մը, այսինքն ազգային տունը:

«Այս ազգային տունը կը նմանի ամերիկեան Վայեմսիլիի, սա ասորիներու թեմամբ որ անոր կրօնական քարոզչութեան բաժինը ամբողջութեամբ կը վերցնուի: Եւ անոր տեղ ազգայնականութեան բաժինը կը զրուի: Ուրի՛նք ազգային տունը նման ամերիկեան վերոյիշեալ հաստատութեան կ'ունենայ ամէն տարիքի, դասակարգի եւ սեռի յատուկ բաժիններ, ըլլան անոնք մշակութային, գեղարուեստական, ընկերային, մարզական եւ այլն:

«Եւ ճիշդ հոս է որ նախապէս գոյութիւն ունեցող բոլոր դանաղան եւ զարմանազան միութիւնները կ'անցնին իրենց նախասահմանուած գործունէութեան, այսինքն ուսումնասիրաց, կրթասիրաց, դպրոցասիրաց տիկիներն ու օրիորդները իրենց ջանքերը կը միացնեն մշակութային մարդին մէջ, երաժշտասիրաց, թատերասիրաց, դպրաց դասու երգչախումբի պարոններն ու օրիորդները գեղարուեստական բաժնին մէջ, Կապոյտ Խաչի, Բարեգործականի, Աղքատախնամի Տիկիներն ու Օրիորդները ընկերային բաժնին մէջ. Հայ Արիները, Յեղակրօնները, Կրտսերաց Լիկայի եւ Հ. Մ. Ը. Մ. Ի. անդամները մարզական բաժնին մէջ:

«Հայ քաղաքական կուսակցութեանց անդամները այս նորակաղմ կուսակցութեան ողնայարը կ'ըլլան եւ իրենց ղինուորական կարգապահութեամբ եւ նախաձեռնութեամբ մղուած կու տան գործին: Այսինքն եթէ իրենց գտնուած քաղաքին հայութիւնը եկեղեցի մը ունի, կ'աշխատին ազգային տուն մը ունենալու. եթէ եկեղեցի եւ դպրոց ունի, կ'աշխատին անոր քով դպրոց մըն ալ բանալու. եթէ ազգային տունը պակաս բաժիններ ունի — օրինակ մատենադարան, մարզական սրահ եւ այլն — կ'աշխատին այդ պակասները լրացնելու:

«Նկատելով որ քաղաքի մը հայ բնակչութեան ինչտուն առհարիւրը արդէն ունէ միութեան մը կը պատկանի — մէկը եկեղեցիի հարկամ է, միւսը կուսակցութեան, երրորդը հայրենակցականի, չորրորդը բարեգործականի, հինգերորդը զբոսախաչի, եւ այլն եւ նկատելով որ այժմ այդ բոլոր միութիւնները ձուլուած են հայ ազգային կուսակցութեան մէջ, հայ ազգային տունը հետեւողաբար կ'ըլլայ իրապէս այդ քաղաքի հայ բնակչութեան ազգային տունը:

«Հայ նկարիչը հոն կը ցուցադրէ իր պատկերները, հայ երաժիշտը

հոն կու տայ իր երգահանդէսը, նորապսակ հայ ամուրը հոն կ'ընէ իր հարսնիքը, հայ օրկիրներն ու օրիորդները հոն կը սարքեն իրենց պարահանդէսները, խնջոյքներն ու ճաշկերոյթները: Ուսումնաստանչ հայ երիտասարդը ազգ. տուն կ'երթայ մատենադարանէն օգտուելու, յոգնած հայ առեւտրականը՝ հոն իր բարեկամներուն հետ նարտ խաղալու:

«Նոր սերունդի ներկայացուցիչները ազգ. տուն պիտի գան նախ մարզանք ընելու և պարելու համար: Յետոյ սակայն անոնք հեծող-հեծէ պիտի գան մասնակցելու ներկայացումներու, նուազահանդէսներու և բանախօսութիւններու: Անզգայարար անոնք պիտի խառնուին մեծերու և փոքրով պիտի տեսնեն որ երկրէն եկած այդ «հին մարդիկը» իրենց կարծածին չափ ալ ատելի մարդիկ չեն:

— Բայց ո՞վ պիտի կոռավարէ այս ազգ. տունը, հարցուց Գեղամ Տօնապետեան հետաքրքիր: Կուսակցութիւնները իրարու զլուխ պիտի պատռեն անոր վարչութիւնը ստանձնելու համար:

— Ո՞ր կուսակցութիւնները, Կուսակցութիւններ այլևս գոյութիւն չունին, պ. Տօնապետեան: Կայ մէկ կուսակցութիւն, հայ ազգ. կուսակցութիւն և անոր անդամները քուէի մեծամասնութեամբ կ'ընտրեն եօթը հոգինոց իրենց վարչութիւնը: Այս վարչութիւնը իր ենթադասնախումբերով կը վարէ գանուած քաղաքին հայ համայնքին գործերը, այսինքն ղարոցը, եկեղեցին, կտակներն ու կալուածները:

«Նոյն երկրին մէջ գանուող քաղաքներու վարչութիւնները իրենց մէջ մէկ պատգամաւորներով այդ երկրի նայաչատ մէկ քաղաքին մէջ երկու տարին անգամ մը, կը գումարեն պատգմ. ժողով մը:

«Այս պատգամաւորական ժողովը, որ տեսակ մը կեդրոնական մարմին է, իր ներկայացուցած գաղութի հայութեան վերին իշխանութիւնն է: Ան կը պատրաստէ գաղութի ազգ. սահմանադրութիւնը կը գծէ դպրոցներու յատուկ միօրինակ կրթական ծրագիր մը, կը յանձանձէ առաջնորդարանի և եկեղեցիներու նիւթական և բարոյական մատակարարութիւնը: Ազգ. վարչութիւններ յենց գործունէութեան հաշիւը կու տան կեդրոնական մայմոյն և սնկէ կը ստանան հրահանգներ իրենց յաջորդ գործունէութեանց համար, կեդրոնական մարմինը օրակարգի հարցերը լուծելէ եօք կը ցրուի, պահելով միայն այդ քաղաքի ազգ. տան մէջ գրասենեակ մը: Այս գրասենեակը տեսակ մը բարոյական կապ կը պահէ իր իրաւասութեան ենթակայ եղող ազգ. վարչութիւններու և քարքեր գաղութներու մէջ հաստատուած համապատասխան գրասենեակներու միջև:

«Երեսունը հինգ երկիրներու կեդրոնական մայմիւնները հինգ տարին անգամ մը հարիւր հազար ձայնի ղէմ մէկ ներկայացուցիչով յարմար քաղաքի մը մէջ կը գումարեն ազգային կեդրոնական խորհուրդը:

Ազգային կեդրոնական խորհուրդը համագաղութային վերին իշ-

խանութիւնն է՝ գերագոյն բեղինակութիւնը, ինչու որ ան կը ներկայացնէ արտասահմանի ամբողջ հայութեան կամքը: Ազգային կեդրոնական խորհուրդը կը վճռէ թէ՛ ի՞նչ պէտք է ըլլայ կուսակցութեան շրջակը, քայլերգը, խորհրդանշանը, կամ ի՞նչ պէտք է ըլլայ արտասահմանի հայութեան դիրքը Հայաստանի հանդէպ և կամ կաթողիկոսարանի, պաթրիարքարանի, Բարեգործականի կեդրոնին նման հաստատութիւններուն իրաւական դիրքը կուսակցութեան հանդէպ, նկատելով որ անոնք համազգային բնոյթ ունին, և չեն կրնար ենթակայ ըլլալ իրենց գտնուած երկիրներու կեդրոնական Մարմնոյն հակակշռին:

«Ազգ. կեդրոնական խորհուրդին անդամները մտիկ կ'ընեն իրարու թելադրութիւնները, կը սրբագրեն իրարու սխալները, կ'օգտուին իրարու փորձառութիւններէն և հնգամեայ ծրագիր մը գծելով կը ցրուին: Ամէն գաղութի հայութիւնը բնական է, կը հպատակի այդ գծուած ծրագրին, այնքան, որքան իր երկրին օրէնքը կը թոյլատրէ:

— Ազգային բոլոր կազմակերպութեանց միացման ծրագիրը անկասկած բարի է, ըսաւ Յալախաճեան համոզուած Մերոնեանի բացատրութիւններէն, բայց պնդարելի է, որովհետեւ կուսակցութեանց պետերը պիտի հակառակին անոր:

— Բայց ինչո՞ւ, հարցուց Սաչիկ Մերոնեան դառն ժպիտով մը: Կուսակցական պետերուն նպատակը ազգին ծառայել չէ՞, երբ աղգին շահը կը պահանջէ այդ միացումը, ինչո՞ւ հակառակին: Մնաց որ իրենց շահն ալ կը պահանջէ այդ միացումը, քանի որ նորակազմ կուսակցութեան մէջ գործունէութեան համար աւելի ընդարձակ դաշտ մը պիտի գտնեն իրենց առջեւ:

«Ներկայ պառակտուած պայմաններու մէջ, ուր կը տիրեն այնքան հակամարտ շահեր, կիրքեր և ատելութիւններ, կարելի չէ քաղաքի մը կամ գաղութի մը մէջ օգտակար ձեռնարկ մը ի գլուխ հանել:

«Յատկանշական օրինակ մը յիշեմ ձեզի: Տիթրոյթի մէջ պիտի չինուէր դպրոց մը, կազմուեցաւ յանձնախումբ մը այնպիսի ձեռնհաս անձնաւորութիւններու կողմէ, որոնք քաղաքին բնակչութեան բացարձակ վառահութիւնը կը գրաւէին: Տիթրոյթի մէջ քան հազար հայութիւն կայ և անոնց մէջ չկայ մէկ հոգի, որ հակառակ ըլլայ նոր սերունդին տրուելիք հայեցի դաստիարակութեան գաղափարին: Սակայն հակառակ անոր երկու հարիւր հոգի մասնակցեցան հանգանակութեան: Ինչո՞ւ, որովհետեւ այսինչ պարոնը Դաշնակցական է՝ միայն Դաշնակցականներուն կու տայ, այնինչ պանակցական է՝ միայն Ռամկապարներուն կու տայ, եկեղեցասէր ընդ Ռամկապար է՝ միայն Ռամկապարներուն կու տայ, Բարեգործականի այնինչ այսինչ օրիորդը միայն եկեղեցիին կու տայ, Բարեգործականի այնինչ ատիկինը միայն Բարեգործականին կու տայ: Առնենք ցորենի հանձնոյնն է պատկերը ամէն մարդի մէջ: Առնենք ցորենի հանձն

գանակութիւնը: Ո՞ր հայը չ'ուզեր Սուրբոյ մէջ անօթի տառապող իր աղքատկիցներուն կտոր մը հաց տալը: Բայց ո՞ր Հայը տուաւ: Այն կաղմակերպութիւնը որ օգտակար ձեռնարկի մը զլուխը կ'անցնի միայն իր սահմանափակ թիւով ընկերներուն չըջանալին մէջ կրնայ գործել: Ան չի կրնար իր գործունէութիւնը ընդլայնել և արդիւնաւորել միւս չըջանալիներու մէջ, որովհետեւ միւս չըջանալիներուն դռները գոց են իր առջևը, որպէս թէ ջուճըթի դռներ ըլլային անոնք:

«Այս տեսակ արգելքներու և խափանարարութիւններու առջև ինչպիսի՞ հրաշք կրնանք սպասել կուսակցական պետերէն: Բարիդի մէջ նստող խափսեան մը անաղանդի կանչեր արձակելէն կոկորդը կը պատռէ, բայց զրնքը լսող չկայ: Մինչդեռ անրկա եթէ ինծի և ձեզի պէս պարզ անհաս մը ըլլար հայ ազային կուսակցութեան մէջ և եթէ Բարիդի Ազգ. վարչութեան անդամ ընտուէր՝ ան կ'ուռնէր իր ձայնը Բարիդի Հայ համայնքի գործերուն մէջ. եթէ անդամ ընտրուէր Ֆրանսայի Կեդր. Մարմնոյն՝ ան կ'ուռնէր իր ձայնը Ֆրանսայի Հայ գաղութի գործերը կառավարելու մէջ. իսկ՝ եթէ Ֆրանսայի Պիճիֆայի, Իթալիոյ Հայոց կողմէ — որովհետեւ հարիւր հազար ձայն պէտք է ներկայացնէ — անդամ ընտրուէր Ազգ. Կեդր. Սորհուրդին՝ այն առանձին իր ձայնը լսելի կը դարձնէր արտասահմանի Լօթը՝ հարիւր հազար հայութեան:

— Բայց հապա չընտրուէ՞ր, դիտել տուաւ տիկ. Շողակաթ՝ Աղքատախնամի բարի հրեշտակը: Կուսակցութեանց պետերը — խօսքս ուէ անձի ակնարկուած չէ — փոխանակ ենթադրական վերընտրութեան մը համար իրենց աթոռ վտանգելու՝ նախապառւ կը համարեն քիւրտ պէկերու պէս աւելի մը ցեղապետ ըլլալը քան թէ ազգի մը թագաւորը:

Տիկին Շողակաթի սրախոսութիւնը ծիծաղ մը յատաջացուց ներկաներու դէմքերուն վրայ:

— Բայց ինչո՞ւ չընտրուին տիկին, հարցուց Սաչիկ Ծերունեան: Աղբիւն ծառայել ուզող մարդոց սով կայ: Քանի՞ մարդ պատրաստ է ծառայելու՞ ոչ ոք անոր էքք! Կ'ըսէ: Իսկ եթէ կ'ըսէ՝ կը նշանակէ թէ ազգը չ'ուզեր անոր ծառայութիւնը: Եւ քանի որ ազգը չ'ուզէր անոր ծառայութիւնը, այն առանձին ինչո՞ւ ջանալ ինքզինքը ազգին պարտադրելու: Միթէ կուսակցական գործիչը պատրաստ չէ՞ ազգին շահին համար իր կեանքը զոհելու, ո՛ւր մնաց աթոռը:

Եւ բացայայտ է ազգին շահը այս միացման մէջ: Կ'ուզէ՞ք որ թուեմ մէկ քանին: Պիւտճէի տեսակէտով՝ քաղաքին մէջ գտնուող բոլոր խառնիճաղանձ սրահները, ակումբները, դպրոցները, եկեղեցիները կը ջնջուին, կ'ուռնեն անք չնորհքով մէկ եկեղեցի, մէկ դպրոց, մէկ ազգային տուն: Կրթական տեսակէտով դպրոցը կրնայ մէկի տեղ երկու երկուքի տեղ երեք կարող ուսուցիչներ վարձել և տղոց ուսման մա-

կարդալը բարձրացնել: Մշակութային տեսակէտով՝ դաղութիւն մէջ փոխանակ 10—15 անխնամ թերթեր ունենալու, կ'ունենայ 2—3 թերթեր, բայց աւելի ընդարձակ ծաւալով և կանոնաւոր բովանդակութեամբ, որոնք միեւնոյն ատեն ի վիճակի կ'ըլլան լիուրի վարձատրելու ո՛չ միայն իրենց խմբագիրները, այլև աշխատակիցները: Երբ օգտակար յօդուած մը հրատարակուի թերթի մը մէջ, նման ամբերիկեան սինսիֆէյթ եղած թերթերուն՝ միւս զաղութներուն թերթերը կ'արտատպեն զայն այսպէս սեփականութիւնը դարձնելով արտասահմանի ամբողջ հայութեան կրօնական տեսակէտով՝ եկեղեցականներ յանցանք գործելով ցանկապատէն ցափկող զողբերու նման մէկ կուսակցութեան եկեղեցիէն միւս կուսակցութեան եկեղեցիէն չեն կրնար ցատկել, հետեւաբար ընդ միշտ կը դաղրին բանկալի կոիւնները: Առեւտրական տեսակէտով՝ հայ մը եթէ անձանօթ քաղաք մը երթայ՝ կ'ունենայ այդ քաղաքի հայ բնակչութեան լիակատար ցանկը հասցեով և դաղումով: Ընկերային տեսակէտով՝ եթէ մէկը փնտոէ իր կորսուած մէկ ազգականը, անոր անունը կը կախուի 700 քաղաքներու Ազգ. Տուններու ծանուցման ցանկին մէջ: Գաղաքական տեսակէտով՝ զաղութը չունենալով իր մէջ կագ ու կոիւ՝ գտնուած երկրին իշխանութեան աւելի սիրելի կը դառնայ: Յետոյ իր միտաբար ըլլալու հանգամանքով՝ ան ընտրութեանց ատեն կրնայ իր քուէն սակարկել մէկ կամ միւս կողմին հետ այսպէս առաւելագոյն օգուտներ ապահովելով իրեն: Ազգային տեսակէտով կարելի կ'ըլլայ ծնունդներու, մահերու, ամուսնութիւններու կանոնաւոր վիճակագրութիւններ պատրաստել. հանգանակութեան պարագային կարճ ժամանակամիջոցի մէջ ամբողջ գաղութահայութիւնը մէկ զինուորի պէս գործի լծել. վերջապէս քինախնդրութեանց դարմանումով քիչ մը հոգեկան խաղաղութիւն վայելի և հանդարտ մտքով ու սրտով աշխատիլ:

«Հայրենակիցներ, ըսաւ Խաչիկ Մերոնեան եզրակացնելով իր խօսքը, ներկայ դրութեամբ մեր վատնած բոլոր ճիգերը սանդի մէջ ջուր ձեծելէն անդին չանցնիր: Առանց կողմնակալութեան և նախապաշարուածի մօտենանք հարցին և իրրե սրտցաւ Հայեր քաջութիւնը ունենանք նշրակը զնելու թարախոտ վէրքին վրայ: Վէրքը ծածկելով բան չենք շահիր, բայց ճեղքելով թերևս:

«Պատմութեան առջև պատասխանատու են բոլոր անոնք, որոնք անտեսելով արևի պէս այս պայծառ ճշմարտութիւնը՝ տակաւին կը յամառին զանշուածները առաջնորդել տարբեր ուղիներէ:

«Փա՛մ է որ մոռնանք մեր սին վէճերը և մեր ուշադրութիւնը դարձնենք ազգապահպանման այս գերագոյն միջոցին վրայ: Սիրազարմանք ազգապահպանման այս գերագոյն մեր հետը: Ապա թէ ոչ շահինք նոր սերունդը և զայն ունենանք մեր հետը: Ապա թէ ոչ

կ'աղբարարեմ ձեզի, մենք Մարաթնի վաղքին վերջին վաղոշները պիտի ըլլանք:

Խաչիկ Ծերոնեան նստեցաւ իր տեղը: Կարծես թէ Խորայէլի մարգարէ մը ահաւոր աղէտ մը նախապես էր իր ժողովուրդին, ճնշիչ ծանրութիւն մը իջաւ ներկաներուն վրայ:

— Պ. Կայծակ խօսքը ձերն է, ըսաւ ատենապետը պահ մը ետք զսպելով իր ներքին յուզումները:

Մակայն Կայծակ Համբարձումեան, որ շարունակ մատ կը վերցընէր խօսելու արտօնութիւն ստանալու համար, չչարժեցաւ քեղէն:

Ամէնքը զարմացած հայեցան անոր:

Պ. Կայծակ զրուէր հակած կուրծքին վրայ կ'արտասուէր:

Ինչո՞ւ

Որովհետեւ մինչ Խաչիկ Ծերոնեան կը խօսէր, անոր հոգւոյն խորը ահեղ կռիւ մը տեղի ունեցած էր և այդ կռուոյն մէջ կուսակցական մարդը պարտուած, հայ մարդը յաղթանակած էր:

Մայրմի, 24 Մարտ 1940

ՎԱՀՐԱՄ ՏԱՏՐԵԱՆ

Պ Ի Տ Ի Մ Ե Կ Ն Ի Մ

Պիտի մեկնիմ՝ որ քու դուռն ա՛լ բախել չը գամ.
Դարձո՛ւր աչերդ՝ աչերուս դեմ վերջին անգամ,
Մի՞նչ կուրծքիսակ՝ որպէս զո՛ւր զուժկան կոչնակ
Կը զօղանջէ պահն անջասման անփառունակ:

Խորաբափանց ժըպիս մ'ալ տուր սրբիս անյոյս,
Յիշողութեանս խաւարին մեջ որ ըլլայ լոյս,
Եւ արցունքիս տարափին դեմ ուրախութեան՝
Մեր նախկին սերն յաւե՛ս ծաղկի գերք ծիածան:

Թո՛ղ որ դեմքն իմ՝ բիբերուդ մեջ տեսնեմ կրկին.
Դիտեմ քրքուռ գարկն ալ վրդիդ շրջերակին.
Մի՛ գրլանար, վերջին անգամ ժըպէս ինձի,
Նըման աստի՛ն՝ որ սա լինին իսկ կը գիշի:

Գիտցի՛ր որ այս արցունքներուն մեջ վիճ չըկայ,
Եւ ես պիտի չըսպաննեմ զիս շեմիս վրայ...
Այսօր գրկանք, այսօր սանջանք, այսօր չարիք,
Ես նախապէս տեսած էի, սիրո՛ւն աղջիկ...

1927

Փ Ո Թ Ո Ր Կ Ա Լ Ի

Փոքորկայի անկիւններէն հիւսիսի՝
Կը փըշէ հովն եւ յուսընկան կը մըսի,
Թառամած է արեայոյսի սիրեն ոսկի,
Ու չես գիտեր քե ո՞ր կողմէն կը ծագի:
Առտուն՝ անհուն վիճով հիւս կը սրգայ՝
Սիրերգի տեղ՝ ամենուրեք ողբերգ կայ.
Ծափն ու ծիծաղն՝ որ հոգին էր այս կեանքին,
Մըքազներ է իր այգին մեջ առաջին:

Չի կարօտնար, նա չի յիշեր զիս երբեք.
Չի գըքար իսկ երբ մեռնիմ սրբաբեկ.
Ո՞հ, այս վիճիկն էս չեմ տկար ընդերկար,
Ու կը մարիմ սա յունքին պէս դալկահար:

Յուսակորոյս, անմըխիթար, դալկադէմ,
Այ չե՛մ տկար այս կըսկիծին, կը պնդեմ . . .
Ու սակաւին դիմանալով՝ կ'ապրիմ ես,
Միայն ինձի մի՛ հարցընեք քե ի՛նչպէս . . .

1928

Օ Ր Ն Ա Ր Ի Ի Ն Ա Ծ

Օրն արիւնած՝ կասարներուն վըրայ կ'իյնայ.
Կ'անի ողբերգն առուններուն յորդ ու վընիս,
Եւ կը մոռնայ սոխակն իր երգն հոգեհրմայ,
Ամէն օր որ կ'անցնի առանց վերադարձիդ:

Ամէն անգամ էու վերադարձն երբ կ'ուշանայ,
Քիչ մ'աւելի տաս կը հասնի մտն իրիկունան.
Թռչնիկն անդին կու լայ միեակ ծառին վըրայ,
Եւ կը ցամփի ծաղկաստանի սիրեն հոտեւան:

Պարեգին մեջ՝ կը քառամի քիչ մը զարուն.
Քարին փարած տարփոտ բաղեղն ալ կը բուլնայ.
Լիափքիք վարդէն կ'իյնայ փերք մ'ալ սքծոյն,
Ամէն անգամ էու վերադարձն երբ կ'ուշանայ:

Եւ կ'ուշանայ վերադարձիդ պանն երջանիկ.
Գիշերն՝ առտու, կ'ըլլայ առտուն գիշեր նորէն.
Երագելէն մըրափելէն, հասիկ հասիկ
Կուղեւորին կեանքիս օրերն անդարձօրէն . . .

1930

Վ.Ա.Հ.Ր.Ա.Մ. ՍՕՅԵԱՆ

Գ Ր Ի Գ Ո Ր Մ. Պ Ը Յ Ը Գ Լ Ի Ո Ւ

1840 - 1912

(ԻՐ ԾՆՆԻՒՅԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒԻ)

— 0 —

Հայերը դարերու ընթացքին, գաղթեցին նաև Ռուսաստան:

Անոնք լքած էին, կործանող եւ յայտնակող թշնամիներու ձեռքը, սիրելի հայրենիքին մէջ իրենց օճախն ու և անոր սրբութիւնները: Օտար հորիզոններու տակ կեանք հայցող հայրենադրաւ հայր՝ շատ շուտով տեսած էր իրեն վրայ սլացող ձուլումի ուժգին հեղեղ. սակայն ան ուղեց իր ուխտին անդրդուելի մնալ յաւէտ. հայ ապրիւն էր ընտրած իրեն նշանաբան: Հայրենի երկրէն բերած ազգային շունչով կանգնեց կոթողներ (վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ): Եւ զարձեւալ այդ նուիրական շունչը պահելու համար հիմը դրաւ Հայաքաղաքներու անգամ:

Ցաւալի է ըսելը թէ՛ հակառակ այս բունն ճիգերուն, Ռուսաստանաբնակներ քանիցս տարուած է ձուլումի անդուսպ հոսանքներէն՝ Թիրապետող Բրիտանիայ տարրին դերակշիւ ազդեցութեան ներքեւ. եւ եթէ Ռուսաստանի մէջ դեռ այսօր ալ կայ հայ լեզուն խօսող ու գրող, ան հետզհետէ հասնող նորանոր գաղթականութեան թարմ ու կենսունակ ուժերուն արդիւնքն է:

Բայց եւ այնպէս եղան նաև գիտակից հայեր՝ որոնք մէկ քանի սերունդ շարունակաբար կարողացան հայ ապրիւ և իրենց ներաշխարհի հրդեհէն կայծեր արձակելով հրահրել մարելու վրայ եղող եռանդը իրենց ցեղակիցներուն՝ Ահա ատոնցմէ եղաւ Անեցի աղնուաղարմ Պուլսուզկեան դերդաստանը՝ որուն ամենավերջին և արժանաւոր շատաւիգներէն Գրիգոր Միկրղաւ Պըյրզլուի ծննդեան հարիւրամեակը կը լրանայ այս տարի: Ան իր ցոյց տուած վերջին ծայր ազգասիրութեամբ բացառիկ զէմք մը եղաւ Ռուսաստանայոց պատմութեան մէջ:

ԻՐ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ

Պուլսուզկեանները (Buiuciu) ամենահին ու մեծ անցեալ ունեցող դերդաստաններէն մին եղած են: ԺՁ դարուն երբ Շահ Սրբաս կ'սրբաւէ Հայաստանի վրայ, Հայոց մեծամասնութիւնը կը սալպուի թողուլ իր հայրենիքը ու գաղթել Խրիմ. յետոյ մաս մը կ'անցնի Մու-

տովա, Թրանսիլվանիա և Կալիցիա (Լեհաստան), իսկ մաս մըն ալ Ռուսիայի (Պոլևկարիա), այս վերջիններուն մէջ կը գտնուէր Եսայի անուն մէկը որ հասաւտուեցաւ Ռուսոնք եւ, Թուրքերու կողմէ, իր թաւ պեխերուն համար, կոչուեցաւ «պըլզըլը», ահա այս անունն էր որ իբր մականուն կրեց այս գերդաստանը: Եսայի յաջորդները շարունակաբար կը զբաղուին վաճառականութեամբ: Պուլզըլիաններու (կամ Պըլզըլեաններու) հինգերորդ սերունդէն Հսճի Մանչուկ (Մանուկ) Պոկոան (Աստուածաբան) Պըլզըլիու, ծնած 1760ին կը հաստատուի Մոլտովայի Եաջ մայրաքաղաքը: Իր զաւակներէն Մկրտիչ եւ անոր եղբայրը Յակոբ մեծ դեր կ'ունենան Ռուսաստանոց կրթական և քաղաքացիական բարեկարգութեանց մէջ:

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Գրեգոր Մ. Պըլզըլիու ծնած էր Եաջ 1840ին, զաւակն էր Յակոբ Պըլզըլիուի ու Մարիամի (ծն. Թօսուն). կ'աշակերտի տեղւոյն անուանի ուսուցիչ Խաչերես Գարագաշեանի անհատապէս հիմնած դպրոցին*. իսկ երկրորդական ուսումը կը ստանայ, իր միւս երեք եղբայրներուն հետ, Բարիդի Մխիթարեանց Մուրատեան վարժարանին մէջ: Յետոյ կը մտնէ Բարիդի և Եաջի համալսարանները՝ ուր կը հետեի իրաւաբանութեան: Համալսարանի վկայականը կը ստանայ Եաջի մէջ:

1869ին Եաջի դատարանին դատախազ կը նշանակուի, ուր շատ շաբերու գնահատանքին կ'արժանանայ. 1874ին Եաջի վերաքննիչ ատեանին մօտ ընդհ. դատախազի պաշտօնը կը ստանձնէ. իր սոյն բարձր պաշտօնին մասին բուժմէն զրազէտ ու հասարակական գործիչ Կ. Բանու իր «Amintiri de la Junimea» (Յիշատակներ ժողովմեանէն) անուն գործին Ա. Հատորին մէջ 35 տարի յետոյ հետեւեալը կը գրէր. —

«Պ. Պըլզըլիու իբրև Եաջի Ատեանին ընդհ. դատախազ ամենահրաշալի յիշատակները թողած է: Խստօրէն ուղիղ, իր պարտականութենէն թիզ մը իսկ չհեղած, խելացի և ուսեալ ու խօսելու յակունթեամբ օժտուած, ան կը ներկայացնէր ընդհ. դատախազի արժանիքը: Ան, ատեն ժը, Փրանսա ալ մնաց: Այսօր ալ, երբ Եաջի ընդհ. դատախազի մասին կը խօսուի, Պըլզըլիուն ցոյց կը արուի իբրև բացառիկ նմոյշ»:

1876ին երկրին զահրիճը կը փոխուի, Գրեգոր կը զառնայ իրա-

*) Պ. Բահանայ Մամիկոնեան «Ռուսաստանոց ցեղան եւ՝ ապագան» սպ. Կալաց 1895 էջ 124:

ւազէտ. ան կ'ըլլայ այն հազուագիւտ անձերէն մին՝ որ քաջածա-
նօթ երկրին բոլոր օրէնքներուն, կը գործեն խղճմտութեամբ: Նոյնիսկ
նախկին իշխան Միհայ Սթուբըզա, Գրիգորի կը յանձնէ շատ դժուար-
րին դատ մը՝ որը յաջողցնելով կը դառնայ անոր ամենասիրելի՝ միակ
իրաւաբանը: Ժուներմէա Միութեան մէջ ևս կ'ուսննայ իր դերը
(Անդամ էին նաև իր եղբայրներէն Յովհաննէս և Արտաշէս Պըլըզլիու-
ները և ուրիշ Հայեր): Յօդուածով մը մասնակցեցաւ այն բուռն վէճին՝
որ ծայր տուած էր Ժուներմիաի պաշտօնաթերթ «Convorbiri Literare»
և Պուքրէշ հրատարակող «Revista Contemporană» ի միջև և հոն դի-
մակազերծ կ'ընէ այն բանագոյութիւնը զոր բրած էր Կ. Սգէինա իր
«Despre condițiunea civilă a femeii» անուն յօդուածով. սոյն գրու-
թիւնը հիւրընկալուած էր իբր «Revista Contemporană» կողմէ և ըն-
թերցողներուն ներկայացուած էր իբր ինքնատիպ և հմալից յօդ-
ուած մը, մինչդեռ ան իսկականին մէջ ընդօրինակուած էր Ֆրանւացի
ուսուցիչ Paul Gideի գրած հատորէն:

1882ին Պըլըզլիու Պուքրէշի «Creditul Funciar Rural» ելմուկան
հիմնարկութեան Մուտովայի ներկայացուցիչ կը կարգուի և այս պաշ-
տօնը կը վարէ 5 տարի շարունակ:

1888ին երեսփոխան կ'ընտրուի, իսկ 1892ին Ֆըլչիու նահանգէն
ծերակուտական:

Գրիգոր Պըլըզլիու, սակայն շատ չի մնար այս պաշտօններուն
գլուխը. ան թէև ղեկամակութեամբ, սակայն դարձեալ կ'ընդգրկէ
իր սիրեցեակ դատական պաշտօնները. հրաւիրուած ըլլալով դատական
նախարարութեան կողմէ նամակաւ, ստանձնելու համար Բարձր. Վճռ-
արեկ Ատեանի անդամի պաշտօնը:

1908ին իր յառաջացած տարիքին պատճառաւ հանգստեան կը
կոչուի: Թ. Սթեիլեան ծանօթ իրաւաբան ու երկրին դատական նա-
խարարը հետեւեալ շնորհաւորական գիրը կը յանձնէ Գրիգորի իր 14
տարի մատուցած թանկագին ծառայութիւններուն համար.—

«Ձեզի կը յայտնեմ իմ խորին շնորհակալութիւններս ձեր մեծ-
արժէք աշխատութիւններուն համար զոր ընծայեցիք դատարանին
մինչև վերջ, երբ գրաւեցիք՝ այդքան վեհութեամբ Բարձր. Վճռարեկ
Ատեանի խորհրդականի պաշտօնը»:

Գրիգոր Պըլըզլիու կը մեռնի 1912ին 72 տարեկան:

Ա. Զ. Գ. Ա. Ս. Է. Բ. Ը.

Իսկապէս՝ այս հիւրընկալ երկրին մէջ եղան հանրածանօթ հայ
մեծ զէմքեր որոնք իրենց մասաւորական բարձր կարողութեանց շնորհիւ
կարեւոր ծառայութիւններ մատուցին ուղեմէն ազգին. օրինակ— փի-
լիսոփայ մը՝ Վ. Բոնդա, կրթական գործի առաքեալը՝ Սփիրու Հարէթ,

Ան շատ անգամ այցելեց զանազան հայկական ճոխ գրադարաններ և ուսումնասիրեց բազմաթիւ ձեռագիրներ եւն. անա՛ այս պրպուսումներուն շնորհիւն էր որ Պըյըգլիու ինչպէս Հայերը նոյն քան ալ Ռուսմանացիները շահագրգռող երկու թանկագին ձեռագիրներ (Բարիզի և Վենետիկի մէջ) երեան հանեց որոնք մէկ քանի դարերէ ի վեր Հայոց կողմէ բոլորովին մոռցուեալ էին: Առաջինը Մինաս սարկաւազ Թոխաթեցիի գրած «Ողբ ի վերայ Օլախաց երկրի Հայերուն» անուն քերթուածն է որը սկանատեսի նկարագրու թիւնն է 1551 թուին Շթէֆան Ռարէշի կողմէ Մուսովարնակ Հայոց կրած բուռն հալածանքին:

Գ. Պըյըգլիու Բարիզի մէջ գտած սոյն ձեռագիրը (ողբէն բաւական մասեր կը պակտէին) առաջին անգամ հրատարակել առաւ Փեթերսպուրկի Արեւիկան Ակադեմիի ուսուցիչ Մ. Պատկանեանի միջոցաւ որմէ յետոյ Հայոց մէջ հետաքրքրութիւն ստեղծուելով Շամուշվարի (Հայաքաղաք Կեոլա) և Վենետիկի մէջ երեան բերուեցան այս տաղաչափուած ողբին երկու ամբողջական օրինակները: Պըյըգլիու զայն Ռուսմէններուն ծանօթացնելու համար թարգմանելով ու անոր կցելով գեղեցիկ յառաջարան մը հրատարակել առաւ «Convorbiri Literare» (Գրական Խօսակցութիւններ) հանդէսին մէջ, իսկ աւելի վերջ զայն ի լոյս ընծայեց անանձին գրքոյկով, 1895ին:

Մինաս Թոխաթեցիի ողբին ուսումներէն թարգմանութիւնը հրատարակելով, Գրիգոր Պըյըգլիու իբրև թուռնդ հայրենասէր և լուսամիտ քաղաքացի իր ընդարձակ յառաջարանին մէջ ձաղկած է յոյն Ծանարիօթներու ամենալիրը զրպարաութիւնները և մ. լիռանդ նախապաշարումները, ցոյց տալով թէ Ռուսմանիոյ ամէնէն զորուելոյ և ուղղամիտ վաճառականի համբաւ վայելող Մուսովարնակ հայ տարրը, որ իրենցմէ անհամեմատ աւելի հին ու արդիւնարեր ընտրանին նկատուած էր, չարաչառութեան զոհ կը դառնար կրօնքի անունով և կրօնքը գործիք մը կ'ըլլար նախատելու և ընկճելու համար Հայերը:

Նոյն այս նախատինքին և անիրաւ բանասրկութեան զոհը չէ՞ր դառնար նոյնինքն Գրիգոր Մ. Պըյըգլիուն, քաղաքացիական ընթրութեան մը առիթով, երբ զիւզացիները սիրայօժար պատրաստ էին իրենց քուէն տալու անոր յարգուած անունին, յանկարծ «արցլ սլոր» յորջորջուած առասպելական շան մը առջև երկրպագելու դիրքին մէջ կը գտնէ իր նկարը:

Արցիպուր* ուրիշ բան չէր բայց եթէ լիրբ աղաւաղումը Ա. Սարգիսի պահոց «Առաջաւորաց» բառին:

*) Որ մեկ ուսմէն բառգլիփի մէջ սակաւին կրեստնուի արցիպուր բառին դէմ իբրև քարգմանութիւն Armean (Հայ):

Իր երկրորդ լոյս բերած ձեռագիրն է չորս քահանայներէ Կամե-
նից քաղաքին մէջ գրի առնուած ընդարձակ յիշատակարանը որ Լե-
հաստանի ու Մոլտովայի 1430—1621 ասորիներու օտար իշխանու-
թիւններու դահակալութեան շրջաններու սակ ապրող Հայոց կեան-
քը կը նկարագրէ:

Այս քրոնիկը 1430—1611 գրուած է հայերէն իսկ 1611—1621
հայաստան թաթարերէն: Պըյըզլիուի ջանքերով առաջին անգամ զայն
հրատարակել տուած է 1896ին Վենետիկի Մխիթարեաններուն, աւելի
վերջ ուսմաներէնի թարգմանելով հատուածներ հրատարակած է
դարձեալ «Convorbiri Literare»-ի մէջ, յետոյ 1906ին նոյնը Տեորոթ
Վոտայի կեանքէն քաղելով լոյս ընծայած է առանձին զրքոյկի
մը մէջ:

Գրիգոր Պըյըզլիու բացի վերոյիշեալ երկու պրպտումներէն, 1888-
ին «Բաղամովէպ»-ի մէջ լոյս ընծայեց յօդուած մը Արճէշ (ուսմ.)
գիւղի և մասնաւորապէս Արճէշ նշանաւոր եկեղեցիի մասին. և ու-
ղեց զանաղան փաստերով ապացուցանել թէ Հայաստանի Արճէշցի-
ները Ռուսմանիա գաղթելով հիմնած են նոյն անուն կրող գիւղն ու
եկեղեցին*:

Գրիգոր Պըյըզլիուի գրքերուն մէջէն, զոր նուիրած էր Ռուսէն
Ակադեմիին, գանուեցան իր մահէն յետոյ երկու կիսկաօթար մնա-
ցած ձեռագիրները— ուսմէն լեզուով ուսումնասիրութիւն մը՝ Լէմ-
պէրկի Հայոց իրաւունքներու վրայ, և հայերէն ուսումնասիրութիւն
մը Արճէշի վանքին մասին:

Այս վերջին ուսումնասիրութեան մէջ մնացած էր 1912 ապրիլ

*) Առաջին անգամ Արեւեի հայ ծագման մասին խօսած է Mihae-
lis le Quien անուն կրօնաւոր մը իր երկու հասրէ կազմուած «Oriens
Cristianus» աշխատութեան մէջ, սպ. Բարիզ 1740:

Le Quien ի լուրջ հետեւող մը ու այս խնդիրը այ աւելի լուսա-
բանող մը եղաւ ուսմէն նեանաւոր բանասէր Պօկսան Հաժսէու (1837—
1907), ան 1888ին «Revista Nouă»-ի մէջ լոյս ընծայեց Արեւեի վանքին
մասին հեղինակաւոր յօդուած մը:

Le Quien-ի և Հաժսէուի աշխատութիւններուն զուգակէիքը կ'ընէ
փրօձ. Dumitru Stănescu իր «Vechile Episcopii la Români» («Մուսմանա-
ցիներու հին եպիսկոպոսարաններ») անուն գրքին մէջ (սպ. Պուրեռե
1927 էջ 64—72) ուր կ'եզրակացնէ. — «Ինչ որ այ րլլայ ժամանակա-
օրջանին իրականը (ծանօթ.— Հայոց Արեւե գաղթած կամ էլ նարաւ
բուականին կ'ակնարկէ) ես վստան որ ուսմէն ժողովուրդը ինքզինքը
վիրաւորուած չպիտի զգայ, երէ որ մը փաստով թէ Արեւեցիներու քիւս-
մորքութեանը մէջ պուսիկ մը նօյլ զհնուի հայկական ազնիւ ցեղէն»:

14 թուակիր նամակ մը, ուղղուած ճարտարապետ Թորոս Թորոմանեանի «Անահիտ»-ի 1911 Սեպտ.— Դեկտ. թիւին մէջ գրած անոր յօդուածին առթիւ Պըլքլիու կ'ըսէ հասցէին չհասած այդ նամակին մէջ.— «Ձեր «Անահիտ»-ի վերջին թիւին մէջ հրատարակած Հայոց ճարտարապետութեան և ըստ մասին Ռուսմանահայոց գրագիտութեան համար ամենանշանաւոր ուսումնասիրութիւնը նիւթ կու տայ ինծի ձանձրացնել զձեզ, անոր մասին փոքր տեղեկութիւն մը հայցելով: Մտադիր եմ Ռուսմանահայոց ճանացուցանել իրենց Մանօլի ճարտարապետութեան աւանդութիւնը մեր Մանուէլ ճարտարագետի աւանդութեան հետ: Ասիկա նոր փաստ մը պիտի ըլլայ անոնց համար որ կը պնդեն թէ Ռուսմանիոյ մէջ Արճէշի եկեղեցին երբեմն սեփականութիւնն է Հայոց. հայ ճարտարապետ մը ձեռքով կառուցեալ իր ագգին ոճով, Հայաստանի Արճէշէն զաղթած՝ իրենց բնավայրին անուամբ հիմնած քաղքին մէջ: Այս պատմական ղուգադիպութիւնը ի լոյս տալէն առաջ, կը փափաքէի ունենալ ձեր յիշած կտոր երգին բովանդակութիւնը, զիտնալ ո՛ր ժամանակի գործն է, ո՛վ է ոտանաւորի դարձնող բանաստեղծը, և վերջապէս ո՛ր տպագիր ժողովածուին մէջ գտնուելը»:

* * *

Այսօր դար մըն է որ կ'անցնի Գր. Պըլքլիու ծնունդէն. և իր այս պանծալի տարեդարձին առթիւ, այստեղ փորձեցի ընդհանուր զիծերով պատկերացնել իր բեղմնաւոր կեանքին զանազան ղրուագները, որոնց իւրաքանչիւրը իսկական զոհարներ կ'արժեն հայ ընդհանուր կեանքի պատմութեան մէջ, իբրև ամրակուռ թումբ հայ հաւատքի, հայրենի սրբազան աւանդութեանց և հայեցի ուժգին նկարագրին, որուն առջև բոլոր օտարօտի հզօր հակադիմացութիւնները փշրուեցան:

Մաղթելի է որ Անի քաղաքի հայութեանն՝ օտար հողի վրայ 7 սերունդ քաջքրուած գերդաստանի մը այս վերջին արդիւնաբեր շառաւիղը որպիսին է Գրիգոր Մ. Պըլքլիու, իբրև կարկառուն օրինակ հանդիսանայ Ռուսմանահայութեան, որուն վերջին թրքահայ գաղթականները, հազիւ քսան տարուայ հնութիւն ունեցող, երկրորդ սերունդի բեմին վրայ ձուլուելու վտանգին մէջ կը գտնուին այսօր:

ՍՈՒՐԵՆ Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԾԱՆՕԹ.— Գր. Պըլքլիու իր մասեճարանին հետ միասին ռուսէն Ակադեմիին կսակեց նաեւ մէկ միլիոն յէ արեւելեան (հայերէն, արաբերէն, պարսկերէն, քրեերէն) լեզուներու ուսումնասիրութեան համար:

Ռուսէն ակադեմիին յարգելու համար նուիրատուին յիշատակը 1914-ին լոյս բնծայեց պատկերազարդ հասոր մը որ կը բովանդակէ.— Գր. Պըլքլիուի կսակը, կեանքը, Պոլսուցիեան գերդաստանի պատմութիւնը, ռուսէն սեճանուն պատմագէտին եւ Հայոց քանկագին բարեկամին փրօձ. Ն. Եօկայի «Armenii și Români o paralelă istorică» անուն արժեքաւոր երկասիրութիւնը, ինչպէս նաեւ Պըլքլիուի մասեճարանին ընդհ. ցանկը:

Տ Ի Պ Բ Ա Ն Զ Ո Ի Հ Ա Ճ Ե Ա Ն

(1837 – 1897)

Հայ արդիւնաւոր երգահան Տիգրան Չուհաճեանն ալ կարելի է դասել այն հանճարներու շարքին, որոնք պէտք եղած գնահատանքն ու քաջալերանքը չեն գտած իրենց ժողովուրդէն և շուտով մոռացութեան մատնուած են:

Չուհաճեանի գործը սակայն՝ երգի լեզուն, որ չի կարօտիր թարգմանի, ըստ արժանւոյն դրուաւորուած է օտարներէն, որոնք չեն վարանած անուանելու զինք նոյն իսկ «Հայ Վերդի» մը կամ «Օֆէնցախ» մը:

Յսջորդ տողերը՝ համառօտ ակնարկ մը կը դիտեն տալ մեր Վերդիի կեանքին ու գործին մասին:

Տիգրան Չուհաճեան ծնած է Պոլսոյ Բերա թաղը 1837ին: Հայրը՝ Գյորգ անուն հայ երեւելի ժամագործ մըն էր, որ սիրող էր երաժշտութեան ու գեղարուեստի: Տիգրան մանուկ հասակէն՝ մեծապէս կ'ախորժի թափերգային երեկոյթներէ և նուագահանդէսներէ, որոնց մէջ զինք մասնաւոր կերպով կը հետաքրքրեն ղեկավարին ձեռքի ու ճպրտի շարժումները:

Հօր աչքէն չի վրիպիր տղուն երաժշտական կանխահաս ասղանդն ու հասկացողութիւնը և կը դնէ զինք իտալացի Մանոնի անուն երգահանի մը քով՝ դաշնակի դաս առնելու համար: Քանի մը ասորիէն պատանի Չուհաճեան այնքան կը յառաջդիմէ իր սիրած ասպարէզին մէջ, որ հարկ կը տեսնէ իտալացի ուսուցիչը զինք Միլան ղրկելու, իր երաժշտական տաղանդն ամէն ուղղութեամբ զարգացընելու համար:

Այսպէսով 1861ին 24ամեայ կը մեկնի Միլան, ուր չորս տարի առանձնական դասեր կը ստանայ Կ'ըսուէի թէ քաղաքի նշանաւոր երաժշտանոցն ալ յաճախած ըլլայ: Չուհաճեան կաթարելագործելով իր արուեստն ու ճշգրտով իր զիրքն՝ իբրև երգահան ու դաշնակավար, կը դառնայ Պոլիս, ուր կ'ամուսնանայ:

Իր երաժշտական գործունէութիւնը կը սկսի 1864էն ասդին և նախ մանր գործերով: Երբ անոնք լաւ ընդունելութիւն կը գտնեն, կը ձեռնարկէ մեծ՝ այսինքն նուագախմբային գործերու, որոնցմէ յետոյ կը սկսի կերտել իր անունը հայ և օտար շրջանակներու մէջ:

1968ին Թոմաս Թէրզեանի Արեակ Բ. Թատերգութիւնը (Ճարար) կը վերածէ երաժշտութեան, «հերոսական մեծ օրերաներու յար եւ նման արուեստով», ինչպէս կը գրէ հայ թատրոնի պատմաագիր Սմբատ Կարսեան: Այսու լոյս կ'ընծայէ իր անուանի գործերէն մին, որ զժ-

բախտաբար մինչև այսօր կը մնայ անտիպ: Այս գործը ծանօթ է աւելի «Օլիմբիա» անունով, որուն նախերգանքը (ouverture) դաշնակի համար առանձին տպուած է: Պոլսահայ երամիշտ Յարուրիւն Սինանեանի շնորհիւ: Այս անդրանիկ մեծ գործին կը յաջորդեն ուրիշ չորս երգաթագերեր (Operette), որոցմով կ'անձանանայ Տիգրան Չուհաճեան:



Հ. Գ. Ղ. Հեկոյեան

1873ին կը պատրաստէ Արիֆ անուն՝ թրքական մօրիֆ ներէ առնուած երգախաղը (Operette), որ մեծ ընդունելութիւն կը գտնէ:

Ասոր կը յաջորդէ Քոսէ Քեհեա երգախաղը, որ նոյնպէս կը խանդավառէ երաժշտասէր հասարակութիւնը իր առաջին ներկայացումէն: Շատեր հայ երգահանին գլուխ-գործոցը կը համարեն այս երկը որ ասկայն վար կը մնայ Լեպլեպլիի Հօր հօր աղային (1874):

Այս վերջինս Չուհաճեանի ամէնէն աւելի ասրածուած և ժողովրդապահանջած գործն է որ մինչև օրերս ալ սաէպ կը ներկայացուի Նրածապետը այս գործը երեք ամսուան մէջ զրած է: Իր վերջին մեծգործը կ'ըլլայ Զիմիւրէ դիւթախաղը (Opera-buffa), որ կը դասուի Եւրոպայի մեծ երգահաններու օփերա-ֆուլիֆերու շարքին:

Ասոնցմէ դուրս ունի նաև շատ մը կրօնական և ազգային երգեր՝ գրուած դաշնակի և խառն գործիքներու համար:

Դաշնակի համար ունի բազմաթիւ վարպետի գործեր՝ հրատարակուած ի Լայրցիկ: Ստորագրեալիս քով կը գտնուի Չուհաճեանի մէկ անձանօթ՝ բայց շատ գեղեցիկ գործը «Ողջոյն Քեգ», Streich-օրքէստրի սրնգի և դաշնակի համար (ձեռագիր), զրկուած Պոլսահայ երամիշտ Յարութիւն Սինանեանի կողմէ, որ մեծ վարպետին աշակերտներէն և հիացողներէն մին է: Չուհաճեանի անտիպ գործերէն յիշենք նաև «Հայր Մեր»ը գրուած երգչօնի համար, որ կը գտնուի նոյնպէս ստորագրեալիս քով:

Իր նուագահանդէսներուն առթիւ ստացած է չորս շքանշաններ՝ Խալապան, Ֆրանսական և օսմանեան պետութիւններէն: Իր գործերն անձամբ ղեկավարած է ի վիեննա, Պարիս, Լոնտօն եւն: Ռուսերու նիկոլա Մեծ Դուքսը անձամբ կախած անոր կուրծքէն մեծ շքանշան մը:

Չուհաճեան իր արդիւնաւոր կեանքը կը կնքէ 1898 Փետր. 25ին Իզմիրի մէջ: Յուղարկուորութեան ատեն կը նուագեն իր յօրինած մահերգը: Թաղումը կ'ըլլայ պարզ և անշուք:

Չորս ասրի ետք շնորհիւ Յարութեան Սինանեանի մեծ ջանքերուն՝ կը կանգնուի հոգակոյտին վրայ իր կիսանդրի մահաբձանը:

Հ. Գ. Ղ. Հեկոյեան

Ֆիլիպէ

Ի Ն Չ Պ Է Ս Կ Ը Ս Ո Ր Վ Է Ի Ն

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

1880 Դեկտեմբերի 2-ին սկսած է արդէն ուժգնօրէն Չիւնը կը ծածկէ Անգարան շրջապատող լեռներն ու դաշտերը։ Զրպըզ շայն ու Ինճէ Սուլն՝ երկու պողիկ գետակներ, որ կ'երթան հոսիլ հանդարտօրէն Սաքարիային մէջ քիչ հեռուն, սառած են։ Ծերերը սարսափով կը յիշեն որ քառասուն տարիէ ի վեր այդքան սառածիկ ձիւն ու ձմեռ չեն տեսած։

Հազիւ տասնընից տարեկան պատանի մը, ճրագին լոյսով լուսաւորուած սենեակին մէջ նստած, մօրը կողքին, բաներ մը կը ցուցնէ անոր։

Մայրը՝ դեռ շատ երիտասարդ, բայց սե լաչակ մը գլխին, աչքերէն հոսող արցունքները կուլ տալով, դողդոջացող ձեռքով՝ դիմեր, նշաններ կը շինէ, դիմացը դրուած էջ մը թուղթին վրայ...

Ա. Բ. Գ. . . . հայերէն տպուերն են որ կը ջանայ յարմարցնել, միամօր մնացած իր սիրական հոգեհատորէն բաժնուելէ առաջ։

Այո, Յակոբը, իր անդրանիկը, որուն երեք էրտսերները յաջորդաբար զո՛հ տուած է մանկական համաճարակներու։ Ամուսինը իր երեք խանութներուն ապրանքին հրոյ ճարակ ըլլալուն ականատես ըլլալէ ետքը, մեկնած է Պոլիս, նոր բախտ շինելու։ Զէ՞ որ գոյք ապահովագրել չկայ դեռ։

Ճամբան, աւաղակներու հանդիպած է՝ ու կողոպտուած իր քով մնացած դրամադրխին մնացորդէն ալ, ու հիմա հիւանդ, կը պառկի պանդուխտ՝ այդ հեռաւոր մայրաքաղաքին մէջ։

Յակոբը, իր աչքերուն լոյս՝ միակ մխիթարութիւնը, կ'ուզէ անպատճառ մեկնիլ քաղաքէն, երթալ։ Ուսանիլ, մարդ ըլլալ, ապրել . . .

Դրած է արդէն իր մօրեղբօրը, այն ատեն Ընդհ. Դատախաղ Ատանայի Մօրեղբօրը արամաղբուելով իր քեռորդիին փափաքին . . . հրաւիրած է զայն իր մօտ, անկէ Պէյրութ անցնելով՝ ուսանելու համար Մարօսիներու Collège de la Sagesse վարժարանին մէջ։

Մօրը արցունքները, թախաձանքը, պաղատանքը ոչինչ՝ դօրած են փոխելու ուսումնատենչ պատանիին հոգին փոթորկող պապակը։

Վազը իսկ, Յակոբ կը մեկնի, ընտանիքին վաղեմի մէջէն, արհամարհելով ամէն խոչնդոտ, ամբողջ տասնընից օր՝ ձիաւոր ժամորդութիւնով, երթալ հասնելու համար իր փայփայած երազին իրականացումին։

Հէք մայրիկը, արդէն համակերպած աղուն անտեղիտալի որոշումին, մէկ փափաք միայն ունի հիմա. կարդալ ու գրել սորվիլ, ինքնիրենը, առանց ուրիշին օգնութեան, կարենալ թղթակցելու համար իր հոգեհատորին հետ: Իր մայրն ու եղբայրները պէտք չէ իմանան: Ժամանակը շատ սուղ է: Արդէն որոշումը շատ հապճեպով տրուած է:

Գիրք չունի, տետրակ չունի: Մէկ միջոց միայն ունի. մէկիկ մէկիկ գրել տալ հայ թառերը, իր Յակոբին, էջ մը թողիթի վրայ, և մէկ գիշերուան մէջ սորվիլ անոնց անուշներն ու ձայները, յառաջիկային անոնք քով քովի դնելով՝ իր նամակները չարաղիելու համար . . .

Ամբողջ գիշերը կ'աշխատի Առաւօտուն յաղթանակը տարած է, հրաշքը կատարուած է. կրնայ գրել իր որդւոյն անունը, Յակոբ, ինչպէս իրենը՝ Թագուհի: Հիմա ապահով է, ա'լ պիտի կրնայ կարդալ իր Յակոբին նամակները:

Ճամբան ցուրտը սաստիկ է: Տաւրոսի կիրճերը անսնցանելի են: Ձիերը՝ հակառակ իրենց վարժութեան, կը սայթաջին և չեն կրնար յառաջանալ՝ լերան կողերուն վրայ բացուած արահետներուն վրայ: Յաճախ պէտք կ'ըլլայ իջնել, քայելով քարձրանալ սարալանջին վրայ, իր ետեւէն քաշելով ձիուն երասանակը: Ծառան, ազնիւ ու հաւատարիմ, կրցածին չափ կ'օգնէ Յակոբին: Բայց պատանին հպարտ է. չուզեր խոստովանիլ իր տկարութիւնը. . . չէ, պիտի դիմադրաւէ ամէն գնով մինչև իր նպատակին հասնիլը. . .

Էրճիասի ձիւնապատ գազաթնները շատ սեպ են, և դժուարին: Պատանին քաջերը սառած են հիմա: Անիկա փռուած է՝ գրեթէ զգայազիրի, զիւրազգաց և համբերատար կենդանիին թամբին վրայ ու ծառան, գլխիկոր, կը քաշէ երասանակը:

Ձիերու տրոփիւն մը կը լսուի. . . բարձրաձայն խօսակցութիւն մը. . . ձիւնամրրիկին մէջ:

Աւազակներու խումբ մըն է: Անոնք լուր ունին որ ուղևորներ կան ճամբուն վրայ:

Կը կեցնեն՝ սանձերը ձեռքին՝ դժուարաւ ընթացող ծառան:

— Իսա'կդ . . .

Իսա'կը. իր պատասխան, մարդը ցոյց կու տայ թամբին վրայ փռուած պատանին, սառած ոտքերը, և նպատակը՝ ուր կը դիմէ անիկա, ձիւնին ու բուքին մէջէն . . .

Աւազակներուն սիրտը կը կալղի մէկէն: Ակնարկով մը վճռուած է իրենց որոշումը:

— Դարձիւր կը հրամային ծառային, որ իր երկու ձիերը քարշ տալով՝ կը հետեի իրենց:

Պահ մը յետոյ, քարանձաւի մը խորը, աւազակներուն որջին

մէջ, քաջ պատանին պառկած է հսկայ կոճղերու ճարճատող բոցին առջև:

Այդ տաքութիւնը քիչ քիչ կեանքը կը հոսեցնէ՝ իր ընդարմացած անդամներուն մէջ: Տաք ըմպելիներ՝ կը լրացնեն իր կաղաչուրումը:

Ատանա, հինգ օր միայն կը մնայ իր մօրեղբօր մօտ: Կ'անցնի Պէյրութ՝ ուր երկու տարուան մէջ՝ կ'ընէ վարժարանին երեք տարուան շրջանը:

Հոն, Պէյրութ եղած միջոցին կը կորսնցնէ իր հայրը, Պոլիս ուր հիւանդ պառկած էր:

Եկրակի առաւօտ մը եկեղեցին էինք, Ս. Պատարագի, կը պատմէր՝ յեազային: Բաւական ատեն էր հօրմէս նամակ առած չէի: Յանկարծ ներքին ձայն մը ինծի ըսաւ թէ հայրս մեռած էր, և թէ պէտք է իրեն համար աղօթէի: Ի դուր փորձեցի ինքզինքս ձերբազպակ այդ պղծեցութենէն: Այնքան զօրաւոր էր ստիպումը, որ ակամայ ծնրաղբեցի, և աղօթեցի հօրս համար. . . »:

Այնուհետեւ, ա՛լ հօրը մասին չհարցուց նամակներուն մէջ:

Երկու տարի ետքը, Պոլիս մեկնեցաւ, ուր գացած էր նաև մօրեղբայրը:

Իր երազն էր իրաւարանական վարժարանը մտնել, պետական պաշտօնատար ըլլալու պատրաստուելու համար:

Ուրիշ կերպ տնօրինած էր մօրեղբայրը, որ Յակոբին դարգացումը անբաւական կը նկատէր՝ իրաւարանական վարժարանը մըտնելու, և կ'ուղէր որ Անգարա վերադառնար անիկա:

Մինչեւ անգամ իր գոյքերը նախապէս ճամբայ հանուեցան: Շատ սրտաբեկ էր երիտասարդ տղան, հիմա թասնըեթամեայ: Փափաքեցաւ գոնէ Պոլսոյ պատմական շէնքերը տեսնել՝ մեկնելէ առաջ:

Այա Սոֆիայի Մզկիթէն կը սկսի: Զարմացած ու հիացկոտ աչքերով կը դիտէ ուշադիր Բիւզանդեան կայսրերու Հայակերտ այդ հրաշակերտը: Եւ երբ, վերջապէս, հանդիպակի դռնէն դուրս կ'ելնէ, ինքզինքը կը գտնէ, երկաթէ վանդակներով պարեւզի մը առջև, ուր իրեն տարեկից կամ աւելի մեծ աղաքներ՝ շատերը փաթթոցով, տենդագին յուղումով կը վիճաբանին:

Գաւառացի տղան կանգ կ'առնէ պահ մը. կը հետեւ այդ խօսակցութիւններուն. . . Օրէնք, իրաւարանութիւն, քննութիւն բաւերը, կը լսէ որոշակի, կը կրկնուին յաճախակի անոնց բերնին մէջ: Երկրորդութեան յաղթելով, կը հարցնէ անոնց մէկուն՝ թէ ի՞նչ

է այդ տեղը:

— Այստե՛ղը, չե՞ս գիտեր, իրաւարանական վարժարանն է, մուտ-

քի քննութեան վերջին օրն է. եթէ փափաք ունիս, կը ձայնէ միւսը՝
չարածնի:

Իրաւարանական վարժարան . . . Մուսքի քննութիւնն Հոգին
Թունդ կ'ելնէ հէք պատանիին:



Չէ, ալ չի կրնար հեռանալ այդ տեղէն,
ուր ճակատագիրը բերեր հասցուցեր էր
դինքը, չէ՛, չի կրնար:

Վանդակակորմին փարած, հիմա, կանդ-
նած հոն, կը հետեւի ազոցը, մինչ անբա-
ցաթերի յոյգեր իր հոգին կը փոթորկին:
Չէ, չատ անիրաւ է կեանքը . . .

— Եթէ քննութեան պիտի մտնես, չու-
րէ, ժամանակը կարճ է, կ'ըսէ երիտասարդ
մը քովէն:

Պատասխան չի տար: Արցունքներ կը
բարձրանան աչքերը: Պէտք է մեկնիս ը-
սած է մօրեղբայրը. . . սնտուկը, գիրքերը
ճամբան են արդէն:

— Ի՞նչ կեցեր կը նայիս հող, կը ձայնէ

դռնապան մը: Ներս մտիւր որ քննուիս Հողիէ չեն կանչեր քեզ:

Ներս մանե՞լ, արդե՞ք, Վերջապէս ի՞նչ կ'ըլլայ եթէ մանէ: Մէկը
բան մը չ'իմանար: Ու Պոլսական կարեւոր հաստատութիւն մըն ալ
տեսած կ'ըլլայ . . .

Երկու քայլ շէնքին մէջ է արդէն: Սիրաբ կը տրոփէ՝ պայթե-
լու չափ:

— Եթէ քննութեան պիտի մտնես, եկուր մէկտեղ մտնենք, ես
ալ կը քաջուիմ: Իրարու ուժ կու տանք, կը խնդրէ քովէն երրորդ մը:
Ալ չի գիմանար:

— Այո՛, կ'ըսէ, պիտի մտնեմ, չեմ գիտեր ո՞ր կողմ պէտք է եր-
թար: Հապա մօրեղբայրս, կ'աւելցնէ մտովի:

Աւելի խորհելու ժամանակ չունեցաւ: Գրեթէ հրմշակուելով
տարուեցաւ մինչև քննութեան սրահը:

— Մօտեցէք, յառաջացէք, կը պոռար բարուպան մը: Ժամը ս-
ռաջացած է: Քննիչ էֆէնտիները պիտի մեկնին:

Սեղանին առջև է արդէն:

— Անունդ . . . մականունդ . . . ծննդավայրդ . . . տարիքդ . . .
ո՞ր դպրոցը ուսած ես . . .

Յակոբ կը պատասխանէ յուզումէն զողողուն:

Քննիչները հարցումներ կ'ուղղեն յաջորդաբար, թուրքերէն լի-
զու, ֆրանսերէն, աշխարհագրութիւն, պատմութիւն:

— Ընդունուած ես, կը ձայնէ նախագահը:

կէս ժամ չէր տեւած:

Յակոբ շուարած է: Քո՛ւն է թէ արթուն: Արդեօք չ'երգներ:

— Հիմա պէտք է մեզի՛: Պոլիս բնակող երաշխաւոր մը տաս:

Պոլիս բնակող երաշխաւոր: Ինք Պոլիս մարդ չի ճանչնար: Ի՞նչ պէս ըսեր այդ ժիւրիին որ յանկարծակի մտած էր քննութեան, որ չէր կրնար աշխատիլ...

Յիշեց յանկարծ որ այդ ժամուն մօրեղբայրը իրեն կը սպասէր մօտակայ արդարութեան պալատին սրահներուն մէջ: Էհ, ով զիտէ...

— Պոլիս մարդ չեմ ճանչնար, էֆէնախ: Բայց մօրեղբայրս ընդհ, դատախազ էր Ատանայի, հիմա անպաշտօնութիւն կ'ընդունիք, կրնամ երթալ կանչել զինքը:

— Գնա, բայց շուտ ըրէ, կ'ըսէ նոխագահը՝ ներողամիտ:

Պահ մը ետքը, Յակոբ մօրեղբորը դէմ էր արդարութեան պալատին առջև:

— Ո՞ւր մնացիր: Կը կարծէի որ ինձմէ առաջ եկած կ'ըլլաս:

— Այսինքն, մօրեղբայր, զարմանալի բան մը պատահեցաւ...

Չէր համարձակեր: Այնքան կը փափաքէր, սակայն...

— Ի՞նչ պատահեցաւ:

— Այա-Սոֆիայէն դուրս կ'ելնէի, իրաւաբանական վարժարանին առջև գտնուեցայ... Մուտքի քննութեան օրն է եղեր...

Տղաքը զիս գրեթէ բռնի ներս մտցուցին...

— Է՞, քննութեան օր:

— Այո՛, և ընդունուեցայ:

— Իրա՞ւ, է ինչո՞ւ չես ըսեր, կը բացագանչէ՛ աղնիւ մարդը յուզուած:

— Երաշխաւոր մը կ'ուզենու Բսի որ քեզմէ զառ մարդ չունիմ, չեմ գիտեր թէ կ'ընդունի՞ս

— Տղայ: Ինչո՞ւ չես ըսեր, Շուտ առջևս ինկիր, և ճամբան ցուցուր ինձի:

Յաջորդ օրը հեռագիր արուեցաւ որ սնտուկները ետ գան:

Յակոբ յաջողեցաւ երեք՝ տարուան մէջ՝ իրաւաբանական վարժարանին չորս տարիները լմացնել, միշտ առաջին ելնելով, և քսան տարեկանին ստացաւ Ա. կարգի փաստաբանի վկայական, ամէն սեռի և աստիճանի դատարաններու մէջ դատաւարելու իրաւատուութիւնով:

Իր փափաքն էր դատաւորական ասպարէզը: Տարի մը՝ Հարցասիր փափաքն էր դատաւորական ասպարէզը: Տարի մը՝ Յետոյ քննիչ դատաւորի և ընդհ. Դատախազի մօտ սթամ ըլլաւ: Յետոյ սակայն իրր փաստաբան, հաստատուեցաւ Պոլիս, ուր քիչ ատենուան մէջ՝ ճանչցուեցաւ իրր լաւագոյն հայ իրաւագէտներէն մէկը, մանաւանդ վարչական (administratif) կամ Շէրիի օրէնքի տեսակէտով:

Այս անձնաւորութիւնն է Յակոբ Պահրի:

Զ. Յ. Պ.

Տ Ա Ր Ա Կ Ո Ի Ս Ա Ն Ք

Յուրս զբզանքէն հոգեբա՛ղ, անհրապոյր սա մահնին,
Պիտի բլլա՞յ, ո՛վ մարդեր, որ ազատիմ օր մը ես:
Ու ոսկեռոյ եւ լազուարթ արեւին դեմ գարունին,
Պիտի բացուի՞, ո՛վ Ասունա՞ծ իմ, իմ սիրքս ալ, վարդի պէս:

Պիտի բլլա՞յ, որ հոգիս — ողջ առաքեալը մահուան—
Ա՛յ հանդարտի ի՛ր հազար, հազար, սեսակ հոգերէն,
Կամ աչքերը չը փակած, հուսկ վայրկեանիս անսահման
ժրպիտով մը պիտի՞ ապրի՞մ կեանքերու կեանքն ոսկեղէն:

Մահիկիս մեջ յոգնաբոյր, ու ցաւիս հետ դեմ դեմի,
Այսպէս յանախ կը խորհիմ մեռնող կեանքիս. ու խրո՞ւ՛վ
Ապագային՝ որ, անբաւ հպարտութեամբ մը լրկիս...

Կը բերքայ երեսիս, ու կը մառէ հաւաստով
Լեցուն յոյսերը աչքիս. ու նոր համբան օրհնուած
Վայրագորէն կ'աւերէ, զիս ոտքերուն սակ առած:

Ծ Ե Ր Ո Ի Թ Ե Ա Ն ...

Կը մօտեմաս ա՛յ ինձի, քե՛զ լիովին ես կը զգամ, . . .
Քեզմո՛վ հոգիս կը լեցուի նոր ու անլուր յոյգերով.
Քեզմո՛վ քայլերքս կ'ըլլան խոհեմաւու՛մ ու սարսամ,
Ու Սիրսս ալ—հի՛ն վիրաւոր— կը սպիանայ ինկնիրմով:

Մինչ՝ կը մերձիս դուն ինձի, հետքդհետէ ես կը զգամ. . .
Ինձմէ մեկնումը հիկնին, անվերադարձ հապնեպով.
Ու հոգիես սարաբալիս, փախուսն աղուո՛ր ու փարբամ
Սարսուններուն, յոյսերուն, մահապատգամ խուսանով:

Ու կը սիրե՛ս դուն ինձի: Օ՛, ձիւնն արդէն կը մաղուի՛
Գրլխուս վրայ, ու սերուս, ներաշխարհիս մէջ համակ.
Եւ կը շիջին օրէ օր, իմ մէջ լոյսերը կեանքի:

Ու մինչ հինը կ'անհետի, դո՛ւն կը սրփոնես երկնառափ
Անդորուրին մ'ամէն դիս, ասուածաւո՛ւնչ, փրկարա՛ր...
Խաղաղութիւն մը ո՞րուն հոգիս վաղո՛ւց կը բաղձար:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ...

... իմ ողորմիս հոգիիդ, եղբայրակի՛ց վաղափուն . . .
Քու վրադ չե՛մ ցաւիր ես, ո՛չ ալ արցունք կը քափեմ:
Հիմա որ ա՛լ չկա՛ս դուն, եւ լուռ դիակ մ'ես սրժոյն,
Կը դիտեմ հոս հաւաքուած սգակիրներդ բազմադէմ:

Մեռա՛ր ամէն մարդու պէս: Վախճանըդ ա՛յդ էր արդէն:
Բայց՝ ուրկե՞՞ ուր, քով քովի, սա բազմութիւնը անգոյն,
Ու երէկ քե՛զ ուրացա՛ւ, անխղճօրէն, բրօրէն,
Անգիտացաւ որ էի՛ր ժառանգաւոր մ'անընթիւն:

— Մարդիկ ինչո՞ւ այսօր հետէ կը լաւարին կեղծիքին—
Տե՛ս, ի՛նչ լեզու կը քափեն, եւ ի՛նչ ներքող քեզ համար,
Դագաղիդ քով գլխահակ, նոյնիսկ կու լան դառնագին:

Ո՛չ, չըմտա՛ր: Մեռնողը դուն չե՛ս, ազնի՛ւ գրչեղբայր...
Այլ՝ երէկ քեզ քարկոծող, այսօր մահը ողբացող,
Սա՛ բազմութիւնն անգգամ, որ եղաւ նենգ ու խաբո՛ղ:

Մ. Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Աթէնք

Մ Ա Ր Դ Կ Ա Յ Ի Ն Ե Ս Ը

Հոյուվոյթի ընթացքին մարդ արարածը հոգեպէս զոյութիւն առաւ
այն օրը որ ունեցաւ «Ես»ի զիտակցութիւնը: Մարդը կենդանիներէն
զանազանողը իր գործերը չեն՝ որքան ալ հրաշալի ըլլան անոնք: Ամէն
մարդ էտիսըն մը չէ, ոչ ալ նեւտոն մը, Շէյքսպիր մը կամ Քանդաբը:
Պէտք է գտնենք այնպիսի յատկանիշ մը որով կարելի ըլլայ վայրենի
կամ տղէտ մարդն իսկ զանազանել կենդանիներու ամենաճարտար-
ներէն իսկ Այդ զանանանիշ յատկանիշը «Ես»ի զիտակցութիւնն է:
Կենդանիներու քով կը պակսի ինքնագիտակցութիւնը: Անոնց բոլոր
արարքները, որքան հիանալի ըլլան, բնազդաբար, մեքենականօրէն
տեղի կ'ուեննան և ենթական ինքնագովութեան զգացում անգամ
չի կրնար ունենայ: Սարդին ոստայնը երկրաշափական հրաշալիք մըն
է, իսկ մեղուներու և մրջիւններու կենցաղն ու ընկերային կազմա-
կերպութիւնը՝ հիանալիօրէն կատարեալ: Բայց անոնք գիտակից չեն
այս բանին: Մարդն է որ կը զիտէ զանոնք և կը զնահատէ:

Մանկութենէն սկսեալ մինչև չափահասութիւն մարդուն ունե-
ցած մտաւոր և զգայական այլակերպումները փոքր չափով վերակրկ-
նումը կամ վերարտադրումն է (recapitulation) մարդկութեան հոյու-
վոյթի ընթացքին կրած այլափոխումներուն: Ինչպէս նախնական
մարդը՝ այնպէս ալ երախան ծայր աստիճան հասաէր է: Ասիկա կեն-
սարանական տեսակէտէն ցեղին յաւերժացման համար կարեւոր զգա-
ցում մըն էր ժամանակին թէ չափահասներու համար և թէ մանուկնե-
րու համար: Երբ մարդը բնութեան վայրի ուժերուն մօտ էր և մի-
ջավայրը վտանգաւոր, շատ կարեւոր էր որ երսխան եսասէր ըլլայ:
Առով միայն պիտի կրնար աննպաստ պայմաններու ներքև իր սնծը
պաշտպանել: Քաղաքակիրթ ընտանիքի մը մէջ սակայն երսխան
պէտք չուներ եսասէր և պահանջկոտ ըլլալու իր պէտքերուն զոհա-
ցում ստանալու՝ հարկ եղածին չափ պաշտպանուելու համար: Քա-
ղաքակիրթ ծնողներ զիտեն հարկ եղածը յարմար առնելն ընել
Մինչդեռ անտառաբնակ մարդուն զաւակը բնազդաբար պէտք էր
կարենար իր պէտքերը պարտադրել, այլապէս կրնար ոչնչանար:

Կենսարանականօրէն այնքան օգտակար ու կենսական եղող սոյն
հրաշալի բնազդը, որ ցեղին յաւերժացման համար այնքան անհրա-
ժեշտ էր, այժմու քաղաքակիրթ ընկերութեանց մէջ, ուր փոխադարձ
գործակցութեամբ մարդիկ աւելի բարձր և նպաստաւոր միջավայր մը
ստեղծած են՝ փնասակար զարձած է այլևս:

Եսասէր մարդն ար ինչպէս եսասէր երախան, հասարակութեան
համար փնասակար տարրն էր: Եսասէր անձերով ոչ երջանիկ ընտա-

նիք կը կազմուի ոչ ալ զորաւոր պետուծիւն: Որքան յաճախ կը տեսնենք հասարակական կեանքի մէջ մարդիկ որ հանրային գործ մը յաւազոյնս կատարելու կարող անձերու առիթ չեն տար գործելու: Իրենք կ'ուզեն չնել գործը, հոգ չէ թէ թերի կերպով, որպէսզի իրենք փառաւորուին և իրենց ետ քլքանայ Բայց թէ ատով հասարակութիւնը կամ հաստատութիւն մը կը տուժէ՝ չի հետաքրքրէր զանոնք:

Մանրամարտութեան ալ ինչպէս բարոյագիտութեան և կրօնի մեծագոյն նպատակն է մարդկային ետ անուացնել (sublimate), կարելի եղածին չափ մեծցնել «ես»ի շահագրգռութեան շրջանակը: Անհատը հանել իր անհատական եսի նեղ պատեանէն և անոր տեղ առաջ ա ելի մեծ ես մը: Սեպեղծել սիրտ մը որ շատերու համար բարատէ, զգայ ու տառապի, և ոչ թէ միայն զայն պարունակող սահմանափակ մարմնոյն պէտքերուն համար:

Յիսուսի ամենաչեղատեամ խօսքերէն մին է՝ «Ով որ իր անձը կը փնտռէ պիտի կորսնցնէ. բայց ով որ կը կորսնցնէ զայն երկնից թագաւորութեան սիրոյն» աւելի մեծ անձ մը պիտի գտնէ: Արդեան կան լեզուով, ով որ իր անձը կը նուիրէ մեծ իտեալի մը, անոր համար կը մտածէ, կը տքնի, և եթէ հարկ է կը զոհուի, այսպիսիուեամբ անձ մը կը դառնայ, աւելի ազնիւ, աւելի ինքնավստահ ու երջանիկ: Միտախիչներ այս փափաքը այնքան յառաջ կը տանին որ կը ձգտին իրենց եսի զգացումը կայտարելապէս ջնջել, նոյնանալով մեծ «Դու»ին, կամ Աստուծոյ հետ:

Ամէն մարդու տրուած չէ իր անձը այս աստիճան փութրլինի ենթարկելու կարողութիւնը: Հասարակ քաղաքակրթութեան մը այս աստիճան անձնուբացոնութիւն չի սպասուիր և մարդկային ընկերութիւնը պիտի տուժէր եթէ մարդոց մեծ մասը այս իտեալին հետեւէին: Բայց եսի պարտեալն որ միայն իր րնական հակումներուն հետեւի Հակառակ պաշտրուի որ միայն իր րնական հակումներուն պիտի բաղկանայ կեղրոնախոյս ուժերէ եւ րազային ընկերութիւնը պիտի բաղկանայ կեղրոնախոյս ուժերէ եւ րազային ընկերութիւնը պիտի բաղկանայ կեղրոնախոյս ուժերէ եւ րազային ընկերութիւնը պիտի բաղկանայ կեղրոնախոյս ուժերէ եւ րազային ընկերութիւնը պիտի բաղկանայ կեղրոնախոյս ուժերէ:

Մարդկութեան զլլուըն պատուհաս եղած շատ մը անձեր կըրնային, ընդհակառակը, բարիք սեպեղծել. եթէ իրենց ետ ազնուացումը ցած ըլլային Ետ այն մոդական քարն է՝ որ ոսկին ամուսի կը փոխէ:

Չկայ առաքինութիւն մը կամ կիրք մը որ չխորտակուի այդ ժայռին վրայ: Միւս կողմէ սակայն մարդկութեան մեծագոյն բարիքները ծնած են ազնուացած մեծ «ծառերու շնորհիւ: Մայրկու թեան յստաշ-



Ս. Վեցիկեան

քիմութիւնը կարելի եղած է որովհետեւ բաղմաթիւ անձեր, ամէն ազգի մէջ ալ, իրենց եսի նեղ սահմանէն դուրս ելլելով մտածած են ուրիշներու մասին, մարդկութեան կամ իրենց ազգին բարօրութիւնը իրենց ազնուացած մեծ եսին չհապաքողութեան չըջանակին մէջ առած են, և ըստ այնմ ապրած են և յաճախ զոհուած: Ընկերային շարիքներու արմաքը, ուրեմն, մեծ մասամբ ծայրայեղ եսասիրութիւնն է: Սակայն մարդկութեան յառաջդիմութեան օտարող մեծագոյն ուժն ալ ազնուացած են է: Մեր մէջն է ստանան ու հրեշտակը, մեր հոգին ստորնացնողն ալ, ինչպէս անոր թախք տուողը: Եսի զիտակցութիւնը յաճախ մեղ կը քաչէ անասուններու կարգի կ'ընկնէ, բայց երբեմն ալ բարոյական աշխարհի լուսաշող ոլորաներուն մէջ բարձրացնելով Աստուծոյ հաղորդակից կ'ընէ:

Եւ մարդ արարածը մասամբ գոնէ պառասխանատու է իր վիճակին համար: Մեր ընթրութենէն կախում ունի ոչ միայն մեր անհատական այլ և մեր պատկանած ընկերութեան բարօրութիւնը: Բայց որովհետեւ բնական կամ անասնական վիճակի մէջ մնալը ունէ ջանքի չի կարօտիր, մարդիկ հակամէտ են զիրոյն ճամբան ընտանջուելու: Ծիշդ ինչպէս որ հեղուկը նուազագոյն ղիմադրութիւն յայտնաբերող ճամբաներէ կը հոսի, նոյնպէս ալ մարդիկ յաճախ նուազագոյն ճիշտութիւն և ինքնազոհում և ինքնազոհութիւն պահանջող ապրելապայմաններէն առաջ ապրող բարբարոսներու յատկանիշեր երևան կը բերեն, և մարդկութիւնը երբեմն զանգուածօրէն անձնատուր կ'ըլլայ բերելու և մարդկութիւնը ամբողջովին չի յուսահատիր և հակադէր այն է որ մարդկութիւնը ամբողջովին չի յուսահատիր և հակադէր այն է որ ամէնուր անկուրմնաբար, փոքրութիւ խումբեր և անձեր ամէն երկրի մէջ, առկա էին կ'աշխատին բարձրանալ և իրենց հետ ալ բարձրացնել իրենց միջավայրը:

Ով որ իր եսի նեղ պատեհակէն անգամ մը դուրս ելած է ոչ մի պայմաններու տակ կը յուսահատի կամ կ'ընկրկի: Եւ այս տարրն է

որ կը պահպանէ քաղաքակրթութիւնը իր ուժերուն ներած չափով սատարելով անոր յառաջդիմութեան: Երանի՛ անոնց որ այդ շարքերուն մէջ մտած են կամ գոնէ կը ջանան մտնելու կ'ապրի և իր կենսունակութիւնը կը պահէ այն աղջը՝ որուն մէջ զօրաւոր է այդ մեծանձն տարրը: Իսկական հայրենասիրութիւնն այլ ինչպէս կ'օնասիրութիւնը, առաւելագէս այդ տեսակ ոգի մը ստեղծելուն և անոր զարկ տալուն մէջ կը կայանայ:

Փլովսիվ

Ս. ՎԵՅԻԿԵԱՆ

ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ ԿԱՆ ԵՐԲ Կ'ԶԳՍՄ...

Կան վայրկեաններ երբ ես կ'զգամ իբր Ասուած
Հոգիս այնքան անծիր, ազատ ու անել
Որ կը խորհիմ քե այդ հովսիւն մեջ անցած
Պիտի կրնամ տեղեկներ պարփակել:

Բայց երբ կու գան վիշտն ու խիճող քափել հոն
Իրենց անչափ ծովէն շիրտ համբուած
Կը տեսնեմ որ կարծածս անեզր ու անհուն
Պատահեմ մէ լոկ մեր խեղն եսէն դարբերած:

Զգացումի զեղուն ցայտէն խեղն հոգին
Կը փտրուի բիւրեղ բաժկի մը նման
Մինչ արցունքները վշտին կամ հրեղանքին
Կը կայլակին յայտարար մեր պարտութեան...

1919

Վ. ԵՐԷՅԵԱՆ

Մ Ա Ն Ո Ւ Ա Ն Ժ Պ Ի Տ Ը

(Էջ ՄԸ ԱՐԻՒՆՈՏ ՕՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ)

1896 ի արիւնոտ գիշերներէն մին է:

Մ. գիւղը, Պարբերդի դաշտի ընդարձակ տարածութեան վրայ մենաւորիկ, խաւարին մէջ սարսույի լոռեթին մը կ'սպրի:

Երկու օրէ ի վեր Թիւրք և Քիւրտ խուժան մը, սովալլուկ զայլի նման, եկած բանակած է գիւղին հարաւարեկեան մասին վրայ դարբու հնութիւն մը պահող կիսափուլ վանքի կողքին ու կը սպասէ... կը յամառի գրոհը տալու:

Մօտակայ գիւղերը, ուրկէ անցած է այդ խուժանը, արդէն աւերուած, քանդուած ու կողոպտուած են, իսկ բնակչութիւնը սրախողխող ջնջուած:

Կարգը Մ. գիւղին եկած է:

Լուռ է, շարժման նշաններ չի ցուցադրեր շնագայլերու վոհմակը յիշեցնող այդ խուժանը սակայն:

Ու այս լոռեթիւնը աւելի ահարկու, աւելի սարսուտ զղիկ է գիշերային խաւար լոռեթեան մէջ:

Մ. գիւղը բոլորովին անպատրաստ չէ:

Ասպետ, բարձրահասակ ու զեղաղէմ, իր անունին հաւատարիմ է'ն կարիճը գիւղին, գիշեր ցորեկ արծուի սչբերոյ դիսած, հեռեւ է հայ արեան ծարաւի խուժանին՝ այն բարձրութեանն ուր ինք եւ իր ընկերները ամրացած են պաշտպանելու համար գիւղին պատիւը:

*
*

Կէս գիշեր է:

Ատողերը երկնակամարէն իրենց արծաթ լոյսի ցոյքելը աւելի հեռուները սփռել կը փորձեն՝ տեսանելի դարձնելու համար այն շարժումները, տենդոս պատրաստութիւնները որոնք տեղի կ'ունենան անշուշտ՝ ջարդի ու թալանի գերագուտած ախրժակով մէկտեղուած խուժանին մէջ:

Այդ շարժումները Ասպետի արծուային նայուածքներէն չվրիպեցան սակայն Չուզեց յամանակ կորանչելու շարժեց իր կարիճ ընկերները ու խօսեցաւ.

— Արեւ դեռ չծագած այդ խուժանը պիտի սարսափեցնել, ցրուել յանկարծական յարձակումով մը: Յարձակումը սկսելէ առաջ

եկեղեցւոյ զանգակը պիտի հնչեցնել ուժգնօրէն ու շարունակել մինչև մեր յաղթանակը կամ պարտութիւնը: Երբ կը հնչէ եկեղեցւոյ զանգակ, երբ մեր հրացանները կը սկսին կրակ փախել և երբ գիւղի բնակչութիւնը աղաղակներով կը հեռան մեզի, վառահեղք որ կը յաջողինք խուժանը փախուստի մատնել...: Բայց պէտք է արագ շարժինք, դեռ այդը չչառագունած:

Ասպետին ընկերները չառարկեցին: Զեռքերը սարին իրենց հրացաններուն որպէս հաւանութեան նշան:

— Բայց դիւղի բնակչութիւնը, ս'չ միայն աղաղակներով, գոռում գոչումներով պիտի հեռան մեզի, այլևս պիտի ունենայ երկար ձողեր, որոնց ծայրերը քարիւղի մէջ թրջուած քուրջի կտորները պիտի վառեն զերթ ջահեր՝ դարձնելու համար մեր գրոհը աւելի սարսափալից, վերջացուց Ասպետ իր խօսքերը և շնչտակի նայեցաւ ընկերներու աչքերուն, որոնց մէջ նշմարեց հայրենասիրութեան, պատուի և ինչքի պաշտպանութեան սրբազան հուրը...:

Ասպետ հրճուեցաւ: Բոլորն ալ գրկեց համբուրեց: Լրացուց կարգադրութիւնները: Բաժանում ըրաւ զերբիւր ու մի: ս: ին դուրս եկան և խաւարին մէջ անյայտացան...:

Աքաղաղին առաջին կանչը լսուեցաւ գիւղի վարի ծայրամասէն ու մարեցաւ անարձագանգ:

* * *

Մարդկային ստուեր մը, գիւղի Միջի թաղէն յառաջացաւ զէպի եկեղեցին ու երկիւղածօրէն կանգ առաւ անոր սեմին վրայ: Դուռը դոց էր: Նայեցաւ չորս կողմը, ոչ ոք կար: Ժամկոչը դեռ չէր երեւեր: Ծռուկի եկաւ մի քիչ վեր ցցուած քարին վրայ, աչքերը և բաղաւիտները վեր, դէպի երկինք ուղղեց ու շարժեց շրթները, սրտի խօրէն մրմնջեց ազօթք մը կարճ:

«Ո՛վ Տեր, արեան ծարար չե որ մեզ կը մղէ Եւրոպայու մարդասպան գործիքներ, այլ միաժին որդւոյն միջոցաւ մեզի կսակած կրօնիդ եւ մեր պատուի ու ինչքի պաշտպանութեան համար...: Կ'աղաչե՛մ, երկամուր շայր, գորացուր մեր բազուկները եւ եղի՛ր հովանի բոլորիս, որպէսզի քո անուրբ փառաւորեմք այսօր, վաղը եւ յաւիտեան...»:

Ասպետ երեսը խաչակնքեց, գլուխը խօնալ հեցուց կրճքին վրայ և պահ մը այդպէս կեցաւ լուռ... Երբ վեր բարձրացաւ, զգաց թեթեւութիւն մը անբացաբերիլ...:

Հեռուէն ոտնաձայն մը լսուեցաւ: Ասպետ դարձաւ զէպի այն կողմը ու նշմարեց ժամկոչը:

— Մի՛ մոռնար ուժգին և անրնդհատ հնչեցնել զանգակը մինչև որ մեր յաղթանակի աւեաթիւր քեզ հասնի...:

Ժամկոչի, այդ ջերմեռանդ հաւատաւորի և հայրենասէրի պատասխանը եղաւ իր գլխու շարժումը:

*
*
*

Մ. գիւղէն մարդկային հեղեղ մը փրթած էր ու լուսավառ ձողերով և աղաղակներով կը յառաջանար խաւարին մէջէն դէպի Ս. Հեղինէ կիսափուլ վանքին ուղղութեամբ:

Գիւղին զանգակը, ժամկոչի ուժգին ցնցումներուն տակ, կը դողանջէր, կարծես ուղմի շեփոր ըլլար:

Ասպետ կեցած իր կտրիճներուն կողքին՝ յարձակման նշանը կուտար, ու հրացաններու որոտը կը սկսէր արձագանդել խաւար քարածռութեան մէջ:

Թուրք և քիւրտ խուժանը յանկարծակիի եկած ինչ ընկիւթը չէր կարող որոշել: Խուճապը հետզհետէ կը սաստկանար: Ոմանք սկսած էին յարձակողներու հարուածներուն տակ իյնալ: Նապաստակային փախուստը ծայր առաւ խուժանին մէջ երբ յարձակողներու զոռում-զոչումը և հրաժառութիւնը հաւաւ իր գազաթնակէտին...:

Ասպետի զեկալարութեան քակ կռուող ուժերը և անոնց հետեւող բազմութիւնը նշմարեցին խուժանին փախուստի շարժումները ու ոգևորուեցան, կարծես անձանօթ ուժէ մը մտրակուած, թափուեցան դեռ յամեցող թշնամիին վրայ:

.
.

*
*
*

Մ. գիւղը փրկուած էր:

Հորիզոնին վրայ նոր երեցող արշալոյսը առաջին ականատեսը կ'ըլլայ յաղթանակի մը, որուն շատ սուղ գին վճարուած էր:

Բազմութիւնը դեռ կը յամենար Ս. Հեղինէ վանքին շրջակայքը, չէր ուզեր բաժնուել իր կտրիճ դաւկէն — Ասպետէն, որ ինկած էր թշնամիի գնդակէն, որուն մահը եղած էր վայրկենական:

Նոր Աւարայրի նոր Վարդանը կը պառկէր . . .

Մահուան ու յաղթանակի յարկը կը ցոլար անոր խաղաղ, հրեշ-տակային դէմքէն...:

Եկեղեցիի զանգակին վերջին զարկին արձագանգը դեռ կը կուտար անհոռնին մէջ...:

ՍԻՐՎԱՐԴ

1918, Ուսր

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Մեկ ֆանիններ, ճոպորեն վայելելու համար ցրյագ,
ժողովուրդներ ֆանեցին, քսպունգի պես լեղապասառ.
«Հայրենիքին համար, քսին պես ք գրկուիք դուք շարունակ»—
Եւ հայրենիքն, ափսոս, յանախ լոկ իրենց փորն է անպակառ:

— 0 —

«Օսարական» կ'ըսեն հայուն, շահագործման համար միայն,
Մեղկացնելով՝ գրկելով զինք ամեն գործէ հասուքաբեր.
Մտոյց մահուան մասնելով զինք, մուրացկանի գրպանով լայն,
Սա հասափոր ծոյլ պուրժուայի հաշիւ մըն է. . . հայրենապէր:

— 0 —

Քանի որ դեռ սահմաններ կան երկրէ երկիր, պահեցներ ցից.
Տիեզերքը բառ մըն է լոկ եւ ասդերք՝ կայծեր փցուն:
Քանի որ դեռ հանճարներ կը մուրան հոս դառնակսկիծ,
Միջին դարը կ'սպառնայ միշտ աւասական կիրճով լեցուն:

— 0 —

Քանի որ դուն ամենեւին չե՛ս վարձն արդար մեր սփնուքեանց,
Իմ շասն եղունգս քի պողպատ միշտ քեզի դեմ, ո՛վ ոսկի հորք.
Քեզ հայեցնե՛մ, սաք սաք քափեմ բերաններուն մէջ չարախանձ
Որ աշխատիլ կը քարոզեն, ծոյլ վայելին փրփուրով լորդ:

— 0 —

Այս աշխարհի եղեւներն են՝ Դրամի՛ն համար, Շահո՛ւն համար.
Վերցու՛ր դրամն, արժանիքը իր իսկուքեան պիտի յանգի:
Դրամը ժանգն է անարգ Եսին, ճոպուքեան ծաղրն է յիմար.
Բա՛ւ է ինքնին Աշխատութիւնն, ա՛ն է պահառ ու արդիւնք կեանքի:

— 0 —

Հողի համար կռիւ չըկայ, հողն է միայն աշխատողի՛ն.
Ոսկի հորքը պարարտացնող փուն կռիւն վերջ դարաւոր,
Որպէսզի դուք ազատ ապրիք ձեր հունձներուն շուրջ փառաւոր,
Մի՛ շինեք զենք, զենքն է՝ մահուա՛ն, մինչդեռ կեանքն է միայն հողի՛ն:

— 0 —

Որքան արագ կը բեւաճէ մեր մտածումը քանկազից,
Եւ անարգել կը գլէ միջոցն եւ ապագան կ'ընեն ներկայ,
Ա՛յնքան զանդաղ, այնքան ցրուած կ'ընքանայ միշտ աշխարհն որ կայ,
Յուրս իրերուն հետ խուժանն այ՛ որ կը մասնէ միշտ մեր հոգին:

ԵԳ. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Զ Ղ Չ Ո Ի Մ

(Ս. Պ. Յ. ք առ խաչեալ)

Զորն ասեմ, զորն խոստովանիմ
Զի բաղում են մեղքերն իմ . . .

Պատկերիդ դե՛մ առանակուած՝ մեղրամովի մը պէս հալի՛լ . . .
Եւ աղօթել ներամփոփուած՝ ձայնով ՏՅՈՒՆ, լացակամած,
Ու ծուկնի գալ խելակորոյս՝ խորանիդ դեմ, ինքնամոռաց . . .
Է՛ն ես կ'ուզեմ ա՛լ յանձնուիլ անանց պահին այդ լուսածիլ:

Բանալ քեզի ներաշխարհիս բաւիղները այն քաբքաբուր,
Ու մի առ մի խոստովանիլ իմ մեղքերը խեղճ, լպիռ,
Վերամբարձած զոյգ ձեռներս կրճիս բերել գերը խաչանի՛ւ՝
Այդպէ՛ս մընալ պատկերիդ դեմ զգայազրիկ ու լա՛լ ՏՅՈՒՆ:

Զի բազում են մեղքերն իմ — ովկիանի աւագին չափ.—
Ա՛լ կը յորդի հեղեղօրէն քո կառուցած փարչը կաւե,
Երկանափար մը պորփուրէ կարծես կրճիս յա՛ր կը ճեճ . . .
Զի բազում են մեղքերն իմ վաղուց անցած կելո ու չափ:

Ինկայ մեղքի վիհերուն մէջ խաւարակուռ, անդդախոր,
Եւ բմպեցի մեղկ հեռանքի բաժակները մինչեւ յասակ,
Հոգիիս մէջ փոխան վարդի բնձիւղեցին խոսն եւ աստակ . . .
Ոչինչ մնաց պողպատ կամէս եւ ուժերես այն գերբնագոր:

Ու ես հիմա դեռաբուսիկ շամբի մը պէս հեզ ու նկուն
Զո՛ւր կը ջանամ առարակել իմ իրանը դէպի նախի՛ր՝
Ա՛լ յափեցայ շուայս կեանքէն, հանդիմներէ՛ն անոր նանիր.—
Նեարդներուս մէջ կը խուժէ յուսալում մը յարանուն:

Հիմա կ'անցնիմ լոյս քաղաքի քառուղիէ՛ն ալ անարբեր . . . :
Ներամփոփուած էութեանս ձորձերուն մէջ համեսօրէն.
Մինչ զղջումի մանիակներ արժա խորքը ջով կ'ընձիւղեն.
Ու կը լսեմ ներաշխարհես փլուզումի հարճանումներ:

Պատկերիդ դեմ առանակուած ՏՅՈՒՆ մը պէս, տե՛ս, կ'արատուե՛մ
Եւ զղջումի կոհակներն ալ ջղքայագերձ, խելացրնոր,
Կը խորհակեն ամբարակներ, կը սլանան արեւաւառոյր,
Ի՛նչ ես անա՛ դեռ ծնրադրած լո՛ւն կ'աղօթեմ պատկերիդ դեմ:

Բ Ե Ր Ի Ք Ե Ջ Ի Ը Ն Ծ Ա Յ

1. Բերի այս գիտեր
Քեզի ես ընծայ
Մանեակ, շափիւղայ.
Եւ զարդուկիներ:
 2. Բերի այս գիտեր
Ջուրե՛ր հոսեւան,
Կնդրուկ եւ ռեհան,
Բուրեան փոշիներ...:
 3. Բուրեան փոշիներ,
Խմիչէ, համադամ,
Ջգեսներ փարքամ,
Բերի քեզ նուեր:
 4. Բերի այս գիտեր
Սի՛րսս քեզ ընծայ,
Սերս նախընծայ,
Բերի՛ քեզ նուեր...:
- ՍԻՍԱԿ Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուեր՝ Ծերունագարդ Մայրիկիս

Ջեփիւռներու միմուէնջին այս այգուն,
Ու ծառերու փթթինազարդ ոստերուն,
Կայ հողեխօս երգ մ'աղու.

— Օրն է այսօր մայրերու —

Օրն է այսօր մայրերու,
Անոնց սիրաքը, սէրն ու հողին
Կը ներփառուի ամէն կողմ:

Շուշան ձերմակ ու վարդ կարմիր խնկաւէտ՝
Կը մատուցուին որպէս սրտի տրիտուր՝
Մեծափարթամ ապարանքէն հարուստին՝
Մինչեւ հիւզը տխրատեսիլ՝ աղքատին,
Կը սաւառնի խորհուրդը վեհ՝ մայրութեան:

Օրն է այսօր մայրերու:
Երկնից Աստուածն երկիր իջաւ,
Աստուածացաւ Տիրամայրն

Անոր սիրաքը՝

Բարու թեան,
Համբերութեան,
Դիտութեան,
Յոյսի, Սիրոյ,
Հաւատքի
Ու անսպառ զոհողութեան
աղբիւր եղաւ մշտահոս:

Հաղարաւոր աստուածներու հետ չեմ փոխեր ես զքեզ,
Էութեանս, կեանքիս պատճառ, իմ մայրիկ:
Զքեզ յիշելս՝ ինձ մեծ փառք է, խրախճանք է, ինքնին կեանք է,
Դողդոջ քայլերն իմ մանկութեան՝
Մերթ արցունքով, մերթ ժպիտով ուղղեցիր
Կեանք ջամբեցիր, կեանքիդ գնով,
— Զոհողութեան մարմնացում:

Կեանքի մռայլ գիշերներուս՝
Մինչ լքեցին զիս թերափներս,
Դուն ժպիտով ու անվեհեր քայլերով՝
Ինձ հովանի կանգնեցար:
Ներկայութիւնդ ինձի եղաւ փրկութեան. խրախճանքի, յաւեր-
ժական ծիածան:

Պարտ է ինձի, սիրելի զքեզ, խնամել քեզ մինչև մահ:
Անչափելի սիրոյդ փոխան՝ դեռ ոչինչ է, իմ մայրիկ,
Եթէ նոյնիսկ սիրաս ու հոգիս տամ քեզի:

Ն. ՓԻՐԱՆԵԱՆ

Ն Ե Ր Բ Ո Ղ Հ Ա Ր Ս Ա Ն Ե Կ Ա Ն

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՓԵՍԱՅԱՄՕՐ

Թագուորի մա՛յր, դուրս ելի՛ր,
Հացով-քացով դուրս ելի՛ր,
Տե՛ս քե քեզ ի՞նչ ենք բերեք,
Տալսրդ աւլոյ ենք բերեք:

Հի՛ն ծիածան, Եղեմական հի՛ն բարութիւն,
Եօթ պապերու աւանդաբոյր ժառանգութիւն,
Հարսանեկան շապիկդ հազիր, մատըդ՝ մատնին,
Կոտրած «սօլեր»դ սաքըդ անցո՛ւր, ելի՛ր սեմին,
Թո՛նրիդ կրակին նըման կարմիր բոցալուն,
Արտիդ ցորնին նըման բա՛րի, արեձո՛րուն՝
Հարս կը բերենք քեզի՛ համար մօտիկ գիւղէն,
Սէ՛ր ու ծաղիկ հոսան կու տան որուն ծամէն...:

Թագուորի մա՛յր, դուրս ելի՛ր,
Կուժդ՝ գիցիով դուրս ելի՛ր,
Տե՛ս քե քեզ ի՞նչ ենք բերեք,
Քաղհանք ընող ենք բերեք:

Հաց ու բաղարջ՝ ողորմածոր հայրենի տան,
Աղօթք ու փառք՝ հաղարամեայ աւանդութեան.
Լաջակդ ձիւնեզ, ծերունափառ զըլխուդ ձըգած,
Սեմը ելի՛ր, ճբաղդ ու մոմդ՝ ձեռքը բռնած,
Ծաղկավանքի ծաղիկներուն նըման փայլուն,
Աստուածածնի սրբախն նըման հեզ ու խընդուն,
Մօտի գիւղէն, հարս կը բերենք արեւածամ,
Բերք ու բարիք՝ տունիդ համար պապենական...:

Թագուորի մա՛յր, դուրս ելի՛ր,
Ջուխս մը հաւով դուրս ելի՛ր,
Տե՛ս քե քեզ ի՞նչ ենք բերեք,
Ծամ իսրկող ենք բերեք:

Եօթ հայժամուռ, եօթ վանքերու խունկ-պատարազ,
Եօթ հէքեաթի ու զըրոյցի սկիզբն ու յանդ,
Աչքըդ դեղած, ձեռքերդ հինայ՝ արապական,
Լահօր գօտին մէջքիդ կապէ՛ քրանաթորան,
Աղթամարի ժամուռ նըման արքայաչէն,
Եւ վարազի արեւածագին պէս բոցեղէն,
Հա՛րս կը բերենք, հա՛րս կը բերենք քեզի՛ համար,
Ո՛վ էնութիւն, ո՛վ անցեալի փառակամար...:

Թագաւորի մա՛յր, դուրս ելի՛ր,
ձրագ մոմով դուրս ելի՛ր,
Տե՛ս քե քեզ ի՞նչ եմք բերեր,
ձախրակ մանող եմք բերեր:

*Դունն՝ հայ ծըխան, մայր ու օրոր, տուն ու տանիք,
Դունն՝ գուշակող, երազահան մառանն ու գիրք,
Աղջիկնութեանդ ցորենաչէն խաչն համբուրէ՛,
Վիզըդ անցո՛ւր ճրտնոցդ համակ մարգրիտներէ՛,
Ելի՛ր սեմիդ, անմեռ սաղմոս ու շարա՛կան,
Դէմքըդ ուղղած Արեւելքին աստուածահամ՝
Հարսիդ գըլխուն, ցորեն թա՛փէ անձրեակթեւ,
Որթոռներուդ՝ համբանքն անցնիաստղերու թիւ...*

ՏԱՂ՝ Ի ՎԵՐԱՅ ՓԵՍԱՅԱՀՕՐ

Թագաւորի հա՛յր, ելի՛ր սեմիդ,
Զեքրդ կապած՝ ելի՛ր սեմիդ,
Թոնիւր վառող քեզ կը բերեցնք
Կօտիկ քրկող քեզ կը բերեցնք:

*Հա՛յ պատմութեան, Հա՛յ Գըթութեան Երուսաղէմ՝,
Աշխատանքի, հեւք-տըքոցի քաղցրարօյր վէ՛մ,
«Զուր քեզ կախիկդ՝ անցո՛ւր կռնակդ ցորենարօյր,
Եւ լեռնակոխ քու ոտքերուդ՝ տըրիւրդ նոր,
Տունիդ ծառին՝ ծիլ կը բերենք մենք երգելով,
Պատուաստէ՛ դայն, արիւնդանոր՝ ջամբը տալով,
Ու աչնան երբ, հարսիդ շուքին ձեռք երկարես՝
Քօղի գաղտնիք՝ զոյգ մը տըղայ յանկարծ զըրկես...*

Թագաւորի հա՛յր, ելի՛ր սեմիդ,
Պեխդ ոլորած՝ ելի՛ր սեմիդ,
Քեզ հաց բըխող եմք բերեր,
Ոսքդ լուացող եմք բերեր:

*Արտ ու հանտի, հաղար բերքի ըշտեմարա՛ն,
Հողի բանուոր՝ կաթնահամեղ հաց ու թացան,
Համբիչդ սաթէ՛ բազկիդ վըրայ գօռերէ՛,
Արեւի պէս սեմիդ ընդդէմ հասակդ ցըցէ՛,
Օտար տունէ՛ սէր կը բերենք մենք պարելէն,
Սէրն այդ իբրեւ ձօն ընդո՛ւնէ, Ասածոյ գահէն,
Ու ձըմբան երբ, անոր կրա՛կին, ձեռքդ երկարես՝
Մեռած մարմինդ, տա՛ք ու հանդիստ պիտի գըտնես...*

Թագաւորի հա՛յր, ելի՛ր սեմիդ,
Մորեքդ բերնիդ՝ ելի՛ր սեմիդ,
Ոչխար կրթող քեզ կը բերեցնէ,
Ծրծում հարող մեցնէ կը բերեցնէ:

Նարեկահոտ տաղ ու աղօթք և «յաւելուած»,
Ներսէսեան յորդ երգերու պէս աստուածամած,
Բարի պապի՛կ, շալվարդ հա՛գիր ծաղկազարդուն,
Ուլունքազարդ թաշկինակը՝ ուսիդ ծըփունէ,
Հարսնուկ մը քեզ, մենք կը բերենք հոռով զարնան,
Այտէն որուն՝ շող կը տեղայ արեղական.
Ու ամբան երբ, հարսը սեմիդ նըստած տեսնես՝
Տունըդ՝ լուսած, օճախդ՝ ծաղկած պիտի կարծես...:

Թագաւորի հա՛յր, ելի՛ր սեմիդ,
Խինդ ու երգով ելի՛ր սեմիդ,
Տունիդ նըրազ քեզ կը բերեցնէ,
Ձեք-պատրոյցով՝ մեցնէ կը բերեցնէ:

Ծա՛ն ձիթենի, Հայ հաւատքի Գեթսեմանի,
Անմեռ ողի՛ տաճարաշատ Հայաշխարհի,
Փեսայութեանդ հալաւն հազի՛ր ասեղնագործ,
Դիրի անվարժ՝ հինայ անցո՛ւր ձեռքերուդ փորձ,
Սեմիդ ելի՛ր, հարս կը բերենք քեզի համար,
Հարս մը աղուոր, հրաշքի նըման հոգեպարար,
Ու աշնան երբ, անոր ծամին ձեռքդ զըպցընես՝
Գեթի նըման, ցորենիդ յորդին՝ պիտի դիտես...:

ՏԱՂ. Ի ՎԵՐԱՅ ՓԵՍԱՅԻ

Փեսայութեանդ հինան զըրինք,
Մառներս՝ արեան պէս կարմըրեր...,
Մինչ կը նայինք դէպի երկինք՝
Գովք կը թափի ցուէքէն վեր...:
Փեսայ՝, շուտան որ կը ծաղկի՝
Ծաղկի բանայ ճամբուդ վըրան,
Սարի լալան որ կը ծաղկի՝
Ծաղկի, ծաղկի՝ քեզի նըման:
Աղբաւնց-արուն որ կը ծաղկի՝
Ծաղկի բա՛նայ բաղդիդ վըրան,
Ու մանուշակ որ կը ծաղկի՝
Ծաղկի, ծաղկի՝ քեզի նըման:

Փեսայութեանդ «ուրց»դ՝ երգելով,
Աստղ կը շինենք համար-հազար,
Լաթն ալիւրին մէջ թաթխելով՝
Առիք կ'ընենք երկնակամար:

Փեսայ, նարգիզ որ կը ծաղկի,
Ծաղկի կոխածդ սեմին վըրան,
Անրառամր որ կը ծաղկի՝
Ծաղկի՛, ծաղկի՛ քեզի նըման:
Մեխակ ծաղիկ որ կը ծաղկի՝
Ծաղկի տունիդ մօտ ու բերան,
«Բեափուր» վարդը որ կը ծաղկի՝
Ծաղիկ բանայ քեզի նըման...:

Փեսայու թեանդ նարօաըզ մենք,
Գովք ու ծափով, աե՛ս կը գովենք,
Հօրըդ սեմէն մըտնես երբ որ,
Հազար ափով՝ սէրըդ աայ ծոր...:
Գինարբուբ որ կը ծաղկի՝
Ծա՛ղկի խաչիդ դէմ՝ յանդիման,
Ու պալասան երբ որ ծաղկի՝
Ծա՛ղկի հոտով սէրիդ նըման,
Համասփիւռ որ կը ծաղկի՝
Ծա՛ղկի շուրթիդ կախարդական,
Քրքում ծաղիկ որ կը ծաղկի՝
Ծա՛ղկի ճերմակ բարձիդ վըրան . . . :

ՏԱՂ՝ Ի ՎԵՐԱՅ ՀԱՐՍԻ

Հարսնո՛ւկ, աղջի՛կ, ծո՛վ ծիրանի,
Ծո՛վ ծիրանի երգ ու յոյսի...
Նարօաիդ լոյսն՝ թօնրին վըրա՛յ,
Սիրոյ հասուն մորմ կը տեղայ...:
Գրողնակ ծաղիկ որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ քո թարմ այտերուդ պէս,
Ծալծրփիկը որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ ճակտիդ լոյսը ինչպէս...:
Վրանծաղիկ որ կը ծաղկի՝
Ծաղկի քօղիդ կարմրին նըման,
Ռրնան ծաղիկ որ կը ծաղկի՝
Ծաղկի շունչիդ պէս հոտեան...:

Մաղերդ յորդուն՝ ճիւղ ուռե՛նի,
Կախուած կանաչ մարգին վըրայ,
Ծոցիդ հաճոյքն՝ շողը լո՛ւսնի,
Որ աղբիւրին գրկը կ'իյնայ . . . :

Արեւծաղիկ որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ քեզ պէս, քեզի՛ նըման,
Մեղրածրծուկ որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ սըրտիդ խինդին նըման.
Աման կոսրուկ որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ աղուոր ծիծիդ նըման,
Թանրըրուեցից որ կը ծաղկի՝
Ծաղկի՛ աչքիդ վառման նըման:

Մրդահասի տա՛ք քաղցրութիւն,
Հարսնո՛ւկ, բերրի միրգ ու ա՛յգի,
Կախարդ ուլո՛ւնք, բո՛ց տարածուն՝
Որուն դըպո՛ղ մարդը կ'այրի...:

Ներուզ ծաղիկ որ կը ծաղկի՝
Շուրթիդ բառին համար ծաղկի,
Զըմբուլ ծաղիկ որ կը ծաղկի՝
Կուրծքիդ գովքին համար ծաղկի,
Ամպեւ ծաղիկ որ կը ծաղկի՝
Ոտքիդ չափին համար ծաղկի՝
Շամաւ ծաղիկ որ կը ծաղկի՝
Շամամներուդ համար ծաղկի...:

ՏԱՂ. ՆԱՐՕՏԿԱՊԻ

Տանձի ծառեր՝ ծաղիկ բանան,
— Ամառնային գոլը վըրան —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Նուշի ծառեր՝ ծաղիկ բանան,
— Մայիսներու շունչը վըրան —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Նըռան ծառեր՝ ծաղիկ բանան,
— Արեւին շողն առած բերան —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Ծիրան ծառեր՝ ծաղիկ բանան,
— Երգ ու տաղով անմահական —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Փըչատ ծառեր՝ ծաղիկ բանան,
— Հէքեաթի պէս կախարդակպն —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Խընձոր ծառեր՝ ծաղիկ բանան,
— Աղջիկներու պազը վըրան —
Ծաղկի՛ք դուք ալ անոնց նըման:

Խաղողի թուփն՝ կոճակ կապեց,
— Եօթ պարիկներ լեռնէն անցան —
Կոճակ կապէ՛ք անոր նըման:

Ընկուզենին՝ պըտուղ կախեց.
— Մայր եղնիկներ ձագ ունեցան —
Պըտուղ տըւէ՛ք անոր նըման:

Խըռընդառին թուփն չորցուցէք
Ձեր թըչնամուռն աչք լեցուցէ՛ք,
Թո՛ղ մըմըռայ գիշեր-ցորեկ,
Լոյս չը տեսնայ բընա՛ւ-երբեք:
Շընքաքուկին փուշը սուր է,
Փուշն՝ չարկամին աչքը մըտնէ,
Սաքօն՝ փեսայ, Ձարուկն՝ հարս է,
Աստուած անոնց՝ բարձը օրհնէ . . . :

ՍՕՍ-ՎԱՆԻ

ԲԱՅԱՏՐԵԼԻ ԲԱՌԵՐ

- ¹ ՁՈՒՆ քեազախիկ = թիֆթիկէ հիւտուած նանրակիր հազուստ,
որ բաճկոնի տեղ կը հագնին զաւառացիները:
- ² Ուրց = հարսանեկան ներբող:

Մ Ա Ն Ո Լ Ի Ն Ծ Ո Վ Ը

Ատարազար, ծննդավայրս է ան: Հո՛ն եմ ծներ, հո՛ն ուսեր ու հո՛ն գործեր:

Կեանքիս առաջին 31 տարիները, մինչև 1915 եղերական թուականը, ամբողջովին հոն եմ անցուցեր:

Տարագրութիւնն է որ 1915ին զիս բռնի բամներ է ծննդավայրէս և մօտ 4 տարիներ ցմբուր քամելէ յետոյ դառնութեան բաղձաթիւ բաժակներ, երբ հնարաւոր է զարձեր՝ կրկին զիմեր եմ դէպի ծննդավայրս ու հոն մնացեր ա՛յնքան ատեն, որչափ որ հնարաւոր է եղեր: 1921ին է որ վերջապէս թողած եմ ծննդավայրս, աննման Ատարազարը՝ հարկեցուցիչ պատճառներով, ակամայ:

Եւ ո՛րչափ յիշատակներ ունիմ իմ ծննդավայրէս: Ո՛րքան դէմքեր աներ եմ ու դէպքերու ականատես եղեր:

Կ՛ուզեմ գրի առնել այս յիշատակներէն ոմանք: Յիշողութիւնս աչքիս առաջ կը պաակերացնէ անհամար անցքեր, բոլորն ալ հետաքրքիր մէկը մէկ, բայց զժուար է ընարութիւն մը ընել անոնց մէջ: Կը չարչրկեմ միաքա Միթէ կարելի՞ է մէկը զո՛նել միւսին, յիշատակներէն մէկուն նախսպառուութիւն տալ և մոռացութեան մատնել միւսները:

Սակայն, ակամայ, քանիցս, յամառօրէն աչքիս կը պաակերանայ «Մանուին Ծովը» իր յաճախորդներով: Երբ Մանուին Ծովուն 1915ին Ատարազարի Հայոց բռնազաղթին հետեանքով իր հանգամանքէն զրկուելէն յետոյ 25 տարիներ բոլորած են արդէն և պատմութեան անցած է ան այլես, ինծի այնպէս կը թուի թէ բացառիկ եւ յիշատակութեան արժանի երեւոյթ մըն էր այս վայրը, ստանձին աշխարհ մը՝ իր բնակիչներով: Ի զո՛ւր կը ճգնիմ հեռացնել անոր պատկերը աչքիս առջեւէն: Ա՛ն է որ կ'իշխէ մտքիս վրայ ու կը ստիպէ զիս կարծես, որ իրեն ամառ առաջնութիւնը:

* * *

Ատարազարը Բիւթանիոյ մէկ քաղաքն է, շինուած Սաքարիա գետին եզերքը, Սև ծովու և Նիկոմիդիոյ ծոցի ծայրին մէջեւի՝ Նիկոմիդիայէն 45 Բմ. դէպի արեւելք: Գաղաքին 30000 բնակչութեան կոմիդիայէն 45 Բմ. դէպի արեւելք: Գաղաքին այնպէս կը տպաւորուէր կէսէն աւելին հայեր էին և հոն այցելողը քայնպէս կը տպաւորուէր որ ան իսկական հայաքաղաք մըն է: Բաւական թիւով յոյներ ալ

կային Ատաբաղար, որոնք գրեթէ բոլորն ալ կը հասկնային հայերէնը, թող որ չատերը հայու նման կը խօսէին ալ:

Ատաբաղարը ունէր իր Գարա աղաճ Տիպին, տեղացւոյս բարբառով՝ Ղառղըճին Տակը: Ասիկա տեսակ մը շուկայ էր: Դժուար է իսկ երեակայել որ ուրիշ տեղի մէջ ալ նման վայր մը կարենայ կեցած ըլլալ: Ղառղըճին Տակը ունի իր մասնաւոր և ճղական հանգամանքը: Շուկայ մըն է ան ուր կենդանութիւնը արեւամուտին կը սկսի, շուկայ մը՝ ուր ցերեկին գրեթէ մեռելութիւն կը տիրէ: Հոն կան նպարաածառատուներ, սակայն նպարեղէնէ աւելի մաքսանեղուած ծխախոտ կը ծախեն: Կան ճաշարաններ, որոնք սակայն իրիկուան դէմ կը սկսին իրենց գործունէութիւնը՝ առաւելապէս պաթրաստելով խմիչքներու իբր աղանդի գործածուելիք ու աւելիքներ: Կան 4 փուռեր, որոնք են միայն որ բնականոն կը գործեն: Կան պանդակներ որոնք սակայն առաւելապէս կազինօ են, ինչպէս աղգային կտրինոն: Եւ վերջապէս կան, ինչ որ ամենագլխաւորն է, գինետուներ: Ու հոն տիրապետողը այս գինետուներն են: Այս է պատճառը որ հոն կենդանութիւնը արեւամուտին կը սկսի:

*
*
*

Ղառղըճին Տակը՝ Ատաբաղարի զուտ հայաբնակ մասին մէկ սահմանն է, անկէ անդին կը սկսի հայերով խառն յունաց թաղը և անկէ քիչ անդին է բուն շուկան:

Ղառղըճին Տակը Հայոց մեծագոյն մասին շուկային ճամբուն վրայ կ'իյնայ: Շուկան կը գոցուի ճիշդ արեւամուտին, և անկէ յետոյ է որ կը կենդանանայ Ղառղըճին Տակը՝ իրեն քաշելով Բագոսի խնկարկուները:

Ղառղըճին Տակի Բագոսի թաճարներէն մին կը պատկանի յոյն Մանոլին, որուն յաճախորդները առաւելապէս Հայեր են: Թէ ո՞վ է դրած Մանոլին զինեալ անունը «Մանոլին ծովը», ոչ ոք զիտէ, բայց ամէնն ալ գիտեն որ ո՞չ մէկ հայ անոր գինետուն անունը կուտայ, «Ծով» անունը այլևս զրոյմուտեր է անոր ճակտին:

Մանոլին ծովը ունի 3 բաժանումներ, որոնցմէ գլխաւորն է սակայն մուտքի աջ կողմի գետնայարկ սրահը, ուր կը գտնուի հաստատութեան գործասեղանը և ուր կը մնայ միշտ գործառէրը Մանոլ, յաղթանալով լուսկեաց մարդ մը, որ իր արմուկները դրած գործասեղանին վրայ: արձանացած կեցած է՝ իր ուշադրութիւնը յառած յաճախորդներուն:

*
*
*

Ո՛չ մէկ հիմք կայ ենթադրելու, որ կարգ մը հայերու հոն օդին մէջ լողալէն յառաջ եկած է այս հաստատութեան «ծով» անունը:

ընդհակառակը հոն ծով ըլլալո՛ւն համար է որ այս Հայերը կ'երթան հոն լողալու:

Տեղեր կան ուր մուտքը ձրի է և ելքը դրամով: Մանուկն ծովը ասոնց հակառակն է, մուտքն է դրամով և ելքը բոլորովին ազատ, ճիշդ ծովու լողանքներուն նման:

Մանուկն ծովէն ներս մտնողը կը վճարէ 40 փարայ և կը խմէ ո՛րչափ որ կ'ուզէ կամ կրնայ, ու լողալէն յետոյ օղիին մէջ, առանց ուրիշ որեւէ վճարումի կը մեկնի:

Մանուկն ծովին մէջ լողացողները ազատ են խօսելու, խնդալու, վիճելու, հայոյեցիլու, երգելու, բայց կռիւր արգիլուած է: Երբ ձեռքեր բարձրանան՝ Մանուկը կը թողու իր արձանացած դիրքը և մէկ ձեռքով կռուողին օձիքէն բռնելն ու այնպէս ձեռքէն կտրած ծովին դռնէն դուրս հանելը մէկ կ'ընէ, ու կռուազանը ինքզինքը կը գտնէ փողոցը:

* * *

Հարց է սակայն թէ ո՞վքեր են, ի՞նչ տեսակ մարդիկ են Մանուկ ծովին մէջ այս լողացողները: Մէկ պատասխան. բոլորն ալ պատուաւոր մարդիկ, այսինքն՝ ո՛չ գող և ո՛չ մարդասպան, ո՛չ անբարոյ և ո՛չ ծոյլ, ո՛չ ստախօս և ո՛չ իսկ բանտարկու: Խօսք իսկ կարելի չէ ընել որ անոնք կարենան զիջանիլ մուրացկանութեան Ասոնք հանրութեան անվիաս անհատներ են: Անշուշտ անոնց այս ընթացքէն վնասուողներ կան, բայց ատոնք նախ իրենք իսկ են որ կը քայքայեն իրենց առողջութիւնը և ապա իրենց ընտանիքը կամ ծնողքն է որ կը զրկուի ամէն տեսակէտով:

Մանուկ ծովին յաճախորդները կարելի է բաժնել 3 դասակարգի. 1. նախկին խմողներ, 2. կեանքէն դառնացողներ, 3. պակասամիտներ:

Մանուկ ծովը լողացողներուն մեծամասնութիւնը կը ճանչցուի յատկանշական առայնձին անուսով. անոնցմէ շատերուն բուն անունը նոյնիսկ անծանօթ է հասարակութեան, իրենք իսկ սովոր չէին լսել իրենց բուն անունը կամ մականունը: Թուենք անոնցմէ քանի մը հատին անունը. Լորիկ, Կակի, Էպի, Գողիկ, Էօմէզ, Աշխարք, Ալէմ:

* * *

Մանուկ ծովին զլխաւոր յաճախորդներէն մին էր Տոքթ. Խաչատուր Անտոնեան: Երբ պատենեկութիւնը թեակոխելով սկսայ ճանչնալ շրջապատս, արդէն ան ձեռ բժիշկ էր: Առաքաղարցի չէր, բայց երկար տարիներ հոն գործեց մինչև իր կեանքի վախճանը:

Տոքթորը իր երիտասարդութեան ատեն եղած է օրուան ուսուցիչներէն: Երբ Միսիոնարները Աշխարհաբար Սուրբ Գիւրքը պատ-

րաստել սկսած են, թարգմանիչներէն մին ալ եղած է Տոքթ. Անտոն-
եանը: Ապա Ամերիկա գացած ու հոն ուսած է բժշկութիւնը: Անոր
կեանքը շատ փուլերէ անցած է և մեծ դառնութիւններ տեսած է,
հաւանաբար այս դառնութիւններն են որ պատճառ եղած են անոր
ալքոլամոլութեան: Ատարազար հաստատուած ատեն արդէն Բագոսի
խնկարկու եղած է: Նախապէս երեք անգամներ ամուսնացած է,
ինքը կ'ըսէր թէ առաջին կնոջմէն 14 թոռներ ունեցած է: Չորրորդ
անգամ ալ Ատարազար ամուսնացաւ և զաւակներ ալ ունեցաւ:

Ինքը ճարտար բժիշկ էր և Պոլսոյ մէջ իսկ հռչակ ունէր, ընդ-
հանրապէս բուսական դեղեր կը գործածէր և կը զգուշանար քիմիա-
կան բաղադրութիւնով զօրաւոր դեղեր օտար հիւանդներուն: Յա-
մառ կարգացող մըն էր և մինչև իր մահը, որ տեղի ունեցած է խոր
ծերութեան մէջ, գիրքը ձեռքէն չէ թողած: Ան իր կատարած գոր-
ծին հաւատացող մըն էր, երբ ունեանար այն համոզումը որ հիւանդի
մը իր յաճախակի այցելութիւնները անհրաժեշտ են, իսկ հիւանդին
տէրերը ծախքէ խոստովելու համար կը մերժեն, ձրիօրէն կը կատա-
րէր իր այցելութիւնները՝ կարենալ բուժելու համար հիւանդը: Տոքթ.
Անտոնեան կատարեալ անարժաթ բժիշկ մըն էր, ո՛չ միայն աղքատ-
ները ձրի կը քննէր, այլ հարուստներէն ալ խստապահանջ չէր, իր
այցադէն ինչ որ տային՝ ան կ'առնէր առանց տրտունչի: Կը սիրէր
զանկարանութիւնը, որուն հաւատացող մըն էր, ուրախութիւնով կը
քննէր իրեն զիմողներուն գանկերը և անվերապահ կերպով կը յայտ-
նէր ենթակային իր կարծած կարողութիւնները:

Առտուն կանուխ էր միայն որ կարելի էր զինքը զանել չխմած
վիճակի մէջ և հիւանդ ունեցողները ընդհանրապէս կը նախընտրէին
անոր զիմել առաւօտուն, թէ և պատահած չէ որ ան գինովութեան
հեռեանքով սխալ զեղ տուած ըլլայ հիւանդի մը:

Տոքթ. Անտոնեան սովոր էր իրիկունը հանդիպել Մանոլին ծովը
և հոն օրուան վերջին խնկարկութիւնը ընել Բագոսին:

Արդէն 80 տարիքը անցած էր կարծեմ, երբ հիւանդ ակողղին
ինկաւ: Քաղաքի բոլոր բժիշկները փութացին անոր մօտ և քննելով
այն եղրակացութեան հասան որ ան պէտք չէ ալքոլ գործածէ, հա-
կառակ պարագային կեանքը կը վտանգուի: Տոքթորը հետեցաւ իր
պաշտօնակիցներու խորհուրդին, բայց օրէ օր աւելի ու աւելի ակա-
րացաւ, ծիւրեցաւ, այնպէս որ կը կարծուէր այլևս թէ համբուած են
անոր օրերը, ինքն իսկ յոյսը կը կտրէ իր կեանքէն և խեղճուկ երեւոյ-
թով կը խնդրէ իր կնոջմէն. «կնի՛կ, այսպէս ալ պիտի մեռնիմ, այն-
պէս ալ, մաթիկ մը օղի տուր, խմեմ վերջին անգամ ու այնպէս
մեռնիմ»: Տիկինը չ'ուզեր մերժել իր ամուսնոյն վերջին խնդրը և
կը բերէ ումպ մը օղի, Տոքթորը այս օղին խմելով կարծես ուժ կը
ստանայ, քչիկ մը ևս օղի կ'ուզէ ու ան ալ կը խմէ, որմէ յետոյ

քիչ մը ուժ ևս կը ստանայ և քանի մը օրէն ոռքի կ'ելլէ զարմանք պատճառելով բոլորին: Այնուհետեւ տարիներ ալ ապրեցաւ միշտ խմելով: Ու կը կրկնէր. «Այլևս ալքոլը իմ կենսաւորութեանս համար անհրաժեշտութիւն մը զարձած է, միթէ կարելի՞ է որ առանց անոր ապրիմ»:

* * *

Մանուի ծովուն մնայուն յաճախողներէն մին է Լոլիկը: Գէթ ինծի անծանօթ է այս մարդուն բուն անունը: Առաքաղարցիներէն Լոլիկ կը նշանակէ լաւ մը գինովցած և խելակորոյս վիճակի մատնուած, և որովհետեւ Բագոսի տաճարին այս երդուեալ խնկարկուն միշտ Լոլիկ վիճակի մէջ էր, անունն ալ դրեր էրն Լոլիկ: Ան լաւ ձիւղար ու կառապան էր, քաղաքի շրջականերու բոլոր ճամբաներուն ու անցքերուն ծանօթ: Կ'աշխատէր, կը շահէր ու կը խմէր: Ընտանիք ալ կազմած էր ան, բայց ի՞նչ աստիճան օգտակար կրնար ըլլալ իր կնոջ ու տղայոց՝ Աստուած միայն գիտէ:

Յայտնի չէր այս մարդուն կեանքի նպատակը, բայց պարզ դատող մը միայն ա՛յն եղրակացութեան կրնար հասնիլ որ ան կ'ապրէր լոկ խմելու համար:

Ղառղըծին Տակէն մինչև ասուն Լոլիկին կանոնաւոր քալելով անցնելը տեսնող չկար, այս ճամբան ծուռ շինուած էր իրեն համար:

1907ին իրիկունան մը դէմ շատ ստիպողական գործով ստիպուած էի Նիկոմիդիա երթալ և այդ իրիկունն իսկ վաճառականի մը հետ տեսնուելով արդիւնքը Պոլիս հեռագրել: Շոգեկառքը առտուն միայն կը մեկնէր՝ մեր քաղաքէն դէպի Նիկոմիդիա, իսկ հեռաւորութիւնը 45 Քմ. էր: Պէտք էր ուրեմն ձիով ճամբորդել և ճամբան ալ կարճեցնելու համար՝ փոխանակ Սապանճայի կռնակէն: Կալայճը տաղէն անցնող խճուղիին հետեւելու՝ մասամբ Սապանճայի լիճին մէջէն պէտք էր անցնել և ասոր համար ալ լաւ ուղեցոյց մը անհրաժեշտ էր: Ո՞վ կար Լոլիկէն աւելի լաւ ուղեցոյց: Երկուքիս տրամադրեցին քաղաքիս լաւագոյն ձիերէն երկուքը: Լոլիկ խուտացաւ ճամբան չխմել, ես ալ վստահացուցի զինքը որ Նիկոմիդիա հասնելուս՝ ուղիովին չափ խմելու և ասոր համար զրամ պիտի տամ բացի իր աշխատավարձէն: Հասանք Սապանճա գիւղը: Շատ թախանձեց որ գէթ փոքր գաւաթ մը օղի խմցնեմ, չկրցայ մերժել: Ինձմէ զաղանի ալ երկու գաւաթ խմեր էր, բայց ի՞նչ կարեւորութիւն ունի անոր համար 3 փոքրիկ գաւաթ օղին: Հասանք Պէօյիւք Տէրպէնա, Մութը տակաւին 13 Քմ. չափ ճամբայ ունինք մինչև Նիկոմիդիա: Մութը կոխած է արդէն և ժամը հասած Լոլիկին Լոլիկ ըլլալուն: Հոտ ան «ոչ կարեմ հանդուրժել» ըսաւ: Զիէն վար իջած էր, թախանձանքս ապարդիւն էր ձին հեծնելու և ճամբանիս շարունակելու համար:

«չխմած կը մեռնիմ, սիրտս կը դողայ, չեմ կրնար նստիլ ձին» կը կրկնէր ան ու գամուած մնացած էր կեցած տեղը: Ստիպուած թողի զինքը հոն և ես մինակս շարունակեցի ճամբաս: Նիկոմիդիա արդէն գործս աւարտած էի, և ժամը 3ի մօտ էր (արեւելեան ժամ) երբ հասաւ Լոլիկը նստած ձիուն վրայ, որուն սանձը հազիւ կրնար բռնել: Ու այդ լոլիկ վիճակին մէջ 13 Քմ. ճամբայ ըրած էր ձիով՝ առանց ինսուլ:

*
*
*

Կակի՛, ո՞վ չի ճանչնար Ղառղըճին Տակի այս ծաղիկը: Ամէն ոք գիտէ անոր անունը որ Անդրանիկ է: Իրաւ է թէ Ատարազարը ունէր երեք նշանաւոր Անդրանիկ, նշանաւոր՝ իրենց յիմարութեամբ կամ ապուշութիւնով: Դամարար Անդրանիկը, որ տունը կը մնար ու կ'աշխատէր՝ ընելով ճիշդ իրեն հրամայուածին հակառակը, անոր բան մը ընել տալու համար պէտք էր արգիլել այդ գործը և արգիւնքը անսխալ էր: Կարծես իր կեանքի նպատակն էր ուսուցի միայն, բայց իր կատարած աշխատանքով առնուազն կ'արդարացնէր իր կերածը: Ոչնոք Անդրանիկը երկրորդն էր, սա նշանաւոր էր իր ապուշութիւնով, զբաղումն էր կայացործի փքոց քաշել: Բացատրիկ կերպով տեսնուած է որ ան խօսի, լռիկ ու հանդարտ նուիրուած էր իր աշխատանքին: Անոր կեանքի զիծն էր՝ տունէն գործատեղի և գործատեղիէն տուն: Երբեք չեսնուած չէ այս բացարձակ ապուշին մուրալը կամ ոեւէ մէկուն ամենափոքրիկ վնաս մը հասցնելը: Կ'արծես ան կ'ապրէր միայն քարշ տալու համար իր գոյութիւնը: Իսկ Անդրանիկներուն զխաւորն էր Կակին:

Անդրանիկ անունը տեսակ մը հոմանիշ էր այլևս Ատարազարի մէջ անխելքութեան, «գլուխս անդրանիկ կողաւ» բացատրութիւնը սովորական դարձած էր և կը նշանակէր գլուխս խելք չմնաց: Անխելք տղոց և մարդոց շատ անգամ Կակի ալ կ'ըսէին և այս բառը դարձած էր անկան մը անխելքութիւն որակող:

Ըսինք արդէն թէ Կակին Ղառղըճին Տակի ծաղիկն էր, ու ան միշտ հոն ներկայ էր և հետեւաբար միշտ կը խնկարկէր Բագոսը, առաւօտէն մինչև իրիկուն: Իր ապրուստի միջոցն էր մարդոց գնած առարկաները անոնց տունը տանիլ: Փոխադրութեան զինը կարծես որոշուած էր. 20 փարայ կու տային ընդհանրապէս: Այս քսանական փարաներն էին որ մօտ մօտի գալով կը հայթայթէին իր օղին ու հացին զրամը: Երբ զբաղած չէր՝ կը պոռար, կը հայհոյէր ու չարածճի տղոց ծաղրանքին կ'ենթարկուէր՝ զառնալով անոնց զուարճութեան միջոց:

Տակաւին երիտասարդ կրնար սնուել Կակին, բայց ո՛չ իսկ կը մտածէր ամուսնանալ և ընտանիք կազմել, ան տունի մարդ չէր

կրնար ըլլալ իր աշխարհը Ղառղըճին Տակն էր, ան պէտք էր հոն ներկայ ըլլար, և կարծես Ղառղըճին տակն ալ առանց կակիին ներկայութեան համ չունէր:

Մանուի ծովին յաճախորդներուն մէջ կակին բացառութիւն էր, ան ընդհանուր օրէնքին չէր հպատակեր: Միւս յաճախորդները մուտքի մէկ դրուշը կը վճարէին, կը լողային ալքովի ծովին մէջ ու կը մեկնէին: Տարբեր էր կակիին պարագան, ան բազմաթիւ անդամներ կը մտնէր ծով և իւրաքանչիւր մասնելուն չէր կրնար 40 փարայվճարել: Ուրեմն լուսթեամբ հազկացողութեան եկած էին Մանուին հեռ, օրական մէկ անգամ միայն կը վճարէր, ան ալ ո՛վ զիտէ քանի՞ փարայ: Այնուհետև ան պէտք էր այցելեր միւս քաղաքներն ալ և ամէն գինեպան ինքզինքը պարտաւոր կը զգար օրական տանուազն գաւաթ մը օդի տալ անոր անվճար, որ պէտքի չոյնպէս անվճար աշխատանք մը կատարել տայ անոր, և կակին սիրայօժար կը կատարէր ամէն գործ որ իրեն կը հրամայուէր:

Կակին ո՛չ մէկէն խեր տեսած էր, ինքն ալ ո՛չ իրեն խեր ունէր և ո՛չ ալ նոյնիսկ իր ծնողաց: Աննպատակ գոյութիւն մը՝ որ անվնաս կերպով կը յարտաւէր: Ահա կակիին կեսնքը: Իսկ անոր փիլիսոփայութի՞ւնը. չարածճի տղաք «Կակին խենթ» է կը պոռային, իսկ ան կը պատասխանէր «ո՞րս խելացի ենք»:

* * *

Եւ Մանուի ծովին հաւատաւոր և մշտական յաճախորդներէն մին ալ էր Գինով Առաքելը: Ամէն ոք զիտէր անոր մականունն ալ, բայց ոչ ոք պէտք ունեցած էր գործածելու, Գինով մակդիրը զարձած էր անոր մականունը, այս բառով միայն կ'ուզէին զատել զայն միւս Առաքելներէն:

Բառին իսկական առումով արհեստաւոր մըն էր Առաքելը լաւ ծեփող, պատերու ներկարար և նկարող: Ինքն էր որ մղկիթներուն պատերը կը նկարէր ծաղիկներ՝ բացարձակապէս առանց կաղապարի և ձեռքով, և ո՛րքան արագ կ'աշխատէր. ձախ ձեռքէն կախած զանազան գոյներով քանի մը ներկի ամաններ, աջ ձեռքն ալ առած փոխն ի փոխ տարբեր գոյնի վրձիւներ՝ քանի մը վայրկեանէն մէջ տեղ կը բերէր գեղեցիկ ծաղիկ մը պատին վրայ:

Կ'երեւի թէ ուսում ալ առած էր ան, որովհետև մաքուր հայերէն կը խօսէր, ինչպէս նաև թրքերէն:

Անոր բերնէն օր մը օրանց դուրս թռած չէր հայհոյութիւն, ո՛չ իսկ մէկու մը նախաառական բառ մը ըսած:

Երբ ան Մանուին ծովը կը մտնէր, լռիկ կը նստէր սեղանի մը տակ, ընդհանրապէս առանձին, առանց բառ մը արտասանելու իր կարգը կը կատարէր և իրմէ անբաժան երկու գործիքները — մին

երկար կոթով վրձին մը և միւսը երկաթ ձեփիչ մը—իր ձեռքն առած դուրս կ'ելէր, կ'երթար փռուէն հաց մը կը գնէր, կը դնէր զայն իր անութին տակ ու կը դիմէր դէպի տուն: Գինով Առաքել ամուսնացած էր և 3 զաւակի հայր: Իբր ընտանիքի բարի հայր՝ պարտականութիւն սեպած էր իրեն ամէն իրիկուն տուն տանիլ հաց մը: Ու այնպէս ինչպէս պատարագիչ եպիսկոպոս մը մէկ ձեռքը գաւաղան ու միւսը խաչ «Սորհուրդ խորին» շարականով զպնդաղ քայլերով կը դիմէ դէպի խորան, Գինով Առաքել իր մէկ ձեռքը բռնած երկայնակոթ վրձինը և միւսը ձեփիչը՝ նմանապէս զանդաղ քայլերով կը դիմէ դէպի տուն՝ երեքալով ու տառանելով, շարականի տեղ իր ճամբուն վրայ շարածի աղոց բանակն է որ կը կրկնէ «գինով Առաքել, գինով Առաքել», ու ան կը դառնայ իր եօթն ու քաղաքավարօրէն, առանց բարկութեան, առանց անարգանքի կը խրատէ տղաքը որ իրենց տուները երթան: Մինչև տուն այս արարողութիւնը բազմաթիւ անգամներ կը կրկնուի: Ինչ գործ ունին փողոցի շուները, անոնք ալ կը սկսին հաչել յաճախ այս ատանող մարդուն վրայ, և հա անիկա իր անութին տակի հացէն քանի մը պատառ կը նետէ այս շուներուն:

Երբեմն ալ կը պատահի որ իր շար բախտին ետեւէն պոռացող աղայ չի կենար, այս պարագային իր շոր կողմը կը նայի զարմացած և կարծես պոռացող աղայ կը փնտռէ:

Գինով Առաքել կարծես կ'ապրէր որպէսզի դէպի տուն իր ճամբուն վրայ աղաք իր ետեւէն «Գինով Առաքել» պոռան:

*
*
*

Թէև ոչ մնայուն, բայց յաճախակի Մանուիլն ծովը յաճախողներէն մին ալ էօլմէզն էր: Ան մասնագէտն է Ատարազարէն դէպի Էլ՝ մալը, Ծէրէզլի, Թամլըզ հայ զիւղերը երթալու ճամբաներուն, որոնք անուշով միայն ճամբայ են և մանաւանդ երբ անձրեւէն ճահիճներ կը գոյանան՝ կառքով կարենալ անցնելու համար իսկապէս մասնագէտ կառագաններ պէտք են:

Էօլմէզը ունի մէկ ձիով կառք մը և ընդհանրապէս կ'աշխատի այս ճամբաներուն վրայ:

Մանուիլն ծովուն այս յաճախորդը իր ընկերներէն շատերուն պէս լօլիկ վիճակի չի մասնուիր, բայց իբր կառագան՝ հայհոյութիւններու շատ մեծ պաշար մը ունի՝ կարծես արդարացնելու համար ֆրանսական առածը թէ «կառագանի նման կը հայհոյէ»: Այս հայհոյութիւնները անիկա մէկը նախատելու համար չէ որ կ'ընէ, այլ իր խօսքերուն ուժ տալու, մանաւանդ իր ձիուն յողորմութիւն ցուցնելու և կորով ներշնչելու համար:

Մոռցանք ըսելու որ էօլմէզին կուրծքը միշտ բաց է և կուրծքի մորթը՝ թաւ ստեղծներն են որ կը ծածկեն:

Էջովէդին վրայ լրիւ գաղափար կազմելու համար պէտք է զինքը տեսնել երբ կ'աշխատի կառքը անցընել ճամբուն վրայ գտնուող ճախճախուռէ մը, մանաւանդ երբ կողորդը թրջած ըլլայ: Ո՞ր ձին կրնայ կառքը ճախճախուռտին մէջ թողուլ անոր սրտին խորէն թող հայհոյանքներու ու գոռում գոչումին տարափին տակ:

Օր մը, երբ շարաթներով անդադրող անձրեւները Առաքաղարթամ լըդ ճամբան մեծ մասով ճահիճի վերածած էին, բողբոջկան պատուելի մը պէտք կ'ունենայ թամ լըք երթալու քարոզութեան համար, ուր քանի մը բողբոջկան ընտանիքներ կային: Էջովէդն էր միայն որ կրնար անվտանգ պատուելին թամ լըք հասցնել, բայց ան ալ շատ կը հայհոյէր, իսկ պատուելին կը խորշէր հայհոյութենէն և չէր ուզեր լսել: Պատուելին կը խոստանայ կրկին զին վճարել, պայմանաւ որ Էջովէդ ճամբան երբեք չհայհոյէ և Էջովէդ պատուոյ խօսք կու տայ չհայհոյելու: Կառքը կը կտրէ ճամբուն կէսը, ուր կը հանդիպի սարսափելի ճահճացած մասի մը, կարծես յառուկ ցեխ պատրաստեր ու հոն լեցուցեր են: Ձին խարաղանի հարուածներուն տակ կը մտնէ ճահիճը ու բաւական մը կը յառաջանայ, բայց կառքին անիւները լաւ մը կը խրին ցեխին մէջ: Էջովէդ, խոստումապահ մարդ, կը զգուշանայ հայհոյել և շատ յարմար, փաղաքշկան բառերով կ'աղաչէ ձիուն որ զիրենք պղատէ, խարաղանի հարուածներն ալ անօգուտ կը մնան, ժամու մը չափ աշխատանքը ի գուր կ'անցնի, իսկ օրը կը տարածամէ: Պատուելին կը մտահոգուի և ճար մը կը փնտռէ: Էջովէդ կ'ըսէ թէ ինք կրնայ ճարը գտնել, բայց իր խոստումը կայ, մանաւանդ խոստումը յարգած պարագային միայն իրաւունք պիտի ունենայ կրկին վարձք առնելու: Պատուելին տեսնելով որ այլապէս հնար չկայ, թոյլ կու տայ որ Էջովէդ կառքը ճահիճէն անցնէ ինչպէս որ կրնայ: Ահա Էջովէդ որոտագին կը բանայ հայհոյանքին տոպրակը ու կառքը կը սկսի շարժիլ: Կ'ըսուի թէ պատուելին այդ օրէն ասդին այլևս հայհոյանքէն չի սարսափիր ու կ'ընդունի անոր հրաշագործ զօրութիւնը:

*
*

Յակոր աղան ևս Մանոյին Ծովը յաճախողներէն էր: Իրաւ թէ անիկա լողալու համար չէր որ Ծովը կը մտնէր, այլ զովանալու համար միայն, բայց այնուամենայնիւ իր սովորական շեղը ունէր հոն:

Յակոր աղան Բագոսի կը խնկարկէր պարզապէս ինքնանոյն մտածելով ցութեան համար, որպէսզի մի գուցէ իր խելքը կորսնցնէ մտաւոր իր կեանքի փուլերուն վրայ և իրաւ ալ զժուար է օրուան մտաւորականը ըլլալէ, ուստի շուրջը ընելէ և աչքի ինկնող շատ մը յարգուած մարդոցմէ շատ աւելի զարգացած ըլլալով մէկտեղ, իր ապգուած մարդոցմէ շատ աւելի զարգացած ըլլալով մէկտեղ, իր ապգուածը հոգալու և ընտանիք պահելու համար, ջրկիր դառնալ և ան

այ ուսով ջուր կրել՝ մէկ մեծ սափորը թափել փարայի: Թիւլպէնտ-
ճեան մականուներ գործածութենէ ինկած էր այլևս, անոր յաջորդած
էր ջրկիր մականուներ, ու բոլորը սովոր էին անուանել զինքը Զուրճի
Յակոբ աղան: Լա՛ւ որ պահուած էր անոր անուանին կից «աղա» բառը,
և ասիկա ո՛չ թէ իբր ծաղրանք, այլ զայն յարգելու համար:

Յակոբ աղան չէր սիրէր շողոքորթութիւնը, ան չէր կրնար թա-
ղական աղաներուն քմահաճոյքը կատարել, որով անոնք ալ զինքը
դուրս թողած էին վարժարանէն ու սպառնած անոր «անօթի սա-
կեցնել», բայց Յակոբ աղան վճռած էր անօթի չսաակել և ուրիշին
գլուխ չծռել, այլ ապրիլ ու իր ընտանիքի պէտքերը հողալ աշխա-
տելով, ինչ տեսակ աշխատանք որ ըլլար ասիկա:

Յակոբ աղան աշխատելէն չէր ամչնար, ան կ'ամչնար միայն ա-
ղաներուն առջև ստորնանալէ:

Մոռցանք ըսելու որ Յակոբ աղան երկայնահասակ էր, խար-
տեայ մազերով և գեղեցիկ դէմքով, ան սիրուէն մօրուք մըն ալ
ուներ: Երբ ան ակնոցը աչքին սեղանին տակ նստած լուրջ դէմքով
և տրամարանօրէն և մաքուր հայերէնով մը կը խօսէր, զայն չճանչ-
ցողը կը կարծէր սովորական մեծ մարդոցմէ մէկը: Զինքը ճանչցող-
ները միայն գիտէին թէ ան սովորականէն ասորեր մեծ մարդ մըն է:

Մանուի Մովսին մէջ ան մեծ յարգանք ուներ, բոլոր Բագուա-
կանները անոր խօսքերը իբր պատգամ կ'ընդունէին և նոյնիսկ անոր
ներկայութեան շատ պակերակից հայհոյութիւնները զանց կ'ըլլուէին:

Օր մը Առաջնորդ Ստեփանոս Արք. Յովակիմեանի կ'այցելէ
Յակոբ աղան իբրև անոր վագեմի ծանօթը: Սրբազանը կը հարցնէ.

— Ի՞նչ կ'ընես, ի՞նչպէս կ'ապրիս, Յակոբ աղա:

— Զուր կը կրեմ, Սրբազան:

— Աս եղա՛ւ մի, Յակոբ աղա, դուն ջուր կրելով պէտք է
ապրէիր:

— Ի՞նչ ընէի հապա, Սրբազան:

— Ինչո՞ւ ուսուցիչ չես ըլլար:

— Ի՞նչպէս ուսուցիչ ըլլամ, Սրբազան, երբ թաղականները չեն
ուզեր:

— Որո՞նք են այդ թաղականները, պէ՛ ճանրմ:

Թարիկեան Նարկիշը, Բարսեղեան մարքիշը և Կոստոյեան եր-
կայնավիղը:

Այդ թուականէն սկսած այս ամականները նուիրագործուած են
այդ մարդոց անունին կից:

Միայն ջրկիրութիւնով դժուար էր ընտանիք պահել, ուստի Յա-
կոբ աղա գիշերապահութիւն ալ կ'ըներ:

Ու կը պատահի որ Պոլսէն հայ վաճառական մը կ'այցելէ Առա-
քաղար, իր յաճախորդ վաճառականներէն իւրաքանչիւրը կ'ուզէ որ

իրեն հիւր ըլլայ, վերջապէս վաճառականը խօսք կու տայ անոնցմէ մէկուն և միւսներն ալ չվշտացնելու համար կը համաձայնի անոնց հետ քիչ մը Բագոսը խնկարկել Ղառղըճին Տակի Ազգ. կազմին: Մուժը կառարեալ է արդէն երբ մեր վաճառականը գլուխը քիչ մը օտարացած հրաժեշտ կ'առնէ զինքը հիւրասիրողներէն և կ'ուղղուի դէպի վաճառականին տունը, որուն ուրիշ ատեն հիւր եղած ըլլալով տունը գիտէր արդէն Բայց մթութիւնը և օդին զօրութիւնը միացած կը մոլերեցնեն մարդը, որ հոս ու հոն քիչ մը թափառելէ յետոյ կը պատահի գիշերապահի մը ու անոր կը հարցնէ իր երթալիք տունը: Գիշերապահը ուղիղ կեցուածքով և հատիկ հափկ շարելով բառերը և ճշգրիտ հնչումներով ու առողանութիւնով կը պատասխանէ:

«Սա զիմացնիդ պատկերացող լայն պողոտայէն ուղիղ կ'ընթանաք: Նրբուզիներն ու զուհիները զանց ընելով Ձեր աջ ձեռքի երրորդ փողոցի աջակողմեան հինգերորդ տան դուռը կը բախէք, ա՛յն է Ձեր փնտռած տունը»:

Վաճառականը դպրոցին մէջ իր ուսուցիչէն իսկ այսպիսի մաքուր հայերէն լսած չէր, կը հանէ զրպանէն քառորդ մէճիւք մը և անով կ'ուղէ վարձատրել այս բացառիկ պահապանը:

— Պարո՛ն, հաճեցէք այդ դրամը Ձեր զրպանը դնել, ես իմ աշխատանքիս փոխարէն ամսականս կը ստանամ և նուէր ընդունելու սովոր չեմ:

Պահապանին այս խօսքերը կ'ապշեցնեն վաճառականը, որ ինքնիրեն կը սկսի խորհրդածել:

«Երբ այս քաղաքի գիշերապահները ա՛յսքան մաքուր կը խօսին ու ա՛յսչափ վեհանձն են, հապա վաճառականները ինչ տեսակ մարդիկ պէտք է եղած ըլլան»:

Հարկաւ յայտնի է թէ այդ գիշերապահը Յակոբ աղան էր:

Այո՛, Յակոբ աղան Մանուիլին ծովը կը յաճախէր, բայց ո՞վ կըրնար մեղադրել զայն, ցերեկին երբ ջրկիրութիւնէ՛ն ուսերը լողնած սախուռած էր ընթրիքէն յետոյ փողոցները շրջել պատառ մը հաց կարենալ տանելու համար իր զաւակներուն:

* * *

Աւելորդ է հետաքրքրուիլ իմանալու համար թէ Մանուիլին Մովը ստեղծուած է Դողիկի՞ն համար, թէ Դողիկը ծնած է Մանուիլին Մովը յաճախելու համար: Ի՛նչպէս կ'ուզէք այնպէս ենթադրեցէք: Իրականութիւնը այն է որ Դողիկը անբաժան է Մանուիլին Մովէն:

Ձի գիացուիլ թէ ո՞ր թուականէն սկսած Բագոսի խնկարկուեցած է Դողիկը, որովհետեւ ա՛յն օրէն որ ժողովուրդին մէջ ճանչցուած է իբր սիմփր ծախող, ճանչցուած է նաև իբր մշտական զինով: Է իբր սիմփր ծախող, ճանչցուած է նաև իբր մշտական զինով: Փայտի մը վրայ անցուցած սիմփրները ու զայն ձեռքին կախած կը

պատի փողոցէ փողոց՝ ալքոլի աղղեցութեան տակ ճորճորալով: Տղաքը զինքը կը ծաղրեն, ինքն ալ տղոց կը հայհոյէ: Իրիկուենն ալ շունչը կ'առնէ Մանուկն ծովը: Ահա իր կեանքը:

Երիտասարդ էր տակաւին եւ զինքը ամուսնացուցին զրեթէ բռնի, և ինչ ամուսնութիւն:

Մեր փողոցն էր Շարուկենց տունը: Տան բնակիչներն էին 4 կոյսեր, Տուառու, Զարթիկ, Տուրիկ և Պայծառ: Այս տան մէջ այր մարդ բնակիլը չէի գիտեր: Կարծեմ այս 4 կոյսերը ազգական ալ չունէին: Չափազանց փափաքող իրենց տան մէջ տղայ ունենալու, ամէնէն փոքրին «աղայ Պայծառ» կ'ըսէին, թէ եւ ան յիսուսն ասրեկան ըլլար: Այս տունը կը նմանէր գուլպայի աշխատանոցի և մթերանոցի, օրիորդներէն ոմանք բուրդ կը սանտրէին, ոմանք կը մանէին և ոմանք կը հլւսէին: Վերջընթեր կոյսը, Տուրիկ պալա, որ վաթսուսնոց էր, շուկան գուլպայ կը ծախէր ուրիշներու հաշտոյն և ծախողէք կ'առնէր ըստ տեսակի 5 կամ 10 փարայ զոյգէն: Ու այս կուսաառունը կ'ապրէր աշխատանքի արդիւնքով՝ առանց ուրիշին կարօտելու: Անոնք կարօտ էին միայն տան մէջ այր մարդու մը: Ծատ կը փափաքէին որ իրենց տան մէջ ալ ծխախոտի մուխ հանող մը ըլլար:

Ու պատահեցաւ որ Դոզիկը առն փեսայ դնաց Շարուկենց տունը՝ ամուսնանալով յիսունը անցուկ տղայ Պայծառին հետ:

Բայց Դոզիկ ընտանեկան կեանքէն համ չէր առներ, հակառակ 4 քոյրերուն ծայր աստիճան գուրգուրանքին՝ տունը նեղ կու գար իրեն: Թախանձագին կը խնդրէին որ Արեամուաւին տուն գայ, նոյն իսկ շատ անգամներ կ'ըսէին որ իրեն վաստակին ալ պէտք չունին, միայն թէ մարդու պէս ապրի: Առածը կ'ըսէ. «Խենթն ինչ կը հասկնայ խրատ, շունն ինչ կը հասկնայ շարական»: Չայն բարբառոյ յանապատի: Դոզիկը մնացած էր այն՝ ինչ որ էր նախքան իր ամուսնութիւնը: Կարելի չէ հաստատել թէ ան զիտակ էր ամուսնութեան ինչ ըլլալուն: Ան, ինչպէս անգամ մը ըսինք, բռնի ամուսնացած էր:

*
*
*

Ալէմ, Աշխարհ, ահա երկու հոգի ևս ծովի յաճախորդներէն: Ալէմ և Աշխարհ, երկու մարդիկ՝ որոնց տղայութեան մասին զրեթէ ծանօթութիւն չկայ, ամէն ոք ծանօթ է անոնց չափահասութեան: Առոնք երկուքն ալ խենթ չեն, բայց խելացի ալ կարելի չէ համարել զիրենք: Ամէն պարագայի տակ ոչ ոքի վնաս կը հասցնէին: Պարզապէս «իրենց հալին» մարդիկ էին:

Աշխարհ կրկայնահասակ էր, ապառաժ որ ուրիշներէն կ'ընդունէր ի վարձ իր կատարած աշխատութեան, մինչև ծուռկերը հաղիւ կը ծածկէր, Ծատ քիչ անգամ ոտքը կանոնաւոր գուլպայ կը տեսնէր:

Գյուլեսը քիչ մը ծուռ կը դնէր հետզհետէ աղաւթած եզերքէն աղատ-
ուելով զեղչուած կարճ ֆէս մը: Բայց անպայման իր կռնակը կար
կամ ուրաքնկոթ մը կամ պոնժուր մը:

Մինչև 60ի մօտ Ալէմն ու Աշխարհը կեանքին կապուելու հետա-
մուտ չէին, անոնք կ'ապրէին պարզապէս անոր համար որ մեռած չէին:
Անոնց մեծագոյն երջանկութիւնն էր մուտքի 40 փարան վճարելով
Մանոլին ծովը մանել ու ալքողին ազդեցութեան ենթարկուելի:

Ու պատահեցաւ որ «անճարակ»ի օր մը քաղաքին մէջ լուր
տարածուեցաւ թէ Ալէմն ու Աշխարհը կ'ամուսնանան: Այ ամէն
ոք չամուսնացողներուն կ'ըսէր. «Ալէմն ու Աշխարհը կը կարգուին,
դո՞ւն ինչ կ'ընես»:

Ալէմն ու Աշխարհը կեանքէն դառնացածի երեւոյթն ունէին,
կարծես աշխարհի հետ քէն ըրած էին: Անոնց ամուսնութիւնը սա-
կայն ենթադրելի կու տար, որ անոնք կեանքին կը փարին: Այո՛, անոնք
կեանքին կը փարէին, բայց Մանոլին Ծովին փարած մնալէ ալ չէին
դադրեր:

Ո՛չ ոքի համար պարզ էր թէ այս երկու փարումներէն ո՞րը ա-
ւելի զօրաւոր էր, քանի որ անոնց ամուսնութիւնը ոչ մէկ կերպով
ազդած էր անոնց Մանոլի Ծովին փարումին:

*
*
*

Զորն ասեմ կամ զորն խոստովանիմ: Վերջապէս ծո՛վ էր, կարե-
լի՞ է որ քանի մը լողացողներ միայն ունենար: Բայց ո՞ր մէկը յի-
շենք, էպի՞ն, Տուռաթի՞ն, Դըլէ՞ն, Զոպառ Նշա՞նը... դի անթիւ են...:

Մանոլին Ծովը աշխարհ մըն էր: Հոն յաճախողներուն իւրա-
քանչիւրն ալ իր մէջ աշխարհ մըն էր: Որո՞ւն հոգ քննել այս աշխարհ-
ները: Տոքթ. Անտոնեանէն մինչև Դոդիկ... ամէնէն զարգացածն
ամէնէն տգէտը, բոլորն ալ կ'ուզուէին զէպի Մանոլին Ծովը՝ ոմանք
մաքրուելու համար իրենց դառնութեան զգացումներէն և ոմանք ալ
ապրելու համար իրենց կեանքը: Ու կակին իրեն խենթ ըսողներուն
կը պատասխանէ.

«Ո՞րս խելացի եմք»:

Յ. Գ. Ա.



Գ Ի Ն Ե Մ Ո Լ Ը

(Ս. Ռ. Ս. Կ)

Կա՞յ մարդ չ'ունենայ բերութիւն որո՞ւ,
Գլխէն անբաժան որպէս ապարօտ...
— Ունակութեանը մարդու մը խրմուն՝
Ձի կայ դեղ գարման... կը մընայ լրման:

Մերադրող ուրն՝ զինւոյ կարասի,
Հաւասարիմ նորս՝ հայրիկ-Քառասի,
Կու սար իւրայնոց անազին վընաս...
Այդ մոլութիւնը երբոր կ'ունենաս,
Կես նամբան, նաեւ, կը մնաս անտուն...
Ոգելից շաղով քուած այս մարդուն
Երբ օր մը միտքը, խելքը եւ հոգին
Թաղած էր խորը զինւոյ սրակին,
Կինը գայն փակեց մէջը դագաղին...
Երբ ոգելիցը եւ անմե՛ռ օղին
Օղը ցնդելով սակաւ առ սակաւ
Գինովին խելքը գլուխը եկաւ,
Նա տեսաւ փոքր իր — գործիք մեռեալի —
Մոմ մը, պատանի մը, խա՛չ մը անոնի...
«Սա ի՞նչ է բաւ... չա՞ր է քե բարի...
Մի՛ գուցէ մընաց կընկերս այրի»:
Կինը, իսկ եւ իսկ, աման մը գրկած,
Առնական ձայնով ծպտեալ անկասկած,
Կու գայ մեռեալին (մեռեա՛լ իբրեւ քե),
Դագաղին մէջը ձեռքը կը խօթէ,
Թանապուր կու այ մարդուն մի պընակ...
— «Սըն՛ւնդ քողէնւոյ դրժոխաբընակ...»
Կը բՅրէ մարդը, եւ կը վնո՞ւ քե՛՝
Գործը ասկէ վերջը զըժոխքին հետ է...
Ու կը հարցընէ. — «Ըսէ՛, դուն ո՞վ ես...
— Ե՛ս, խոհաբար հոն՝ ուր դուն կը չըես.
Կեր կու սամ անոնց՝ որ գերեզմանին
Վեմին սակ փակւած, ուտելիք չ'ունին:
Ամուսիմն իսկոյն կը բացագանչէ.
— Կեցիր որ բսե՛մ... այդ աղւոր բան չէ՛...
Տո՛ւր փարջ մը գինի... որ լեզուս քոչէ»:

ԵԶԵՓՈՍ, ԼԱՅՈՆԹԷՆ ԵՒ ... Յ. Խ.

Տ Ղ Մ Ա Թ Ա Թ Ա Ի Ս Ա Յ Լ Ա Պ Ա Ն Ը

(Ա. Ռ. Ա. Կ)

Հայրը մայրը այս առակին՝
Եզովոս է: Իսկ Լաֆոնքեն,
«Հըրապուրւած պանրի հոսեն»,
Բրած է մի գողոն մեկին...

Բա՛ց ականջդ եւ լա՛ւ իմա.
— Պարկե՛տ գրող մըն եմ քեպէս,
Լաֆոնքեն-էն (յայճնի վարպէս)
Ե՛ս ալ կ'ընեմ նո՛յնը հիմա:

.

Անիւները՝ չոր խոտ բեռցած մեկ սայլի,
առանց այլի եւ այլի,
Սայլապանը սեսաւ քաղւած մեջ ցեխի՝
անւի ոսո՛խ կասաղի:
Եւ չի կար մարդ՝ որ օգնութեան գալ փութար,
Անիւներուն ցո՛ւնց մը տար...
Գեպին վայրը, գիւղէն հեռու, բա՛ց դատէ եր:
Գալով մարդուն՝ նա գիտէր՝
Թէ երբ «Բախս»ը կասդեցընել մեկն ուզէ,
գայն ցեխի մեջ կը սուզէ...
Եւ կ'սկսի յիժոց բառնալ, սոսկալի՝
հայնոյանքի պարկ մը լի...
Քոլերայի՛ն, ժանսախսի՛ն ալ կոչ կ'ընէ՝
որ աղէտին վե՛րջ դընէ.
Եւ կ'անիծէ, Սայլը, Տիղմը... Ձիե՛րն ալ...
ու չ'ուզելով ողջ մընալ,
Կ'անիծէ եւ... ինգզինգը: Եւ պէսզի,
ասուածի մ'ալ հետ խօսի,
Արկածեալը մեկէն ի մեկ կը յիժէ՝
քէ լըսած է ուրիժէ,
Մէկ անւանի՛ մե՛ծ ասուածի մը մասին՝
որ դընելով իր ուսին
Երկիրն հանուր — մեքենան այդ կլորիկ —
փետուրի մը պէս գողտրիկ.
Պըսկած է հորիզոնէ հորիզոն,
վերը վարը, եւ հո՛ս հո՛ն:

—«Օ՛ Հեռակլէս (կ'ըսէ անոր) ինձ օգնէ՛,
 սայլս տիղմին, տե՛ս, գոգն է...
 Դուն որ տարիք ուսիդ վերայ ողջ աշխարհ,
 տուր ինձ ուժեղ մի նշխար,
 Ազատի՛մ սա անխիղճ հանճէն խելագար՝
 ուր խորեցայ՝ ապիկար»:
 Երբ աղերսը կը վերջանար, տա՛ս վերէն,
 հաւանաբար ամպերէն,
 Լըսեց ձայն մը, ձայն անաւոր՝ որ կ'ըսէր.
 =«Արարածոց էս ի սէր,
 Կը նըւիրեմ բազկիս ուժը տարուցակ,
 երբ մա՛րդ գտնեմ, ընդունակ՝
 Թե՛ տարծելու, քե՛ գործելու: —Ա՛րդ, քննէ՛,
 ի՞նչ բան սայլդ կը բռնէ...
 Կպչուն ցելսը անհւնեւեղ դո՛ւրս վանէ.
 արգելհնեուն մեծն ա՛ն է.
 Եւ առջեւը նամբա՛յ մը բաց անխիղճ.
 Բահով բշտով, տակաւին
 Հարած մ՛ալ տուր գալլախագին՝ որ փերի:
 —Տե՛ր Հեռակլէս, այդ քրի...
 =Բրի՛ւ... տաս լաւ: Խարագանըդ ձեռքըդ առ՝
 որ գործդ ելլէ ի կատար:
 —Խարագանը, Տե՛ր Հեռակլէս, ձեռքս առի:
 =Առի՛ր... լա՛ւ է... տա՛ս բարի.
 Պիտի օգնեմ հիմա քեզի... Օ՛ն տարծէ՛
 որ քրածըդ բա՛ն մ՛արծէ:
 —Սա ի՛նչ հրբաւօ՛. օ՛ Հեռակլէս, ի՛նչ բան է...
 =Ձիուն սանձը կո՛ւտ բռնէ...
 Հիմա տեսա՛ր Ձիերդ ինչպէս կը քաշեն
 Անտարժ սայլըդ ամրաւեն...»:

.

*Աշխատանքին՝ դուն քու ա՛նձդ նախ լըծէ՛.
 Որ ի վերուստ օգնուիլուն քեզ եկեացէ՛:*

Յ. ԽՆԴԻՐԵԱՆ



ARMENIA DEVICTA, RECEPTA, CAPTA

Կամ պէտք է յուսեան ըլլանք մեր պատմահօր իտրենացւոյ չափ և աներկբայօրէն ընդունինք իր վճիռը հին Հայոց մշակութային մակարդակի մասին, համաձայնելով իր տողերուն. «Ինձ թուի, որ պէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստից» և կամ պէտք է ընդունիլ որ դարերու ընթացքին Հայաստանի մէջ կուտակուած մշակութային և դրական հարստութիւնը ընա՛նջման ենթարկուեցաւ տարերային մոլուցքով մը, որուն արտացոլումն է Ագաթանգեղոս:

Իսկապէս շատ բան պէտք չէ սպասել Հայաստանի պետական անցեալի մասին մատենագրութենէ մը, որ ծաղկեցաւ չորրորդ դարու վերջերը և հինգերորդ դարուն, զուգադիպելով Արշակունեաց թագաւորութեան վերջին օրերուն և Հայաստանի պետական հոգեվարքին:

Հեռեւարար ի տես այս անմխիթար վիճակին մեր հին պատմութեան ատաղձը հաւաքելու համար ստիպուած ենք դիմել օտար պատմիչներու ձգած պաշարին և թերևս ընդունիլ նաև անոնց կողմնակալութիւն բուրոյղ և կասկածելի հաւաստիացումները:

Յետադեքսանդրեան շրջանը և Տիգրաններու և Արտաւազդներու նշանաւոր տարիները, որ հայ պետական և քաղաքական կեանքի փառաւոր շրջաններէն մին է, դարձեալ մեր տարակուսանքին ենթակայ պիտի ըլլար եթէ հայկական հին գրամները գոյութիւն չունենային և չծառայէին մեզի իբրև ամուր և անխախտ կառուաններ:

Հայկական երեք թագաւորութիւններու — Մեծ Հայոց, Փոքր Հայոց և Ծոփաց դրամները, ազգային հայկական բնոյթ ունեցող միակ փաստերն և տուեալներն են, որոնց հետ քիչ թէ շատ կը միաբանին նաև օտար մատենագրական պաշարը և այսպէսով գրեթէ լուսաւորուած կ'ըլլայ վերոյիշեալ պատմական ժամանակաշրջանը:

Ուրեմն հայկական հին գրամները պատուական ապացոյցներ եւ խտացեալ նիւթեր են մեզի համար և անոնց լրիւ և կատարեալ դասաւորութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի քան թէ հինգերորդ դարէն մնացած քանի մը կասկածելի էջեր:

Հայկական հին գրամներու լրիւ և վերջնական դասաւորութեան պէտքը չնշտեցի, որովհետև հոս ալ հայ հնագէտը որոշ դժուարութիւններ ունի, քանի որ համոզիչ կերպով տակաւին չէ լուծուած կարգ մը կասկածելի գրամներու հարցը:

Չպնց առնելով այդ վիճելի կէտերը, հոս պիտի բաւականանամ առաջադրուած նպատակիս համար հիմնուել անվիճելիօրէն հայկական համարուած դրամներուն և դանոնք գործածեմ իրրե անժխտելի վկայութիւններ:

Մեզի ստիպողական սովորութիւն եղած է ազգային պատմութեան համար օգտուել և նիւթ հաւաքել Հռոմայեցի պատմիչներէ, նոյն սովորութեան հետեւելով չենք կրնար զանց առնել նաև կարգ մը հռոմէական դրամներ, որոնք իրենց վերաբառութիւններով և պատկերներով որոշ ազերս մը ունին Հայոց հին պատմութեան հետ:

Այսպէս երկրորդ եռապետութեան անդամներէն Անաոնիոսէ եւ Օղոստոսէ տպուած խուճմը մը դրամներ զգայացունց խորագիրներով — Armenia devicta, Armenia recepta, Armenia capta, Հայոց պետութեան անկախութեան բարձուճքը կը գուժեն:

Հիմա հարց մը կը ծագի. Մեծն Տիգրանի որդւոյն Արաւաւղի մահուան և անոր յաջորդներուն ժամանակով զուգադիպող այդ օտար դրամները որքա՞ն իրականութեան համապատասխան են, ի՞նչ պատմագիտական արժէք ունին և որքա՞ն հաւատք ընծայելու է անոնց վկայութեան:

Առաջադրուած հարցի լուծման համար հարկ է մօտենայ պատմական զէպքերուն, փնտռել յայտնի պատմիչներու վկայութիւնները և միևնոյն ժամանակ ապաւինիլ ժամանակակից հայկական դրամներուն:

* * *
Ք. Ա. 37ին Պարթևաց գահունէ վրայ էր հզորագոյն արքաներէն մին — Հրահատ Դ (37—2) որ արհամարհանքով մերժած էր Հռոմի կողմէ իրեն եղած հաշտութեան առաջարկները:

Իսկ, Հռոմի եռապետութեան անդամներէն Անաոնիոս, որուն ուժ և նախանձելով իր զօրավար Վենտիդիոսի յաղթութիւններուն, որոշած էր անձամբ և վերջնականապէս խորտակել Պարթևաց ուժը:

Ահա այս պարագաներէն թիւած և թաւայած պատմական զէպքերը խոր և ծանր անդրադարձումներ ունեցած են Հայաստանի վրայ, որ ճակատագրականօրէն և աշխարհագրական զիրքով գտնուեցաւ երկու հսկայ ուժերու մղած գոյապայքարի դաշտին վրայ:

Անաոնիոս 36ին սկսաւ արշաւանքն 16 լեզէոնով և բազմաթիւ օգնական զնդերով, որոնց մէջ էին 6000 հայ հեծեալք, բայց տարւոյն ուշ եղանակին, և մտաւ Արապատական, և պաշարեց Փրասպա մայրաքաղաքն... Բայց Ուպլիոս Ստատիանոս որ երկու լեզէոնով պաշարման գործեօք և մթերքներով պիտի հասնէր Անաոնեայ քով, չկրցաւ զիւրու հասնիլ ժամանակին, մանաւանդ թէ Ստատիանոսի

բանական զիշեր մը յանկարծակի յարձակում կրելով Պարթեւներէ, որոնց գլուխն էր Մոնեսէս, ջարդուեցաւ բոլորովին (7500 հոգի) եւ պաշարման մեքենայք գերի ինկանս Այս յուրն աշխատէս վախճուց զԱրտաւաղը Հայոց՝ որ իւր զօրքով եւ դարձաւ իւր աշխարհն, առանց Անտոնեայ քով հասնելու»:

Շատ մը ապարդիւն ջանքերէ ետք, անկարելի եղաւ Պարթեւները ընկճել եւ Հռոմէական բանակը ստիպուեցաւ նահանջիլ:

«Երբ 27 օրուան մէջ Հռոմայեցիք Հայոց երկիրն Երասիի փոխ հասան, ուր Պարթեւք ստիպուած էին հալածումը դադրեցնել, Հռոմայեցիք կորսնցուցած էին պատերազմողաց չորրորդ մասն (24000 հոգի) պաշարաբերաց երրորդն, եւ ամէն մթերք: Ութ հազար հոգի ալ մեռան Հայոց լեռնոտ աշխարհը կտրել անցնելու ստին ճրակն եւ ձեռն հիւսերէ, եւ Հռոմայեցի բանակն բնաջինջ կ'ըլլար՝ եթէ Արտաւաղը Հայոց՝ չներէր որ ձմեռն Հայոց աշխարհն անցնեն եւ խնամք չտանէր»:

Անտոնիոսի այս ողբերգական եւ խայտառակ նահանջի նկարագրութեան համար քանի մը մէջբերումներ ըրի Հ. Յակոբոս վրդ. Տաշեանի «Համառօտ Պարթեւայ պատմութիւն» պատուական գործէն (տես էջ 74, 75, 76) խուսափելով աւելորդ մանրամասնութիւններէ:

Նոյն ամօթալի նահանջը կը նկարագրէ նաև ընդարձակօրէն Մ. Գարազպեան իր «Քննական Պատմութիւն Հայոց» մեծաշունչ գործին մէջ (մասն Բ. էջ 169—192) վկայութեան կոչելով Հռոմայեցի պատմիչներ — Վէլլիոս Պատերկուզոսը, Դիոն Կասիոսը եւ ուրիշներ:

Արշաւանքի ձախող ելքէն կառուած եւ պատասխանատու դաւաճան մը գտնելու մոլուցքով Անտոնիոս խաբէութեամբ ձերբակալեց Հայոց Արքայ Արտաւաղը (34ին) եւ զայն շղթայակապ զրկեց Աղեքսանդրիա ուր եւ նաև գլխատուեցաւ (30ին):

Արտաւաղը բռնուելուն պէս Հայերը արքայ հռչակեցին անոր որդին Արտաշէսը (34ին) որ թէև ստիպուած էր սպառաանիլ Հրահատայ քով, բայց երբ Անտոնիոս իր զօրքին մէկ մասը քաշեց Հայաստանէն Օգոստոսի դէմ կռուելու, Հայք եւ Պարթեւք մասն Հայաստան, ջարդեցին Հռոմէական պահակազօրքը եւ Արտաշէս նստաւ Հայոց գահը¹ (30ին):

Պատմական ղէպքերու համառօտ քննութեանն յայտնի եղաւ

1) Արտաշէսի Հայաստան մուտքը եւ Հռոմայեցիներու ջարդը նոյն իսկ եղաւ 33ին: «Քանգի ըս Յովսէպոսի եւ ըս Տակիտոսի, իսկ եւ իսկ զկնի Արտաւաղայ գրեթէ նոյն տարին (34) կամ ամառ միով յետոյ՝ եկաւ անդրանիկ որդին Արտաւաղայ Արտաշէս եւ օգնութեամբ Պարթեւաց քաղաքին Հրահատայ Գ...տաւ հայրենի քաղաքորիներ»:

որ Անտոնիոսի նպատակն էր Պարթեւները խորտակել, որովհետեւ արշաւանքը ուղղուած էր անոնց դէմ, իսկ հայք չէզոք էին, մինչեւ իսկ օգնական Հռոմայեցւոց:

Հիմա ալ անսնայնք Անտոնիոսի տպած և այս դէպքերուն հետ աղերս ունեցող դրամները:



Պատ. 1

Ա. կողմ — Անտոնիոսի գլուխը, ծոծրակին ֆոլ հայկական խոյրը: Խորագիր — Antoninvs, Armenia, Devicta

(Անտոնիոս, Հայասան յաղթեալ)
Բ. կողմ — Կլեոպատրայի կիսանդրին Խորագիր — Cleopatrae, Reginae Regum. Filorum. Regum



Պատ. 2

Ա. կողմ — Անտոնիոսի գլուխը Խորագիր — Antoninus. Augur. Cos. Des. Iter. Et. Ter¹

Բ. կողմ — Հայկական խոյրը աղեղ եւ ցետ Խորագիր — Imp. Tertio Ill. Vir. R. P. C.²

Այս դրամներուն վրայ տեսնուած խոյրը ճիշդ Տիգրանի և Արտաւազդի խոյրն է, զոր մենք կը ճանչնանք հայկական դրամներէն, իսկ Devicta — յաղթուած արձանագրութիւնը կ'ակնարկէ բուն Հայաստանի յաղթուած ըլլալը:

Ուրեմն, Անտոնիոս փոխանակ իր կորուստները ողորուէ, ամօթէն զրդուած, ուղեց քողարկել իր կրած խայտառակ պարտութիւնը, նախ գործեց «ոճիրը» ըստ Տակիտոսի, Արտաւազդի հանդէպ, յետոյ ալ զիմեց կեղծիքը՝ տպելով վերոյիշեալ դրամները:

Իրականութեան մէջ Հայաստան յաղթուած չէր, որովհետեւ

(Տե՛ս Մ. Գարագաշեան՝ «Քնն. Պատմութ. Հայոց մասն Բ. էջ 186—187»): Նոյն համոզումը ունի նաեւ Արեակ Սահրասեան — «Իբր փոխվրեժ Արտաւազդ քաղաւորի ցետգ ձերբակալման՝ Հայոց գորբ 33ին շարդած եր Հայաստան գսնուողները (Հռովմայեցիները): (Տե՛ս «Ապագայ» թիւ 6, 25 Դեկտ. 1937 «Հայաստանը և Օգոստոս կայսրը» յօդուածը:

1) Կան նաեւ նոյն սեալէն բայց խորագրով միայն փչ մը զանազանուող դրամներ:

2) Rei publicae constituendae:

երբե՛ք, երբեք չեղաւ Հռոմէական նահանգ մը, ուրիշ նուաճուած երկիրներու նման:

Արտաւազդ Հայոց թագաւոր էր 34ին, 33ին արդէն Հայաստանը գրաւած, իսկ «Օճրագործը» անփառունակ մահով մը վերջ տուաւ իր վաւաչութեան կեանքին ցոփն կղէտուատրայի հետ միասին¹ (30ին):

Օգոստոս 29ինեկաւ արեւելք* և ստիպուած էր ճանչնալ Արտաշէսը Հայոց թագաւոր, հակառակ որ ան էր «թշնամի Հռոմայ վասն քինու հօրն» ըստ Տակիտոսի:

Արտաշէս շարունակաբար 12 տարի (33—21) թագաւորեց բրտորովին անկախ, որովհետեւ Օգոստոս զբաղուած էր Պարթևական գործերով. Պարթևաստանի մէջ խռովութիւններ յարուցանելով և Հրահատայ հակարքայ Տրդատ Բ.ի օգնելով:

Ուշադրաւ է այս շրջանէն Օգոստոսի հետեւեալ դրամը:



Ինչպէս
Արտաշէս
Գանձիկ — Մարտիրոս

Պատ. 3

Ա. կողմ — Օգոստոսի գլուխը առանց խորագրի կամ AVG վզին սակ
Բ. կողմ — Հայկական զինուոր մը կանգուն, գլուխը հայկական
սրածայր գլխանոցով (կամ մետաղեայ սաղաւարտով) զինուած է նի-
գակով եւ աղեղով

խորագիր — Caesar Div. F. Armenien Recep(ta) IMP VII կամ VIII)
(Սեանչելոյն կեսարեայ որդի. Հայաստան վերսին առնուած. զօր-
վար VII անգամ կամ VIII)

Ոկղաւեանոս Բ. Ա. 27ին Օգոստոս (Augustus) մակդիրն առաւ
(որ վերի դրամին վրայ գրուած է), եթերորդ անգամ զօրավար² հըռ-

¹) Թիւ 1 պատկերը բուն դրամին յաջողագոյն զձագրութիւնն է, Անտոնինոսի եւ Կոնստանտինոսի հարագաս դիմանկարները արտաշէսը վաստակեալը կրնամ պնդել քե՛ս Կոնստանտինոսի վերագրուած հմտիչ գեղեցկութիւնը չափազանցութիւն մըն է. այս համոզման եկած եմ ինչնեղով իր դիմքը իսկական դրամներու վրայնն:

Օգոստոս քան եւ մեկ անգամ զօրավար հռչակուեցաւ Բ. Ա. 43ին, 41, 39, 36, 33, 31, 29, 21, 20, 1, 11, 10, 9, 8, 6 եւայլն մինչեւ 14 Բ. 3.

չակուած էր Ք. Ա. 29ին, իսկ ութերորդ անգամ 21ին, հետեւաբար այս դրամները ասլուած են 27—21 ժամանակաշրջանին, գուցէ երկու ասուակն ալ (IMP VII եւ IMP VIII) 21ին, այսինքն իր եօթերորդ զօվարութեան շրջանի վախճանի եւ ութերորդ զօրավարութեան առաջին օրերուն որ կը զուգադիպի Արտաշէսի մահուան (21ին)՝:

Այլապէս՝ Հայաստան անկախ էր Արտաշէսի թագաւորութեան օրով եւ դրամին վերաստութիւնը «Armenia recepta» «Հայաստան վերըստին առնուած» ակնբախ հակասութիւն մը պիտի ըլլար պատմական զէպքերուն:

Վերջապէս «Օգոստոս վճռեց (23ին ն. Ք.) չօգնել Տրդատայ, եւ Հրահատայ հետ բանակցութեամբ իրերը կարգադրեց, ետ աւելով Հրահատայ որդին՝ զոր Տրդատ բերած տուած էր պատանդ, փոխարէնն առնելով Պարթեաց առած գերիներն ու նշանակները կրասոսի եւ Անտոնեայ օրերուն: Այս վերա-



Պատ. 4

Օգոստոսի մէկ դրամը. Պարթեւ մը ծուկի եկած կը վերադարձնէ Հռոմեական նշանակ (դրոս) մը:

դարձն եղաւ 20ին իրը Օգոստոս Ատորիք էր» (սեւ «Պարթեւահայ պմ. Հ. Յ. Վ. Տաւեան էջ 78):

«Ի հարկէ նաեւ ի հայս ներքին երկպառակութիւնք անպակաս եղան եւ Հռոմէասէր կողմնակցութեամբ սպաննեց զԱրտաշէս (21ին) եւ խնդրեց Հոկտասիանոսէ Արտաւազդայ որդին Տիգրան՝ Արտաշէսի

եզրայրն՝ զոր Հոկտաւիանոս Տիբերեայ ձեռք տուալ տանելու ի Հայս, եւ որ եկաւ եւ նուաճելով երկիրն՝ արքայ դրաւ զՏիգրան» (20ին): (Պրք. Պսմ. Հ. Յ. Վ. Տ. էջ 77):

Տիգրանայ Գ.ի (Ք. Ա. 20—12) մասին կը խօսին Տակիտոս, Յովսեպոս, Սուէթոն, Դիոն պատմիչները (Քննական Պատմութիւն Հայոց Մ. Գարագաւեան, Մասն Բ. էջ 187—188) ինչպէս նաեւ Օգոստոսի կտակը (սեւ նոյն պատմութիւն էջ 192):

Այս պարագաներու տակ Օգոստոս ասել տուաւ հետեւեալ դրամները:

Նոյն տեսակէն դրամ մըն ալ կայ Պրիսանական քանգարանը imp. VIII գորավար իններորդ անգամ արձանագրութիւնով, որ կը նշանակէ պուած է Ք. Ա. 20ին:



Պատ. 5

Ա. կողմ — Քաջուրեան դիցուն-
ւոյն գուլար
Խորագիր — L. Aquillius. Fiorus¹
III. Vir.
Բ. կողմ — Հայասան ծունկի՝
ձեռներ կ'երկարէ խնդրագին, կամ
քէ ամեն ինչ կ'աւանդէ յարողին
ձեռքը:
Խորագիր — Caesar. Divi. F. Arme.
Capt.
(Սխանչելոյն կեսարեայ որդի, Հա-
յասան առնուած)



Պատ. 6

Ա. կողմ — Փերոնիա դիցունոյն
գուլար
Խորագիր — Turpilianus III Vir.
Feron
Բ. կողմ — Հայասան ծունկի՝
ձեռներ կ'երկարէ
Խորագիր — Caesar Divi. F. Arme.
Capt.

Օգոստոս Նախ փրկած էր Տիգրան Գ.ը գերութենէ, և վերջն
ալ հաստատած, Տիբերի միջոցաւ, Հայոց զահուէն վրայ, Տիգրանն ալ

երախտագիրտական զգացումներու
բերմամբ համակիր եւ կողմնակից
էր Հռոմի, ուրեմն հայք սիրաշահ-
ուած էին և զքէնը անհետացած,
բայց յիշեալ զրամներու զգայա-
ցունց խորագիրները — Aremnia
Capta — (Հայաստան առնուած)
կատարեալ շափազանցութիւն մը
ըլլալէ զառ, պատմական կեղծիք
մըն են:

Այս խաբերայութիւնը կը հեր-
քեն նոյնիսկ Հռոմը պատմիչները
աւելի անկեղծ են, բայց ոչ կա-

որոնք զրամներէն աստիճան մը
տարեյապէս անաչառ:

Մեր համոզման ամենափայլուն կռուանն է Տիգրացն Գ.ի զրամը

¹) P. Petronius Turpilianus — փողեբանցի վարչութեան անդամ
Ք. Ա. 20ին:

(տե՛ս Հայկ բնդի. Իրամագիսուրիւն՝ Կ. Յ. Բասմաջեան էջ 38) Հայաստանի կատարեալ անկախութիւնը խորհրդանշող: Իսկ քանի մը տարի ետք. 12ին, Տիգրան Դ. չվարանեցաւ իր զրամին վրայտպել (Վասիլեուս Վասիլեոն) «Արքայից Արքայ» և (Ֆիլիքիոն) «Յունասէր» թիազոսները, առանց նկատի առնելու որ առաջինը անհաճոյ էր Պարթեւներու, իսկ երկրորդը Հռոմի:

Այս ամէնը խնդրին պատմական կողմն է, կայ նաև գեղարուեստականը:



Պատ. 8



Պատ. 9

Հանրապետական Հռոմի դրամները յայտնի են արուեստի կատարելութիւնով, տեսակի անհամար զանազանութիւններով որոնք ճոխացուած են այսրանական գեղեցիկ յղացումներով:

Համեմատենք նաև Օգոստոսի այդ երկու դրամները (տե՛ս պատկերներ 8 և 9):

Յաղթութիւնը կը զսպէ կատաղի ցուլ մը որ կը ներկայացնէ Հայոց աշխարհը կամ Տաւրոսը — լատին թարգմանութեամբ taurus = ցուլ, իսկ կոկորդիլոսը կը յիշեցնէ Եգիպտոսը իր բոլոր երեւոյթներով:

Արդարև Հայաստանը անզուսպ և մեծազօր ցուլ մըն էր միշտ վտանգաւոր, իսկ Եգիպտոսը կղէտպատրայի օրով նենգամտութեան և կեղծաւորութեան մարմնացումը, որ Հռոմը գարշանքով և խոր ատելութիւնով վերջնականապէս ճղմեց:

Օգոստոսի այս զրամը — Aegypto Capta արձանագրութեամբ, արժանահաւատ է (քիւ 9):

Դայով մեր պատմութեան ստուգարանութեան, կրնանք վըստանութեամբ եղրակացնել թէ Անտոնիոսի և Օգոստոսի յիշուած դրամները թալուած են միայն իրենց փառասիրութիւնը զգուելու նպատակաւ, իսկ դաժմագիտական տեսակէտով լոկ կեղծիքներ են, որ ժամանակին սահմանուած էին Նոգեբրանական որոշ դեր մը խաղալու Հռոմի լայնածաւալ կայսրութեան մէջ, անընկճելի և խորխոր Տիգրանի Հայաստանը յաղթուած եւ նուաճուած ներկայացնելու:

Ամենայն զէպս, խնդրոյ առարկայ դրամները՝ պէտք է որ մաս

1) Օգոստոս կան հետեւեալ դրամներ — Ա. կողմ Օգոստոսի գլուխը Augustus արձանագրութեամբ կամ առանց արձանագրութեան. Բ. կողմը — Armenia Capta, հայկական քաղ, երկու կապարն եւ աղեղ մը: Այս դրամներ որոշ նմանութիւն մը ունին Անտոնիոսի քիւ 2 դրամին, կարելի է սիպի բնդօրինակութիւն մը համարել:

Օգոստոս իր բազմազան դրամներու շարքին այս ձեւն ալ սպել տուած է, անցուց Անտոնիոսէ վար չմնալու եւ հայկական քաղք նուաճած բլլալը յիշեցնելու սմաղրութեամբ:

կաղմեն հայկական դրամներու հաւաքածոներուն, որովհետեւ ժամանակին իսկ, 200 ասրիներ առաջ, շրջագայութեան մէջ ըլլալով սարածեցին Հայոց համբաւը Հռոմի աշխարհաձաւալ կայսրութեան սահմաններուն մէջ:

Իսկապէս այդ համբաւը շատ մեծ էր քանի որ Աստուածային կեսարի որդին իսկ հպարտութիւն կը համարէ իր դրամին վրայ գրել «Հայաստան առնուած»: Բայց «առ հինսն» Հայք անփոյթ եղան իրենց քաջագործութիւնները զրի առնելով յաւերժացնելու:

Յափշտակիչները եկան ու պնցան...

Ա. ԲԷՕԹԷՆԷՃԵԱՆ

Շուքն 1940



Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
(Տե՛ս իր յօդուածը էջ 166)



Ա. ԲԷՕԹԷՆԷՃԵԱՆ

Բ Ա Ն Տ Ի Մ Է Ձ Է Ն

Ձիս կը պաշարեն պաշեր ամբակուռ
Եւ լոյս աշխարհէ բնաւ չունիմ լուր.
Խաւար, չարչարանք, ահա՛ այն բաժակ
Դժոխքի պէս դառն էլ գոր ցըյասակ
Կ'ըմպեմ շարունակ:

Նեղ լուսամուտէս լուսաւորն արեւ
Նեղի մը հեքիս դրկէ ի բարեւ,
Ժպլ.սն այն երկնից պահ մը յիս բափի,
Բայց ո՞ն, մասնուած ահի սարսափի,
Շուս կը խուսափի:

Եւ ես մնալով մթութեան մեջ խոր,
Յանախ կ'իմանամ ողբեր հեռաւոր.
Բայց ողբ չեն անոնք, անեծք են քրքին,
Որուն վայրենի կրից կը զոհուին

Եղբարքս անգին:

Բայց ո՞րն է ոնիրն գոր մեզ վերագրեն
Դահիճներն անգո՛ւր բորեանէն վագրեն...
Պաշտպան են հայուն, քրտաց դէմ զագիր,
Թրտաց դէմ ոտիս, որքին կարեկիր,
Այս է մեր ոնիր...:

Թանձր խաւարը բող զիս պաշարէ,
Թող Թուրքը վցիս նոր տղայ շարէ,
Ու զիս միշտ զրկէ կեանքի պաշարէ.
Հայ բանսարկեալին հո՞գրն է միքէ,

Ան վախճալ գիտէ՞:

Միքէ չի՞ տեսնար որոշ էլ յսակ
Այն օրն ուր, Թրեհ՛ր, իր ոտներուն տակ
Վիրաւոր գայլի պէս պիտի հեւաք
Վարուած, անորջ ու սղմաքաքաւ,

Ամօրով անբաւ:

Ձի սմոյն նայուածք հայ բանսարկեալին
Թափանցէ խաւարն բանտերու մրին.

Եւ լայն ծովերէ, լեռներէ անդին,
Կը տեսնէ նոր կեանք, նոր օր երջանիկ
Ազա՛ս Հայրենիք:

Գ.Ա.ՄԵՐ-ԱՐՇԱԿԻՐ

Վառնա, 1897

„ԱՆԱՐԱՏ“ ԹԵՐԹԻՆ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Դ Ի Ի Յ Ա Ձ Ն Ե Ր Գ Ա Կ Ա Ն Ֆ Ա Ն Թ Է Ձ Ի

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՈՒ, ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳ

| ԱՆՁԻՆԲ | ԳԵՐԱԿԱՏԱՐԲ |
|------------------------------|--------------------|
| Հեղինակը | Ոմն անձանց |
| Հուրիկ Շողգամեան | Պ. ձաննիկ Գամպուր |
| Կուրաւեր Հակոբեան | Պ. ձիւղիկ Առաւեան |
| Բարկուհի Շողգամեան | Տիկին Ծուիկ Ծամձու |
| «Անարատ» խմբագիրը | Պ. Սարդիկ Ոսայեան |

I

Հուրիկ Շողգամեանի կիրակնօրեայ դրաղումներուն զխաւորն էր ցորեկեան ճաշէն յետոյ, քամակը բազմոցին տալ, աչքը ձեղունին յառել, իր պաշտած լրագիրը որովայնին վրայ փռել և... սպասել Մորփէոսի ժամանումին:

Թերթին անուընը «Անարատ» էր:

Ինքզինքը յարգել գիտցող մարդուն համար, ինչպէս իր անուըն՝ այնպէս ալ իր լրագիրը ունենալը՝ հրամայական պահանջ է:

Ան չի՛ ծառայեր միմիայն բարձերը ազնուացնելու. ան... կողմնացոյց ալ է:

Ուրեմն մարդու պէս ապրելու միակ միջոցը լրագիրն է:

«Ընկեր» Հուրիկ Շողգամեան, սիրելով իր լրագիրը: պաշտած

կ'ըլլար անոր խմբագիրը:

Միայն թէ, ի՛նչ ճակատագրական զուգարդկալութիւն... Հուրիկ Շողգամեան չ'եղող իւրաքանչիւր անձ՝ իր ուրոյն լրագիրը և իր ուրոյն պաշտելի խմբագիրը ունի . . . Հրամայական պահանջ է: Ըսի արդէն:

Այս երեւոյթը կը բացատրուի անով որ՝ «առանց հաւկիթը հաւկիթին զարնելու, Զաօիկը Զաօիկ չ'ըլլար»:

Հուրիկ Շողգամեան, աչքերը բանալով գոցելով, կը փնտռէր հաւկիթամարտին «Բարոյական հեղինակը»: Իրեն այնպէս հասկցուցած էին թէ՛ առանց բարոյականի և պոանց անոր հեղինակին, ո՛չ այս աշխարհի մէջ, ոչ ալ աստղերուն մէջ, տերեւ չի շարժիր... Նաև ըստ որում համոզում գոյացուցած էր թէ բացի «Անարատ»է, ոչ ոք իրաւունք ունի բարոյականի առաջնորդ ըլլալ, ուստի, այդ պատուական

Թերթը փորին վրայ փռած, լայն լայն շունչ կ'առնէր կու տար իրեն
այնպէս կը թըւէր թէ՛ փոխան գլխու շարժումի, որովայնին ու թեր-
թին միաձոյլ և համակամ ելեւէջը, «Այո՛, այդպէս ե» ըսել կ'ուզէր,
եւ արդ, Հուրիկ Շողգամեան հիացմամբ կը զննէր համերաշխ
այդ ելեւէջը, և զայն կը վերադրէր՝ իր և իր լրագրին միջև փաս-
տացիօրէն արմատացած անքակտելի հանգոյցին:

Սենեակին զուար ճանչեց, բացուեցաւ ու գոցուեցաւ...

II

Կուրաւեր Հաւկուրեան՝ Տիկինին եղբայրն է և որչափ որ պիտի
ապրի, իր լաւագոյն գործը՝ ա՛յդ եղած պիտի ըլլայ:

Անշուշտ զուք ալ նկատած էք որ՝ ընտանեկան «պարագայ»նե-
րու մէջ ամենէն աւելի շփացած էակը մարդուս աներձագը կ'ըլլայ...
Վա՛յ եկեր է այն քեռայրին գլխուն՝ որ մէկէ աւելի աներձագներ
կ'ուեննայ: Ասոնք տեսակ մը վաշխառուներու կը նմանին՝ որոնք
փոխ դրամ կու տան մշտնջենական տոկոսով, և իրենց միքքէն ան-
գամ չ'անցնիր դրամագլխին վերադարձը: Բայց կա՞յ միթէ աներձագ
չ'եղող մարդ . . .

Կուրաւեր Հաւկուրեան՝ մին էր այս կարգի պահանջուէրերէն,
մէկ բառով փորձանք էր Հուրիկ Շողգամեանի գլխուն: Բայց փոր-
ձանքը միայն այն ատեն պիտի ըլլար անթերի՝ երբ Կուրաւեր Հաւ-
կուրեանի «Թերթը» և այդ թերթին տնօրէն խմբագիրը, քեռայրին
թերթին տնօրէն-խմբագրին հետ անհաշտ հակառակորդներ ըլլային...
Այդպէս ալ էր:

— Ծօ՛, ըրաւ, լրագիրդ փորիդ վրայ փռեր նաճճի՞ կ'ըսես կոր
անոր . . .

— Փեսան, յարձակումէն խորապէս վիրաւորուած,

— Հրամեցէ՛ք պատասխանեց, թերթը անմիջապէս չորսի, եւ
վիրաւորանքը կամաց մը ութնի ծալելով:

— Ի՞նչ նոր լուր... կակազեց ընկեր Հաւկուր, հեծնելով արժող
մը վրայ, նման ձիաւորի մը՝ որ, սանձի տեղ, երկվարին պոչին կը
փակի:

— Լուրը ա՛ն է որ՝ զո՛ւն ես եղեր, ընկերներդ են եղեր, արժող
վրայ նստիլ անգամ չ'էք գիտեր: Ինձի՛ նայէ. օրին մէկը արժողն է
որ պիտի նստի ձեր վրայ. խօսքիս ուշադրութիւն ըրէ, սաստեց Հու-
րիկ, բռնադրօսիկ ժպիտ մը պտտցնելով չ'ածիլուած այտերուն վրայ,
և ծխախոտին տուփը քշեց աներձագին:

Հաւկուրեան մէկ աչքովը ծխախոտին խարտեաչ գիտակին, իսկ
միւս աչքին պոչովը Շողգամեանի գրպանին կը նայէր:

— Ի՞նչ կը գրէ կոր ծամծամեց լրբենի ծամածռութիւնով և ցու-

ցամառը ուղղելով թերթին՝ որուն ճճոթկած մէկ լուսանցքը թաքստոցէն կարծես լեղու կը հանէր աներձագ Հակուերեանի:

Հրագրականէն կուսակցականի ալլակերպած ողբերգութիւնը փակեցաւ դաւեչտով:

III

Ոտարեաշ խոտին ծուխը կուլ տալէ, անուշին ու սուրճին համը հոտը ճաշակելէ յետոյ, կուրաւեր Հակուերեան գրպանէն հանեց իր լրագիրը:

— Փեսայ, ըսաւ, սա լրագիրդ տուր նայիմ:

— Ի՞նչ պիտի ընես...

— Տո՛ւր կ'ըսեմ կոր:

Շողգամեան՝ որուն բնազանցական կառուցուածքին մաս կը կազմէր կասկածոտութիւնը, բաղում վարանումէ յետոյ,

— Կու տամ ըսաւ, պայմանաւ որ՝ խօսք տաս, պատուոյ խօսք,

որ...

Եւ «Անարատ»ը շողղղալով յանձնեց Հակուերեանի...

Ըմբռնելու համար այս տեսարանը, պէտք կ'ըլլայ երեակայել դատապարտեալ մը՝ զոր մօրը գիրկէն խլելով, կը յանձնեն դահիճի մը տապարին:

Հակուերեան զաւեցաւ աթոռէն, մօտեցաւ սեղանին և վրան տարածեց իր լրագիրը՝ որուն անունն էր «Ապսխարգան»:

Կը յորջորջուէր «Ապահարգան», որովհետեւ չէր կարողացած պարփակել գրչի վարպետ մը՝ որ, նախախնամութեան մէկ անիմանալի կարգադրութիւնովը, իր խորքին մէջ ընթրոնելի և իր գոյութեանը մէջ անհպելի խորհրդաւորութիւն մ'էր:

Ընկեր Հակուերեան, «Ապահարգան»ը սեղանին վրայ փռելէ վերջ, «Անարատ»ը տարածեց անոր վրայ, ինչպէս որ վերմակ մը կը նետեն սառած մարդուն վրայ:

«Անարատ»ի ծաւալը աւելի փոքր էր. մատ մը լայնքէն, փոքր մատ մը երկայնքէն:

Սա արդէն ջատջախիչ փաստ էր թէ՛ «Ապահարգան»ի արժէքը անհամեմատ կերպով աւելի բարձր էր, քան թէ Հակուերեանին «Անարատ»ը:

Թէ և ճշմարտութիւնը «ակներեւ» էր, և սակայն, Շողգամեաններու համար, համոզւիլը կը նշանակէ usnrհանալ Յարգամեմար Հուրիկ Շողգամեան ցատկեց անդէն և սկսաւ «Անարատ»ը քաշել քաշել լայնքին երկայնքին, յուսալով որ՝ վերջապէս պիտի հասցնէ իր քերթը «Ապահարգան»ի հասակին:

Շողգամեան արիւն քրտնքի մէջ մտաւ: «Անարատ»ը կը յամառէր մնալ հոն՝ ուր ճակատագիրը դրած էր դիմքը:

Ճարահատ, հաւաքեց իր լրագիրը, նորէն չորսի ծալլեց և նորէն գրպանը իջեցուց:

Վիճաբանութիւնը աւելի բուռն բռնկեցաւ . . . «Եւ բուռնեց յաիշտակեն» . . . ունայնամտութիւնը:

Փոթորկի պէս՝ որ պատուհանը բաց սենեակէն ներս կը խուժէ, — Ի՞նչ է ադ . . . ինչ է ադ . . . որոտաց Տիկին Բարկուհի Շողգամեան, կուրծքը տալով ամուսնոյն, կռնակը տալով եղբօրը . . . Անոնք, այդ միջոցին, նախանձաբեկ աքլորներու պէս, քիթերնին իրարու մօտեցուցած, անտարակոյս իրար պիտի բղքտէին . . .

Աղմուկէն ընդոտ արթննալով, հիւրասրահը նեաւած էր, կարծելով որ . . . ամուսինը վէճի բռնըւած է դերձակուհիին հետ, որ այդ ժամուն արդէն եկած ըլլալու էր փկնոջ պարտքը գանձելու համար ամուսինէն:

IV

Մեծարգոյ Հուրիկ Շողգամեան ճառ լսելու համար հոգի կուտար: Հուր ու կրակ կտրած ալ ըլլար, երբ իմանար որ Մուքտէնի մէջ ճառ պիտի խօսուէր, ցնծութենէն կը մարմրէր . . . Միայն թէ՛ բանախօսին ըսածը հասկնալու համար այնքա՛ն ճիգ, ջանք, կորով կ'սպասէր որ՝ լսողական և տեսողական մկանունքը կը թուլնային և . . . քունը կը տանէր,

Բնախօսական այս երեւոյթը Հաւկուրեանի ծանօթ էր: Հաշտուելու համար որոշեց ճառ մը խօսիլ . . .

Շատ չ'անցաւ, խորիմաստ ճառը քունի մատնեց մեծ վաճառական և պատկառելի ակադեմիկոս Հուրիկ Շողգամեանը:

Ճառ խօսիլը դիւրին բան չ'է: Սկսելէ առաջ, և աւարտելէ վերջ ալ, բանախօսին խելքը ցրւած կ'ըլլայ: Կուրաւեր այդ կացութեան մէջ էր, այնպէս որ՝ արծաթ դգալին ուղղակի իր գրպանը մտնելը յայտնի չ'է թէ իմացա՞ւ թէ ոչ: Սա ճիշդ է որ՝ աղախինին արծաթ դգալի գողութիւնով ամբաստանուած ըլլալը գիտէր: Արդարեւ, Տիկին Բարկուհի (ծնեալ Հաւկուրեան) օր մը պռաջ հաստառելէ յետոյ թէ . . . երկու հատ արծաթ դգալնոր կը պակսին, սպասուհիին ամսականը վար դնելով, և ականջ չի կախելով անոր բողոքին, լաճին ու կոծին, ճամբած էր զայն, այդ կ'օրին, վեց հատ արծաթ դգալ գողցած ըլլալուն համար:

Տնաչէն այս կարգադրութեան չնորհիւ, ընկեր Հաւկուրեանի խիղճը գաած էր իր անորորութիւնը . . .

Դամը գամին նեցուկ է: Բայց ըստ պարագային զամը գամին կը դաւաճանէ՛ ալ: Դգալին գլխուն եկած արկածը՝ Հաւկուրեանը մղեց մէկ ուրիշ արկածի: Շողգամեան դեռ խոր քունի մէջ էր:

Ընկեր Հաւկուրեան՝ «Անարատ» անոր գրպանէն փրկելով,
չրաւ իր գրպանը, գլխարկը գլուխը անցուց և... մեկնեցաւ:

V

Մեծահարուստ Շողգամեանի վաճառատունը հեռու չ'էր «Անարատ» խմբագրատունէն՝ ուր, 19 Յունվարի յիշատակելի այդ երեքշաբթի օրը, ցատուժի, սրժատութեան, սպառնալիքի կարկուտ կրտեղար, հաւկիթի չափ խոշոր:

«Անարատ» խմբագրապետը ինքզինքէն ելած, գլուխը մէկ պատէն միւս պատը կը զարնէր:

— Անորակելի, անբեւեակայելի, շնարարոյ, զիճարարոյ, ծնունդ ասկանքի, ծնունդ կղկղանքի, իժի ծնունդ, դեբրի ծնունդ, էնվէրի ծնունդ... պոռալով աղաղակելով, ոտքը բոպիկ, գլուխը բաց, շունչը առաւ Շողգամեանի վաճառատունը:

Բարեկիրթ և հիւրամեծար Հուրիկ Շողգամեան, մեծանուն խմբագրին անակնկալ այցելութենէն զգածուած, իր առաջին գործը եղաւ անոր գիրկը նետելի:

— Յուրան ալ այդպէս մասնեց Յիսուսը, բողոքեց «Անարատ» բողակէզ խմբագիրը, ջանալով ճողոպրի մարդուն գիրկէն, փրկելու համար թէ՛ պատիւը, թէ՛ ակնոցը:

— Յուրա՞յ... ի՞նչ Յուրայ...
— Այո՞, Յուրայ... և աւելի՛ վատ... այո՞, և աւելի՛ անբարոյական... և աւելի՛ զաղիր... և աւելի՛ նողկալի, և աւելի՛...
— Կեցի՛ր, եղբայր...
— Ի՞նչ, ե՛րբայր... կը մերժե՛մ, չ'եմ ընդունիր... մատնի՛չ, ուտի՛ճ, դաւաճա՛ն, փսխո՛ւնք, տակա՛նք, կղկղա՛նք, Պիդատո՞ս, կայեափայ՛...
— Ո՞վ...
— Դո՛ւն... Դեբրի ծնունդ, էնվէրի սնունդ...
— Ի՞նչ եղաւ, ընկեր խմբագրապետ, ըսէ՛, ի՞նչ պատահեցաւ...
— Ի՞նչ պատահեցա՞ւ... Օ՛ճ, կարիճ, ուտի՛ճ... Մերուժա՛ն, դաւաճա՛ն, աճի բաթիճա՛ն...
— Տէ՛ր ողորմեապա...
— Յարգելի խմբագրապետը ուժասպառ և շնչասպառ ինկած էր աթոռին վրայ...
Եղբրաթաւալ այս տեսարանէն սմբած շմորած տանուտէրը՝ պաշտօնեային աչք ըրաւ որ բժիշկի վաղէ... Ոչ մէկ տարակոյտ: Դիրի և գրչի, միտքի և ուղեղի բազմավաստակ այս հերոս վեթերանը, ազգը կորուստէ փրկելէ յետոյ, աւա՛ղ, խեղճը կորսնցուցած էր:

Մինչ այս մինչ այն, լուսամիտ և լայնախոհ խմբագրապետը

«Թափելով, հեւալով և Ֆշալով, վերջապէս գրպանէն «Անարաս» մը հանեց և փառապանծ դրօշակի պէս զոր յաղթողը կը ճօճէ պարտեալին դէմ, զայն ուղղակի Շողգամեանի քիթը խոթեց, և

— Կարդա՛, որո՞ւսաց հրամայական եղանակ եղակի երկրորդ դէմք:

— Ծայրէ ծայր երկու երեք անգամ կարդացած եմ. հաւասարեց անաբեկ վաճառականը, երկիւղած ակնարկ մը ևս նետելէ յետոյ սրբանուէր թուղթին վրայ:

— Կա-կա-կարդա՛. կակաղեց բարկաճայթ՝ ընկերպարոն խմբադրապետը: Սա, սա, սը, սը-տե-ղո՛ւկը կարդա:

Հուրիկ Շողգամեան իր հասցէին քով կարդաց հետեւեալ բառը.
«ՄԵՐԺՈՒԱՄ»:

Մերժւեա՞ծ . . .

Շողգամեանի երեսին գոյնը նետեց: Նախ եղաւ կարմիր, յետոյ մոխրագոյն, ապա բեկ-երլոյ սայորի պէս դեղին:

Շողգամեան որ սովոր էր «Անարաս»ը առնըւազն մինչև յաջորդ թիւը գրպանը դրած պտտցնել, երկու ձեռքով կրկին և կրկին խուզարկեց գրպանները, ապաբախտ ուղեւորին պէս՝ որ անցագիրը կորսընցուցած է: Նորէն խուզարկեց, պրպոցեց բաճկոնին և յապիկին ներսը և դուրսը: Անխոստովանելի տեղւանք այցելու թիւններու ենթարկեցեան . . .

Չի ԿԱՅ . . .

«Անարաս» ոչ ևս էր:

Բայց միթէ կարելի՞ բան է որ «Անարաս»ի պէս խմաւուն թերթ մը ինքերգլխուն երթայ և ինքզինքը նամակատուփին մէջ նետելով . . . անձնասպան ըլլայ:

Ուժաթափ և յուսահատ, մեծաւորը խորհեցաւ, որ ինքն ալ, Շողգամեան Հուրիկ Նիակարայի ջրվէժը, կամ Եամեամնեբուն բերանը նետուի և . . . անձնասպան ըլլայ: Յետոյ, աչքերը փակեց, ինկաւ մարեցաւ:

«Անարայ»ի սրտցաւ խմբազիր-անօրէնը, իր մեծ բաժանորդին եղկելի կացութիւնը լքելով «Բաղդ»ին տնօրինութեանը, հիմա քառասոմբակ կը վազեր դէպի խմբազրատուն, աւետելու համար թէ՛

— Նիչէվօ՞ . . . ընկեր Շողգամեանի անզուգական հաւատարմութիւնը և անզրդելի անձնըւիրութիւնը եղած են դո՛ւ . . . ցաւալի թիւրիմացութեան:

(Վարագոյր)

X.



բաղկացած և բաղմամբիւ պատկերներով. որուն յաջորդ հատորներուն նւթերն ալ մեծ մասով արդէն պատրաստած է և լոյս պիտի ընծայէ հետզհետէ: Միայն այս գործը, առանձին, արդէն կոթող մըն է տքնաջան յամառ աշխատանքի:

1939 և 1940ին Պուքրէշէն լոյս կը տեսնեն «Գաղութահայ Տարեգիրք»ի Ա. և Բ. հատորները ճոխ և այլազան բովանդակութիւնով:

Թարգմանած ու հրատարակած է հետեւեալ վէպերը.

1926ին «Ոճիրին Պանդոկը» Գարոլինա խալուհետոյն (2 հատոր), 1927ին «Մաքերու կռիւը» (7 հատոր), 1928—30ին «Գահ և Սէր» Բաթնոյայի Լասլոյի (4 հատոր), վերջինս Ա. Էմաանարի հետ:

Խմբագրած է հետեւեալ թերթերը և հանդէսները.

«Աստղիկ» կիսամսեայ հանդէս, 1911. տպ. Վենետիկ:

«Մասիս» շաբաթաթերթ, 1920—22, Պուքրէշ:

«Գաղութի Ձայն» շաբաթաթերթ, 1923, Պուքրէշ (5 թիւ):

«Փարոս» շաբաթաթերթ, 1924 Պուքրէշ (6 թիւ),

«Գիցաւան» գրական ամսագիր, 1924, Պուքրէշ (3 թիւ):

«Ներկիր» շաբաթաթերթ, 1925—29, Պուքրէշ:

1934ին սկսած է հրատարակել «Հայ Մամուլ» շաբաթաթերթը և երկու ասորի խմբագրել է լեռոյ անոր խմբագրութիւնը յանձնած է Յ. Գ. Աթանասեանի՝ ինքը մնալով պատասխանատու տնօրէնը:

Հրատարակած է հետեւեալ գործերը. Յ. Գ. Աթանասեանի հետ «Ուղեցոյց Ռուսաստանի լեզուի» 1925, «Ռուսաստանի Տարեցոյց» 1925, «Մեր Առողջութիւնը» 1930, «Ընտանեկան Զրօսանք», «Գարուն» Մանկական մասնաշարի Ա. շարքի և Բ. շարքի 12 գրքոյկները 1926-1930, «Գիտութիւն Գիտելիք» գիտական ամսագիրը (3 թիւ) 1930, «Պողոտու ծառեր», «Պատուաստ և յօռու պտղատու ծառերու», 1931: Վ. Գէորգեանի «Թխպարտ»ը 1923, Հորիճի «Օր. Սաթենիկ» վէպը, 1925:

Յ. Գ. Աթանասեանի և Յ. ճ. Սիրունիի հետ «Նաւասարդ» գրական ամսագրին առաջին 3 թիւերը 1924, Ն. Օտեանի «Ընկեր Փանջունին» (2 գիրք) 1924, «Ժողովրդական երգայան» 1924, «Մըշին Մալ Ալան» 1924, Յ. Բաջազունիի «Ռուսիա» թէ թուրքիա» 1924, Գ. Ա. Մալաթեանի «Ընտրօնն ի մարդիկ» 1939:

Երեցած է գրական ու բանասիրական յոգուածնգրով «Բաղմա-վէպ»ի, Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյց»ին, Մուշեղ եպ. Սերոբեանի «Ամերիկահայ Տարեցոյց»ին, «Նաւասարդ» ամսագրին և շարք մը թերթերու մէջ:

Եղած է նաև քաջալերիչը Ռուսաստանի մէջ լոյս տեսած շարք մը ուրիշ գիրքերու:

Յ. Գ. Ա.

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Քենե հեռի՝ սիրս է լուռ,
Իմ հօր տո՛ւն վրժահար.
Խըցկիս խորեն մուր սրխուր
Կարօսդ քաշեմ յար:

Ո՛վ անուշ յարկ կենասու,
Աղբի՛ւր սուրբ ըզգացմանց,
Պիտի նորեն ի՞նձ սաս դու
Կեանքի լոյս հիստանչ:

Իմ պարսփերուս փոխարեն՝
Վաշխառուն սիրեց քեզ.
Արատուելեն սրգալեն
Հեռացայ քենե ես:

Բայց պատկեր մը հեռաւոր
Հոգիս է հրմայած.
Հո՛ն ես տեսնեմ գիւղապղուր
Ու մեր տուն բազմահաց:

Նորահաս եմ սակաւին,
Կրնամ դեռ տեսնել օր.
Յանկամ դառնայ ես կրկին
Տունիս գիրկն հեճօրօր

Ո՛վ Տէր Ասուած Բարութեան,
Ըրե՛ր զիս տունիս տէր.
Հոն, ուր աչերս բացուեցան
Հո՛ն մեռնիլ եմ ուխտեր:

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

Ա Ն Ա Ռ Ա Կ — Ո Ր Դ Ի Ն

Այսպէս ուրեմըն — գիտե՛ք դուք արդե՛ն—
«Այն ձուկն է մեծ որ՝ խոյս կու սայ կարքե՛ն»:
Ո՛րչափ աս ուսաւ ձկներ փոքր ու մեծ,
Կորուսն այն կարծես, սրտիդ գա՛մ գամեց. . .
Ամբո՛ղջ որսըդ սալ չ՛եիր վարաներ,
Խոյս սրւող ձուկըդ ո՛վ մեջտեղ հաներ:

Խորհրդածութեան մեջը այս բովին,
Գոզցես ամենքս ալ կ'իյնանք գլխովին:
Ու երբ կորուսը կը վերադառնայ,
Մեզի համար է՛ն բանկազինն է նա:

Պատեան է կարծեմ, *Օրն Անառակին,*
Դիմել Յիսուսի պատմած առակին՝
Զոր ձկնորս Դուկաս անեսարանիչ
Մեզ կը հաղորդէ զերբ պատգամ տինիչ:

«Հարուս մարդ մ'ունէր երկու հաս զաւակ:
Կողոպտի՛ է փողը նրօտակ . . .
Կարծես օրե՛նք է՝ որ մարդիկ նային,
Ակնապի՛ւց հային . . . նա՛խ մամոնային:

Կրտսեր զաւակը բաւ իր հօրկան.
— Զ՛ե՛ մարդուս կեանքը յաւիտեանական . . .
Օր մը չէ օր մը դո՛ւն ալ կը մեռնիս . . .
Հիմակուց՝ ընե՛նք հաճիւն իմ բաժնիս:
Իբրեւ ժառանգորդ՝ տո՛ւր իրաւունքս իմ,
Պէտքի՛ քո մասիդ՝ ես ալ լա՛ւ խօսիմ . . .

Այն ասեմ Հայրը, յոյժ բարձրահոգի,
Հարսութիւնը բաժնեց երկուքի.

— Համրե՛ ա՛ն. քաւ իր սրղուն կրսւե՛ր՝
Որ չ՛ուցե՛ր, ափսո՛ս, որդիական սե՛ր . . .
Ան յափե՛սակե՛ց առաւ մամոնան,
Քրօցեց գրբասը դեպի Լիբանան:

Այնտեղ կերուխում, կեանք իշխանական . . .
Լիբանանի մեջ . . . հուրիներ ալ կան:
Սա երկիր մըն է՝ որ — կ'ըսեն — ունի
Անառակ կիներ եւ կարմիր գիւնի . . .
Ուր՝ արմաւենոյ քաղցրահամ օղին
Օրւան սնունդն է փող ժառանգողին:

Անառակ-Որդւոյն — շրա՛յս եւ մոլի—
Հարսուքիւնը շուսով կը հալի . . .
Գրպանը պարապ, փորը անօքի՝
Ան, հետզհետե՛, կը զարեահոսի . . .
Հոմանուհիներ՝ ա՛լ դուռ չ'են բանար.
Ապրիլն այլերս կ'ըլլայ անհրճար:

Երկրին մեջ անա սո՛վ ալ կը սիրե՛.
Երաշքը՝ արք կը մրկե, կ'երե՛ . . .
Յոյսը խոզերու փոնոկին դրած,
Անառակ Որդին կ'ըլլայ խոզարած:
Բայց կու գայ օր մը, ա՛յդ ալ կ'աւարտի,
Իրեն կը մընայ՝ մեռնիլն անօքի:

Աչքին առջեւը կը բերե՛ սրղան՝
Հօրը սանը մեջ հարսնիքի սեղան՝
Որուն շուրջ շասնեա՛կ սպասաւորներ . . .
Անոնցմէ ո՛րը սնունդն իր չ'ուցե՛ր . . .
Մի՛նչդեռ ինք, հիմա, մո՛րք անգամ գորտի
Զ՛ուցե՛ր որ ուտե՛՛ չը մեռնի ցօքի:

Երբ խեղճութեան մեջ քամեցաւ իր ծուծ,
Անդրադարձաւ իր՝ վարձուցիին զրծուծ.
Եւ քսկրսաւ լալ . . . որպէս այն սրղան՝
Որ վարձապետէն . . . կ'ուտէ *Քալախան*:
Վրբան գրլուխը փո՛ւտ, պատաստուն,
Ինկաւ հանապարհ դեպի հօրը տուն:

Արեալոյսէն մինչ գիշերը խաւար,
կոխեց ու անցաւ գաւառէ գաւար:
Երբ Հայրն իմացաւ թէ սրղան կու գայ,
Ծընողական իր զգացումն հսկայ
Արդէն կանգնած էր, որպէս քաջ պահակ,
Պահպան ըլլալու որդւոյն սահակ:

— Մորթեցէ՛ք, գոչեց, հորքն ամենընտիր.

Հրաւիրեցէ՛ք ամբոխն անխտիր.

Տան համբուն վրայ փրոնեցէ՛ք թաղիք,

Եւ ամենուրեք սփռեցէ՛ք ծաղիկ:

Նեհեցէ՛ք արսափ ի՛նչ որ է դժխեմ,

Քանզի չափազանց այսօր ուրախ եմ...

Զի կորուսեալ էր որդի՛ս, եւ գրքաւ

Վերանորոգւած՝ ոգւով եւ մքաւս:

Յ. ԽՆԴԻՐԵԱՆ

Վ Տ Ա Կ Ի Ն

Չար աշխարհը, բրթօրէն,

Խըլեց զիս քո՛ւ ափերէն.

Եկայ յանձնել քեզ, Վըսա՛կ,

Վիշտս իմ խո՛ր և անյառակ:

Եկայ զընել իմ սրտի

Վէ՛րքը գոնէ անուրդի...

Փրփուր կոհակ մը, գուցէ՛,

Չայն շուշանի վերածէ:

Եւ կամ, հոգիս ու մարմին

Հալին մէջը քու սաղմին...

Ես կաթիլ մը ջուր ըլլամ,

Քեզ հետ հոսիմ՝ որ չի լա՛մ:

Բայց արիւնը որ արդէն

Կը խուժէ դո՛ւրս իմ սրտէն,

Վախնամ ներկէ նաև քեզ,

Եւ լա՛ս, ինձ պէս, ազեկէզ:

Ա.Ի.Օ

Սղագրեց՝ Յ. Խ.

Կ. Պոլիս

Ե Ր Գ Ի Ծ Ա Ն Ք

Եւ ինչո՞ւ խրջիս դուն երգիծանք,
Քանի ուղեղդ տարբեր է սունկէ...
Համբուրէ՛ ձեռն այն՝ որ կը հաւաքէ
Ամեն մանրէ որ՝ ծածուկ փորձանք է:

Կ'որոտայ ամպը եւ կ'արձագանգէ...
Արձագանգն անոր՝ խո՛ւլ երգիծանք է:
Նա կը ծիծաղի ամպրոպին վրայ,
Զի սա չը գիտեր թէ յո՞ կը սուրայ...

Ովկիանոսը երբ կը մըռնչէ
Եւ կը թաւալի ալիքն իր շունչէ,
Փրփուրն անապակ, ծնեալ ի բարկէ,
Ընդդէմ տարեաց գո՛ւտ երգիծանք է:

Յոյսի պէս փայլուն՝ երբ մօտն ու հեռուն
Զիւնը ծածկեր է կուրծքը արտերուն,
Կ'իյնայ հառազայր մ'երբ արեգակէ,
Միթէ տարբե՞ր է գաղջ երգիծանքէ:

Առագաստն ահա հեռացաւ ասիէն,
Քա՛ջ է, չի սոսկար հողմի տարափէն...
Բայց քամին, յանկարծ, դուռն իր կը փակէ...
Այս ալ՝ մէկ ուրի՛շ կերպ երգիծանք է:

Եւ ինչո՞ւ, արդեօք անհանգիստ բլլաք
Գրչէ մը մեկնող մէկ անմեղ սրլաք
Երբ ձե՛զ հանդիպի վրբան իր համբուն...
Վիրաւորել չ'է՛ նպատակն իր բուն...

Զէ՛, մի՛ վախենար... բընա՛ւ մի՛ խրջիր.
Ամեն երգիծանք՝ չէ անգուր ոգիր...
Նա, արդար իւղով յանախ, կանթեղ է,
Վառուած՝ որպէսզի-լո՛յսն իր զետեղէ:

Տարուելով ջուրի տղմոտ հոսանքէ,
Երգիծաբանը երբ պախարակէ
Ի՛նչ որ ազնիւն է, եւ ի՛նչ որ բանկ է,
Միայն ա՛յն ասեմ լըրիւ զգուանք է:

Յ. ԽՆԴԻՐԵԱՆ

Պուքրէշ,
Դեկտեմբեր 1939

Յ Ո Յ Ս Ե Ի Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Այլերս չ'ունիմ բեւ որո դեր,
ապրիլ կ'ուզեմ դեռ...
Ապրիլ՝ որպէսզի տեսնեմ Հայրենեաց
վեհաճուի հայեաց:
Վեհաճուի հայեաց՝ դէպի Բաղձալին . . .
Ու դեռ անլին.
— Ձեռքերը բառած պատիւի, փառքի,
սայ մեզ՝ նո՛ր-հոգի:
Կ'ուզեմ կանգ չ'առնեմ. սուրա՛յ տակաւին
անընդհատ կալին:
Կ'ուզեմ Ծա՛ն տեսնել արգանդով յըղի,
եւ մէն մի նիւղի
Վրբան հո՛ծ սաղարք, միրգեր շա՛ր ի շար,
'ւ անսպա՛ն պաշար:
Կ'ուզեմ որ իյնայ Ասղն առաւոյտի
գո՛գը Մասիսի.

Բազկաբոններու մեջ փռւած «լորտեր»
ապրիլ կ'ուզեն դեռ...
Ապրիլ՝ որպէսզի հաւաքուած հարցին
ըլլան՝ նոնք դարբին.—
Շինեն փոք ու փոս, ծա՛յ ծալ ծոճակներ,
տուներ ու խաներ...
Բընուրիւնց այդպէ՛ս զանոնք է շիներ.
— կտրի՛ն պահակներ՝
Ազաւազ մաննի, ոսկեայ դագաղի,
երկ՝ կանգուն հողի:
Ու ես կ'ուզեմ որ ապրին անո՛նք ալ.
Եւ դրգալ դրգալ,
Կո՛ւռք կուռք, խոտքիկը — վասրն Ոչինչին—
ճաշակել հանին:
Անոնք՝ հրվեժը — սառոյցի բուսեան—
բող գը միտ խաբեց...
Ու դառնան, կառչած՝ ցրտած Անիւին,
. . . մինչեւ ձր կիզուին:
Անոնց հետ է՛ս ալ կ'ուզեմ դեռ ապրիլ,
տեսնել նոր մ'Ապրիլ.
Դիտել ապրիլեան աստղաց կամար,
. . . խաբւելու համար:
Ապրիլն այսպէ՛ս է ...նա՛՝ «Մե՛կ Ապրիլ»ի
կատակն է անլի:

1 Ապրիլ 1940

Յ. ԽՆԴԻՐԵԱՆ

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Ըրիծեանիկը օրուան մին, կռուելի ընկերոջը մօտեանալով, երկուքնիս դաղթական չուողներ ենք, կ'ըսէ:

Երկուքնիս ալ բոլոր աշխարհը կը չըջինք:

Եթէ իրօք բան մըն ալ չունինք, այերին տէրը գոնէ ինքզինքնիս կրնանք համարել:

Դուն որ օղաչու ուղեւորութեան մեր պատմութեան մէջ դամէնքն ալ գերադանցած ես և զիսես կենալ հոն ուր մարդկութիւնը աւելի բարեգութ կը գտնաս, քաջատեղեակ քու այդ փորձառութեանդ կը դիմեմ, Ան մի՛ միայն կարող է զիս առաջնորդել, քանի որ երկուքնիս ալ մօտը կ'ապրինք մարդուն՝ որն որ մեզի համար ստեղծագործութեան զլուխ: Գործոցը կը ներկայացնէ:

Արդէն յատկապէս ալ երախտապարտ եմ քեզի որ, մեր սովորական երկարատե օղաչնացութեան ընթացքին, ուսասպառ փոքրիկներս թեւորուղ վրան հանգչել տալով զանոնք կը փրկես անխուսափելի կորնչումէն:

— Իրաւացի է ըսածք, փոքրիկ ընկերս:

Բախտը երկուքնիս ալ նոյն ցեղէն ստեղծած է, տալով մեզի մայրենի հողին միեկնոյն պինդ յարուսը. ինչ որ՝ թէպէտ, մեզի չարքիլեր հեռաւոր ձեռնարկով տարաշխարհ երթալ փնտռելու ջերմութիւնն ու ասպնջականութիւնը ուրիշ վայրերուն մէջ: Հոն ալ, սակայն, հաւատարիմ մնալով մեր յարուսին սկզբունքներուն, կը նայինք վերադառնալ մի՛շտ միեկնոյն տեղը:

Ցաւալին այն է որ՝ այս վերջերս, անոնցմէ մի քանիները՝ հինուց ի վեր մեզի ծանօթ և սիրելի, աւերակ վերածուած դտանք, այնքան անձանաչելի որ կարելի չեղաւ գտնալ երդն ու տնակը և ո՛չ ալ անոնց հիւրընկալ բնակիչները. բոլորն ալ բնաջինջ կամ տեղահան՝ վտարանդի ցիր ու ցան:

Մարդկութիւնը, ինչպէս որ լաւ որակեցիր, իր ծագումին իսկապէս զլուխ գործոց մ'եղաւ: Դժբախտաբար վա՛ղ իսկ նա կորսնցուց ստեղծողէն անոր շնորհուած զրաւիչ յառկութիւնները և որ ցաւալին է, իր անմեղութիւնը:

Այդ կորուստին հետեանքով օրէ օր գերադանց զիրքէն վար իջնալով, խռովախոյզ իր հոգւոյն և կիրքերուն ստրկացաւ:

Մինչդեռ մենք, նուազ օժտեալներս, անձնուէր և յոգնաշխատ ձիգով, կը շարունակենք՝ շիւղ առ շիւղ, կազմել մեր բնակարանը ուր մեր փոքրիկները խնամքով կը մեծնան և հաղիւ թե առած:

մեղմէ կ'ստանան իրական կեանքի գիտելիքները և իրենց նախաւոր պարտականութեան ճանաչումը, խոյնքն բնակավայրը և սերունդը ապահովող անդադար աշխատանքը:

Անոնք մեղմէ կը սորվին նաև որ մեր ծննդավայրը շէնցնելէն զատ, ամէն վտանգ աչք առնելով, տարաշխարհ պէտք է չուել երթալ նոր գաղթավայր հաստատելու, նոր սերունդի ծնունդ տալ:

Մէկ խօսքով, մարդիկներուն բուն իսկ կենցաղը մենք կը ներկայացնենք, սա տարբերութեամբ որ անոնք յանցանքներով ծանրաբեռնուած, ուղիղ ճամբէն շեղեցան. մինչդեռ մենք հաւատարիմ ընթանալով մեզի աւանդուած սկզբունքներուն, մնացի՞նք թեթև և անարատ, ինչպէս որ ստեղծուած ենք:

Սակայն դու, փոքրիկ ընկերս, որ մարդուն աւելի մօտ կ'ապրիս, ըսէ՛ թէ ի՞նչ տեսար. ի՞նչ կը խորհիս անոր մասին:

— Ծիչտը՝ գովելէն զատ չունիմ ըսելիք:

Քիչ անգամ կը պառահի որ անդգամ ձեռք մը երթայ զպիլ այնքան սիրով շինած բոյնիս:

Ամէն վերադարձիս զայն կը դռնամ անեղծ, պատրաստ ընդունելու զիս և նորածին փոքրիկներս:

Մեր և մարդկանց միջև վերջ ի վերջոյ այնպիսի մտերմութիւն մը կը գոյանայ որ մեր ճառագողումը և անոնց բարբառին հնչումը ներդաշնակ կը զուգախառնուին:

Ծշմարիտ է որ զեղջկական կեանքին, մասնաւորապէս արտօրայներուն մէջ՝ ուր բնութիւնը աւելի զեղուն կը բարգաւաւծի, ինքզինքս աւելի շեղմին գուրգուրանքով շրջապսօուած կ'ըլլամ, ամէն տեսակ տաղաուկէ և վտանգէ զերծ:

Իրաւի՛, կռուենկ ընկերս, տակաւին չեմ բմբռնած, թէ միւսերէն աւելի նուազ վտանգի ենթակայ ըլլալը ո՞ր առանձնաշնորհին պէտք է վերագրել:

— Եթէ բնութիւնը քեզի ալ, ինչպէս ընկերներէդ շատերուն, գեղեցիկ ձայն և դայլայիկ աուած ըլլար, վտանհ կրնաս ըլլալ խեղճ Ծիծառնիկս, որ բացառութիւն պիտի չընէին բոյնիդ:

Ի՞նչ փուճ տեղը զքեզ վանդակի մէջ դնէին, սնուցանէին եթէ այդ աշխատանքէն, այդ ծախքէն օգուտ մը կարելի չէր յուսալ:

Աղէկ զի՞նաս որ մարդը անոր միայն հոգ կը տանի, կ'ըրաղի որմէ փոխադարձ շահ մը կրնայ ստանալ:

Խնդիրը այն է որ, այն վայրկեանէն որ մարդը իր մտաւոր կարողութեանը թիրացաւ, նովին գործով անոր գերին դարձաւ, յար և և նման որ մենք ալ գերի մնացած ենք ծննդավայրի սիրոյ կապին:

— Ինչ որ ալ ըլլայ. ի սէր արդարութեան, պարտաւորեալ եմ կրկնելու որ գովեստէն զատ չունիմ ըսելիք մարդուն համար, որ զիս բարեգուշակ մը կը նկատէ:

իրենն օգտակարութիւն մը չունենալովս հանդերձ, անձկանօք նա կը փափաքի և կ'սպասէ վերադարձիս:

Կը ներեա, ուստի, եթէ զուրցեմ որ մարդուն ղէմ — որմէ անչո՛ւշա դանգաճեալու պատճառներ ունեցած եւ — քու զգացած հակակրօթիւնն է քեզի այդ կերպ խօսել տուողը:

— Ըսածիս մտիկ ըրէ՛, Ծիծեռնի՛կ, և թո՛ղ ականջիդ օղ ըլլայ: Երբոր մարդը Օրացոյց չունէր, ո՛չ ալ ղէպքերը գրաւոր նշանակելու միջոցը, քանզի տօնոց զիւտը տակաւին չէր հնարած, և կը գոհանար՝ տարիներուն հաշիւը չսխալելու համար, ամէն մեկնելուդ դամ մը ևս մխել պատին, մարդը կ'ըսեմ, վերադարձդ տեսնելուն պէս կ'անդրադառնար որ ձմեռուան տառապանքները վերջ կ'առնէին, լաւագոյն օրերը մօտեցած էին, և թէ հաւած էր հողին աշխատանքը վերսկսելու ժամանակը:

Ահա թէ ինչո՞ւ բարեգուշակ նշան դուն նկատուեցար, ամենուրեք գալուստդ անձկութեամբ փափաքեցան և ցնծութեամբ զքեզ ողջունեցին իբր դարնան և խոսամնաշատ բախտին աւետարբեր սուրհանդակը: Եւ որպէսզի հեռքդ չկորսուէր, գուրգուրանքով զքեզ չըրջապատեցին և չի դպան քու բոյնիդ:

Կը տեսնաս, ուրեմն, թռչնիկս, որ քու վայլած առանձնաշնորհեալ վիճակդ դեռ վերստին շահախնդրութեան կը պարտիս:

Սյս ընթացքով, սերունդէ սերունդ փոխանցուած՝ դու վերջապէս դարձար դարնանազուտարձ օրերուն և բարեկամ բախտին պաշտելի խորհրդաճանրը:

Եւ որովհետեւ մարդ ըսածդ, ինքնագլուխ ըլլալովս հանդերձ ինքնին մեծ նախապաշարեալ մըն ալ է, վախնալով որ բոյնիդ զպչելով գլխուն փորձանք մը կրնայ հասնիլ, զգուշացաւ քեզի չարիք հասցընելէ և յարդեց բոյնդ:

Արդէն միջատներով քու սնանիլդ մարդուն այլապէս մեծ ձառայութիւն մը կը մատուցանէ. քանզի ատոնք՝ եթէ դուն չըլլայիր, ապականելով թաղտկացնելով պիտի վխտային անոր բնակարանին բոլորտիքն ու մշէնը:

Մարդկութեան վէրքերը մերկացնելով անոր եխտազիտութեան մասին կազմած քաղցրիկ պատրանքդ փարատելուս ես մեծապէս կը ցաւիմ, սիրուն թռչնիկս:

Առկէ թէպէտեւ չի հեռուիր որ մարդկութիւնն ալ չունի իրեն յարդելի բացառութիւնները:

Արդէն չարերուն քով եթէ բարիները չի գտնուէին մարդկութիւնը շատոնց լինցած էր.

Համազօրութեան այդ օրէնքին շնորհիւն է, արդէն, որ ամէն բան իր հաւասարակշռութիւնը կը գտնայ:

Այդ երկուութեան սկզբունքին վրան միթէ հաստատուած չէ՞ նոյն ինքն տիեզերական ներդաշնակութիւնը:

Շարունակէ դուն ուրեմն փոքրիկներուդ աւանդել ինչ որ նախ-նիքներէդ ստացար:

Հաղորդէ՞ անոնց՝ վնաս չունի, խանդավառ մտքիդ նոյնիսկ ցնորական պատրանքները և միանգամայն խափուօտիկ յոյսերը. քանզի առանց առոնց կարելի չէ ապրիլ. կեանքը պիտի դառնար չոր ու ցամաք, մինչև անդամ պնտանելի:

Մարդկութեան ռզեղ կողմէն յետոյ կ'արժէ նաև փոքրիկներուդ ծանօթացնել անոր գեղեցիկ և ընտիր կողմերը: Որովհետև՝ մենք որ եղելութիւնները սաւառնելով կը ղիտենք, երկրիս վրան տիրող կիրքերու ժխորին մէջ հիացումով կը նշմարենք վեհանձն աշահասիրութեան, մաքուր բարոյականի և նկարագրի, ինչպէս նաև հայրենի աւանդութեանց և ծննդավայրի սէրին սքանչելի օրինակները, որոնք իրենց ստորին միջավայրէն բաժնուելով կը յաջողին մեզի նման վերէն նայիլ վարը հանդպածին:

Այդպիսիները չուողներու մեր դասակարգին կը պատկանին:

Անոնք ալ գաղթականներ են որոնց անձը՝ երկնասլաց բարձրանալով, աւելի մաքուր ոլորաւորու մէջ կ'երթայ փնտռել իրեն պատշաճ հագեկան սնունդը. որով կազդուրուած վարէջ կը վերադառնայ մասնակցելու կեանքին ամենօրեայ պայքարին:

Մենք ալ նոյնպէս, երբոր պնհրածեշտ պէտքը կ'ստիպէ, սաւառնումէն վար իջնալով, գետնաթուիչ կը մօտենանք երկրիս ցած մակարդակին, որուն երբք պէտք չ'էր որ փափաքած ըլլայինք:

Ինչ որ սակայն կարելի չէ զանց ընել. քանզի անխուսափելի այդ պահանջը բնութիւնն է զնոզը, ստեղծողէն ալ վերահաստատուած, որ՝ երկրաւոր կենցաղին թաժանելի տառապանքէն կարելի է զգալ և տենչալ երկնարնակ կեանքին անհուն վայելքը:

Պրոֆ. ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Ազգօր, 15 Նոյ. 1940

ՄՊԱՆԻԱԿԱՆ ԵՒ ԱՅԼԵՒԱՅԼ ԱԶԳԵՐՈՒ
ԱՌԱՇՆԵՐԷՆ

Այն բաները որ նժարսուրիւն են,
Մանուկի՛ն, խենքի՛ն կը լսուին բերնէն:
Անօրուրիւնը երբ է ի՛րապէս,
Կը կակղի հացն ալ՝ որ էր քարի պէս:
Երբ փորձն է քեզ կարապէս (առաջնորդ).
Կ'ըլլաս որ մը մեծ վարպէս:
Ասուծմէ կ'ուզե՞ն զաւակ չ'սանան . . .
Զ'ուզողին՝ բռնե՛ր կու տայ Սասանան:
Գրե՛, տալէ առաջ:
Գանձե՛, գրելէ առաջ:
Ասուած ուզէ վերելէ,
Աջէն ձախէն կ'անձրեւէ:
Դժբախտութիւն մը չի կայ՝
Ումէ բարիք մը չի գայ:
Ունիս որչափ՝
Կ'արժես ա՛յն շափ:
Ընել ուզողը աւելի՛ն կ'ընէ,
Բան քէ կարողը՝ բռնրած քունէ:
Եթէ որ ըլլաւ սիրսը պողպասէ,
Անճընար է որ փողն անոր յաղթէ:
Մանկունք կը սորվին նախ օրօրոցէն,
Մեծնալէ յետոյ՝ կեանքի դպրոցէն:
Երիվարն անգամ Արաբեզէնկի,
Ասէն կու գայ որ՝ ա՛ն ալ սայրաքի:
Դուն մի՛ սպասե՛ր հանգիստ ապրողէն՝
Որ ա՛ն ալ. օր մը, տարժի իր տեղէն:
Որպէս անկեղծ էւ քաջ վրկայ,
Գրուած բուրքէն զոս բան չի կայ:
Երբ որ պատահամք դուռ մը կը գոցուի:
Դիպուածով, ուրի՛՞ց դուռ մը կը բացուի:
Նօթիին համար ամեն կերակուր
Է՛ ախորժահաւ, ու նաեւ մա՛տուր:
Ուժիդ քանակը մի՛ առնե՛ր անտես,
Որպէսզի ուղի՛դ գայն գնահատես:

Մեծագոյնը քու դժբախտութեան՝
 Փնօռէ մեջն անորոշութեան:
 Նախ խորհուրդ հարցուր զիտերը բարձիդ,
 Ապա ձեռնարկէ յղացած գործիդ:
 Գործի մը մեջ, ուր՝ չի կայ եղ վասակ,
 Գաղափարներդ պահէ լեզուիդ սակ:
 Հաւսայու համար իր փափաքածին,
 Մարդուս հաւասքն է լի՛ն ընդածին:
 Կ'ուզե՞ս մնայ առաքինի...
 Ի բա՛ց վանէ կի՛ն, խա՛ղ, զիցի՛:
 Դարձի՛ր ու դարձի՛ր,
 Ապա խոսացիր: Հաւաքեց՝ Յ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ ԵՒ ԿՍԿԾԱԳՐԵՐ
 (Epitaphes et Epigrammes)

«Աստ հանգչի — պիտ՛ ըսեն՝ օր մը —
 Առաքինազարդ և համեստ մօր մը»:
 Այդ պիտի ըլլայ տիտղոսը փառքիդ,
 Իսկ մընացածը՝ նեխած մէկ հաւկիր:

Գուն որ երբեմն, եւ ^{*}սուրէ ^{*}սարի,
 Կը յոխորայիր թէ սա՛նձ մը դըրի»,
 Լըպիրձ պարանով կաշկանդըւեցար...
 Փնօրէ՛ հիմա... կախելու մի ծառ:

Յանձնարարեցիր քոյնի՛՞ ալ սուակ՝
 Ռուպէս մէկ ազդու պատուհա՛ս աւագ...
 Անցաւ այն օրէն անբա՛ւ ժամանակ.
 Սիրդ միտս չարին եղաւ ընդունակ:

Խաւաքարս գրահ եւ վահան՝ հազար,
 Ժանգոսած սուրովդ ուզեցիր պայքար...
 Համբերասար եւ աշխո՛յժ ուսանց մին
 Վըրադ արձակեց ուսմբերու քամին:

Բարի վարուց հետ՝ ^{*}նոն ^{*}որ գժսւած են,
 Պիտի պատժըին Ամոն չասուածէն,
 Ահա պտուղը ծածուկ ծրագրիդ՝
 Որ չ'եղաւ, ափսո՛ս, անեղձ մարգարիս...

Թիւ 5

ԽՍՀՄԻ-ԵՂ

ՎՍՍԻԼ-ԻՂ

Վ Ե Ր Չ Ի Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Վաղը, ա՛լ պիտի իջնենք:

Հէյպէլիին¹⁾ կարծես մօտեցած ըլլալիք որպէս հաղարուձէկ գեղեցկութեամբ առցուն կնոջ մը: Ու զայն կուշտ ու կուռ ծծելէ և և անոր համը լաւ մը նայելէ յետոյ, երբ ան մեզի իր բոլոր ունեցած հարստութիւնները տալէ վերջ՝ ըր գունաթի, այդ կինը հիմայ երբ իր աչնան կը գլտորի, ահա՛ մենք, զայն բոլորովին առանձին թողով, վարնոցի մը, սրիկայի մը նման՝ դէպի Պոլիս, Պոլսոյ ջերմ ու սաքուկ սենեակներուն, փօքէո՛ի սեղաններուն, զնղամուզի սրահներուն և մարդս քամոզ հաղարամեայ զուարճութիւններուն կ'ուղղուինք:

Ճիշտ՝ իր սիրուհիէն զուելով պոռնիկներու գիրկը ինկող խեղճ թափառականներուն նման...

Մտի՛կ ըրէ, մտի՛կ ըրէ զիս, Վասիլ Այսքան ապերախտութիւն մարդոց տրուած է: Չտեսնե՛ս. սա վայրկեանիս, ճիշդ եղեւիններու գիրկը՝ երբ այս տողերը քեզ կը գրեմ, մարդու զաւկին սա չհաւնած կա՛ն կա՛ն ձայնով ազոաւներն իսկ, Հէյպէլին երեք չեն լքեր:

Հապա՛: Մենք՝ մարդիկս, այդ կենսատու կնոջմէն մեր բոլոր առածը մեզի սնունդ և արիւն շինելէ վերջ, գէթ սանկ մը դառնալով «Յտեսութիւն, հոգի՛ս, քեզի երախտապալտ եմ, չպիտի կարենամ մոռնալ քեզ, իմ վերջին համբոյրս չէ ստիկա» չըսած, առանց հտին նայելու հանրատունէն մեկնող գինովի մը նման, մեր վառ յիշատակը անոր վերաւոր սիրտը մխելով մեկնելէ յետոյ, սա՛ կաթունները, շուները, թափող սա՛ աւանակներն անգամ, զայն բնաւ չպիտի լքեն:

Անոնք մեզմէ աւելի խելացի և աւելի երախտապալտ են: Հաւատարիմ սիրահար մը, գէշ օրերն ալ իր սիրածին հետ կ'անցընէ: Անոնք, երբ Հէյպէլին՝ այդ կինը, ցուրածէն գողայ, զայն սաքցնելու

1) Հէյպէլին, Մարմարայ ծովուն մէջ գտնուող Իօլանայ կղզիներու Յունական «Հալի» կղզին է որ միւսներուն նման կը ծառայէ որպէս օդափոխութեան վայր:

և փոթորկի և փուռքի ատեն դայն իրենց չուենչով ջերմոցի դեր կա-
տարելով սփոփելու համար, պիտի սպասեն:

Մարդոց ու կենդանիներու միջև տարբերութիւնը, ահա՛ . . .

Օհ, սիրելիս, այս անգամ նամակս սկսայ յոռետես մտածու-
մով մը. ես որ՝ քեզ միշտ իրապաշտութիւնը կը յանձնաւարելի:
Պատճառը կ'երևի այն ոճիւրն է, զոր զործել տուած եմ այս օրերս
գրած թատրերգութեանս մէջ:

Հա՛, տե՛ս! Թատրերգութիւնս աւարտեցի: Հինգ արարնոց ող-
բերգութիւն մը եղաւ անիկա: Մեղք որ զայն քեզ չպիտի կարենամ
կարդար: Երէկ գիշերուընէ մինչև քիչ առաջ, զայն մագքուրի քաշե-
ցի: Տակաւին պիտի շարունակէի ատիկա, սակայն իբր պահեստի ա-
ռած երկրորդ ինքնահոսիս մեկանն ալ հասաւ:

Հիմայ, սանկ քիչ մը պաշտիւյս զուրս ելնել և հակառակ եղա-
նակին, սա արեւոտ ու յստակ երկինքը վայելելով հանդերձ, Հէյպէլին
վերջին անգամ մըն ալ տեսնել, անոր ներքինն ու արտաքինը ան-
գամ մը ևս զննել ու մտնկ ընել ուզեցի:

Ահա՛, երբ ես փափաքեցայ և հոս հոն տարտղնուած յիշատակներս
վերջին անգամ մըն ալ ապրիլ, զանոնք ամփոփել և անոնցմէ յիշատա-
կի փուռնջ մը կազմել, ինձի անկէ հաղորդուած առաջին զգացումն ու
առաջին յուզումը եղան այն ողբերգական հեծկտուքները, որոնք
նոթազրեցի նամակիս սկզբնաւորութեան:

Կարեւորութիւն մի՛ տար: Հոկտեմբերի այս վերջին օրերուն,
Հէյպէլին այնքան առանձին է որ, ես անոր այդ ամայութիւնը կը
սիրեմ: Եւ անոր կողին փլած թշուառի մը նման, հոգիս զոյգ ա-
ռանձնութեան արեւով ողողուէն, կու լամ, կու լամ և իմ երջանկու-
թեանս հեկեկանքներով կ'ուզեմ զայն ուրախացնել:

Կը տեսնե՛ս, Վասիլ, որքան բիրտ սիրահար մըն ես... Բրքիչ
մը անգամ փրցնելու անկարող խիղճ մը:

Կարծեմք ճամբուն վրայ քալած պահուս, յիշեցի այն կազինոն,
ուր նստանք միասին: Յիշեցի մեր նարտ խաղալը, քու ինձի միշտ
յաղթելը ու մեր խօսակցութիւնները: Բոլորը յիշեցի: Մե՛ղք, հիմայ
քովս գտնուելու էիր դուն: Սակայն ոչ այսպէս ալ լաւ է: Մարդ
երբեմն, կամ ինչո՞ւ է, առհասարակ, իր կարօտը նամակով մըն ալ
և աւելի սրբացած յիշատակի մը ոգեկոչութեամբ կրնայ կոր առնել:

Եթէ՛ դուն քովս ըլլայիր, հաւանական է որ ներքինս այսքան
չպիտի կարենայի պարպել քեզ: Ի՞նչ քովդ այսքան արտում չպիտի
կարենայի երևալ: Ներէ՛ զիս . . .

Որովհետև, ինչպէս որ Հէյպէլի առաջին ոտք կոխած օրս քեզ
ուղարկած նամակիս մէջ լացի, նոյնպէս ալ լալ կ'ուզեմ այսօր: Օ՛ֆ,
հոգիս կը լմնայ նորէն: Բայց ես, քեզի նման հայրս, մայրս և ու-
րիշները չեմ մեղադրեր: Այլ, միայն, տառապանքիս յանցանքը իմ

մէջ փնտռելով, այլ գրութիւններու և աւարտած թատերգութեանս
մէջ, անոնց և բարբառի, ուղածիս չափ և այլ տեսակ հայոյանքներ
կը չպրտեմ:

Ագաւաններն ալ կարծես կը մասնակցին վշտիս և մերթ ընդ մերթ
իրենց խեղճուկ կոխնչը առանց աւարտելու կը լռեն:

Հանդարտ, շատ հանդարտ է ամէն կողմ: Առտուան հարաւի
ծովէն, հիմա թեթեւ խշրառուք մը հազիւ կը լսուի: Եւ,
հովուէն եղեիններուն թելերուն վրայ նուազած մեղամաղձոտ համա-
նուազէն զատ ուէ ձայն չի կայ: Եղեիններն ալ, սրտիս ու հոգւոյս
նման, երբեմն կ'առութաւոր Բեհեհեհիսներով կը դռնէն ու յանկարծ
հեծկտանքներով կը պայթին: Եւ յետոյ, բնութեան անհուն և պաղ
արտայայտութեան առջև զգալով իրենց անկարողութիւնը, ալ կը
սմբին ու լռեն:

Չեմ գիտեր, այս նամակս, հակառակ կամքիս, յիշատակի փունջ
մը կազմուելու փոխան, ողբերգ մը եղաւ: Չպիտի ուղչի նման ելզ
մը յօրինել քեզի: Որովհետեւ գիտեմ որ խորունկ են հոգւոյդ ան-
զունդները և կատարներն անմերձանալի: Երբ կը խորհիմ անոր
հոնաեղուանքը ասիք արձագանգներու մասին, հոգիս կը սարսոյա...

Ներէ՛ զիս, ի՛նչ կարելի է ընել Սա վայրկեանիս ամենատկար
մըջիւնի մը, նորածին մանկան մը և պատրոյզը կրակ առած ումարի
մը չափ ինքզինքս բռնելու անկարող եմ հիմայ:

Որովհետեւ, Վասիլ, երբ ուղեցի վերջին անգամ յիշապահներս
հաւաքել, սանկ շուրջս նայեցայ ու ուէ տեղ չգտայ անոր դէմքը, որ
տերևի մը քարի մը, կամ գէթ ուէ խամբած մացառի մը տակ,
գոնէ պուռ մը ծիծաղէր...: Հակառակ անցնող ամբողջ ամրան, օր
մը, կէսօր մը ժամ մը, գէթ վայրկեան մը ըլլար, զայն, Հէյպէլի
մը, եղեւնիներուն տակ, ոչ թէ զարդարուն ու լուսնի գիշեր մը.
Եւ, եղեւնիներուն տակ, երբ զեփիւռը իր երգը սուլէր և երբ ալ-
այլ մութ իրկուն մ'իսկ, երբ զեփիւռը իր երգը սուլէր և երբ ալ-
եակները իրենց ջրերգը զլլայալին, ա՛հ, գէթ վայրիկ մը, պահիկ մ'ան-
գամ չկրցայ զայն թեքուտ մէջ սեղմել, զայն սփոփել...:

Անոր, Հէյպէլիին անուշ, զուարթ ու սիրով զեղուն բանաստեղ-
ծական երգը չկրցայ չթունքներուս վրայ թրթռացնել: Այս սիրեր-
գին բոցը չկրցայ անոր հոգւոյն մէջ հրդեհել:

Վերջտա հասկցա՞ր հիմայ, Վասիլ:

Այս կարոտով պիտի դառնամ, աչքերս ընդ միշտ ուղղուած
դէպի Հէյպէլի:

Եւ այս է պատճառը, որ, ամէնուն նման փոխանակ անցնող
ամրան ցնծութեամբ և յաջորդ տարուան գեղեցիկ հեռանկալներուն
երազը միտքիս մէջ քաղաք իջնելու, ես կը թապկուիմ այն վայելք-
ներու կարօտով, զոր անկէ չկրցի պոնել: Այս է պատճառը որ կը
դառնամ ծարաւահիւծ շրթներով:

Ահա այս է կրկին պատճառը, որ այդ կնոջ յարգը դիպողը միակ մարդն եմ ես: Ես մարդ մը ըլլալուս ինքզինքս ամէնէն աւելի զըմբախտ կ'ըզգամ հիմայ:

Օհ, ձգէ՛, ձգէ՛, Վասիլ, թոյլ տուր ալ վերջացնեմ այս արտում աողերը: Որովհետեւ պարտական եմ կեանքիս հանդէպ: Պարտքս վճարելու պայմաններու մասին որոճամ: Զգէ՛:

Համբոյրներով
Խ. ԱՄԻՐԵԱՆ

Վ Ա Տ Ը Ե Ի Լ Ա Ի Ը

ԵՐԳԻՄԱՐԱՆ Պ. ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ՆԿԱՏԱՌՄԱՆ

Գրեց՝ Charles de Bussy

Հայացուց՝ ՅԱՄԱՌ ԲԵԱԹԻՊԸ

Անակրնկալ մի ինչ դիպւած . . .

Անցորդներէ օրջապասուած,

Փարիզի մեջ, անձիցք երկու

Կը հանդիպին մեկգմեկու,

Սանկ անկիւն մը, վրան մայրի:

Խօսակցութիւն մ'է կը պայրի . . .

— Է՛, ի՞նչպէս ես... հարց կու տայ մին:

— Շատ աղէկ չ'է վիճակս իմին.

Կ'ըսէ ընկերն, տեսում հովեր

Իրեն տալով, իր ուժէ՛ն վեր

Ոմրն լալկան Առաքեալի... .

— Վա՛խ վախ . . . սակայն, ե՛րանելի,

Տարի մըն է ի՞նչ քրիւր դուն . . .

— Կրնիկ մ'առի եղայ տեղ-տուն:

— Ա՛ղ... օտ՛ս բարի:

— Ի՞նչպէս բարի...

Կը կարծես որ լա՛ւ բան մ'ըրի...

Հէ՛տս կից, սրգե՛ղ, խիստ անյարմար.

Տաղկացուցի՛չ, ապո՛ւտ, տխմա՛ր:

— Վա՛խ վախ...

— Պատւա՛ր մ'ըլլար խօսի՛ր..

Օժի՛ս... օժի՛ս՝ հնչուն ոսկի՛... .

Կարգուելով հետն այդ կնկան,

այ օհնուող, եւ... քաղական . . .

Ու ծախսեցի... ծախս ահաւոր,
Մի՛նչեւ օրն այն՝ յո՛յժ չափաւոր:
— Լա՛ւ եւ շա՛ւ լաւ:

== Ի՛նչպէս շա՛ս լաւ...

Օձսին կէսը ձեռքէս ելաւ.
Թե՛ ի՛նչ կերպով, ա՛խ, չ՛եմ գիտեր...
— Վա՛խ վախ... .

== Լըռե՛, մի՛ գիս դատեր...

Մընացածով, խորհեցայ որ՝
Գործ մը կ'ընեմ խիստ շահաւոր՝
Թե՛ որ գրեմ, ծակ գրպանով,
Բաժնեբուրդեր ինկած գինով...
Ու ձեռքովը իմ պանքերիս,
Դրբի կրնի՛ք նակասագրիս,
Քանզի, յուսալ մի մեռեալե
Որ — Ի՛նչ ցընորք — ոտքի ելլե...
— Վա՛խ վախ, բա՛բե:

== Չե՛... վասնզի,

Յանկարձ պահանջ մ'եղաւ կազի,
Յասկեց գիւր արժեքուրդին,
Նրման՝ յա՛նկարձ կանգնող Ուղտին...
Ոսկի վագեց ասդին անդին,
Գոցեց բացը ծիրած օձսին:

— Է՛, պըրա՛վօ՛... սեւ, շա՛ւ բարի:
Օձսաբոյժը, ցասմամբ կարի,
աղաղակեց.

== Ձիս մ'ընդմիջեր...

Չե՛ կ'ըսեմ, չե՛... շա՛ս բարի չ'եր...
Տունս այրեցաւ եւ տունիս հետ
Ունեցածս եղաւ անհե՛տ,
— Վա՛խ վախ... եղո՛ւկ տունիդ համար:
== Եղո՛ւկ, եղո՛ւկ... մ'ըլլար յիմար.
Ո՛չ մեկ եղուկ, ո՛չ մեկ արցաւ,
Քանզի կինս ալ... հետն այրեցաւ:

ՇՈՒԱՐԱԾ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ...

ԵՒ ԿՐԵՏԵԻ ԼԱՐԻՆԻՅԻՆԹՈՍԸ

Սարսափելի բան է շուարած ըլլալը... Աւելի սարսափելի՝ շուարած ազրիւր:

Դուք զիտէք թէ ի՛նչ է լարիւրինթոս մը, նաև զիտէք թէ զիտալը պատճառ մը չ'է որ մարդ իր զիտցածը ուրիշէ մ'ալ չի լսէ:

— Լարիւրինթոսը վայր մըն է՝ որ մտնելը դուրին, իսկ անկէ դուրս ելլելը զրեթէ անկարելի է:

Մարդկութիւնը մտեր է լարիւրինթոսին մէջ:

Կը բանամ Հանրազրտակը: Ականջը խօսի Հ. Մ. Պոտուլուսին: Բարձրաձայն կը կարդամ որպէսզի լսուի:

Լարիւրինթոսներուն նախահայրն է Եգիպտականը:

«12 թագաւորներ՝ որոնք միեւնոյն ատեն կ'իշխէին Եգիպտոսի վրայ, ձեռք ձեռքի տալով — հրա՛ջք — շինեցին Լարիւրինթոս մը: Եէնքը կը բաղկանար 12 կամարակապ պալատներէ, իւրաքանչիւրը 12 դռներով: Կառուցուած էր 30000 քառակուսի մէթր տարածութեան վրայ: Մէկ յարկ հողէն վեր, մէկ յարկ հողէն վար: Այս վիճիւնը, հողին տակինը, յատկացուած էր Արքաներու և սրբազան կոկորդիլոսներու դամբարաններուն: Եէնքը ունէր 3000 սենեակներ և անհամար մանուածապատ նրբանցներ և փայուղիներ՝ որոնց մէջ չի կորսուիլը հրաճէ աւելի՛ բան մըն էր»:

Կ'անցնիմ երկրորդ Լարիւրինթոսին:

«Արքայական գերդաստանէ սերած՝ չափազեռ, մեքենազէտ յոյն մը, ճարտարապետ Տետալ, նախանձի թելադրանքով, Յունաստանի մէջ կ'սպաննէ իր 12 օտրեկան եղբորորդին, հանճարածին թալուօր՝ որ հնարած էր սղոցը, կարկինը, դարձդարձիկը (torno) և բրուտի ճախարակը: Ոճրագործը մահուան կը դատապարտուի: Կը փախի Կրեթէ և հոն՝ Մինոս թագաւորին արքունիքը կը մտնէ, որպէս աւագանի:

Չիթենեաց Կղզիին մէջ Տետալ կը շինէ Լարիւրինթոս մը, ըստ պատկերի Եգիպտականին:

Մինոսի կինը Փատիֆայ թագուհին, ցուրի կերպարանքով սպայի մը սիրահարուած, (ճաշակի խնդիր) ծնած էր հրէշ մը՝ զուլիը ցուր մարմինը մարդ: Հրէշը կը կնքեն Մինոթաուր անուամբ (Minos-Taurus): Այս Մինոթաուրը — երբ ան չաճատակութիւններուն չափը կ'անցընէ — կը բանօտարկեն Լարիւրինթոսին մէջ և Մինոսէ պարտուած աթենացիները տարուէ տարի Մինոթաուրին մատաղ՝ կը զրկեն 7 մատղաշ մանչեր և 7 քնքոյշ աղջնակներ, որպէս ամօթալից հառուցում պատերազմի վնասուց:

Արքայազարմ Տետայ, Փասիֆայ թագուհւոյն անխոստովանելի կապերն ու կապանքները ոգեւորողի մեղադրանքով. կը բանտարկուի իր իսկ կառուցած Լարիւրինթոսին մէջ: Տետայ հնարամիտ է. իրէն համար թեւ կը շինէ և օր մըն ալ... կը թռչի մինչև Սիկիլիա՝ ուր կը ձերբակալուի և իր մեղքը կը քաւէ... մահու պատիժով: Այս գէւղքը կը պատահի Տրովաթայի կոիւէն 33 տարի առաջ: Կ'ըսէ Հանրապետակը:

Ահաւասիկ հակիրճ պատմականը Լարիւրիքոս յորջորջուած անելին

Ինչ որ վերը գրեցի, ղիցբարանական է. այսինքն առասպելային. այսինքն... մասալ:

Վարժապետներուն գերազոյնը Յիսուս, երբ համողութեցաւ որ ժողովուրդը կարող չ'եղաւ ուղիղ գծի վրայ ըմբռնել իր քարոզածը, զիմեց առասպելախառն քարոզչութեան: Սկսւաւ ստակով խօսիլ իբրև...

Բարի քրիստոնեայ, այսօրուան աշխարհը կու գամ ն'անցնել կրեալի Լարիւրինթոսին. յիսուսի. զոհերը՝ պարտուած Սթէնքի ցուլին. թշնամին՝ յաղթական Մինոսի. զոհերը՝ պարտուած Սթէնքի հասուցումին, և մոլորեալներու սրտածմլիկ աղերսանքը՝ Բարելոնեան անմեկնելի լեզուարեկտումին:

— Խլեակն'երբ, մութին մէջ ամեն մէկ անկիւնաղարձի, կը հանդիպին Մինոթաուրի եղջիւրներուն: Կամարներէն վերադարձուած դարձազանգը մէկ նրբանցէ միւս նրբանց, կը նեփէ իւրաքանչիւր անգամ և վայրասուս, կորսնցնէ իր ծնողաց պաղատանքին. կը վազէ ձայնին ղոր նմանցուցած էր իր ծնողաց պաղատանքին. կը դարնուի Մինոթաուրի եղջիւրներուն: Ու դարձեալ կը մոլորի նրբանցէ նրբանց, անելէ ինչ եղջիւրներուն: Անոնք մէկզմէկ գտնելու նպատակով, ա'լ ուրիշ խլացուցիչ յարմէ: Տետայ Լարիւրինթոսին շինարար և խառնակ էր կը հեռանան իրարմէ: Տետայ Լարիւրինթոսին շինարար և խառնակ էր կը հեռանան իրարմէ: Տետայ Լարիւրինթոսին շինարար և խառնակ էր կը հեռանան իրարմէ: Տետայ Լարիւրինթոսին շինարար և խառնակ էր կը հեռանան իրարմէ:

Մինչ այս մինչ այն, մէկ կողմէ Բաղքը՝ անպատասխանաբար ղահիճ, աննուանելի Մարդացուլը մի'ւս կողմէ, անընդհատ կը հնձեն... Պիտի հնձեն մինչև որ սատկի սուլթանուհի Փասիֆայի բոցալատ տուփանքին ամօթալից և լիղի պտուղը եղող կեսը ցուլ, կեսը մարդ Մինոթաուրը մարդայօջ:

Ահա ա'յս է անիրաւ պատկերը տարածուած, հալածուած եւ օտարած մարդկութեան:

Յաճախ, յարկեցուցիչ պարագաները մէկ կողմէ, բնագրային ըմբոստութիւնը միւս կողմէ, դէմ առ դէմ կը կռուին. դաւաճան շղարշով սքօղուած բարեխնամ հովանիները կը տանին ձրի յաղթանակ եւ ծնունդ կ'առնէ նոր և զարհուրելի սարկութիւն:

Իսկ վարը, անհատական փնթի էութեան շտալ պայշամուռնքը խարոյկի վրայ կը հանէ ինչ որ ասպետականն է. տեսարան՝ զոր անասունները կը զիտեն և... մարդանման էակներուն իրենց փաղանգը մտնելը տեսնելով կը հրճուին:

Ալեկոծ «հղղեակներու» վրայ ցանցնուած և շուարած մարդկութիւնը չ'ուզեր, կամ չ'է՛ կարող ճանչնալ ո՛չ իր բարեկամը, ո՛չ իր թշնամին:

«ԵՍ»ին վեհափառութիւնը կը զահակալէ և Եսապաոս սրկուրիւնը կը սողայ:

Որպէսզի անասունները հրճուանքով լցուին, Փարիսեցիները թող մնան հոն՝ ուր խարսխուած են:

Ստուգիւ պիտի գայ օրը՝ յորում Տետալի զիւսպատում պարիսպները, մէկիկ մէկիկ, նուռի կեղեւի պէս պիտի ձաթափին: Պիտի...

«Փախնու խաւարն, մեկնի մեզն. մերժի մառախուղն, փարաքի մոայն. սպառի աղջամուղն, վերանայ մուրն, հալածին յուսահասութիւնք»: Իսկ անոնք՝ իրենց թանձրամած փորովը և ճարպաթործ փորոտիքովը ի զո՛ւր պիտի արձանանան ժուժկալ Դիողինեսի համեստ խշտեակին յանդիման, և ի զո՛ւր պիտի աքնին խափանելու կենդանարար ճառագայթը արդար արեգակին:

ՄՐՋՆԻԿ

Պուրբե, Սեպտեմբեր, 1940

ԱՌԻԱԿԸ ԵՒ ԳԵՏԱԿԸ

(ԱՌԱԿ)

Յիսուսակն օրհնեալ եղիցի յաւեհ...
Քաջ քաշերագիր, անւանի պուեհ,
Քերթող՝ Քաղիմիր Տրլավիցյր՝ որ
Ողիմպեան երգիչ մ'էր սաղանդաւոր,
Քրքիովի մեկ «Առւակ» խորագրով,
Առակը կրկնեց բնոյց իր յարով:
Համարձակեցայ ե՛ս ալ նոյնն րնել...
Միայն քե... չ'իյնամ նամբուն մեջ անել:
«Դո՛ւն օգնէ ինձ, ո՛վ Տէ՛ր...
Ձի ոսոխ եմ շաշեր»:

Գեօի լակոս մը, արբունքին հասած,
Սոված Գայի պէս, Գառնուկ մ'եր կորզած,
Գառնուկ՝ որ Հովիին հոգին էր, հոգին,
Ինչպէս կնկան մը խոյրը թանկագին...
Կ'ողբա՛ր խեղճ մարդը... կուլա՛ր ու կ'ողբա՛ր:

Առւակ մը՝ որ էր բարութեան սիպար
Անբիծ ծագումով եւ ազնւագուն,
Լըսեց Հովիին ողբն ու վայնասուն:
Եւ, գալարելով ցամամբ մոյեգին,
Մօտեցաւ հասաւ գառնակուլին քով
Եւ ըսաւ անոր՝ խո՛ւլ հառաչանքով.—
«Օ՛ գեօակ սնկո՛ւլես եւ անագորո՛յն.
Թե՛ որ կասաղի քու ալիքներուն
Յասակը սուզելի ըլլար կարելի,
Մեն մի արարած — աչքն անգամ կոյրին —
Պիտի տեսնէր հո՛ն մե՛ղք անխաւելի...
Հոն պիտի համբէր եղած աւերին
Թիւր անհամար, եւ... անփառունակ:
Դո՛ւն, չե՞ որ ըրիր զիւրը անբընակ...
Դո՛ւն, չե՞ որ ըրիր արքը որք, այրի՛...
Քանդեցի՛ր — անխիղճ — ի՛նչ որ էր բարի.
Զարկիր անխրտի գիրուկն ու ճիհար,
... Թող ալեակներդ, այժմ ամօթահար,
Սարսափած, զգամ՝ վարժունքէդ կոպիտ,
Ծակամո՛ւլս ըլլան խո՛րքը վիրապի՛դ:
Ա՛խ, թէ երկինք ռոպէ մը ուզէր
Ընել զիս հսկայ գեօ մը սէր ի սէր,
Ի՛նձ — հաւասարե՛ք — այնպէս կը թրւի՛
Թէ բարեկամը կ'ըլլայի հովի,ի,
Եւ առհասարակ կ'ըլլայի բարի.
Կ'ըլլայի զա՛րդը հանուր աշխարհի:
Կոհակներն իմ, յաւե՛րժ ծփծրփուն:
Կը համբուրէին բոյսերն օրն ի բուն:
Կուրծքս, տեսակ մը, սննտու դայեակ.
Պիտի մեծցընէր բազ, սագ եւ վառեակ:
Նաեւ հիւղակե՛ն բարի գեղջուկին,
Պիտի օրհնէին զիս սրղայ եւ կին:
Արք եւ ամուն, դառնն ու ճորճորակ,
Կովը, Եզն ու Զին, եւ կ'օր գուռակ,
Անտառապահին մռայլն իսկ խրճիթ,

Պիտի հրեւեին հոսանքս վրնիս:
Այսպէս, ո՛վ անգուր, անողո՛ւմ Գեակ,
Պիտի վերջապէս երբայի շիտակ,
Խիղճըս անվրդով, կենցաղըս մախուր,
Կոհակներովըս արծաթ եւ զանգուր,
Աւարտելէ վերջ պատշօնս լիովին,
Նետւիլ բազկաց մէջ հիւրընկալ ծովին»:

Այսպէս կը հեծէր — համոզմամբ զուցէ
Բարի Առւակը... Մինչ այս, կը լըծէ
Ամոն չասուածը շանքերը՝ սայլին...
Երեւոյց խաւերն անա կը փայլին...
Ամպը կը դողայ, կը սուլէ Քամին,
Դիտապաստ կ'իյնայ «Ամպրոպ» բռնամին
Փոխուած՝ ողբակոծ տեղատարափի,
Եւ լեռանց գլխուն՝ ընդհո՛ւպ կը բափի...

Արդ. անեղասաստ հոսանքը կայտառ՝
Կու սայ Առւակի դիմագիծ վաւար:
Առւակն ըլլալով հիմա Գե՛՛ս անգամ,
Կ'ստանայ անոր բնոյթն անգգամ...
Կը փօրէ պատնէտ, կը բանդէ պատար,
ձամբուն իր վրայ աւե՛ր ու աւար...
Կ'առնէ կը տանի հո՛ւնձէր եւ արտէն...
Կը խըլէ նաեւ ծառն իր արմատէն...
Ալիքներն անոր՝ քե՛՛ կը մրոնչեն.
Թե՛՛ տուն եւ խրհիք հիմէն կը ջնջեն:
Ա՛լ, մընաք բարեա՛ւ իւղաքո՛ւմ դրմակ...
Գընացիք բարեա՛ւ երամ, երամակ . . .
Հովիւն այ նողեց... — Օ՛ր բուտակա՛ն,
Դուն որ կ'ողբայիր մանր գառերկան,
Ահա քե՛՛ երկինք ի՛նչ պատշաւսեցին
Ոչինչէն յուզող քու լոյկա՛ն անձին:

Տեսանք շատ ու շատ համեստ առուններ՝
Որոնց մըմունջըր դալլալիկ մըն եր...
Բայց կ'երպարանքն երբ առին զեփ,
Փոխուեցան շուտով անհո՛ւն աղէփ:

պ. Յ. ԽՆԴԻԲԵԱՆԻ
անթիպ ձեռագիրներէն

Ազնրւագարմ Գրագէտներ — եւ անուանի՛
 ուր ուրեք —
 Իւրեանց գլխին՝ սաղաւար եւ ամպհովանի՛
 Սուրբ Նարեկ,
 Են ուշադիր հուրին, սուրին, եւ վառողին
 սեւածիր՝
 Եւ այս վերջնոյն անգիտակից կո՛յր զայրոյթին
 անձանձիր:

Արգաւուրի այդ չարաժող եւ խաւարի՛ն
 կըռիչէն...
 Օգի, հողի եւ ջուրերու խիտ պատարին
 ընդմէջէն...
 Սակաւարիւ չ՛եղան անոնք՝ որ յրդել աս
 խորհեցան,
 —Փրփրակուտակ պէտաց վրայ որպէս մի լաս —
 Գրչի՛ նձան:

Տարեգիրքն այս՝ անո՛վ է որ նա նաւարկեց
 ընդ հանուր,
 Սիրագեղուն համակրանքի բոյրով գրկեց—
 քաղցր անուր—
 Ըզ-Վարդապետն անշահադէտ եւ մեղաջան
 խանդով յի,
 Գրողաց հոյլը՝ աստիճանէ դէպ՝ աստիճան
 խոսմնայի:

Գողճր այս մասնան՝ բարեպատէիկ իբրեւ փակա՛նք
 պարտադիր,
 Ի պատճօնէ խոնարհաբար յայտնել կու զանք,
 անխրտի
 Իւրաքանչիւր Աւստասակցի շքնորհով յի
 գրածին,
 Երաւխիքը երախտեաց մեր՝ անեղծելի
 մաքրածին:

Ի ԳԻՄԱՅ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԲԻ
 Յ. Խ.

30 Նոյեմբեր, 1940
 Պու. քրէշ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

էջ

| | |
|--|-----|
| Նախարան | 3 |
| Զօն՝ Հ. Մ. Պոռուրեանի | 4 |
| Կենսագրութիւն | 5 |
| Հայ գիրը Ռուսմանիոյ մէջ և Հ. Մ. Պոռուրեան | 7 |
| Մայիսադը և Հայրենիքի Ախը | 11 |
| Սրտի խօսքեր առ Հ. Մ. Պոռուրեան | 14 |
| Հ. Մ. Պոռուրեանի դարասփանէն | 17 |
| Պարտիզակցի վարդապետին զարմանահրաշ հիւրասիրութիւնը | 20 |
| Պարտիզակցի Հայր Մկրտիչը | 27 |
| «Մեռեալ է նէ» Մ. Էմինգստու-ի Սէր | 30 |
| Հայկ. Ռազմական ճարտարագի- տութիւնը | 33 |
| Գիշեր | 65 |
| Յիսուսի պէս | 88 |
| Վիշտ ճանաչութեան | 89 |
| Նոր Զուգայի 17րդ դարի Որմա- նկարչական Յուշարձանը | 89 |
| Կաղանդի գիշեր մը | 91 |
| Ատաբաղար | 99 |
| Իմ տունս | 103 |
| Բաժակներ | 105 |
| Իրմէ հեռու | 106 |
| Աղօթք հիւանդաղջկան մը համար | 106 |
| Ազուլիսի Ս. Թոմայի վանքը | 107 |
| Փրկութեան առաջին եօթնեակս . | 109 |
| Պոլսոյ հայ ընկերութիւնները | 111 |
| Համառօտ տեսութիւն մը վաճա- ռականութեան վրայ | 113 |
| Խաչուած երազ | 124 |
| Իրերու մտերմութեան մէջ | 133 |
| Մարաթօնի վազքը | 134 |
| Պիտի մեկնիմ | 138 |
| Փոթորկալի | 150 |
| Օրն արիւնած | 151 |
| Յանձնախումբ | 3 |
| Եւգիեն ֓իլիկեան | 4 |
| Յ. Գ. Արանասեան | 7 |
| Եղ. Գօլանճեան | 11 |
| Առ. Քեչեան | 14 |
| Յ. Խնդիրեան | 17 |
| Յ. Խնդիրեան | 20 |
| Օ. Բոլասեան | 27 |
| Քրգ. Յ. Խնդիրեան | 30 |
| Հօրիօն | 33 |
| Ա. Ճեվահիրճեան | 65 |
| Օ. Զարմուճի | 88 |
| Օ. Զարմուճի | 89 |
| Արամ երեմեան | 91 |
| Վ. Մեհտուճեան | 99 |
| Զարեհ Պլպուլ | 106 |
| Զարեհ Պլպուլ | 106 |
| Տոկո. Հ. Հ. Ոսկեան | 107 |
| Խաչմար | 109 |
| Ա. Ալպոյանեան | 113 |
| Եր. Յակոբեան | 124 |
| Վ. Երեցեան | 133 |
| Վ. Երեցեան | 134 |
| Վ. Տասրեան | 138 |
| Վ. Սօֆեան | 150 |
| Վ. Սօֆեան | 151 |

| | | |
|--|-----------------------|-----|
| Գրիգոր Պըլըզլիու | Ա. Գոյաննեան | 152 |
| Տիգրան Զուհաճեան | Հ. Գր. Հեպոյեան | 159 |
| Ինչպէս կը սորվէին | Զ. Յ. Պ. | 161 |
| Տարակուսանք | | 166 |
| Ծերութեան | Մ. Ա. Մանուկեան | 166 |
| Բանաստեղծի դամբանական | | 167 |
| Մարդկային եսը | Ա. Վեցիկեան | 168 |
| Վայրկեաններ կան երբ կ'զգամ | Վ. Երեցեան | 171 |
| Մահուան ժպիւրը | Սիրվարդ | 172 |
| Քառեակներ | Եղ. Գոյաննեան | 175 |
| Զղջում | | 176 |
| Բերի քեզի ընծայ | Ա. Յ. Վարժապետեան | 177 |
| Մայրերու օրուան յիշատակին | Ն. Փիրանեան | 177 |
| Ներքող հարսանեկան | Սուս. Վանի | 179 |
| Մանուկի Մովը | Յ. Գ. Ա. | 185 |
| Գինեմոլը | Յ. Խ. | 198 |
| Տղմաթաթաւ Սայլապանը | Յ. Խնդիրեան | 199 |
| Armenia Devicta, Recepta, Capta | Ա. Քեօքեհեհեան | 201 |
| Բանտին մէջէն | Գամեհ-Արեալի | 210 |
| «Անարատ» թերթին անձնատպա- նութիւնը | X. | 211 |
| Հ. Մ. Պոստըրեանի գրական վաս- տակը | Յ. Գ. Ա. | 217 |
| Հայրենի տուն | Գ. Ա. Մալաթեան | 219 |
| Անառակ որդին | Յ. Խնդիրեան | 220 |
| Վասկին | Աւօ — սղագ. Յ. Խ. | 222 |
| Երգիծանք | | 223 |
| Յոյս և պաթարանք | Յ. Խնդիրեան | 224 |
| Պաթարանք | Պրոֆ. Լեւոն Կիւրեղեան | 225 |
| Սպանիական և այլևայլ աղգերու առաձներէն | Յ. Կարապետեան | 229 |
| Տապանագրեր և կսկծագրեր | X. | 230 |
| Խաչիկէն Վասիլին | Խ. Ամիրեան | 231 |
| Վաթը եւ լաւը | Յամառ Քեաթիպը | 234 |
| Շուարած մարդկութիւնը | Մրջնիկ | 236 |
| Ատուակը և գետակը (Առակ) | Յ. Խնդիրեան | 238 |
| Վերջաբան | Յ. Խ. | 241 |

Ո Ւ Ղ Ղ Ե Լ Ի Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Սպրդած ցկասելի վրիպակներուն համար ընթերցողին ներողամտութեանը կ'ապաւինենք եւ կը խնդրենք որ հանի սրբագրել եւ ապա անցնի ընթերցումին:

(Վ = կը շնանակէ՝ վերեւ, ա = սակեց)

| Էջ | Տող | ուղղելի | Ուղիղ |
|------------------------------------|---------|------------------|-------------------|
| 32 | 5 Վ | ուրեմն | ուրեմըն |
| 90 | 10 Վ | չե'ն | չե'ն |
| 133 | 3 ա | խռովէր | խռովեր |
| 150 | 7 ա | ղարզն | ղարկն |
| 150 | 3 ա | չեմիտ | չեմիդ |
| 167 | 14 ա | ողորմիտ | ողորմի'տ |
| 180 | 18 ա | Զուր | Զուռ |
| 198 | 1 ա | եղեփոս | եզոփոս |
| 199 | 10 ա | ինքզինքը | ինքըզինքը |
| 199 | 18 ա | «Բախտ» | «Բաղդ» |
| 223 | 16 ա | ափէն, | ափէն. |
| 223 | 12 ա | ինչո՛ւ, արդեօք | ինչո՛ւ արդեօք |
| 230 | 20 ա | «Աստ հանդչի | «Աստ հանդչի տղան |
| 230 | 15 ա | սա'նձ | «սա'նձ |
| 234 | 1 ա | այ | եղայ |
| 239 | 9 ա | ծփծրփուն: | ծփծրփուն, |
| 240 | 17 Վ | Առևակի | Առևակին |
| Ասոնք են ոսանաւոր գրուածքին մեջ: | | | |
| Հետեւեալները՝ արձակ գրութեանց մեջ: | | | |
| 19 | 19 ա | դէպի իր | (իր բառը աւելորդ) |
| 20 | 12-13 Վ | հաւաւառաս | հաւառաս |
| 22 | 13 Վ | մէյ կը վեր | մէյ մը վեր |
| 24 | 3 Վ | մայրը | մարը |
| 28 | 6 Վ | Մէքի | Միքի |
| 28 | 8 Վ | Կէօղիւպէօյիւքեան | Կէօյնիւպէօյիւքեան |
| 35 | 3 Վ | նայուածք | նայուածքը |
| 37 | 16 Վ | էի | չէի |
| 39 | 17 Վ | չէք կրնար | չէ՞ք կրնար |

Գիտան
 Արեւիկ
 Յանիկ — Մարտիրոս



ՇԱՐ. ՈՒՂՂԵԼԻ ՎՐԻՊԱԿՆԵՐՈՒ

| Էջ | Տող | ուղղելի | Ուղիղ |
|-----|-------|---------------|----------------|
| 133 | 12 ա | սգահուր | սգահար |
| 134 | 4 ա | տկնածն | ծկնածն |
| 134 | 3 ա | սագայ | սագու |
| 136 | 18 վ | թերթատէ | թերթառէ |
| 136 | 18 վ | կրանքի | կեանքի |
| 164 | 8 վ | վանդակակորմին | վանդակորմին |
| 173 | 3 վ | փախել | փսխել |
| 214 | 3 ա | պարագային | պարագայի |
| 227 | 10 ա | մջէը | մէջը |
| 231 | 2 վ | նոյեմբեր | չոկտեմբեր |
| 231 | 4 վ | նաչիկի-էն | նաչիկ-էն |
| 232 | 1-2 վ | կատարելով | կատարելով |
| 232 | 16 վ | մանկ | մտիկ |
| 232 | 15 ա | մըն ես | մըն եմ ես |
| 232 | 14 ա | խիղճ | խեղճ |
| 232 | 2 ա | լմիայ | լենայ |
| 233 | 13 վ | ու լռեն | ու կը լռեն |
| 236 | 5 վ | որ | ուր |
| 236 | 16 վ | սրբազան | սրբազն |
| 236 | 20 վ | լաբիւրանթոսին | լաբիւրինթոսին |
| 237 | 10 ա | չինարար | չինարարը |
| 239 | 15 ա | թէ երկինք | թէ որ երկինք |
| 239 | 9 ա | կոհակներն | կոհակներըն |
| 240 | 2 ա | կերպարանքն | կերպարանքը |
| 241 | 17 վ | որ նաւարկեց | որ նա նաւարկեց |

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0612838

15

4144
4146

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Երիտասարդ Բանասեղծ Օ. ԶԱՐՄՈՒՆԻ-Ի
„Ս. Ռ. Ս. Ն. Չ. ՆՈՒԹԻԻՆ“

ՅԱՆԳՍԱՒՈՐ ԵՒ ԱՐՁԱԿ ՔԵՐԹՈՒԱՆՆԵՐՈՒ ԳՈՂՏՐԻԿ ՀԱՏՈՐԸ
Տպագրութիւն Սոֆիա 1940

Գին՝ Պուլկարիա 150 Լեվա
Ամերիկա 1 Տոլար
Ռումանիա 150 Լեյ
Այլ երկիրներ 25 Ֆր.

Սահայու համար դիմել հեղինակին՝
École Arménienne, Roustchouk (Bulgarie)
Կամ «Հայ Մամուլ»ի խմբագրութեան
Str. Oborul Nou 15 Bucuresți 4

Գրքի
Արեւիկ Ալպոյանեանի
Գանձերէն — Մարտիտ

Գ Ի Ն 1 2 0 Լ Է Ց
Արտասահման 1 տոլար, 4 փիլին, 120 լեվա,
24 Ֆր., 4 գուլդ., 50 շրալսի
